

ԳԼՈՒԽ XXIV

Օտար լեզուների առարկայական ծրագիր

1. Ընդհանուր մաս

ա) Ներածություն

Վրաստանը, որպես Եվրախորհրդի անդամ երկիր, ընդգրկվել է լեզվական ու մշակութային բազմերանգ տարածքի մեջ: Առանց օտար լեզուների իմացության, անհնար է ինտեգրվել այդ տարածքում և լիարժեքորեն իրացնել անհատական կարողությունները: Այդ պատճառով, հանրակրթական դպրոցի Ազգային ուսումնական պլանը նախատեսում է երկու կամ երեք օտար լեզուների ուսուցում:

Օտար լեզվի իմացությունը հաստատող միջազգային վկայականների ձեռքբերմանը օժանդակելու համար, ուսումնական պլանում սահմանված է դպրոցական չափորոշիչի համապատասխանությունը Եվրախորհրդի կողմից որոշված մակարդակների հետ և մատնանշված է, թե ուսուցման որ աստիճանն է համապատասխանում Եվրաչափորոշիչի այս կամ այն մակարդակին:

բ) Օտար լեզուների ուսուցման նպատակներն ու խնդիրները

Օտար լեզուն, որպես Ազգային ուսումնական պլանի անբաժան մաս, ծառայում է դպրոցական կրթության գլխավոր պետական նպատակի իրագործմանը, մասնավորապես, ազգային և համամարդկային արժեքներին հաղորդակից ազատ անհատի դաստիարակմանը, որը կկարողանա իր լուսնաներդնել քաղաքացիական հասարակության ձևավորման ու զարգացման գործում:

Օտար լեզվի ուսուցման առաջնային նպատակներն են.

- աշակերտի մոտ զարգացնել բազմալեզվային իրազեկություն,
- զարգացնել աշակերտի խոսողական կարողությունները (լսել, կարդալ, գրել, խոսել) երկու օտար լեզուներով,
- մշակել աշակերտի հաջող հաղորդակցման կարողություն այլ մշակույթի ներկայացուցիչների հետ,
- ձևակերպել դրական տրամադրվածություն լեզվա-մշակութային բազմերանգության նկատմամբ, որ աշակերտն այն ընկալի, որպես աշխարհի բազմազանության մասնավոր դրսևորում,
- աշակերտի մոտ զարգացնել տարբեր մշակութային համատեքստեր ու տեքստեր հասկանալու կարողություն,
- աշակերտին պատրաստել տարբեր լեզվա-մշակութային ինքնության ներկայացուցիչ հետ համագործակության,
- զարգացնել լեզուներն արդյունավետ սովորելու կարողություն:

Այս կրթական նպատակից ելնելով, դպրոցներում օտար լեզուների ուսուցումը նախատեսում է կոնկրետ խնդիրների լուծում: Այդ խնդիրները բաժանվում են երեք խմբի.

Տարբեր տեսակի գիտելիքների ձեռքբերում.

- քերականական, բառապաշարային գիտելիք,
- ուղղագրական և ուղղախոսական հիմնարար նորմերի իմացություն,
- օտարալեզու երկրների մշակույթին ծանոթություն,
- տեքստի տեսակների և դրանց հատկանիշների իմացություն,
- գիտենալ գրել, լսել, կարդալ և խոսել,

Տարբեր տեսակի կարողությունների և հմտությունների զարգացում.

- խոսողական կարողություններ և հմտություններ,
- լեզվական կարողություններ և հմտություններ,
- ռազմավարական կարողություններ և հմտություններ,
- քաղաքացիական այնպիսի կարողությունների և հմտությունների ձևավորում, ինչպիսիք են համագործակցությունը, ազատ ընտրությունը, ինքնակատարելագործումը, ստեղծագործականությունը և այլն:

Վերաբերմունքների ձևավորում.

- անհատական բազմազանության գնահատում և հարգանք,
- լեզվա-մշակութային պատկանելության զգացում,
- մշակութային միջավայրի ինքնատիպության, դրա անկրկնելիության գնահատում և հարգանք,
- դրական վերաբերմունք ինչպես մշակութային, այնպես էլ անհատական բազմազանության նկատմամբ և դրա ընկալում, որպես աշխարհի բազմազանության մասնավոր դրսևորում,
- հետաքրքրություն օտար աշխարհի նկատմամբ,
- օտար լեզուներ սովորելու ցանկություն:

գ) Օտար լեզուների ուսուցման աստիճանների բնութագիր

Դպրոցի տարբեր աստիճաններում օտար լեզուների ուսուցումը տարբեր դաստիարակչական և կրթական նպատակներ է հետապնդում:

Օտար լեզվի ուսուցումը տարրական աստիճանում

Տարրական աստիճանում օտար լեզվի ուսուցման դաստիարակչական նպատակն է դեռահասին նախապատրաստել հետագա բազային աստիճանում, հաջող ուսումնառության համար: Այդ նպատակով այն պետք է ապահովի.

- դեռահասի մտավոր և հոգեբանական-հուզական ներուժի գործարկում և զարգացում (ըմբռնում, հիշողություն, երևակայություն, պատկերացում, բազմաձև մտածողություն և այլն),
- դրական վերաբերմունքի ձևավորում սեփական անձի, ուրիշների, ուսումնառության, առարկայի, օտար աշխարհի նկատմամբ,
- կենսական կարողությունների և հմտությունների զարգացում, որոնցից ուսումնառության այս փուլում առաջնայինն է կամքի ուժը, ուշադրության կենտրոնացումը, կանոնների պահպանումը և հարգանքը, ուսումնական իրերի/գործունեության կարգավորումը, համագործակցությունը (գույգերով, խմբային աշխատանք, փոխադարձ աջակցություն), ստեղծագործականությունը:

Ինչ վերաբերում է օտար լեզուների ուսուցման կրթական նպատակին, ուսումնառության այս փուլում առաջնային տեղ են զբաղեցնում օտար լեզվով բանավոր խոսքը (լսել-խոսել) և տարբեր լեզվական ու մշակութային աշխարհի հայտնաբերումը:

Տարրական աստիճանում ուսուցման գլխավոր խնդիրն է խրախուսել աշակերտի հետաքրքրությունը, հզորացնել դրդապատճառը. դեռահասները պետք է սիրեն լեզուն սովորելու գործընթացը և հենց օտար լեզուն ու մշակույթը: Ուսումնառության ընթացքում անհաջողության, ձախողման զգացումը պետք է բացառվի: Այդ նպատակով, ուսուցման մեթոդիկան պետք է նախատեսի աշակերտների հոգեբանական զարգացման յուրահատկություններն ու կիրառի ուսուցման համապատասխան եղանակներ:

Օտար լեզվի ուսուցումը բազային աստիճանում

Բազային աստիճանը պարտադիր ուսուցման ավարտական փուլն է. բազային աստիճանն ավարտելուց հետո, աշակերտների մի մասը լքում է դպրոցը և ընդգրկվում ակտիվ կյանքի մեջ: Այս աստիճանում օտար լեզվի գլխավոր դաստիարակչական նպատակն է աշակերտի մեջ զարգացնել քաղաքացիական գիտակցություն ու ստեղծագործական կարողություններ և հմտություններ (հանդուրժողականություն, անձնական և հասարակական պատասխանատվություն, ինքնուրույնություն, ինքնազարգացում, քննադատական մտածողություն, ինքնարտահայտում...):

Օտար լեզվի կրթական նպատակն է աշակերտին զինել հիմնարար գիտելիքներով, որոնք կնպաստեն ժամանակակից կյանքում ճանապարհ գտնելուն: Մասնավորապես, այս փուլի վերջում աշակերտը պետք է կարողանա.

- ամենօրյա կենցաղային իրավիճակներում բանավոր և գրավոր հաղորդակցվել երկու օտար լեզուներով,
- օգտագործել կարդալու, լսելու, խոսելու և գրելու ռազմավարությունները,
- ինքնուրույն բարձրացնել գիտելիքների մակարդակն այս կամ այն ուղղությամբ (լսել, խոսել, կարդալ, գրել, մշակույթ),
- ակտիվ մասնակցել տարբեր մշակութային կամ սոցիալ-մշակութային համատեքստերում:

Բազային աստիճանում ուսուցման գլխավոր խնդիրն է աշակերտին նախապատրաստել այնպիսի կարևոր որոշում կայացնելու համար, ինչպիսին է ուղղվածություն ընտրելը (ընդգրկվել ակտիվ կյանքում, ստանալ մասնագիտական կրթություն, շարունակել ուսումնառությունը դպրոցում): Այս ամենն ապահովելու համար, ուսուցման մեթոդիկայում պետք է ներդնել այնպիսի ռազմավարություններ, որոնք կդրսևորեն աշակերտի ներուժի յուրահատկությունները (բազմակողմանի գնահատում):

Օտար լեզվի ուսուցումը միջնակարգ աստիճանում

Այս աստիճանում օտար լեզվի գլխավոր դաստիարակչական նպատակն է մնում աշակերտի մեջ քաղաքացիական գիտակցություն և ստեղծագործական կարողություններ և հմտություններ ձևավորելը:

Մասնագիտական գործունեության համար ցանկացած բնագավառ ընտրելու դեպքում, աշակերտին օտար լեզուն անհրաժեշտ է, որպես գործիք՝ գիտելիքն ու փորձը հարստացնելու համար: Այսպիսով, միջնակարգ աստիճանում օտար լեզվի ուսուցման կրթական նպատակն է աշակերտին ապահովել այնպիսի գիտելիքով, որ նա կարողանա մեկ կամ երկու օտար լեզուներով.

- հասկանալ, վերլուծել ու մշակել տարբեր բնույթի բանավոր կամ գրավոր տեքստեր (ռեպորտաժ, գործնական նամակ, հարցազրույց, ռեֆերատ, կենսագրություն, հրապարակախոսական հոդված, ճանաչողական տեքստ և այլն), հետազայում ուսումնական գործունեության մեջ գործածելու նպատակով,
- արտահայտել ու հիմնավորել բանավոր կամ գրավոր մեկնաբանությունը, սեփական կարծիքը, վերաբերմունքը,
- կազմել ընկերական կամ գործնական նամակներ, արդիական թեմաներով ներկայացնել բանավոր զեկուցում/նախագիծ և այլն:

դ) Օտար լեզուների ուսուցման կազմակերպումը

Օտար լեզուների բաշխումն ըստ աստիճանների: Ազգային ուսումնական պլանի համաձայն, պարտադիր է երկու օտար լեզուների ուսուցումը: Այսպիսով, առաջին և երկրորդ օտար լեզուները պատկանում են պարտադիր առարկաների թվին:

Երրորդ օտար լեզուն միջնակարգ աստիճանում հնարավոր է դասավանդել կամընտրական առարկայի տեսքով (տե՛ս՝ ԱՌԻՊ կամընտրական առարկաների ցանկ):

Ազգային ուսումնական պլանը տարրական աստիճանում նախատեսում է միայն մեկ օտար լեզվի ուսուցում, իսկ բազային ու միջնակարգ աստիճանում՝ երկու:

Առաջին օտար լեզու: Անգլերեն լեզվի դասավանդումը պարտադիր է առաջին դասարանից: Բացառություններ թույլատրվում են Նախարարության հետ համաձայնեցմամբ: Բացառություն թույլ տալու դեպքում, դպրոցն իրավունք ունի առաջին դասարանից այլ օտար լեզու դասավանդել, թեպետ, նման դեպքում դպրոցը պարտավոր է անգլերենն առաջարկել աշակերտին, որպես երկրորդ օտար լեզու:

Երկրորդ օտար լեզու: Բազային-միջնակարգ աստիճանում սկսվում է երկրորդ օտար լեզվի ուսուցումը: Երկրորդ օտար լեզուն կարող է լինել ցանկացած լեզու, որը դպրոցն իր սեփական ռեսուրսներով ու ծնողների հետաքրքրությունների նախատեսմամբ՝ կառաջարկի աշակերտներին: Բացառություն է ներկայացնում վերոնշյալ դեպքը:

Եթե դպրոցն ունի պատշաճ մարդկային ու ֆինանսական ռեսուրսներ, այն կարող է դասարանների տարբեր բաժանմունքներին տարբեր լեզուներ առաջարկել՝ նկատի առնելով ծնողների և աշակերտների հետաքրքրությունները:

Երրորդ օտար լեզու: Դպրոցը կարող է աշակերտին, որպես կամընտրական առարկա, առաջարկել երրորդ օտար լեզու: Երրորդ օտար լեզուն նույնպես կարող է լինել ցանկացած լեզու, որը դպրոցն աշակերտներին կառաջարկի՝ նկատի առնելով սեփական ռեսուրսները և ծնողների ու աշակերտների հետաքրքրությունները:

Անգլերեն լեզվի ուսուցումը 2011-2012 ուսումնական տարվանից: Եթե դպրոցում մինչև 2011-2012 ուսումնական տարին չէր դասավանդվում անգլերեն, 2011-2012 ուսումնական տարվանից դպրոցն իրավագոր է ցանկացած աստիճանում անգլերենով փոխարինել առաջին կամ երկրորդ օտար լեզուն: Տարրական աստիճանի աշակերտների համար կընտրվի նրանց լեզվի իմացության մակարդակին համապատասխան տարրական աստիճանի համար հատկացված մակարդակներ (տ I -տ IV), իսկ բազային-միջնակարգ աստիճանի աշակերտների համար՝ նրանց լեզվի իմացության մակարդակին համապատասխան բազային-միջնակարգ աստիճանի համար հատկացված մակարդակներ (բI –բVIII): Աշակերտները կգնահատվեն այն կոնկրետ մակարդակի պահանջների համաձայն, որով իրենք սովորում են: Օրինակ, X դասարանի աշակերտը, որը սովորում է չափորոշի բV մակարդակի պահանջների համաձայն, կգնահատվի ըստ V մակարդակի չափորոշի պահանջների, իսկ X դասարանի աշակերտը, որը սովորում է

չափորոշչի բI մակարդակի պահանջների համաձայն, կգնահատվի ըստ բI մակարդակի չափորոշչի պահանջների:

Օտար լեզվի առարկայական ծրագիրը: Օտար լեզվի առարկայական ծրագիրը կազմված է երեք բաղադրամասերից՝ ներածություն, չափորոշիչ և ծրագրի բովանդակություն:

Օտար լեզվի չափորոշիչը: Չափորոշիչն ընդհանուր է ցանկացած օտար լեզվի համար, որը կարող է դասավանդվել դպրոցում: Այն սահմանում է օտար լեզվի ուսուցման սպասվելիք արդյունքներն ուսուցման յուրաքանչյուր աստիճանի համար:

Օտար լեզվի չափորոշիչը բաժանված է ոչ թե ըստ դասարանների, այլ ըստ լեզվի տիրապետման մակարդակների: Համապատասխանաբար, դասագրքերը նույնպես կկազմվեն չափորոշչի մակարդակների համաձայն:

Ծրագրի բովանդակությունը: Առարկայական ծրագրի երրորդ մասը ծրագրի բովանդակությունն է, որը երաշխավորական բնույթ ունի: Ծրագրի բովանդակությունն այն լեզվական նյութի և սոցիալ-մշակութային թեմատիկայի երաշխավորական ցանկն է, որի միջոցով կարելի է զարգացնել չափորոշչով սահմանված կարողությունները և հմտությունները:

Ազգային ուսումնական պլանի շրջանակներում ծրագրի բովանդակությունը սահմանվել է չորս օտար լեզուների համար (ֆրանսերեն, գերմաներեն, ռուսերեն և անգլերեն): Այն դպրոցները, որոնք պլանավորել են դասավանդել այլ օտար լեզուներ, կառաջնորդվեն չափորոշչով:

Տարրական և բազային-միջնակարգ աստիճանների չափորոշչի մակարդակները: Տարրական աստիճանի չափորոշչի մակարդակները, ինչպես նաև դրանց հիման վրա կազմված դասագրքերը, իմաստային ու մանկավարժական առումով, համապատասխանում են այդ աստիճանի աշակերտների հոգեբանական զարգացման յուրահատկություններին: Այսպիսով, տարրական աստիճանի մակարդակները և դրանց համաձայն կազմված դասագրքերը հարմար չեն բազային-միջնակարգ աստիճանների աշակերտների համար և, ընդհակառակը, բազային-միջնակարգ աստիճանի չափորոշչի մակարդակներն ու դրանց համաձայն կազմված դասագրքերը հարմար չեն տարրական աստիճանի աշակերտների համար:

Մի կողմից, տարրական և, մյուս կողմից, բազային-միջնակարգ աստիճանների մակարդակները միմյանցից առանձնացնելու համար, չափորոշչում օգտագործված են տարբեր ցուցանիշներ՝ տարրականի համար՝ հատկացված մակարդակներն է մատնանշում «տ» տառը, իսկ բազային-միջնակարգի համար՝ «բ» տառը:

Տարրական աստիճանի համար առանձնացված է վեց մակարդակ, իսկ բազային-միջնակարգի համար՝ ութ.

Տարրական աստիճանի մակարդակներ	տ01	տ02	տI	տII	տIII	տIV		
Բազային-միջնակարգ աստիճանի մակարդակներ	բI	բII	բIII	բIV	բV	բVI	բVII	բVIII

Մակարդակների ու դասարանների համապատասխանությունը: Մակարդակների բաժանելը օտար լեզուների ուսումնական պլանը դարձնում է ավելի ճկուն, և ուսուցչին հնարավորություն է տալիս, ըստ կոնկրետ դասարանի պահանջների, ընտրել այս կամ այն մակարդակի դասագիրքը: Օրինակ, I մակարդակի ֆրանսերեն լեզվի դասագիրքը նա կարող է օգտագործել նաև VII դասարանում, եթե աշակերտները այդ փուլում են սկսում ֆրանսերենի ուսումնասիրումը, և X դասարանում, եթե նրանք ֆրանսերենը սովորում են, որպես կամընտրական առարկա: Հնարավոր է նաև տարրական աստիճանում պարզվի, որ առաջին

դասարանի աշակերտները մանկապարտեզում սովորել են անգլերեն և բավարարում են տ01-ի պահանջները: Նման դեպքում նրանց հարկավոր կլինի տ02-ը:

Դասարանների և մակարդակների համապատասխանությունն առաջին, երկրորդ և երրորդ (կամընտրական առարկա) օտար լեզուների համար.

		Տարրական						Բազային-միջնակարգ					
Դասարան		I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Օտ. լեզու 1	Մակարդակ	տ01/	տ02/	տI/	տII/	տIII/	տIV	բII/բIII	բIII/բIV	բIV/բV	բV/բVI	բVI/բVII	բVII/բVIII
Օտ. լեզու 2	Մակարդակ							բI	բII	բIII	բIV	բV	բVI
Կամընտր. Օտ. լեզու 3	Մակարդակ										բI/բII	բII-բIII	բIII-բIV

Ինչպես երևում է աղյուսակից, առաջին օտար լեզվի դեպքում, յուրաքանչյուր դասարանի երկուական մակարդակ է առաջարկվում, ինչը ցույց է տալիս, որ ուսուցիչն ունի ընտրության հնարավորություն: Տարբեր դասարաններում և տարբեր դպրոցներում սովորող յոթերորդ դասարանի աշակերտները կարող են տարբեր չափով տիրապետել տարրական մակարդակում ուսումնասիրած լեզվին, ինչը կախված է տարբեր գործոններից: Այսպիսով, ուսուցիչն ինքը պետք է որոշի կոնկրետ 7-րդ դասարանում երկրորդ մակարդակի (բII) դասագիրք օգտագործի, թե՛ երրորդ մակարդակի (բIII): Հնարավոր է նաև, որ աշակերտներին անհրաժեշտ լինի առաջին մակարդակի դասագիրք: Այդ դեպքում, ուսուցիչը չպետք է խուսափի առաջին մակարդակի դասագիրք ընտրելուց:

Երկրորդ օտար լեզվի դեպքում երկրորդ մակարդակի դասագիրքը (բII) հարմար կլինի 8-րդ դասարանի համար, իսկ կամընտրական առարկայի դեպքում՝ տասնմեկերորդ:

Մակարդակների համակարգը ներմուծելու իմաստը կայանում է նրանում, որ ուսուցիչը գործի՝ ելնելով դասարանի իրական կարողություններից և, այս կամ այն դասարանում օգտագործի այն մակարդակի դասագիրք, որը կհամապատասխանի աշակերտների պահանջներին:

Այնպես որ, ուսուցչի արտոնությունն է՝ որոշել, թե որ դասարանում որ մակարդակի դասագիրք օգտագործի:

Չափորոշչի մակարդակներն ու Եվրախորհրդի կողմից սահմանված լեզվի տիրապետման մակարդակները

Եվրախորհրդի կրթական լեզվական քաղաքականության գլխավոր վարչությունը և Օտար լեզուների բաժինը օտար լեզուների ուսանում/ուսուցման և գնահատման համար կազմել և հրատարակել են Ընդհանուր եվրոպական երաշխավորական շրջանակ: Այդ շրջանակի նպատակն է անդամ երկրների համար ստեղծել ընդհանուր բազա, լեզվի իմացության որակավորումը սահմանելու նպատակով, և նպաստել ուսուցիչների, ծրագրեր կազմողների, հավաստագրեր տվող կազմակերպությունների և օտար լեզուների դասավանդման վարչարարների համաձայնեցված գործողություններին:

Համաեվրոպական համակարգը սահմանում է լեզվի իմացության 3 հիմնական մակարդակ.

- A – հիմնական կիրառող (լեզվի տարրական իմացություն)
- B – ինքնուրույն կիրառող (լեզվի լավ տիրապետում)
- C – մասնագետ (լեզվի ազատ տիրապետում)

Այս երեք մակարդակները բաժանվում են 6 ճյուղերի. A1 (բանալի), A2 (հիմք), B1 (սահմանային), B2 (սահմանայինից բարձր), C1 (բարձր), C2 (կատարյալ): Հանրակրթական դպրոցի օտար լեզվի չափորոշիչը նպատակ է հետապնդում հաղթահարել B1 (սահմանային) մակարդակը:

Չափորոշչի մակարդակների համապատասխանությունը Եվրախորհրդի կողմից սահմանված լեզվի տիրապետման մակարդակներին այսպիսին է.

		Տարրական						Բազային-միջնակարգ					
	Դասարան	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII
Օտ. լեզու I	Չափ. մակարդակ	տ 01	տ 02	տ I	տ II	տ III	տ IV	բII/բIII	բIII/բIV	բIV/բV	բV/բVI	բVI/բVII	բVII/բVIII
	Եվր.խորհրդ. մակարդակ	-	-	A ^{1.1}	A ^{1.2}	A ^{2.1}	A ^{2.2}	A ² / B ^{1.1}	B ^{1.1} / B ^{1.2}	B ^{1.2} / B ^{1.3}	B ^{1.3} / B ^{1.4}	B ^{1.4} / B ¹⁺	B ¹⁺ / B ²
Օտ. լեզու II	Չափ. մակարդակ							բI	բII	բIII	բIV	բV	բVI
	Եվր.խորհրդ. մակարդակ							A ¹	A ²	B ^{1.1}	B ^{1.2}	B ^{1.3}	B ^{1.4}
Օտ. լեզու III	Չափ. մակարդակ										բI	բII	բIII
	Եվր.խորհրդ. մակարդակ										A ¹	A ²	B ^{1.1}

Ինչպես երևում է աղյուսակից, տարրական աստիճանում Եվրախորհրդի ամենացածր մակարդակի՝ A¹ –ի, պահանջներին որոշ չափով համապատասխանում է տI մակարդակը: Նկատի առնելով առաջին և երկրորդ դասարանների աշակերտների տարիքային հնարավորությունները, նրանց համար մշակվել է գրոյական մակարդակի ծրագիր, որը դեռահասներին աստիճանաբար կնախապատրաստի՝ հաղթահարելու առաջին մակարդակի ծրագրի պահանջները:

Դասարանի բաժանումն օտար լեզվի դասաժամին: Եթե դասարանում աշակերտների քանակը 18 է կամ 18-ից ավելի, թույլատրվում է բաժանել դասարանը: Թույլատրելի է նաև, որ ստորաբաժանումները կազմվեն՝ նախատեսելով աշակերտների լեզվի տիրապետման մակարդակները: Անհրաժեշտ է աշակերտներին բացատրել, որ ըստ մակարդակների նրանց բաժանելը չի նշանակում բաժանել թույլ և ուժեղ խմբերի. լեզվի տիրապետման միևնույն մակարդակի վրա են գտնվում ինչպես թույլ, այնպես էլ ուժեղ աշակերտները: Դրա նպատակն է՝ ընտրել աշակերտների լեզվական պահանջներին համապատասխան դասընթաց, ինչը կապահովի նրանց հաջող առաջընթացը:

ե) Օտար լեզուների ուսուցման ուղղությունների նկարագրությունը

Նշված նպատակներն իրականացնելու համար, օտար լեզվի ուսուցումը բաժանվում է յոթ ուղղության՝ լսել, կարդալ, գրել, խոսել, ուսանման ուսանում, մշակույթների երկխոսություն, օտար լեզվի գործնական կիրառություն:

Լսել, խոսել, կարդալ, գրել

Առաջին չորս ուղղություններն (լսել, խոսել, կարդալ, գրել) ունեն ընդհանուր կառուցվածք, որը ներառում է երեք տարբեր տեսակի արդյունքներ.

1. Հաղորդակցական արդյունքներ, որոնք նկատի ունեն տեքստերի բովանդակության ըմբռնում-վերլուծություն (կարդալիս և լսելիս) և ստեղծում (գրելիս և խոսելիս):
2. Լեզվական արդյունքներ, որոնք նկատի ունեն տեքստի կառուցվածքային և լեզվական հատկանիշների հայտնաբերում (կարդալիս) և գործածում (գրելիս և խոսելիս):
3. Ռազմավարական արդյունքներ, որոնք նկատի ունեն լսելու, կարդալու, խոսելու և գրելու ռազմավարությունների տիրապետում:

Ներքին կառուցվածքի նպատակն է՝ բացահայտել այն կարողությունները, որոնց զարգացումը հանդիսանում է բոլոր լեզուների ուսանման-ուսուցման ընդհանուր նպատակը, լինի դա վրաց լեզուն ու գրականությունը, վրացերենը, որպես երկրորդ լեզու, թե գերմաներեն, ֆրանսերեն, ռուսերեն, անգլերեն լեզուները: Ցանկալի է, որ լեզուների դասավանդման ժամանակ հաղթահարվի առարկայական մեկուսացվածությունը և ներմուծվի լեզուների ինտեգրված մանկավարժությունը: Իսկապես, ցանկացած տեսակի (մայրենի, ոչ մայրենի) լեզու ուսումնասիրելիս, աշակերտը կանգնում է նման խնդիրների առջև: Օրինակ, նա պետք է որոշի, թե ինչ կառուցվածք ունի տեքստը, ինչ բովանդակություն է պարունակում, ինչ լեզվական հատկանիշներ ունի այն, ինչ տեսակի ռազմավարություններ պետք է գործածի այն հասկանալու համար և այլն: Ավելին, նման լեզվական-հաղորդակցական խնդիրների առջև է կանգնած աշակերտը նաև ցանկացած ոչ լեզվական առարկաների դեպքում (լինի դա պատմություն, մաթեմատիկա, ֆիզիկա, թե այլ առարկա), երբ ստիպված է լինում տեքստերը վերլուծել, կազմել կամ լսարանի առջև ելույթ ունենալ բանավոր խոսքով: Այնպես որ, լեզվական-հաղորդակցական կարողությունները համապիտանի են՝ այդ կարողություններին տիրապետելն աշակերտին անհրաժեշտ է ցանկացած առարկան յուրացնելու գործընթացում: Ինտեգրված դիդակտիկան նկատի ունի լեզուներն ուսումնասիրելիս ստացած փորձի փոխկապակցում, աշակերտի ձեռք բերած փորձը մի լեզվից մի այլ լեզու տեղափոխելուն օժանդակում: Այսպիսի մոտեցումը ուժեղացնում է կարողությունները, հարստացնում է փորձը և բարձրացնում աշակերտների գործունակությունը: Այս ամենն իրագործելու համար, ուսուցիչը պետք է մտածի, թե՛ ուսումնասիրած, թե՛ ուսումնասիրվելիք լեզուների միջև կամուրջ հաստատելու մասին: Այսպես օրինակ, օտար լեզվի յոթերորդ մակարդակի չափորոշում տրված ռազմավարությունը՝ *աշակերտը տեքստն ամբողջովին կարդում է, տարբեր պայմանանշաններով նշում է գլխավոր հարցերը, երկրորդական գաղափարները, հանգուցակետային բառերը*, պատկանում է այն կարողությունների թվին, որոնք նա կարող է արդյունավետորեն օգտագործել տեքստը վերլուծելիս՝ ցանկացած առարկայի դեպքում, լինի դա լեզվական (վրացերեն, անգլերեն, ռուսերեն կամ այլ), թե ոչ լեզվական առարկա (պատմություն, ֆիզիկա, աշխարհագրություն և այլն): Կամուրջ հաստատելու համար ուսուցիչը պետք է հասկացնի աշակերտին, որ կոնկրետ կարողությունը կարելի է կիրառել տարբեր առարկաների դեպքում և տարբեր համատեքստերում:

Հենց դրա իրականացմանն են ծառայում բազմաթիվ ստուգիչներ, որոնք ներկայացված են օտար լեզվի չափորոշչի ռազմավարական արդյունքներում և «Ուսանման ուսանում» ուղղության մեջ: Ներկայացնենք դրանցից մի քանիսը.

Կարդալու ուղղությունը, արդյունք օտար բV.10. ստուգիչ.

- *«Նկարագրում է, թե ինչ եղանակով/ինչպես կարողացավ լուծել ընթերցանության խնդիրը:*

- *Համեմատում է ուրիշների ընտրած եղանակի հետ և եզրակացնում, թե որ մոտեցումն է ավելի արդյունավետ:*
- *Ընթերցանության խնդիրները լուծելու համար գործածում է ինչպես մայրենի, այնպես էլ այլ լեզվից ստացած փորձը»:*

Տարրական և բազային-միջնակարգ աստիճանի ուսանում-ուսուցման տարբեր փուլերում լսելը, խոսելը, կարդալն ու գրելը տարբեր դիդակտիկ ծանրաբեռնվածություն ունեն, այդ պատճառով, այս ուղղությունները կնկարագրենք ըստ ուսուցման փուլերի:

Ազգային ուսումնական պլանի շրջանակներում առանձնանում է օտար լեզվի ուսուցման 3 հիմնական փուլ.

Առաջին (տարրական) փուլը ներառում է տարրական աստիճանի առաջին չորս մակարդակները, ինչպես նաև բազային-միջնակարգ աստիճանների առաջին և երկրորդ մակարդակները, այսինքն՝ տ01, տ02, տI, տII, ԲI, ԲII:

Երկրորդ (միջին) փուլը ներառում է տարրական աստիճանի, ինչպես նաև բազային-միջնակարգ աստիճանների երրորդ և չորրորդ մակարդակները, այսինքն՝ տIII, տIV, ԲIII, ԲIV:

Երրորդ (վերջին) փուլը ներառում է բազային-միջնակարգ աստիճանի հինգերորդ, վեցերորդ, յոթերորդ և ութերորդ մակարդակները, այսինքն՝ ԲV, ԲVI, ԲVII, ԲVIII:

Ուսուցման առաջին փուլը

Լսել – այս փուլում լսելուն, որպես օտար լեզվի յուրացման գլխավոր ուղու, առաջնային նշանակություն է տրվում: Բառային շղթայում հնչյունների, բառերի, պարզ նախադասությունների լսելով հասկանալուն առանձնահատուկ ուշադրություն կհատկացվի, քանի որ օտար լեզվին բնորոշ հնչեղության վրա ուշադրության կենտրոնացումն անհրաժեշտ է հասկանալու կարողությունն ու ճշգրիտ արտաբերումը զարգացնելու համար, ինչը հաջող ինտերակցիայի հիմք է հանդիսանում: Հնչյութաբանական լսողությունը կզարգանա իմաստավորված համատեքստում: Տեքստերն առատորեն պետք է ուղեկցվեն տեսանելի նյութով (պատկերներ, առարկաներ, նկարներ, լուսանկարներ և այլն) և հնչյունային ցուցանիշներով (աղմուկ, հստակ արտահայտված հնչերանգ և այլն), որոնց վրա հենվելով, աշակերտն ավելի հեշտ կընկալի տեքստը:

Տարրական փուլում աշակերտներից չի պահանջվում ոչ սպառիչ կերպով տեքստի ըմբռնում (բավական է հասկանալ հաղորդակցական իրավիճակը, ընդհանուր տեղեկությունը և առանձին արտահայտությունները), ոչ էլ արտահայտությունների ապակառուցքավորում և լեզվաբանական առումով վերլուծում:

Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ փուլում լսած տեքստերը, գործածվում են որպես նմուշ բանավոր խոսքի (խոսել) համար, այդ պատճառով, տեքստերը չպետք է լինեն անձանոթ բառապաշարով ու քերականական կառուցվածքներով ծանրաբեռնված: Ցանկալի է աշակերտներին առաջարկել համար ուսուցողական տեքստեր:

Խոսել – առաջին փուլում դժվար կլինի աշակերտին խոսեցնելը: Ուսուցման ռազմավարությունն ուղղված կլինի վերարտադրմանը: Վերարտադրման նպատակն է՝ ձևավորել ճշգրիտ արտաբերում և հարստացնել/հաստատել բառապաշարը: Վերարտադրման համար գործածվում են բանաստեղծություններ, հաշվարկումներ (փոքրերի համար), երգեր, երկխոսություններ, էսքիզներ:

Խոսելը շատ սահմանափակ է ընթանում՝ աշակերտները յուրացրած բառամթերքն օգտագործելով, հարց են տալիս/պատասխանում հարցերին և ըստ նմուշների պարզ տեսարաններ բեմադրում:

Կարդալ – տարրական աստիճանում կարդալու ուսուցումը պետք է ընթանա յուրահատուկ մեթոդաբանությամբ: Նախ՝ առանձնահատուկ ուշադրություն պետք է հատկացվի հնչյունաբանական կարողությունների զարգացմանը, որպեսզի զարգանա աշակերտի հնչյութաբանական գիտակցությունը (բանավոր վանկերի, հնչյունների ընկալման ու գործածման կարողություն): Հնչյութաբանական գիտակցության զարգացումը կարևոր է, որպեսզի աշակերտը հասկանա այբբենական սկզբունքը (տառի, որպես գրաֆիկական միավորի կապը հնչյունի հետ, ձայնային միավորի հետ):

Երկրորդ հերթին, կարևոր է, որ ժամանակից շուտ չսկսենք աշակերտներին հետևողականորեն կարդացնել, ինչը կարող է լուրջ արգելքներ առաջացնել ոչ միայն օտար, այլ նաև մայրենի լեզվում: Աշակերտին պետք է աստիճանաբար նախապատրաստենք կարդալու հետևողական դասընթացի համար, ինչը՝ օտար լեզվի չափորոշչի համաձայն, նախատեսվում է լեզվի ուսուցման չորրորդ տարվանից (տII):

Կարևոր է, որ աշակերտների մեջ մշակենք, ինչպես ցածրաձայն, այնպես էլ բարձրաձայն կարդալու վարպետությանը:

Կարդացածը հասկանալու կարողությունը մշակելու համար, ցանկալի է աշակերտներին ակտիվ ընթերցողների վիճակում դնել: Այդ նպատակով, մինչև տեքստի ընթերցումը, նրանց պետք է տանք կոնկրետ ընթերցանության խնդիր, կոնկրետ խնդրի միջոցով նրանց պետք է մոտեցնենք տեքստին:

Գրել - այս դեպքում նույնպես ուսուցումը հիմնված է հիմնականում վերարտադրման վրա: Ինչպես կարդալու, այնպես էլ գրելու կարողության զարգացումը պետք է ընթանա առանց շտապելու՝ կարդալու կարողության զարգացմանը զուգընթաց: Տարրական աստիճանում առանձնահատուկ ուշադրություն կհատկացվի գրելու տեխնիկական-շարժողական կարողությունների և հմտությունների ձևավորմանը: Աշակերտը կգրի տառերը, սովորած բառերը, կսովորի տառերը միացնելու տեխնիկան:

Որպեսզի տարրական փուլում վերարտադրումը ձանձրալի չդառնա, կարևոր է առաջարկել բազմաբնույթ, զվարճալի և, գլխավորը՝ բովանդակալից համատեքստ (օր., հարցաթերթ լրացնել, որտեղ կգրանցի, թե որ կերակուրն է սիրում և որը՝ ոչ):

Գրելը կնպաստի ինչպես կարդալու կարողության բարելավմանը, այնպես էլ՝ լեզվական նյութի մտապահմանը:

Ուսուցման երկրորդ (միջին) փուլը

Լսել – երկրորդ փուլում գործածվում են ինչպես դիդակտիկացված, այնպես էլ կիսավավերական տեքստեր, որոնց ծավալը և դժվարության մակարդակը գերազանցում է նախորդ մակարդակի տեքստերին:

Հասկանալու առումով, պահանջը կմեծանա. աշակերտներից կպահանջվի ավելի սպառիչ կերպով հասկանալ տեքստը և ուսումնասիրել/վերլուծել լեզվական երևույթները:

Խոսել – երկրորդ փուլի առաջնահերթ խնդիրն է խոսեցնել աշակերտին: Ավելի բազմազան են դառնում հաղորդակցական իրավիճակները, որոնցում նա մասնակցում է որպես ունկնդիր կամ գործող անձ: Սկսում է ավելի ազատ օգտագործել լեզվական պաշարն ինչպես ձևական, այնպես էլ իրական հաղորդակցման ժամանակ:

Կարդալ – երկրորդ փուլում աշակերտներից պահանջվում է ընկալել տարբեր տեսակի և բովանդակության տեքստեր: Տեքստերը սկզբում փոքրածավալ, կիսավավերական կամ վավերականին նմանեցված դիդակտիկացված կլինեն: Աշակերտները, տրված խնդրին համապատասխան, կսովորեն օգտագործել թե՛ կարդալու տարբեր ռազմավարությունները, թե՛ տեսակները (ճանաչողական, հետազոտական, որոնողական):

Գրել – երկրորդ փուլում ուշադրությունը վերարտադրումից աստիճանաբար անցնում է արտադրմանը: Աշակերտները սովորում են ըստ նմուշների կազմել փոքրածավալ գործառական տեքստեր, որտեղ նրանք ձեռք են բերում տեղեկությունը, փաստերը, երևույթները հաջորդականությամբ փոխանցելու և գնահատելու կարողություններ և հմտություններ, ինչը հաջորդ փուլում ավելի կրնդարձակվի ու կկատարելագործվի: Պատճառաբանվածությունը մեծացնելու համար, ցանկալի է առաջարկել նաև այնպիսի ակտիվություններ, որոնց դեպքում աշակերտը ստիպված կլինի, ասենք, խաղալ լեզվի հետ և ստեղծագործականորեն օգտագործել լեզվական պաշարը (*օր., աքրոստիքոս հորինել ըստ որոշակի սովյալների և այլն*):

Ուսուցման երրորդ (վերջին) փուլը

Լսել – եթե մինչև այժմ լսելու տեքստերն օգտագործվում էին որպես բանավոր խոսքի նմուշ, այժմ խոսելն ու լսելը փոխկապակցված, փոխստորադասված չեն: Այսպիսով, ազատ կարող ենք օգտագործել վավերական տեքստեր և լսելու կարողությանը հնարավորություն տանք, որ բանավոր խոսքից անկախ՝ ավելի արագ և խորը զարգանա: Այս փուլում աշակերտները, կհմտանան տեքստի հասկանալուն՝ հիմնվելով միայն ձայնային պատկերի վրա:

Խոսել – ավելի են հարստանում հաղորդակցական իրավիճակի տեսակները: Դասասենյակում հաղորդակցությունն ամբողջովին օտար լեզվով է ընթանում: Ուսուցման ռազմավարություններն ուղղված են ինքնարտահայտման կարողության կատարելագործմանը, դրա ճշտմանն ու հարստացմանը:

Կարդալ - այս փուլում բանավոր, թե գրավոր կարողության զարգացման գլխավոր աղբյուրն է դառնում կարդալը: Դրա միջոցով աշակերտը հարստացնում է լեզվական պաշարը և ավելի ինքնուրույն դառնում ուսման մեջ: Ավելանում է տեքստերի ծավալը և բարդության մակարդակը: Աշակերտներից պահանջվում է հասկանալ ու վերլուծել վավերական, տարբեր ժանրի կամ տեսակի, գրական կամ գործառական տեքստեր:

Գրել - վերջին փուլում աշակերտը պետք է կարողանա կազմել այնպիսի տեքստեր, որոնք նրան չափազանց պետք կգան կյանքում (գործնական/անհատական նամակ, ակնարկ և այլն): Աշակերտը կրկին օգտվում է նմուշներից, սակայն հորինում է մի փոքր մեծածավալ տեքստեր, որի ընթացքում ձեռք է բերում պատմելու, նկարագրելու, միտքը հաջորդականությամբ փոխանցելու և հիմնավորելու կարողություններ և հմտություններ:

Ուսանման ուսանում

Այս ուղղության առարկան հենց ուսումնասության գործընթացն է: Աշակերտները պետք է սովորեն անկախ ղեկավարել ուսումնական գործունեությունը: Դրա համար, հենց սկզբից պետք է սովորեցնենք ընկալել ուսումնական նպատակներն ու խնդիրները, վերլուծել ուսումնական գործընթացը՝ ով, ինչ միջոց, ինչ մոտեցում կամ ռազմավարություն է օգտագործել, ինչ դժվարությունների է հանդիպել, ինչն է նպաստել դժվարության հաղթահարմանը, ինչն է խափանել առաջընթացը, պետք է սովորեցնենք ինքնուրույն գնահատել արդյունքները, ստանձնել որոշակի հարցերի հետ կապված պատասխանատվությունը, օգտագործել տարբեր ռազմավարություններ, ստեղծել այնպիսի գործոններ, որոնք դրական ազդեցություն կունենան ուսումնական գործընթացի վրա և այլն: Որպեսզի զարգացնենք սովորելու կարողությունները և հմտությունները, աշակերտին պետք է առաջարկենք տարբեր տեսակի ակտիվություններ. օր., հարցաթերթիկներ, որոնք նրանց հնարավորություն կտան գիտակցել իրենց և այլընտրանքային մոտեցումը կոնկրետ խնդիրը լուծելիս, տարբեր բովանդակություն ունեցող ինքնագնահատման

սխեմաներ, հոգեբանական բնույթի թեստեր, որտեղ կվերլուծեն տարբեր գործոններ, որոնք դրական կամ բացասական ազդեցություն են ունենում ուսումնական գործընթացի վրա և այլն:

Մշակույթների երկխոսություն

Օտար լեզու սովորելը նշանակում է մտնել օտար աշխարհ, հայտնաբերել կյանքի տարբեր օրենքներ, ավանդույթներ, ընկալել տարբեր արժեքներ, մտածելակերպ: Այսպիսով, հաջող հաղորդակցությունը կախված է ոչ միայն խոսակցական կարողություններից և հմտություններից, այլ նաև տարբեր մշակութային համատեքստերը հասկանալու և հարգելու կարողությունից: Հենց այդ կարողությունների ու վերաբերմունքի ձևավորմանն է ծառայում «Մշակույթների երկխոսություն» ուղղությունը:

Աշակերտների ուշադրությունը կկենտրոնանա օտար մշակույթի յուրահատկությունների վրա: Աշակերտներին հնարավորություն կընձեռվի արտահայտել սեփական վերաբերմունքը, գնահատական տալ, գուգահեռներ անցկացնել սեփական մշակութային փորձի և միջավայրի հետ: Այս տիպի ակտիվությունները կխորացնեն աշակերտների մշակութային պատկանելության զգացումը, կնպաստեն, որ աշակերտները գիտակցեն մշակութային բազմազանությունը, կսովորեցնեն գնահատել սեփական և օտար մշակույթը:

Պետք է ուշադրություն դարձնել նաև անհատների միջև հարաբերություններին: Աշակերտներին պետք է հնարավորություն տրվի դասաժամին խոսել իրենց մասին, դրսևորել իրենց անհատական տարբեր կողմերը՝ լինեն դրանք ապրումներ, խանդավառություն, ճաշակ, հայացքներ, երազանք, նախընտրած գործունեություն, սիրելի կերպարներ, կյանքի պատմություններ, տեսակետ և այլն: Նրանք կծանոթանան թե՛ համադասարանցիների, թե՛ օտարալեզու հասակակիցների հոգևոր ներաշխարհին և դրա միջոցով կկարողանան զգալ սեփական և ուրիշների անհատականության անկրկնելիությունը, կսովորեն գնահատել այլ անհատների, լսել, հասկանալ, աջակցել միմյանց: Այս ամենը խթան կհանդիսանա, որ աշակերտներն ավելի հանդուրժողական դառնան միմյանց և ուրիշների նկատմամբ:

Օտար լեզվի գործնական կիրառությունը

Այս ուղղությունն առնչվում է սոցիալական այն նպատակի իրագործման հետ, որն ավելի ու ավելի մեծ նշանակություն է ձեռք բերում օտար լեզուների մանկավարժության մեջ, մասնավորապես՝ սոցիալապես ակտիվ այնպիսի անհատի դաստիարակում, որը կկարողանա համագործակցել տարբեր լեզվա-մշակութային ինքնություն ունեցող քաղաքացիների հետ: Գլխավոր համապիտանի կարողությունը և հմտությունը, որի զարգացմանը պետք է ծառայի այս ուղղությունը, համալիր բնույթի խնդիրների ինքնուրույն լուծումն է՝ խմբային թե՛ անհատական աշխատանքի ձևաչափով: Մեթոդական առումով, նման հանձնարարությունները նպաստում են հաղորդակցական-լեզվական կարողությունների առավել լավ տիրապետմանը, քանի որ աշակերտները լեզվական թե՛ հաղորդակցական ակտիվություններում ձեռք բերած գիտելիքները և փորձը կիրառում են տարբեր իրավիճակներում: Այս ուղղության մեջ ներառվում է նախագծի իրագործումը, տեքստերի մշակումը՝ դրանց հետագա գործածության նպատակով, և **մեդիացիան**: Մեդիացիան և՛ բանավոր ակտիվություն է, և՛ գրավոր: Այն նկատի ունի ցանկացած տեսակի տեքստի բովանդակության փոխանցում թարգմանության, ամփոփման և

մեկնաբանման միջոցով: Մեդիացիայի նշանակումը կոնկրետ տեքստի բովանդակության հասանելի դարձնելն է նրան, ում համար այդ տեքստն անմիջականորեն մատչելի չէ:

Չափորոշում մատնանշված դասիչները

Չափորոշում գրանցված յուրաքանչյուր արդյունքի սկզբից դասիչ է կցված: Օր., **օտ.տ.ՅՅ.1.**՝ առաջին «**օտ**». նշանը մատնանշում է առարկան (օտ=օտար լեզու), երկրորդ «**տ**» նշանը մատնանշում է աստիճանը (տ=տարրական, բ=բազային-միջին), երրորդ «**ՅՅ**» նշանը մատնանշում է լեզվի տիրապետման մակարդակը, իսկ վերջին «**1**»-ը՝ արդյունքի կարգը (1=առաջին արդյունք):

զ) Օտար լեզվի գնահատումը

Օտար լեզվի գնահատման բաղադրամասերը

Տնային և դասարանական հանձնարարությունների բաղադրամասերը

Կարելի է գնահատել հետևյալ գիտելիքը, կարողությունները և հմտությունները.

Լեզվական գիտելիք ու կարողություններ

- Բառապաշարային գիտելիք
- Քերականական գիտելիք
- Բառային ու քերականական կարողություններ և հմտություններ (գիտելիքի գործածումը համատեքստում)
- Արտասանություն
- Ուղղագրություն

Հաղորդակցական կարողություններ

- Կարդալ-հասկանալ
- Բարձրաձայն ընթերցանություն
- Լսել-հասկանալ
- Բանավոր հաղորդակցություն (ինտերակցիա, կապակցված խոսք, բանավոր ելույթներ)
- Գրավոր հաղորդակցություն

Մշակույթ

- Սովորած հարցերի իմացություն
- Մշակութային յուրահատկությունների հայտնաբերում-վերլուծություն

Կենսական կարողություններ և հմտություններ

- Ստեղծագործականություն
- Համագործակցություն (*գույգի, խմբի անդամների հետ*)
- Ուսումնական ռազմավարությունների գիտակցված գործածություն (*կարդալու, գրելու, լսելու և բանավոր խոսքի*)

- Ռազմավարությունների գիտակցված գործածություն՝ ուսումնական գործունեությանը նպաստելու նպատակով
- Ուսումնական ակտիվություններին մասնակցելու աստիճանը

Կարողությունները և հմտությունները գնահատվում են հետևյալ առաջադրանքներով.

- Տարբեր տեսակի քերականական ու բառապաշարային վարժություններ *(գտնել ճիշտ ձևը, ըստ նմուշի ձևափոխել ձևը/կառուցվածքը, ըստ համատեքստի կազմել ճշգրիտ ձևը, գտնել-ուղղել սխալները, կապակցել/հորինել հոմանիշներ և հակահիշներ, տրված տեքստում տեղադրել բաց թողնված բառերը և այլն):*
- Լուծել տարբեր տեսակի ընթերցանության և ունկնդրման խնդիրներ *(ընդգծի՛ր ճիշտ տարբերակը, նշի՛ր, թե ճի՞շտ է արդյոք, գտի՛ր ճիշտ հաջորդականությունը, բացատրի՛ր անծանոթ բառերն ըստ համատեքստի, գնահատի՛ր քո գուգակցի/քո գրավորը, գնահատի՛ր էություն ունեցողներին և այլն):*
- Ինքնուրույն, զույգի կամ խմբի հետ կատարել տարբեր տեսակի բանավոր ակտիվություններ *(բաժանե՛ք դերերը և խաղացե՛ք գուգակցի հետ, հարցազրույց անցկացրո՛ւ համադասարանցուդ հետ, դասարանին ներկայացրո՛ւ քո խմբի աշխատանքը, փոխանցի՛ր քո տեսակետն ու հիմնավորի՛ր, դատի՛ր, բնութագրի՛ր, պատմի՛ր և այլն):*
- Ինքնուրույն, զուգակցի կամ խմբի հետ կազմել տարբեր տեսակի տեքստեր *(ամառային արձակուրդների վերաբերյալ նամակ գրե՛ք ձեր ընկերոջը, պատրաստե՛ք խմբային հողված հայտնի դերասանի մասին, կազմե՛ք կենսագրական տեղեկատու, ավարտե՛ք լուրը, բաժանվե՛ք խմբերի և կազմե՛ք հեռուստատեսային գովազդ/զբոսաշրջական ուղեցույց, գրե՛ք ձեր տեսակետն այդ հարցի վերաբերյալ, հիմնավորե՛ք և այլն):*
- Նախագծի իրագործում:

Ծանոթություն. տարրական դասարաններում առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում հետևյալ կարողություններին և հմտություններին՝

- Բարձրաձայն ընթերցանություն
- Ցածրաձայն ընթերցանություն *(ինքնուրույն լուծել պարզ ընթերցանության խնդիրները)*
- Դուրս գրել
- Արտագրություն
- Թելադրելով գրել

Ամփոփիչ առաջադրանքների բաղադրամասը

Ամփոփիչ առաջադրանքի բաղադրամասը առնչվում է ուսանում-ուսուցման արդյունքին: Այս բաղադրամասում պետք է գնահատվեն մեկ ուսումնական հատվածի (թեմա, գլուխ, պարագրաֆ, հարց) ուսումնասիրման-մշակման հետևանքով ստացված արդյունքները: Կոնկրետ ուսումնական միավորն ավարտելուց հետո, աշակերտը պետք է կարողանա դրսևորել օտար լեզուների չափորոշչով սահմանված գիտելիքն ու կարողությունները: Համապատասխանաբար, ամփոփիչ հանձնարարությունները պետք է ստուգեն օտար լեզուների չափորոշիչներով սահմանված արդյունքները:

Ամփոփիչ առաջադրանքների տեսակները

Չափորոշի պահանջներն ապահովելու համար, խորհուրդ է տրվում գործածել ամփոփիչ առաջադրանքների բազմապիսի ձևեր: Օտար լեզուների ամփոփիչ առաջադրանքները կարող են լինել հետևյալ տեսակի.

- Լսած կամ բանավոր տեքստի ընկալում-վերլուծում
- Չափորոշչով սահմանված տարբեր տեսակի տեքստերի կազմում
- Դերերով մասնակցություն խաղերին, ձևական իրավիճակներին
- Ինտերակցիա կոնկրետ հարցի/թեմայի շուրջ
- Ջրույց կոնկրետ թեմայի/հարցի վերաբերյալ
- Բանավոր զեկուցում
- Իրագործված նախագիծ
- Եվ այլն:

Պահանջներ, որոնք պետք է բավարարեն ամփոփիչ առաջադրանքները

- Առաջադրանքի յուրաքանչյուր տեսակ պետք է ունենա իր գնահատման ընդհանուր աղյուսակը (եթե յուրացման (կարդալ, լսել) առաջադրանք է, ապա յուրաքանչյուր թեստային հարց պետք է ունենա գնահատման սխեմա):
- Ընդհանուր գնահատման աղյուսակը պետք է ճշտվի ըստ կոնկրետ առաջադրանքի պայմանի և անցած նյութի:
- 10 միավորը պետք է բաշխվի գնահատման աղյուսակի չափանիշների միջև:
- Պետք է մատնանշված լինեն չափորոշչի այն արդյունքները, որոնց ստուգմանը ծառայում է ամփոփիչ առաջադրանքը:

Ընդհանուր գնահատման աղյուսակի նմուշը.

Գնահատման ընդհանուր աղյուսակ գրավոր և բանավոր ամփոփիչ առաջադրանքների համար

- ▶ Համապատասխանություն պայմանին
- ▶ Հաղորդակցական կարողություններ և հմտություններ
- ▶ Լեզվական կարողություններ և հմտություններ
- ▶ Ստեղծագործական կարողություններ և հմտություններ

Կոնկրետ գնահատման աղյուսակների նմուշներ

Նմուշ 1. Ամփոփիչ առաջադրանք բանավոր խոսքի համար

Առաջադրանքի պայմանը. տրված նկարի հիման վրա, շարադրի՛ր և պատմի՛ր՝ ինչ էր կատարվում լուսանկարելուց երկու-երեք ժամ առաջ և ինչ կատարվեց հետո: Ճշտի՛ր կերպարների ինքնությունը, բնութագրի՛ր նրանց, շարադրի՛ր պատմությունը, մատնանշի՛ր գործողությունների հաջորդականությունը, ժամանակն ու տեղը: Խոսելու նվազագույն ժամանակը՝ 2 րոպե:

Չափանիշների ցանց վերևում տրված ամփոփիչ գրավոր առաջադրանքների համար	Միավորներ
Համապատասխանություն պայմանին	
Պահպանում է ժամանակի սահմանաչափը	0 - 1

Պահպանում է պայմանի իմաստային պահանջները	0 - 1
Հաղորդակցական կարողություններ և հմտություններ	
Հաջորդաբար նկարագրում/փոխանցում է գործողությունները	0 - 1
Սահմանում է գործողության ժամանակն ու տեղը	0 - 1
Լեզվական կարողություններ և հմտություններ	
Գործածում է ժամանակ արտահայտող սովորած քերականական կառուցվածքներն ու լեզվական ձևերը	0-2
Համապատասխանաբար է գործածում բայի անցյալ ժամանակն արտացոլող ձևերը	0 - 1
Կիրառում է սովորած բառապաշարը	0 - 1
Ստեղծագործական կարողություններ և հմտություններ	
Դրսևորում է երևակայության կարողություն, ինքնօրինակություն	0 - 1
Դրսևորում է համարձակություն լեզվական առումով	0 - 1
<i>Միավորների առավելագույն քանակը՝ 10</i>	

Ամփոփիչ հանձնարարության համապատասխանությունը չափորոշչին

Օտ.բ.IV.17. Աշակերտը կարող է խոսել ծանոթ թեմաներով:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Հաղորդում է լսած/կարդացած տեքստի բովանդակությունը:
- Հաղորդում է որևէ դեպքի կարևոր մանրամասները:
- Դեպք է պատմում:
- Նկարագրում է իրական կամ երևակայական երևույթ:
- Հստակ և հասկանալի ձևակերպում է իր միտքը:

Օտ.բ.IV.18. Աշակերտը տիրապետում է բազային լեզվական կարողություններին և հմտություններին և կիրառում է դրանք:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Օգտագործում է գրույցի թեմային համապատասխան սովորած բառապաշար:
- Սովորած լեզվական կառուցվածքների մեջ պահպանում է շարահյուսական հարաբերությունները:
- Պատմություններ հաղորդելիս՝ պատշաճ կերպով օգտագործում է սովորած բայաձևերը՝ անցյալ, ներկա և ապառնի ժամանակներն արտահայտելու համար:
- Օգտագործում է պարզ կառուցվածքներ՝ գործողությունների համաժամանակությունն ու հաջորդականությունն (նախորդող/հաջորդող գործողությունների) արտահայտելու համար:

Նմուշ 2. Ամփոփիչ հանձնարարություն գրավոր խոսքի համար

Հանձնարարության պայմանը: Ըստ տրված կենսագրական տեղեկատուի, գրի՛ր բանաստեղծի կենսագրությունը: Գործածի՛ր լեզվական կառուցվածքներ՝ մինչև-ով շուտ, ...ուց ... հետո (օր., հանձնելուց երկու տարի հետո...): Բառերի նվազագույն քանակը՝ 100:

Չափանիշների ցանց վերևում տրված ամփոփիչ գրավոր առաջադրանքների համար	Միավորներ
Համապատասխանությունը պայմանին	
Պահպանում է բառերի քանակի ստորին սահմանը	0 - 1
Պահպանում է պայմանի իմաստային պահանջները (գրում է՝ հիմնվելով տրված կենսագրական տեղեկատուի վրա, գործածում է մատնանշված կառույցը)	0 - 1
Հաղորդակցական կարողություններ և հմտություններ	
Հստակորեն և հաջորդաբար է փոխանցում տեղեկությունները	0 - 2
Ճշտում է, թե երբ և ինչ կատարվեց	0 - 2
Լեզվական կարողություններ և հմտություններ	
Գործածում է ժամանակ արտահայտող իր սովորած քերականական կառուցվածքները, ձևերը	0 - 2
Կիրառում է ձեռք բերած բառապաշարը	0 - 1
Ստեղծագործական կարողություններ և հմտություններ	
Դրսևորում է համարձակություն՝ լեզվական առումով	0 - 1
<i>Միավորների առավելագույն քանակը՝ 10</i>	

Համապատասխանությունը չափորոշչին

Օտ.բ.III.13. Աշակերտը կարող է, օժանդակ աղբյուրների վրա հիմնվելով, կազմել փոքրածավալ տեքստեր:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կարդացած տեքստում ի մի է բերում իր սովորած հանգուցային բառերը, լեզվական կառուցվածքները և, դրանց վրա հիմնվելով՝ կազմում համանման կառուցվածքի տեքստ:
- Ընդարձակում է սեղմ, համառոտ հաղորդված պատմվածքը/տեղեկությունը:
- Հասկանալի է փոխանցում բովանդակությունը:

Օտ.բ.III.14. Գրելիս աշակերտը կարողանում է պահպանել տեքստի կառուցվածքը, տիրապետում է բազային լեզվական կարողություններին և հմտություններին և փորձում է կիրառել դրանք:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տեքստը կազմելիս՝ պահպանում է իմաստային փոխկապակցության պարզ լեզվական-քերականական միջոցները (*օր., գոյականները ճշգրտորեն փոխարինում է դերանուններով և պարզ մակբայներով*):
- Պատշաճորեն օգտագործում է նոր սովորած բառերն ու արտահայտությունները:
- Դեպքեր/փաստեր հաղորդելիս՝ գործածում է համապատասխան բայաձևեր՝ ներկա, անցյալ և ապագա ժամանակն արտահայտելու համար:
- Գործածում է մակբայներ, նախդիրներ, կայուն բառակապակցություններ՝ գործողությունների, երևույթների ժամանակը ճշտելու համար (*օր., երեկոյան, մինչև գնալը, առավոտվանից և այլն*):

- Գործածում է պարզ լեզվական կառույցներ՝ գործողությունների միջև եղած տրամաբանական կապերն (օր., պատճառահետևանքային, ներհակական) արտահայտելու համար (օր., համադաս նախադասություն, պարզ ստորադասում):
- Ճշգրտորեն է գործածում սովորած շարադասական հարաբերությունները բառերի միջև:
- Նկարագրելիս ճշտում է գտնվելու վայրը՝ գործածելով մակբայներ, պարզ լեզվական բանաձևեր:
- Պահպանում է կետադրական և ուղղագրական նորմերը:

Լեզվի տիրապետման մակարդակը և ակադեմիական առաջադիմությունը

Աշակերտներն օտար լեզվից գնահատվում են ըստ այն մակարդակի պահանջների, որոնց տիրապետում են իրենք: Օրինակ, եթե XI դասարանցին սկսում է անգլերեն սովորել, նա այդ տարին կսովորի ըստ ԲԻ մակարդակի չափորոշի և կգնահատվի ըստ այդ մակարդակի չափորոշի պահանջների: Տարեկան միավորի հետ մեկտեղ, պետք է մատնանշվի չափորոշի այն մակարդակը, որի համաձայն գնահատվել է աշակերտը: Աստիճանն ավարտելիս, կարելի է մատնանշել նաև չափորոշի մակարդակին համապատասխան եվրաչափորոշի մակարդակը: Օր., աշակերտը, որը մինչև X դասարանը սովորում էր ֆրանսերեն և ռուսերեն, իսկ XI դասարանից ռուսերենի փոխարեն սկսել է անգլերեն սովորել, միջին աստիճանն ավարտելիս, կգնահատվի հետևյալ կերպ.

- Առաջին լեզու՝ ֆրանսերեն, ԲՎԻ, միավոր՝ 9
- Երկրորդ լեզու՝ ռուսերեն, ԲԻԻ, միավոր՝ 6
- Երկրորդ լեզու՝ անգլերեն, ԲԻԻ, միավոր՝ 8

ԳԼՈՒԽ XXV

Առարկայական իրազեկությունները տարրական աստիճանում

01 մակարդակ (տ 01)

Օտար լեզու

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների .

Լսել	Կարդալ	Գրել
<p>Օտ.տ.01.1. Աշակերտը հասկանում է ուսուցչի հրահանգները:</p> <p>Օտ.տ.01.2. Աշակերտը հասկանում է լսած պատկերագրող փոքր երկխոսությունները/մենախոսությունները:</p>	<p>Օտ.տ.01.5. Աշակերտը կարողանում է ճանաչել հայտնի և հաճախակի գործածվող բառերի ուղղագրական պատկերը անմիջականորեն</p>	<p>Օտ.տ.01.7. Աշակերտը կարողանում է արտանկարել բառերը:</p>

<p>Օտ.տ.01.3. Աշակերտը հասկանում է լսած պատկերագարդ նկարագրական/պատմողական բնույթի տեքստերը:</p> <p>Օտ.տ.01.4. Աշակերտը կարողանում է գործածել պատշաճ ռազմավարություններ՝ բովանդակությունը հասկանալու համար:</p>	<p>(առանց վերծանելու):</p> <p>Օտ.տ.01.6. Աշակերտը ձեռք է բերել տեքստի հետ աշխատելու սկզբնական հմտությունները:</p>	
---	---	--

Խոսել	Մշակույթների երկխոսություն	Ուսանման ուսանում
<p>Օտ.տ.01.8. Աշակերտը ձեռք է բերել տարրական հնչյունաբանական կարողություններ և հմտություններ:</p> <p>Օտ.տ.01.9. Աշակերտը կարող է ընկալել, ընդօրինակել, կրկնել օտար լեզվի հնչյունները, հնչեղությունը, հնչերանգները:</p> <p>Օտ.տ.01.10. Աշակերտը կարող է մասնակցել պարզ ինտերակցիաներին:</p>	<p>Օտ.տ.01.11. Աշակերտը կարող է ճանաչել մշակույթի բնագավառի տեղեկությունը, համեմատել օտար և հայրենի սոցիալ-մշակութային միջավայրերը:</p>	<p>Օտ.տ.01.12. Աշակերտը կարող է կազմակերպել ուսումնական գործունեությունը:</p> <p>Օտ.տ.01.13. Աշակերտն ակտիվորեն ընդգրկված է ուսումնական գործընթացի մեջ:</p>

Տարեվերջին նվաճվելիք արդյունքները և դրանց ստուգիչները.

Ուղղություն. լսել

Օտ.տ.01.1. Աշակերտը հասկանում է ուսուցչի հրահանգները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Պատշաճորեն է արձագանքում ուսուցչի հրահանգներին (վե՛ր կաց, նստի՛ր, արի՛ գրատախտակի մոտ և այլն):

Օտ.տ.01.2. Աշակերտը հասկանում է լսած պատկերագարդ փոքր երկխոսությունները/մենախոսությունները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կերպարների ճանաչում է ձայնի հնչերանգով:

- Ռեպլիկաները կապում է կերպարների հետ:
- Հնչերանգներով արտահայտված հույզերը կապում է պատկերազարդ կերպարների հայացքների հետ:
- Ճանաչում է սովորած բառերը և դրանց վրա հենվելով՝ ռեպլիկներն ու նախադասությունները կապում համապատասխան պատկերազարդումների հետ:

Օտ.տ.01.3. Աշակերտը հասկանում է լսած պատկերազարդ նկարագրական/պատմողական բնույթի տեքստերը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ճանաչում է գործող անձին, կենդանուն, առարկան, և կապում համապատասխան նկարի հետ/մարմնավորում է ձեռածությամբ/նկարում է/մատնանշում է իրական առարկան:
- Ճանաչում է կերպարին, կենդանուն, առարկան՝ ըստ նկարագրված հատկանիշների (*օր., կարմիր, կլոր, մեծ, փոքր*), և մատնանշում է/ներկում/ընդգծում դրանք:
- Ճանաչում է կոնկրետ գործողությունները և մարմնավորում կամ մատնանշում դրանք նկարի վրա (*խաղում է, նկարում է, թռչկոտում է և այլն*):

Լսելու ռազմավարությունները

Օտ.տ.01.4. Աշակերտը կարողանում է գործածել պատշաճ ռազմավարություններ՝ բովանդակությունը հասկանալու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Փորձում է ինքնուրույն հասկանալ անծանոթ բառերը, արտահայտությունները՝ հիմնվելով ծանոթ բառային կամ ոչ բառային տարրերին (, տարբեր տեսակի աղմուկ, հնչերանգ, պատկերազարդում):

Ուղղություն. կարդալ

Օտ.տ.01.5. Աշակերտը կարողանում է ճանաչել հայտնի և հաճախ գործածվող բառերի ուղղագրական պատկերը¹ անմիջականորեն (առանց վերծանելու):

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ճանաչում է սեփական և որոշ համադասարանցիների անունները:
- Ճանաչում է բանավոր խոսքից սովորած կարճ բառերը:
- Բառերի ցուցակում, փոքր տեքստում, բանաստեղծության մեջ գտնում է նախօրոք մատնանշված բառը:
- Ծանոթ բառի մեջ ճանաչում է տառը/տառային միավորները և կապում համապատասխան հնչյունի հետ:

¹ *Ճանաչել բառի ուղղագրական պատկերը՝ ճանաչել ամբողջական բառը, առանց վանկերի և մասերի բաժանելու, այսպես կոչված՝ անմիջական ճանապարհով: Եթե աշակերտի հիշողության մեջ կա կոնկրետ բառի ուղղագրական պատկերը, այսինքն՝ դրանում տրված տառերի կարգավորված հաջորդականությունը, ապա նա տեսնելուն պես կապում է նկարն այդ բառի իմաստի հետ:*

Օտ.տ.01.6. Աշակերտը ձեռք է բերել տեքստի հետ աշխատելու սկզբնական հմտություններ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Թղթի վրա տարբերում է բառային և ոչ բառային մասերը՝ լոգոն, պատկերագրողումը, պատկերագրողման մակագրությունը, տեքստը, վերնագիրը:
- Օտարալեզու և վրացերեն տեքստում առանձնացնում է պարբերության, քառյակի, նախադասության սկիզբն ու վերջը:
- Հաշվում է պարբերությունների քանակը տեքստում, տողերինը՝ պարբերության մեջ, բառերինը՝ տողերում:
- Տարբերում է տպագրական նշանները (*օր.*, *շեղ*, *խոշոր*, *մզացրած տառատեսակը* և *այլն*):
- Գտնում է կետադրական նշանները (*օր.*, *կետը*, *հարցական նշանը*):
- Տարբերում է վրացերեն և օտար լեզուներով գրված տեքստերը:

Ուղղություն. գրել

Օտ.տ.01.7. Աշակերտը կարողանում է արտանկարել բառերը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ուսուցչին խնդրում է ցույց տալ, թե ինչպես է գրվում իր անունը և արտագրում է (*արտանկարում*) իր անունը:
- Ձևնում է տառի ձևը, համեմատում որևէ ծանոթ ձևի կամ առարկայի հետ:
- Ձեռքի շարժումով, լարով, պլաստիլինով պատկերում է ծանոթ տառի ձևը:
- Գրատախտակից արտագրում է այն բառը, որի ուղղագրական պատկերը ճանաչում է, և դրա կողքին պատկերում է համապատասխան պատկերագրողումը:

Ուղղություն. խոսել

Օտ.տ.01.8. Աշակերտը ձեռք է բերել տարրական հնչյունաբանական կարողություններ և հմտություններ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ճանաչում է օտար լեզվին բնորոշ հնչյունները:
- Բառը բաժանում է վանկերի, վանկերով բառեր կազմում:
- Գտնում և ծափահարելով հաշվում է բառի վանկերը:
- Ուսուցչի թվարկած բառերի մեջ գտնում է այն բառերը, որոնք պարունակում են նախօրոք մատնանշված հնչյունը/վանկը:
- Վանկերի քանակը ներկայացնում է համապատասխան քանակության պայմանանշաններով (*օր.*, *միավանկ բառը՝ մեկ աղեղով, երկվանկը՝ երկու աղեղով և այլն*):
- Գտնում է բառի մեջ մատնանշված վանկի դիրքը (*սկզբում, մեջտեղում, վերջում*) և պայմանականորեն պատկերում այն (*օր.*, *եռավանկ բառն արտահայտող երեք աղեղից ներկում է մատնանշված վանկի համապատասխան աղեղը*):
- Լսած նախադասության մեջ առանձնացնում է բառերը:

- Ուսուցչի թվարկած բառերի մեջ գտնում է այն բառերը, որոնք սկսվում են նախօրոք մատնանշված հնչյունով:
- Միավանկ բառերը բաժանում է հնչյունների, հնչյուններով բառեր կազմում:

Օտ.տ.01.9. Աշակերտը կարող է ընկալել, ընդօրինակել, կրկնել օտար լեզվի հնչյունները, հնչեղությունը, հնչերանգները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Բանաստեղծություն է արտասանում, հաշվարկներ անում, երգեր կատարում:
- Բանաստեղծության/երգի բովանդակությունը պատշաճորեն համապատասխանեցնում է ոչ բառային խոսքին (*հնչերանգին, դիմախաղին, ձեռածությանը, ռիթմային շարժումներին*):
- Կրկնում է ուսուցչի արտաբերած հնչյունները, բառերը, համառոտ արտահայտությունները, շուտասելուկները:
- Տեքստը հնչեցնելիս, պահպանում է համապատասխան հնչերանգը, շեշտերը, ռիթմային հատվածները:

Օտ.տ.01.10. Աշակերտը կարող է մասնակցել պարզ ինտերակցիաներին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Մեկական բառով պատասխանում է պարզ հարցերին կամ արձագանքում դրանց ոչ բառային միջոցներով (*օր., Այս գնդակն ի՞նչ գույն է, - Կարմիր: Որտե՞ղ է մեքենան, - Մատնանշում է համապատասխան նկարը*):

Ուղղություն. մշակույթների երկխոսություն

Օտ.տ.01.11. Աշակերտը կարող է ճանաչել մշակույթի բնագավառի տեղեկատվությունը, համեմատել օտար և հայրենի սոցիալ-մշակութային միջավայրերը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դիտարկում է և հայտնաբերում ուսումնական նյութում տրված մշակութային, սոցիալ-մշակութային իրողությունները (նկարներում արտացոլված հեքիաթների, շարժապատկեր ֆիլմերի կերպարները, դրոշմ և այլն):
- Գտնում է ուսումնական նյութում արտացոլված կոնկրետ նմանություններն ու տարբերությունները (*հատուկ անուններ, հնչյուններ և այլն*):

Ուղղություն. ուսանման ուսանում

Օտ.տ.01.12. Աշակերտը կարող է կազմակերպել ուսումնական գործունեությունը:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Խնամում և կարգավորում է ուսումնական իրերը:

- Բերում է անհրաժեշտ իրեր:
- Կարողանում է կենտրոնացնել ուշադրությունը:
- Փորձում է պահպանել ժամանակի սահմանաչափը ամեն տեսակի ակտիվություններ կատարելիս:

Օտ.տ.01.13. Աշակերտն ակտիվորեն ընդգրկված է ուսումնական գործընթացի մեջ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Փորձում է լուծել տրված խնդիրները:
- Ստեղծում է ռեսուրսներ և օգտագործում դրանք (*օր., քարտ, լստո, նկար, տուփ*):

Տարրական աստիճան՝ 02 մակարդակ (տ02)

Օտար լեզու

Չափորոշիչ

Տարվեվերջին նվաճվելիք արդյունքներն՝ ըստ ուղղությունների.

Լսել	Կարդալ	Գրել
<p>Օտ.տ.02.1. Աշակերտը հասկանում է ուսուցչի հրահանգներն ու վարժության պարզագույն ցուցումները:</p> <p>Օտ.տ.02.2. Աշակերտը հասկանում է լսած պատկերագարդ փոքր երկխոսությունները/մենախոսությունները:</p> <p>Օտ.տ.02.3. Աշակերտը հասկանում է լսած պատկերագարդ նկարագրական/պատմողական բնույթի տեքստերը:</p> <p>Օտ.տ.02.4. Աշակերտը կարողանում է գործածել պատշաճ ռազմավարություններ՝ բովանդակությունը հասկանալու համար:</p>	<p>Օտ.տ.02.5. Աշակերտը կարողանում է ճանաչել ծանոթ և հաճախակի գործածվող բառերի ուղղագրական պատկերը:</p> <p>Օտ.տ.02.6. Աշակերտը ձեռք է բերել տեքստի հետ աշխատելու սկզբնական հմտությունները:</p>	<p>Օտ.տ 02.7. Աշակերտը կարողանում է արտանկարել բառերը:</p>

Խոսել	Մշակույթների երկխոսություն	Ուսանման ուսանում
Օտ.տ.02.8. Աշակերտը ձեռք է բերել տարրական	Օտ.տ.02.11. Աշակերտը կարող է ճանաչել	Օտ.տ.02.12. Աշակերտը կարող է կազմակերպել

<p>հնչյունաբանական կարողություններ և հմտություններ:</p> <p>Օտ.տ.02.9. Աշակերտը կարող է ընկալել, ընդօրինակել, կրկնել օտար լեզվի հնչյունները, հնչեղությունը, հնչերանգները:</p> <p>Օտ.տ.02.10. Աշակերտը կարող է մասնակցել պարզ ինտերակցիաներին:</p>	<p>մշակույթի բնագավառի տեղեկությունը, համեմատել օտար և հայրենի սոցիալ-մշակութային միջավայրերը:</p>	<p>ուսումնական գործունեությունը:</p> <p>Օտ.տ.02.13. Աշակերտն ակտիվորեն ընդգրկված է ուսումնական գործընթացի մեջ:</p> <p>Օտ.տ.02.14. Աշակերտը ձեռք է բերել համադասարանցիների և ուսուցչի հետ համագործակցելու սկզբնական հմտությունները:</p>
--	--	--

Տարեվերջին նվաճվելիք արդյունքները և դրանց ստուգիչները.

Ուղղություն. լսել

Օտ.տ.02.1. Աշակերտը հասկանում է ուսուցչի հրահանգներն ու վարժության պարզագույն ցուցումները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Պատշաճորեն է արձագանքում ուսուցչի հրահանգներին (*օր., վե՛ր կաց, նստի՛ր, արի՛ գրատախտակի մոտ և այլն*):
- Կատարում է ուսուցչի հրահանգները:

Օտ.տ.02.2. Աշակերտը հասկանում է լսած պատկերագարդ փոքր երկխոսությունները/մենախոսությունները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Կերպարներին ճանաչում է ձայնի հնչերանգով:
- Ռեպլիկաները կապում է կերպարների հետ:
- Հնչերանգներով արտահայտված հույզերը կապում է պատկերագարդ կերպարների հայացքների հետ:
- Ճանաչում է սովորած բառերը և դրանց վրա հենվելով՝ ռեպլիկաներն ու նախադասությունները կապում համապատասխան պատկերագարդումների հետ:

Օտ.տ.02.3. Աշակերտը հասկանում է լսած պատկերագարդ նկարագրական/պատմողական բնույթի տեքստերը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ճանաչում է կերպարին, կենդանուն, առարկան և կապում համապատասխան նկարի հետ/մարմնավորում է ձեռածությամբ/նկարում է/մատնանշում է իրական առարկան:
- Ճանաչում է կերպարին, կենդանուն, առարկան՝ ըստ նկարագրված առանձնահատկությունների (*օր., կարմիր, կլոր, մեծ, փոքր*), և մատնանշում է/ներկում/շրջագծում դրանք:
- Գտնում և մատնանշում է դրանց դիրքը (*օր., սեղանի վրա, տետրի վրա, պայուսակի մեջ, արկղի մեջ*):
- Ճանաչում է կոնկրետ գործողությունները և մարմնավորում կամ մատնանշում դրանք նկարի վրա (*օր., նախաճաշում է, վարժություն է անում, կարդում է, լողում է և այլն*):
- Գործողությունները կապում է կերպարների հետ:
- Հայտնաբերում է գործողությունների հաջորդականությունը:

Լսելու ռազմավարությունները

Օտ.տ.02.4. Աշակերտը կարողանում է գործածել պատշաճ ռազմավարություններ՝ բովանդակությունը հասկանալու համար:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Պատկերագրողումների, վերնագրի հիման վրա կարծիք է արտահայտում տեքստի բովանդակության վերաբերյալ:
- Ձայնագրությունը կամ անմիջական խոսքը լսելիս, հիմնվում է ոչ բառային տարրերին (*օր., ձայնին տեմբրին, տարրեր տեսակի աղմուկին, հնչերանգին, միմիկային, ձեռածությանը*):
- Փորձում է ինքնուրույն հասկանալ անձանոթ բառերը, արտահայտությունները՝ հիմնվելով ծանոթ բառային կամ ոչ բառային տարրերին(, *տարրեր տեսակի աղմուկ, հնչերանգ, պատկերագրողում*):

Ուղղություն. կարդալ

Օտ.տ.02.5. Աշակերտը կարողանում է ճանաչել ծանոթ և հաճախ գործածվող բառերի ուղղագրական պատկերը²:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ազատ ճանաչում է իր և համադասարանցիների անունները:
- Ազատ ճանաչում է բանավոր խոսքից սովորած մոտ քսան բառերի ուղղագրական պատկերը:
- Բառերի ցուցակում, փոքր տեքստում, բանաստեղծության մեջ գտնում է ծանոթ բառերը:
- Մտապահված բառերի մեջ հայտնաբերում է տառերը/տառային միավորները և կապում համապատասխան հնչյունների հետ:

² Ճանաչել բառի ուղղագրական պատկերը՝ ճանաչել ամբողջական բառը, առանց վանկերի և մասերի բաժանելու, այսպես կոչված՝ անմիջական ճանապարհով: Եթե աշակերտի հիշողության մեջ կա կոնկրետ բառի ուղղագրական պատկերը, այսինքն՝ դրանում տրված տառերի կարգավորված հաջորդականությունը, ապա նա տեսնելուն պես կապում է նկարն այդ բառի իմաստի հետ:

- Մտապահված բառերի հիման վրա, վերլուծում է այլ բառեր, դրանց մեջ գտնում է համանման տառերը/տառերի կապակցությունները:
- Տարբերում է տպագիր և ձեռագիր տառերը:

Օտ.տ.02.6. Աշակերտը ձեռք է բերել տեքստի հետ աշխատելու սկզբնական հմտություններ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Հիմնվելով ծանոթ բառերին և պատկերազարդումներին, ընկալում է *(երկու-երեք նախադասությունից բաղկացած)* փոքր տեքստի բովանդակությունը:
- Առանձնացնում է տեքստի պարբերության, քառյակի, նախադասության սկիզբն ու վերջը:
- Տեքստի մեջ հաշվում է պարբերությունների քանակը, պարբերության մեջ՝ տողերի, տողերի մեջ բառերի:
- Թղթի վրա տարբերում է բառային և ոչ բառային մասերը *(օր., լոզոն, պատկերազարդումը, պայմանանշանը, վարժության պայմանը, պատկերազարդման մակագրությունը, հիմնական տեքստը, վերնագիրը)*:
- Տարբերում է տպագրական նշանները *(օր., շեղ, խոշոր, մգացրած տառատեսակը և այլն)*:
- Գտնում է կետադրական նշանները *(օր., կետը, հարցական նշանը, ստորակետը)*:

Ուղղություն. գրել

Օտ.տ.02.7. Աշակերտը կարողանում է արտանկարել բառերը:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Արտանկարում է իր անունը:
- Նկարում է որևէ առարկա, իր, տեսարան կամ կերպար, վերնագրում է նկարը և խնդրում ուսուցչին, որ գրատախտակի վրա գրի համապատասխան բառը, որն այնուհետև արտագրում է *(արտանկարում է)* գրատախտակից:
- Գրատախտակից արտագրում է այն բառը, որի ուղղագրական պատկերը գիտի:

Ուղղություն. խոսել

Օտ.տ.02.8. Աշակերտը ձեռք է բերել տարրական հնչյունաբանական կարողություններ և հմտություններ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Տարբերում է միանման հնչեղության բառերը, վանկերը:
- Բառերը բաժանում է վանկերի, վանկերով բառեր կազմում:
- Գտնում է վանկերի քանակը և ներկայացնում դրանք համապատասխան քանակի պայմանանշաններով *(օր., միավանկ բառը՝ մեկ աղեղով, երկվանկը՝ երկու աղեղով և այլն)*:
- Գտնում է այն բառերը, որոնց մեջ մտնում են նախօրոք մատնանշված հնչյունը/վանկը:

- Գտնում է բառի մեջ մատնանշված վանկի դիրքը (*սկզբում, մեջտեղում, վերջում*) և պայմանականորեն պատկերում դա (*օր., եռավանկ բառն արտահայտող երեք աղեղից ներկում է մատնանշնված վանկի համապատասխան աղեղը*):
- Նկարներով ներկայացված կամ ուսուցչի թվարկած բառերից առանձնացնում է այն բառերը, որոնք սկսվում/վերջանում են նախօրոք մատնանշված հնչյունով:
- Նկարներով տրված կամ ուսուցչի թվարկած բառերը խմբավորում է ըստ առաջին հնչյունի:
- Բառը բաժանում է հնչյունների, հնչյուններով բառ կազմում:
- Ուսուցչի թվարկած բառերից առանձնացնում է այն բառերը, որոնք ներառում են նախօրոք մատնանշված հնչյունը:
- Լսած պարզ նախադասություններից առանձնացնում է բառերը և պայմանանշանով նշում դրանց քանակը (*օր., տղան գնդակ է խաղում՝ երեք գիծ. -----*):
- Պայմանականորեն արտահայտում է բառերը և դրանց վանկերի քանակը (*օր., երկվանկ բառը՝ մեկ գիծ, երկու աղեղ. --- ◡◡*):

Օտ.տ.02.9. Աշակերտը կարող է ընկալել, ընդօրինակել, կրկնել օտար լեզվի հնչյունները, հնչեղությունը, հնչերանգները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Բանաստեղծություններ է արտասանում, հաշվարկներ անում, երգեր կատարում:
- Բանաստեղծության/երգի բովանդակությունը համապատասխանաբար հարմարեցնում է ոչ բառային խոսքին (*հնչերանգին, միմիկային, ձեռածությանը, ռիթմային շարժումներին*):
- Կրկնում է ուսուցչի արտաբերած հնչյունները, բառերը, համառոտ արտահայտությունները, շուտասելուկները:
- Տեքստը հնչեցնելիս պահպանում է համապատասխան հնչերանգը, շեշտերը, ռիթմային հատվածները:

Օտ.տ.02.10. Աշակերտը կարող է մասնակցել պարզ ինտերակցիաներին:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Համառոտ պատասխաններ է տալիս ծանոթ թեմաների վերաբերյալ տրված հարցերին կամ արձագանքում դրանց ոչ բառային միջոցներով (*իր մասին. ինչ ունի (շնչավոր, անշունչ), ինչպես է իր անունը, ինչ է անում, ինչ է իրեն դուր գալիս, ինչ է ուզում՝ անվանում է կամ մատնանշում համապատասխան պատկերազարդման մեջ և այլն*):
- Պարզ սարքեր, դիդակտիկ նյութեր պատրաստելիս, գործածում է առանձին բառեր (*տո՛ւր, ուզում եմ և այլն*):

Ուղղություն. մշակույթների երկխոսություն

Օտ.տ.02.11. Աշակերտը կարող է ճանաչել մշակույթի բնագավառի տեղեկությունը, համեմատել օտար և հայրենի սոցիալ-մշակութային միջավայրերը:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Դիտարկում է և հայտնաբերում ուսումնական նյութում տրված մշակութային, սոցիալ-մշակութային իրողությունները (*օր., հայտնի անհատի լուսանկարը, հագուստը և այլն*):
- Գտնում է ուսումնական նյութում արտացոլված կոնկրետ նմանություններն ու տարբերությունները (*օր., տոնական զարդեր, տիպիկ նախաճաշ և այլն*):

Ուղղություն. ուսանման ուսանում

Օտ.տ.02.12. Աշակերտը կարող է կազմակերպել ուսումնական գործունեությունը:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Խնամում և կարգավորում է ուսումնական իրերը:
- Բերում է անհրաժեշտ իրեր:
- Կարողանում է կենտրոնացնել ուշադրությունը:
- Փորձում է պահպանել ժամանակի սահմանաչափը ամեն տեսակի ակտիվություններ կատարելիս:

Օտ.տ.02.13. Աշակերտն ակտիվորեն ընդգրկված է ուսումնական գործընթացում:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Փորձում է լուծել տրված խնդիրները:
- Նշում է որոշ պակասները լրացնելու հնարավոր միջոցները (*օր., ինչպես վարվի, որ այլևս տանը չթողնի ուսումնական իրերը*) և փորձում է ուղղել դրանք:
- Հասկանում և նշում է սեփական սխալները:
- Ստեղծում է ռեսուրսներ և գործածում դրանք (*օր., քարտ, լոտո, նկար, տուփ և այլն*):
- Հարցեր է տալիս և օգնություն խնդրում, երբ կանգնում է դժվարությունների առջև:

Օտ.տ.02.14. Աշակերտը ձեռք է բերել համադասարանցիների և ուսուցչի հետ համագործակցելու սկզբնական հմտություններ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Սպասում է, մինչև ուրիշներն ավարտեն պատասխանը:
- Լսում է համադասարանցիներին, ուսուցչին:
- Հասակակցին օգնում է այն հարցերում, որոնցում ինքն ավելի ուժեղ է:
- Փորձում է զուգակցի հետ միասին լուծել տրված խնդիրը:

Տարրական աստիճան՝ I մակարդակ (տI)

Օտար լեզու

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն՝ ըստ ուղղությունների

Լսել	Կարդալ	Գրել
Օտ.տ.1.1. Աշակերտը հասկանում է	Օտ.տ.1.5. Աշակերտը	Օտ.տ.1.8.

<p>ուսուցչի ցուցումները և պարզ վարժությունների հրահանգները:</p> <p>Օտ.տ.Ի.2. Աշակերտը հասկանում է լսած պատկերագրող փոքր երկխոսությունները/մենախոսությունները:</p> <p>Օտ.տ.Ի.3. Աշակերտը հասկանում է լսած պատկերագրող նկարագրական/պատմողական բնույթի տեքստերը:</p> <p>Օտ.տ.Ի.4. Աշակերտը կարողանում է գործածել պատշաճ ռազմավարություններ՝ բովանդակությունը հասկանալու համար:</p>	<p>կարող է վերծանել-կարդալ բառերը:</p> <p>Օտ.տ.Ի.6. Աշակերտը կարող է հասկանալ պատկերագրող տեքստերը, դրանցում տեղեկություն գտնել:</p> <p>Օտ.տ.Ի.7. Աշակերտը ձեռք է բերել տեքստի հետ աշխատելու սկզբնական հմտություններն ու ռազմավարությունները:</p>	<p>Աշակերտը կարող է գրել բառեր, տառեր:</p> <p>Օտ.տ.Ի.9. Աշակերտը կարող է իրագործել պարզ գրավոր հաղորդակցություն:</p>
--	---	---

Խոսել	Մշակույթների երկխոսություն	Ուսանման ուսանում
<p>Օտ.տ.Ի.10. Աշակերտը ձեռք է բերել բազային հնչյունաբանական կարողություններ և հմտություններ:</p> <p>Օտ.տ.Ի.11. Աշակերտը կարող է անգիր արտասանել տեքստերն ու դրսևորել բառային գիտելիքը:</p> <p>Օտ.տ.Ի.12. Աշակերտը կարող է մասնակցել պարզ ինտերակցիաներին:</p>	<p>Օտ.տ.Ի.13. Աշակերտը կարող է ճանաչել մշակույթի բնագավառի տեղեկությունը, համեմատել օտար և հայրենի սոցիալ-մշակութային միջավայրերը:</p>	<p>Օտ.տ.Ի.14. Աշակերտը կարող է կազմակերպել ուսումնական գործունեությունը:</p> <p>Օտ.տ.Ի.15. Աշակերտն ակտիվորեն ընդգրկված է ուսումնական գործընթացի մեջ:</p> <p>Օտ.տ.Ի.16. Աշակերտը կարող է համագործակցել համադասարանցիների և ուսուցչի հետ:</p> <p>Օտ.տ.Ի.17. Աշակերտը կարող է գործածել գոյություն ունեցող ռեսուրսները և ստեղծել նորը:</p>

Տարեվերջին նվաճվելիք արդյունքները և դրանց ստուգիչները.

(Լսելու կարողությունը զարգացնելու համար, օգտագործվում են դիդակտիկացված ձայնագրություններ, որտեղ տեքստը հասակ է և դանդաղ:)

Օտ.տ.Ի.1. Աշակերտը հասկանում է ուսուցչի ցուցումները և պարզ վարժությունների հրահանգները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Պատշաճորեն է արձագանքում ուսուցչի հրահանգներին *(օր., կրկնի՛ր, լսի՛ր, վերցրո՛ւ մատիտը, արի՛ գրատախտակի մոտ և այլն):*
- Կատարում է ուսուցչի հրահանգները:

Օտ.տ.Ի.2. Աշակերտը հասկանում է լսած պատկերազարդ փոքր երկխոսությունները/մենախոսությունները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Կերպարներին ճանաչում է ձայնի տեմբրով:
- Ռեպլիկաները կապում է կերպարների հետ:
- Երկխոսություններից դուրս է գրում կոնկրետ մանրամասնություններ *(ույլ, որտեղ, որքան, ինչպիսի և այլն):*
- Հնչերանգով արտահայտված հույզերը կապում է պատկերազարդ կերպարների հայացքների հետ:
- Ճանաչում է սովորած բառերը, արտահայտությունները, լեզվական բանաձևերը և դրանց վրա հիմնվելով՝ ռեպլիկաներն ու նախադասությունները կապում համապատասխան պատկերազարդումների հետ:

Օտ.տ.Ի.3. Աշակերտը հասկանում է լսած պատկերազարդ նկարագրական/պատմողական բնույթի տեքստերը:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ճանաչում է կերպարին, կենդանուն, առարկան՝ ըստ նկարագրված յուրահատկությունների *(օր., բարձրահասակ, կարճահասակ, կարճ, երկար, դեղին)* և մատնանշում է/ներկում/շրջագծում դրանք:
- Գտնում և մատնանշում է դրանց դիրքը *(օր., սեղանի տակ, մեքենայի առջևում/հետևում):*
- Ճանաչում է կոնկրետ գործողությունները և մարմնավորում կամ մատնանշում դրանք նկարի վրա *(պարում է, վազում է, թռչկոտում է, լողում է և այլն):*
- Գործողությունները կապում է կերպարների հետ:
- Ճանաչում է գործողությունների հաջորդականությունը:

Լսելու ռազմավարությունները

Օտ.տ.Ի.4. Աշակերտը կարողանում է գործածել պատշաճ ռազմավարություններ՝ բովանդակությունը հասկանալու համար:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Պատկերագրադրումների, վերնագրի հիման վրա, կարծիք է արտահայտում տեքստի բովանդակության վերաբերյալ:
- Ձայնագրությունը կամ անմիջական խոսքը լսելիս՝ հիմնվում է ոչ բառային տարրերի վրա (*օր., ձայնային տեմբրի, տարբեր տեսակի աղմուկի, հնչերանգի, դիմախաղի, ձեռածության*):
- Փորձում է ինքնուրույն հասկանալ անձանոթ բառերը, արտահայտությունները՝ հիմնվելով ծանոթ բառային կամ ոչ բառային տարրերի վրա (*, տարբեր տեսակի աղմուկ, հնչերանգ, պատկերագրում*):

Ուղղություն. կարդալ

Օտ.տ.1.5. Աշակերտը կարող է վերծանել-կարդալ բառերը:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ճանաչում է բանավոր խոսքից սովորած բառերի ուղղագրական պատկերը:
- Մտապահած բառերի մեջ առանձնացնում է տառերը/տառերի կապակցությունները և դրանք կապում համապատասխան հնչյունների հետ:
- Համեմատում է բառի կազմի մեջ մտնող տառերի ու հնչյունների քանակը և հանգում պատշաճ եզրակացության (*օր., ավելի շատ տառ կա, քան հնչյուն, որովհետև մի տառը չի կարդացվում կամ՝ երկու տառն արտահայտվում է մեկ հնչյունով*):
- Հիշված բառերի հիման վրա, վերլուծում է այլ բառեր, դրանց մեջ գտնում է համանման տառերը/տառերի կապակցությունները և դրանք կապում համապատասխան հնչյունների հետ:
- Վերծանում է այն բառերը, որոնց տառերի ու հնչյունների համապատասխանությունը սովորել է:
- Պատկերագրող տեքստից դուրս է գրում ծանոթ բառերը:
- Տարբերում է տպագիր և ձեռագիր տառերը:
- Տարբերում է մեծատառ և փոքրատառ տպագիր տառերը:
- Տպագիր տառերը կապում է համապատասխան ձեռագիր տառերի հետ:

Օտ.տ.1.6. Աշակերտը կարող է հասկանալ պատկերագրող տեքստերը, դրանցում տեղեկատվություն գտնել:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Հիմնվելով ծանոթ բառերին ու պատկերագրումներին, հասկանում է երկու-երեք նախադասությունից բաղկացած փոքրիկ տեքստը:
- Լսելիս, մշակված տեքստում գտնում է ծանոթ բառերը՝ ըստ նախօրոք տրված ցուցումների (*օր., կերպարների անունները, խաղալիքներ կամ կենդանիներ մատնանշող բառերը և այլն*):
- Տեքստում գտնում է պատկերագրման համապատասխան հատվածը:
- Հիմնվելով տեքստում տրված տեղեկության վրա՝ կատարում է կոնկրետ գործողություն (*ավարտում է նկարը, գտնում է պատշաճ պատկերագրումը և այլն*):

Օտ.տ.1.7. Աշակերտը ձեռք է բերել տեքստի հետ աշխատելու սկզբնական հմտություններն ու ռազմավարությունները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Հիմնվելով պատկերագրողությունների ու վերնագրի վրա՝ մայրենի լեզվով կարծիքներ է արտահայտում տեքստի բովանդակության վերաբերյալ:
- Դիտարկում և անվանում է տեքստը կազմակերպող տարրերը (*օր., վերնագիր, խորագիր, պատկերագրողում, մակագրություն, պարբերություն, լոգո, տպագրական հատկանիշներ /օր., խոշոր տառատեսակ/ և այլն*):
- Նախադասության մեջ հաշվում է բառերի քանակը, իսկ բառերի մեջ՝ տառերի:
- Գտնում է կետադրական նշանները (*օր., կետը, հարցական նշանը, գծիկը, երկու կետը, ստորակետը*):
- Մայրենի լեզվով նկարագրում է, թե ինչպես կարողացավ լուծել այս կամ այն ընթերցանական ակտիվության մեջ տրված խնդիրը, համեմատում է ուրիշների ընտրած եղանակի հետ և եզրակացություն անում, թե որ մոտեցումն էր ավելի պատշաճ/ազդեցիկ և ինչու:

Ուղղություն. գրել

Օտ.տ.1.8. Աշակերտը կարող է գրել բառերը, տառերը:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Նկարագրում է կոնկրետ տառի վերին/ներքին/միջին մասերը (*օր., որտեղ է ուղիղ գիծ, օղակ, աղեղ, որտեղ է կլորանում աղեղը, քանի աղեղ է և այլն*):
- Ձեռքի ճիշտ շարժումով պատկերում է ծանոթ տառի ձևը:
- Ձեռքի ճիշտ շարժումով տեսրում գրում է այբուբենի մեծատառ ու փոքրատառ տառերի մի մասը:
- Ձեռագիր կամ տպագիր աղբյուրից արտագրում է այնպիսի բառեր, որոնց տառերի ու հնչյունների համապատասխանությունն ուսումնասիրել է:
- Ճիշտ է գրում բառերը:

Օտ.տ.1.9. Աշակերտը կարող է իրականացնել պարզ հաղորդակցություն:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Պատրաստում/ձևավորում է մակագրություններով ու նկարներով հրավիրատումներ/շնորհավորական ուղերձներ:
- Գրում է բացիկ՝ նկարների միջոցով:
- Տարբեր թեմաներով կազմում է մակագրություններով պարզ սխեմատիկ նկարներ (*օր., իմ ընտանիքը, իմ սենյակը, իմ փողոցը և այլն*):

Ուղղություն. խոսել

Օտ.տ.1.10. Աշակերտը ձեռք է բերել բազային հնչյունաբանական կարողություններ և հմտություններ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Տարբերում է միանման հնչեղություն ունեցող հնչյունները:
- Բառերը բաժանում է վանկերի, վանկերով բառեր կազմում:
- Գտնում է վանկերի քանակը և ներկայացնում համապատասխան պայմանանշաններով (*օր., միավանկ բառը մեկ աղեղով, երկվանկը՝ երկու աղեղով և այլն*):
- Բառի մեջ գտնում է վանկի դիրքը (*սկզբում, մեջտեղում, վերջում*) և պայմանականորեն պատկերում այն (*օր., եռավանկ բառն արտահայտող երեք աղեղից ներկում է մատնանշված վանկի համապատասխան աղեղը*):
- Բառերը խմբավորում է ըստ առաջին/վերջին հնչյունի:
- Բառերը բաժանում է հնչյունների և, ընդհակառակը, հնչյուններով բառեր կազմում:
- Տարբեր բառերից առանձնացնում է միևնույն հնչյունը:
- Պայմանականորեն պատկերում է բառերը և դրանց վանկերի քանակը (*օր., երկվանկ բառ՝ մեկ գիծ և երկու աղեղ (◐◑)*):
- Բառում՝ համապատասխան վանկի մեջ, գտնում է հնչյունի դիրքը և պատկերում այն պայմանական ծածկագրով (*օր., բառը՝ գծով, վանկը՝ աղեղով, հնչյունը՝ շրջանով*):

Օտ.տ.1.11. Աշակերտը կարող է անգիր արտասանել տեքստերը և դրսևորել բառային գիտելիքները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Արտասանում է բանաստեղծությունները, հաշվարկումներ անում և երգեր կատարում:
- Բանավոր բեմականացնում է պարզ երկխոսություններ ու տեսարաններ:
- Կրկնում է ուսուցչի արտաբերած հնչյունները, բառերը, համառոտ արտահայտությունները, շուտասելուկները:
- Տեքստերը ներկայացնելիս՝ պահպանում է համապատասխան հնչերանգը, շեշտերը, ռիթմային հատվածները:
- Ոչ բառային խոսքը պատշաճորեն համապատասխանեցնում է տեքստի բովանդակությանը (*հնչերանգը, դիմախաղը, ը, ռիթմային շարժումները*):
- Անվանում է բառային միավորներ:

Օտ.տ.1.12. Աշակերտը կարող է մասնակցել պարզ ինտերակցիաներին:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Համառոտ պատասխաններ է տալիս ծանոթ թեմաների վերաբերյալ տրված հարցերին կամ արձագանքում դրանց ոչ բառային միջոցներով:
- Պատասխանում է կոնկրետ դասարանական իրավիճակին առնչվող հարցերին (*օր., Ավարտեցի՞ր, - Այո/Ոչ, Որտե՞ղ է մատիտը, - Այստեղ, սեղանի վրա*):
- Պատասխանում է բանավոր խոսքից սովորած տեքստի բովանդակության շուրջ տրված պարզ հարցերին (*օր., ինչ է նրա անունը, ինչ ունի, ինչպիսին է, ինչ է անում և այլն*):

(Այս փուլում աշակերտները պատշաճորեն չեն տիրապետում օտար լեզվին, որպեսզի գրուցեն մշակույթի հարցերի վերաբերյալ: Այսպիսով, թույլատրվում է մայրենի լեզվով դատողություն անել):

Օտ.տ.1.13. Աշակերտը կարող է ճանաչել մշակույթի բնագավառի տեղեկությունը, համեմատել օտար և հայրենի սոցիալ-մշակութային միջավայրերը:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Դիտարկում և հայտնաբերում է ուսումնական նյութում տրված մշակութային, սոցիալ-մշակութային իրողությունները *(օր., տոնական սովորույթ, փառաքչական ձևեր, և այլն):*
- Գտնում է ուսումնական նյութում արտացոլված կոնկրետ նմանություններն ու տարբերությունները *(օր., կերպարների անունները, դեռահասի օրակարգը, դպրոցի շենքը և այլն):*

Ուղղություն. ուսանման ուսանում

Օտ.տ.1.14. Աշակերտը կարող է կազմակերպել ուսումնական գործունեությունը:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Արտագրում է հանձնարարությունները *(մայրենի լեզվով)* և կատարում դրանք:
- Խնամում և կարգավորում է ուսումնական իրերը:
- Բերում է անհրաժեշտ իրեր:
- Կարողանում է կենտրոնացնել ուշադրությունը:
- Փորձում է պահպանել ժամանակի սահմանաչափը ամեն տեսակի ակտիվություններ կատարելիս:

Օտ.տ.1.15. Աշակերտն ակտիվորեն ընդգրկված է ուսումնական գործընթացում:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Փորձում է լուծել տրված խնդիրները:
- Նշում է որոշ թերությունները շտկելու հնարավոր միջոցները *(օր., ինչպես վարվի, որ այլևս տանը չթողնի ուսումնական իրերը)* և փորձում է ուղղել դրանք:
- Հասկանում և նշում է սեփական սխալները:
- Հարցեր է տալիս և օգնություն խնդրում, երբ կանգնում է դժվարությունների առջև:
- Փորձում է լրացնել ինքնագնահատման պարզ սխեմաները:

Օտ.տ.1.16. Աշակերտը կարող է համագործակցել համադասարանցիների, ուսուցչի հետ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Սպասում է, մինչև ուրիշներն ավարտեն պատասխանը:
- Լսում է համադասարանցիներին, ուսուցչին:
- Հասակակցին օգնում է այն հարցերում, որոնցում ինքն ավելի ուժեղ է:
- Ձուգակցի հետ միասին է լուծում տրված խնդիրը:
- Մասնակցում է խմբային աշխատանքներին:

Օտ.տ.Ի.17. Աշակերտը կարողանում է օգտագործել գոյություն ունեցած ռեսուրսները և ստեղծել նորը:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ճանաչում է դասագրքում տրված պայմանանշանները, լոգոները:
- Գործածում է դասագրքի պատկերազարդումները, դասասենյակում գոյություն ունեցած դիդակտիկ նյութերը:
- Ստեղծում է օպերատիվ ռեսուրսներ և օգտագործում դրանք (*օր., քարտ, լոտո, մակագրություններով պատկերազարդումներ, տուփ*):

Տարրական աստիճան՝ II մակարդակ (տ.II)

Օտար լեզու

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն՝ ըստ ուղղությունների.

Լսել	Կարդալ	Գրել	Խոսել
<p>Օտ.տ.Ի.1. Աշակերտը հասկանում է ուսուցչի ցուցումները և պարզ վարժության հրահանգները:</p> <p>Օտ.տ.Ի.2. Աշակերտը հասկանում է լսած, փոքրածավալ պատկերազարդ երկխոսությունը:</p> <p>Օտ.տ.Ի.3. Աշակերտը հասկանում է լսած փոքրածավալ նկարագրական/ պատմողական բնույթի պատկերազարդ տեքստերը:</p> <p>Օտ.տ.Ի.4. Աշակերտը կարողանում է գործածել պատշաճ ռազմավարություններ՝ բովանդակությունը հասկանալու համար:</p>	<p>Օտ.տ.Ի.5. Աշակերտը կարողանում է վերծանել-կարդալ նախադասությունները:</p> <p>Օտ.տ.Ի.6. Աշակերտը կարող է հասկանալ պատկերազարդ տեքստերը, դրանցում տեղեկատվություն գտնել:</p> <p>Օտ.տ.Ի.7. Աշակերտը կարողանում է կոնկրետ տեղեկատվություն գտնել պրագմատիկ բնույթի մանկական տեղեկատու տեքստերում (օր., դասացուցակներ, օրակարգ, մանկական հեռուստահաղորդումների ծրագիր, մանկական գրացուցակ և այլն) և պարզ նամակագրություններում (բացիկ,</p>	<p>Օտ.տ.Ի.9. Աշակերտը կարող է գրել բառեր, նախադասություններ:</p> <p>Օտ.տ.Ի.10. Աշակերտը կարող է փոքր տեքստեր կազմել ըստ նմուշի:</p>	<p>Օտ.տ.Ի.11. Աշակերտը կարող է անգիր արտասանել տեքստերը և դրսևորել բառային գիտելիքները:</p> <p>Օտ.տ.Ի.12. Աշակերտը կարող է մասնակցել պարզ ինտերակցիաների:</p> <p>Օտ.տ.Ի.13. Աշակերտը կարող է նկարագրել պատկերազարդումները:</p> <p>Օտ.տ.Ի.14. Աշակերտը կարող է գործածել փոխհատուցման միջոցները:</p>

	<p>հաղորդագրություն):</p> <p>Օտ.տ.Ու.8. Աշակերտը կարողանում է գործածել կարդալու ռազմավարությունները:</p>		
--	---	--	--

Մշակույթների երկխոսություն	Օտար լեզվի գործնական կիրառություն (մեդիացիա)	Ուսանման ուսանում
<p>Օտ.տ.Ու.15. Աշակերտը կարող է ճանաչել մշակութային բնագավառի տեղեկատվությունը:</p> <p>Օտ.տ.Ու.16. Աշակերտը կարող է համեմատել օտար և հայրենի մշակութային ու սոցիալ-մշակութային միջավայրերը:</p>	<p>Օտ.տ.Ու.17. Աշակերտը կարող է օտար լեզվով իրագործել տարբեր տեսակի նախագծեր (օր., կազմակերպել համադասարանցիների նկարների/սարքերի ցուցահանդես, ներկայացում բեմադրել, ուրիշներին ծանոթացնել արտասահմանյան խոհանոցը):</p>	<p>Օտ.տ.Ու.18. Աշակերտը կարող է կազմակերպել ուսումնական գործունեությունը:</p> <p>Օտ.տ.Ու.19. Աշակերտն ակտիվորեն ընդգրկված է ուսումնական գործընթացում:</p> <p>Օտ.տ.Ու.20. Աշակերտը կարող է ռեսուրսներ գործածել, ուսումնական գործունեությանը նպաստելու նպատակով:</p> <p>Օտ.տ.Ու.21. Աշակերտը կառուցողական վերաբերմունք ունի արգելքների նկատմամբ:</p> <p>Օտ.տ.Ու.22. Աշակերտը կարող է տարբեր եղանակներ գործածել բառապաշարային նյութը յուրացնելու համար:</p> <p>Օտ.տ.Ու.23. Աշակերտը կարող է համագործակցել համադասարանցիների, ուսուցչի, խմբի անդամների հետ:</p>

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ու դրանց ստուգիչները.

(Լսելու կարողությունը զարգացնելու համար օգտագործվում են ուսուցողական ձայնագրություններ, որոնց տեքստերը հստակ են ու դանդաղ):

Օտ.տ.Ու.1. Աշակերտը հասկանում է ուսուցչի ցուցումները և պարզ վարժության հրահանգները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Պատշաճորեն է արձագանքում ուսուցչի հրահանգներին (օր., կրկնի՛ր, լսի՛ր, վերցրո՛ւ մատիտը, արի՛ գրատախտակի մոտ և այլն):
- Կատարում է ուսուցչի ցուցումները:

Օտ.տ.Ու.2. Աշակերտը հասկանում է լսած փոքրածավալ պատկերագարդ երկխոսությունը:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Հասկանում է խոսակցական թեման, համատեքստը (օր., բակում, սեղանի մոտ, խանութում, դասարանում):
- Հասկանում է զրուցակիցներին:
- Երկխոսություններից ժողովում է կոնկրետ մանրամասնությունները *(ով, որտեղ, որքան, երբ, ինչպես և այլն):*
- Տարբերում է հնչերանգով արտահայտած հույզերը:
- Տարբերում է հարգալից և մտերմական ձևակերպումները:

Օտ.տ.Ու.3. Աշակերտը հասկանում է լսած փոքրածավալ նկարագրական/պատմողական բնույթի պատկերագարդ տեքստերը:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ճանաչում է նկարագրված կերպարին, կենդանուն, առարկան՝ ըստ տարբեր նշանների *(օր., տեղադրություն, չափ, գույն, ձև, քանակ և այլն):*
- Անվանում է կերպարներին:
- Ճանաչում է նրանց զգացողությունները, հուզական վերաբերմունքը *(օր., վախենում է, ուրախ է, ցավում է, մրսում է):*
- Ճանաչում է կերպարների գործողությունները *(ով ինչ է անում):*
- Ճանաչում է զրուցակցին *(ում է պատկանում այս կամ այն արտահայտությունը):*
- Ճանաչում է պատմության զարգացման փուլերը *(ինչպես սկսվեց, ինչ եղավ, ինչպես ավարտվեց):*
- Ելնելով գործող անձանց վարմունքից՝ հետևություն է անում նրանց բնավորության գծերի վերաբերյալ *(օր., բարի է, չար է, ժլատ է, համարձակ է, վախկոտ է, ծույլ է):*
- Ըստ երևույթների հաջորդականության, դասավորում/համարակալում է նկարները:
- Տեքստը մշակելուց հետո, ուսուցչի պատմելուն հետևելով՝ իրականացնում է պատմվածքի բեմադրությունը:

Լսելու ռազմավարությունները

Օտ.տ.Ու.4. Աշակերտը կարողանում է գործածել պատշաճ ռազմավարություններ՝ բովանդակությունը հասկանալու համար:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Վերնագրի, պատկերագրադրումների հիման վրա, բովանդակության վերաբերյալ կարծիք է արտահայտում:
- Անմիջական խոսք/ձայնագրություն լսելիս՝ օգտագործում է ոչ բառային տարրեր (օր., ձայնի հնչերանգ, առոգանություն, դիմախաղ, , տարրեր տեսակի աղմուկ):
- Փորձում է ինքնուրույն հասկանալ անձանոթ բառերը, արտահայտությունները, նախադասությունների իմաստը՝ հիմնվելով ծանոթ տարրերի վրա (օր., *համատեքստ, հնչերանգ, պատկերագրադրում...*):
- Մայրենի լեզվով մեկնաբանում է, թե ինչ եղանակով/ինչպես կարողացավ կատարել ունկնդրման առաջադրանքը:

Ուղղություն. քննադատություն

Օտ.տ.Ու.5. Աշակերտը կարող է վերծանել-կարդալ նախադասությունները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Անմիջականորեն (*առանց վերծանելու*), ազատ ճանաչում է բանավոր խոսքից սովորած բառերի ուղղագրական պատկերը:
- Հիշած բառերի մեջ առանձնացնում է տառերը/տառային միավորները և դրանք կապում համապատասխան հնչյունների հետ:
- Հիշված բառերի հիման վրա, վերլուծում է այլ բառեր, դրանց մեջ գտնում է համանման տառերը/տառային միավորները և դրանք կապում համապատասխան հնչյունների հետ:
- Ճանաչում է այբուբենի բոլոր տառերը:
- Ճանաչում է բոլոր մեծատառ ու փոքրատառ տպագիր և ձեռագիր տառերը:
- Բոլոր մեծատառ ու փոքրատառ տպագիր տառերը կապում է համապատասխան ձեռագիր տառերի հետ:
- Ազատ կարդում է (վերծանում է) բառերը, նախադասությունները, փոքրածավալ տեքստերը:

Օտ.տ.Ու.6. Աշակերտը կարող է հասկանալ պատկերագրող տեքստերը, դրանցում տեղեկատվություն գտնել:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Հիմնվելով ծանոթ բառերի ու պատկերագրադրումների վրա՝ հասկանում է երկու-երեք նախադասությունից բաղկացած փոքր տեքստի բովանդակությունը:
- Լսելիս, մշակած տեքստում գտնում է կոնկրետ բառերը (օր., կերպարների անունները, մեկ իմաստային դաշտի բառերը), ռեպլիկաները:
- Տեքստում գտնում է պատկերագրադրման համապատասխան հատվածը:
- Հիմնվելով տեքստում տրված տեղեկատվության վրա՝ կատարում է կոնկրետ գործողություն (օր., *լրացնում է աղյուսակ/սխեմա, ավարտում է նկարը, գտնում է ճիշտ պատկերագրադրումը և այլն*):

Օտ.տ.Ու.7. Աշակերտը կարողանում է կոնկրետ տեղեկատվություն գտնել պրագմատիկ բնույթի մանկական տեղեկատու տեքստերում (օր., դասացուցակ, օրակարգ, մանկական

հեռուստահաղորդումների ծրագիր, մանկական քարտազրացուցակ և այլն) և պարզ նամակագրության մեջ (բացիկ, հաղորդագրություն):

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ճանաչում է աղյուսակի տվյալները *(օր., շաբաթվա օրերը, ժամերը):*
- Աղյուսակից ժողովում է կոնկրետ տեղեկություն *(օր., որ օրերին ունի նկարչության դաս և այլն):*
- Քարտարանում գտնում է այս կամ այն իրերի արժեքը, տվյալները *(օր., չափը, գույնը, նյութը, ձևը, եթե գրքի քարտարան է՝ մատենաշարը, հրատարակչությունը, հեղինակին, վերնագիրը, տարիքային խումբը և այլն):*
- Քարտարանից/հեռուստածրագրից ընտրում է ցանկալի իրը/հաղորդումը՝ նկատի առնելով որոշակի չափանիշ:
- Ճանաչում է բացիկի հեղինակին, ստացողին, կոնկրետ տեղեկությունը *(ով, ինչ, որքան, որտեղ և այլն):*

Կարդալու ռազմավարությունները

Օտ.տ.Ու.8. Աշակերտը կարողանում է գործածել կարդալու ռազմավարությունները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ինքնուրույն ճանաչում է անձանոթ բառերի, նախադասությունների բովանդակությունը, ծանոթ տարրերի օգնությամբ *(օր., համատեքստ, պատկերազարդում, ծանոթ տառեր):*
- Բովանդակությունն ավելի հեշտ հասկանալու համար՝ գործածում է ոչ բառային տարրեր *(տպագրական նշաններ՝ շեղ, խոշոր տառատեսակ, ընդգծում, կետադրական նշաններ, պատկերազարդում, լոգո և այլն):*
- Հենվելով պատկերազարդումների, վերնագրի վրա՝ մայրենի լեզվով կարծիք է արտահայտում տեքստի բովանդակության վերաբերյալ:
- Ըստ կառուցվածքային կազմակերպման՝ համեմատում է տարբեր տեսակի տեքստերը *(օր., քարտարան և հեռուստածրագիր),* անվանում է տարբերությունները, նմանությունները *(օր., քարտարանում նկարներ կան և տեղեկատվությունը հենց այնտեղ է տեղադրված, իսկ հեռուստածրագրում՝ ոչ, հեռուստածրագրի ցանկում ժամերն են թվարկված, իսկ քարտարանի մեջ ժամ ընդհանրապես չկա մատնանշված և այլն):*
- Կոնկրետ տեղեկություն գտնելու նպատակով՝ դիտարկում է ամբողջական տեքստը, դրա բառային և ոչ բառային կառուցվածքային տարրերը *(օր., վերնագիր, խորագիր, պատկերազարդում, մակագրություն, պարբերություն, սյունակ, լոգո, տպագրական հատկանիշներ/օր., խոշոր տառատեսակ/ և այլն) և գործածում դրանք, որպես հենարան:*
- Մայրենի լեզվով նկարագրում է, թե ինչ եղանակով կարողացավ կատարել այս կամ այն ընթերցանության առաջադրանքը, համեմատում է ուրիշների ընտրած եղանակի հետ և հետևություն անում, թե որ մոտեցումն էր ավելի պատշաճ/ազդեցիկ և ինչու:

Օտ.տ.Ու.9. Աշակերտը կարող է գրել բառեր, նախադասություններ:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Նկարագրում է կոնկրետ տառի վերին/ներքին/միջին մասերը (*օր., որտեղ է ուղիղ գիծ, օղակ, աղեղ, որտեղ է կլորանում աղեղը, քանի աղեղ է ն այլն*):
- Ձեռքի ճիշտ շարժումով պատկերում է տառեր, տառերի կապակցություններ, վանկեր, բառեր, պահպանում է գծային համակարգում տառերի դասավորության սկզբունքը:
- Արձանագրությունից կամ տպագիր աղբյուրից արտագրում է բառեր, նախադասություններ, պահպանում է տառերի միացման օրենքները:

Օտ.տ.Ու.10. Աշակերտը կարող է փոքրիկ տեքստեր կազմել ըստ նմուշի:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Տրված կադապարը լրացնում է տարբեր իմաստով (օր., խաղալիքների քարտարանում տրված գնդակից տարբերվող գնդակ նկարելով, կցագրում է տվյալները՝ գույնը, չափը, նյութը, գինը):
- Ըստ տրված օրինակի, բացիկ է գրում:
- Տեքստում ավելացնում է թերի տեղեկատվությունը:
- Լրացնում է դասացուցակ, օրակարգ, հարցաթերթիկ՝ անհատական տվյալներով:

Ուղղություն. խոսել

Օտ.տ.Ու.11. Աշակերտը կարող է անգիր արտասանել տեքստերը և դրսևորել բառապաշարային գիտելիքները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Ճիշտ և հասկանալի արտահայտում է ծանոթ բառերը, արտահայտությունները, շուտասելուկները:
- Արտասանում է բանաստեղծություն, հաշվարկումներ է անում, երգեր կատարում:
- Բանավոր բեմականացնում է պարզ երկխոսություններն ու բեմադրությունները:
- Տեքստերը կարդալիս՝ պահպանում է համապատասխան հնչերանգը, ռիթմերը, ընդօրինակում է կերպարների ձայնային տեմբրը:
- Տեքստերի բովանդակությունը պատշաճորեն համապատասխանեցնում է ոչ բառային խոսքին (*օր., դիմախաղին, ձեռածությանը, ռիթմային շարժումներին*):
- Անվանում է բառային միավորները:

Օտ.տ.Ու.12. Աշակերտը կարող է մասնակցել պարզ ինտերակցիաներին:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Տարրական անհրաժեշտությունների համար, օտար լեզվով դիմում է ուսուցչին, համադասարանցիներին (*չհասկացա, տո՛ւր, ժամանակավորապես տո՛ւր, չունեմ, մոռացել եմ և այլն*):

- Հարցնում է/պատասխանում է հարցերին կամ խնդրանք արտահայտում կոնկրետ դասարանային իրավիճակի վերաբերյալ (օր., *Որտե՞ղ է գիրքը, - Պայուսակում, սեղանի վրա, տետրի մոտ է դրված և այլն*):
- Պատասխանում է պարզ հարցերի/պարզ հարցեր տալիս իրեն ծանոթ թեմայով (օր., *որտեղ ինչ է դրված, ով ինչ է հագել, ով երբ է ուտում, ով ինչ է անում, ում ինչ է դուր գալիս/հետաքրքրում/ով ինչ է ուզում և այլն*):
- Պատասխանում է սովորած տեքստի բովանդակության վերաբերյալ տրված պարզ հարցերին (օր., *ինչ ունի, ով ինչ է նվիրել, ինչ գույնի, որքան, ինչպիսի, երբ է գնացել, ուր է գնացել, ում ինչ է տվել և այլն*):

Օտ.տ.Ու.13. Աշակերտը կարող է նկարագրել պատկերագրողումները:

Արդյունքն ակնհայտ է, եթե աշակերտը.

- Անվանում է գործող անձին, կենդանուն, առարկան:
- Նկարագրում է նրանց՝ ըստ տարբեր նշանների (օր., *տեղադրությունը, չափը, քանակը, գույնը և այլն*):
- Անվանում է գործողությունները:

Խոսելու ռազմավարությունները

Օտ.տ.Ու.14. Աշակերտը կարող է գործածել փոխհատուցման միջոցները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Լեզվական պակասորդի (դեֆիցիտի) դեպքում դիմում է տարբեր ոչ բառային միջոցների (օր., *դիմախաղ, ձեռածություն, մատնանշում*):
- Օգնություն է խնդրում ուսուցչից կամ համադասարանցուց (մայրենի լեզվով):

Ուղղություն. Մշակույթների երկխոսություն

(Այս փուլում աշակերտները համապատասխան գիտելքների չեն տիրապետում օտար լեզվից, որպեսզի խոսեն մշակութային հարցերի շուրջ: Այսպիսով, թույլատրվում է քննարկումներն անցկացնել մայրենի լեզվով):

Օտ.տ.Ու.15. Աշակերտը կարող է ճանաչել մշակութային բնագավառի տեղեկատվությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դիտարկում և ճանաչում է պատկերագրողումներում/տեքստերում արտացոլված մշակութային, սոցիալ-մշակութային իրողությունները:

Օտ.տ.Ու.16. Աշակերտը կարող է համեմատել օտար և հայրենի մշակութային ու սոցիալ-մշակութային միջավայրը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Գտնում է սոցիալ-մշակութային համատեքստերում (օր., *տոներ, դպրոց, ժամանց, ընտանիք և այլն*) արտացոլված կոնկրետ նմանություններն ու տարբերությունները:

Ուղղություն. Օտար լեզվի գործնական կիրառություն (մեդիացիա)

Օտ.տ.Մ.17. Աշակերտը կարող է տարբեր տեսակի նախագծեր իրականացնել օտար լեզվով (օր., կազմակերպել համադասարանցիների նկարների/ձեռագործերի ցուցահանդես, ներկայացումներ բեմադրել, ուրիշներին ծանոթացնել արտասահմանյան խոհանոցը):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ուսուցչի հետ ձևակերպում է նախագիծը հաջողությամբ իրականացնելու չափանիշները:
- Խմբի անդամների և ուսուցչի հետ պլանավորում է նախագծի իրագործման փուլերը:
- Խմբի անդամների և ուսուցչի օգնությամբ սահմանում է և բաշխում գործառույթները:
- Խմբի յուրաքանչյուր անդամի հետ կատարում է իրեն հանձնարարված գործառույթը:
- Ուսուցչի, ծնողի կամ այլ անձի աջակցությամբ գտնում է պատշաճ ռեսուրսներ:
- Խմբի անդամների և ուսուցչի աջակցությամբ ընտրում է և մշակում ձեռք բերած նյութը:
- Ուսուցչի աջակցությամբ կատարելագործում է և իրականացնում է նախագիծը:

Ուղղություն. Ուսանման ուսանում

Օտ.տ.Մ.18. Աշակերտը կարող է կազմակերպել ուսումնական գործունեությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Արտագրում է առաջադրանքները:
- Խնամում և կարգավորում է ուսումնական իրերը:
- Բերում է անհրաժեշտ իրերը:
- Ամեն տեսակի ակտիվություն կատարելիս՝ պահպանում է ժամանակի սահմանաչափը:

Օտ.տ.Մ.19. Աշակերտն ակտիվորեն ընդգրկված է ուսումնական գործընթացում:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հետաքրքրվում է գնահատման արդյունքներով, լրացնում է ինքնագնահատման սխեմաները:
- Պատրաստակամությամբ է մասնակցում ակտիվություններին:
- Մատնանշում է որոշ թերություններ շտկելու հնարավոր միջոցները (օր., *ինչպես վարվի, որպեսզի մտապահի նոր բաները*) և փորձում է շտկել դրանք:
- Հասկանում և նշում է իր և ուրիշների սխալները:
- Աշխատանքը բաժանում է փուլերի և ծրագրում է, թե ինչպիսի հերթականությամբ կատարի այն:

Օտ.տ.Մ.20. Աշակերտը կարող է ռեսուրսներ գործածել՝ ուսումնական գործունեությանը նպաստելու նպատակով:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Արդյունավետ է օգտագործում դասագրքի ռեսուրսները *(օր., բառարանը, կառուցվածքային նմուշները, քերականական տեղեկատուն, պատկերազարդումները և այլն):*
- Տեղեկատվություն է գտնում ինչպես դպրոցում, այնպես էլ դպրոցից դուրս մատչելի ռեսուրսների մեջ *(օր., դասագրքի ակնբերությունները, բառարան, դպրոցի/գյուղի/քաղաքի գրադարան, ուսուցիչ, իրազեկ անձ, համացանց և այլն):*
- Տեղեկատվություն/ուսումնական նյութ է գտնում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների (S2S) միջոցով:
- Այս կամ այն նյութը/տեքստը կազմելու/մշակելու համար կիրառում է S2S-ը:
- Օպերատիվ ռեսուրսներ է ստեղծում և օգտագործում է դրանք *(օր., պարզ սխեմաներ, պատկերազարդ բառարան, պատկերազարդ այբուբեն և այլն):*

Օտ.տ.Ու.21. Աշակերտը կառուցողական վերաբերմունք ունի խոչընդոտների նկատմամբ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Չի խուսափում սխալ թույլ տալուց:
- Հարցեր է տալիս, երբ որևէ բան չի հասկանում:
- Օգնություն է խնդրում, երբ կանգնում է դժվարության առջև:
- Չի խուսափում սեփական միտքը/հայեցակետը արտահայտելուց:

Օտ.տ.Ու.22. Աշակերտը կարող է տարբեր եղանակներ գործածել, բառապաշարային նյութը յուրացնելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կիրառում է մտապահելու տարբեր եղանակներ *(օր., բարձրաձայն կրկնել, մի քանի անգամ կարդալ կամ գրել, զուգորդել նկարի, շարժման, որևէ իրավիճակի հետ):*
- Բառապաշարային նյութը տեսակավորում է ըստ երեք չափանիշների. լավ գիտեմ, վատ գիտեմ և չգիտեմ:
- Կրկնում է անցած բառապաշարային նյութը:

Օտ.տ.Ու.23. Աշակերտը կարող է համագործակցել համադասարանցիների, ուսուցչի, խմբի անդամների հետ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Սպասում է, մինչև ուրիշները պատասխանեն:
- Հասակակցին օգնում է այն հարցերում, որոնցից ինքն ավելի ուժեղ է:
- Չույզի հետ լուծում է տրված խնդիրը:
- Չույզի հետ ներգրավված է ինտերակցիայի (փոխներգործության) մեջ:
- Քաղաքավարի կերպով նշում է թույլ տրված սխալները:
- Մասնակցում է խմբում աշխատելու պարզ օրենքների մշակման գործին և փորձում է պահպանել դրանք:
- Կարող է խմբակիցների հետ համաձայնեցնել գործառնությունները՝ աշխատանքը բաշխելու վերաբերյալ:
- Հնարավորության սահմաններում աջակցում է խմբի անդամներին:

Տարրական աստիճան՝ III մակարդակ (տIII)

Օտար լեզու

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների.

Լսել	Կարդալ	Գրել
<p>Օտ.տ.Յ.1. Աշակերտը կարող է հասկանալ լսած փոքր երկխոսությունը:</p> <p>Օտ.տ.Յ.2. Աշակերտը կարող է հասկանալ լսած պատմողական բնույթի պատկերագարդ տեքստը <i>(օր., հարմարեցված հեքիաթ, պատմվածք, դեպք)</i>:</p> <p>Օտ.տ.Յ.3. Աշակերտը կարող է հասկանալ լսած եղանակի պարզ տեսությունը:</p> <p>Օտ.տ.Յ.4. Աշակերտը կարող է գործածել պատշաճ ռազմավարություններ՝ բովանդակությունը հասկանալու համար:</p>	<p>Օտ.տ.Յ.5. Աշակերտը կարող է կարդալ բացիկ, անձնական նամակ և հասկանալ դրանք:</p> <p>Օտ.տ.Յ.6. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ լսած տեքստը:</p> <p>Օտ.տ.Յ.7. Աշակերտը կարող է կոնկրետ տեղեկատվություն գտնել պրագմատիկ բնույթի մանկական տեղեկատվական տեքստում <i>(օր., դասացուցակ, խոհարարական բաղադրատոմս, մանկական հեռուստահաղորդումների ծրագիր, մանկական կատալոգ և այլն)</i>:</p> <p>Օտ.տ.Յ.8. Աշակերտը կարող է կարդալ և հասկանալ ճանաչողական բնույթի պատկերագարդ տեքստերը:</p> <p>Օտ.տ.Յ.9. Աշակերտը ձեռք է բերել բարձրաձայն կարդալու տարրական կարողություններ ու հմտություններ:</p>	<p>Օտ.տ.Յ.12. Աշակերտը կարող է բացիկ գրել:</p> <p>Օտ.տ.Յ.13. Աշակերտը կարող է, օժանդակ միջոցների վրա հիմնվելով, փոքրածավալ տեքստեր կազմել:</p> <p>Օտ.տ.Յ.14. Աշակերտը կարող է պահպանել գրավոր տեքստի կառուցվածքը: Ձեռք է բերել տարրական լեզվական կարողություններ ու հմտություններ և կարող է գործածել դրանք:</p> <p>Օտ.տ.Յ.15. Աշակերտը կարող է գործածել գրելու ռազմավարությունները՝ գրավորը կատարելագործելու նպատակով:</p>

	<p>Օտ.տ.ՅՑ.10. Աշակերտը կարող է հայտնաբերել տարբեր տեսակի պարզ տեքստերի կառուցվածքային և լեզվական բնութագրիչները:</p> <p>Օտ.տ.ՅՑ.11. Աշակերտը կարող է գործածել տարբեր ռազմավարություններ՝ բովանդակության ըմբռնումը դյուրացնելու համար:</p>	
--	--	--

Խոսել	Մշակույթների կիստություն	Օտար լեզվի գործնական կիրառություն (մեդիացիա)	Ուսանման ուսանում
<p>Օտ.տ.ՅՑ.16. Աշակերտը ձեռք է բերել խոսելու համար անհրաժեշտ կարողություններ ու հմտություններ:</p> <p>Օտ.տ.ՅՑ.17. Աշակերտը կարող է մասնակցել պարզ ինտերակցիաներին:</p> <p>Օտ.տ.ՅՑ.18. Աշակերտը կարող է փոխկապակցված խոսել:</p> <p>Օտ.տ.ՅՑ.19. Աշակերտը ձեռք է բերել տարրական լեզվական կարողություններ ու հմտություններ և կարող է գործածել դրանք:</p> <p>Օտ.տ. ՅՑ.20. Աշակերտը կարող է գործածել փոխհատուցման</p>	<p>Օտ.տ.ՅՑ.21. Աշակերտը հետաքրքրություն է ցուցաբերում մշակութային տարբերությունների նկատմամբ:</p>	<p>Օտ.տ.ՅՑ.22. Աշակերտը կարող է տարբեր տեսակի նախագծեր իրականացնել օտար լեզվով (<i>օր., միջոցառում կազմակերպել, ծագումնաբանական ծառ կազմել, հեքիաթ բեմադրել և այլն</i>):</p>	<p>Օտ.տ.ՅՑ.23. Աշակերտը կարող է կազմակերպել ուսումնական գործունեությունը:</p> <p>Օտ.տ.ՅՑ.24. Աշակերտն ակտիվորեն ընդգրկված է ուսումնական գործընթացում:</p> <p>Օտ.տ.ՅՑ.25. Աշակերտը կարող է ռեսուրսներ գործածել՝ ուսումնական գործունեությանը նպաստելու նպատակով:</p> <p>Օտ.տ.ՅՑ.26. Աշակերտը կառուցողական վերաբերմունք ունի արգելքների նկատմամբ:</p> <p>Օտ.տ.ՅՑ.27. Աշակերտը կարող է տարբեր</p>

միջոցները:			<p>եղանակներ կիրառել՝ բառապաշարային նյութը յուրացնելու համար:</p> <p>Օտ.տ.III.28. Աշակերտը կարող է ռազմավարություններ գործածել՝ քերականական երևույթները հասկանալու համար:</p> <p>Օտ.տ.III.29. Աշակերտը կարող է համագործակցել համադասարանցիների, ուսուցչի հետ:</p> <p>Օտ.տ.III.30. Աշակերտը կարող է համագործակցել խմբի անդամների հետ:</p>
------------	--	--	---

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ու դրանց ստուգիչները.

Ուղղություն. լսել

(Լսելու կարողությունը զարգացնելու համար, գործածվում են դիդակտիկացված ձայնագրություններ, որտեղ տեքստը հստակ է ու դանդաղ:)

Օտ.տ.III.1. Աշակերտը կարող է հասկանալ լսած փոքր երկխոսությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է խոսակցության թեման, համատեքստը *(օր., ծննդյան օր, Նոր տարի, խանութում, կենդանաբանական այգում):*
- Ժողովում է երկխոսության կոնկրետ մանրամասները *(օր., ով, որտեղ, որքան, երբ, ինչպիսի և այլն):*
- Ճանաչում է զրուցակիցներին և նրանց հույզերը, վերաբերմունքը *(օր., ինչից են վախենում/ինչից չեն վախենում, ինչն է հետաքրքրում/ինչը չի հետաքրքրում, ինչն է դուր գալիս/ինչը դուր չի գալիս և այլն):*
- Տարբերում է զրուցակիցների կողմից հնչեցված հաղորդված արտահայտության եղանակը *(խնդրանք, պահանջ, հարց, հրաման):*
- Տարբերում է բարեկիրթ և մտերմական ձևակերպումները:

Օտ.տ.Յ.2. Աշակերտը կարող է հասկանալ լսած պատմողական բնույթի պատկերագարդ տեքստը (օր., հարմարեցված հեքիաթ, պատմվածք, դեպք):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Անվանում է գործող անձանց:
- Ճանաչում է նրանց հուզական վերաբերմունքները:
- Ճանաչում է գործող անձանց գործողությունները *(ով ինչ է անում):*
- Ճանաչում է խոսողին *(ու՛մ է պատկանում այս կամ այն արտահայտությունը):*
- Հասկանում է պատմության ընթացքը *(ինչպես սկսվեց, ինչ տեղի ունեցավ, ինչպես ավարտվեց):*
- Սահմանում է գործողությունների ժամանակն ու տեղը *(օր., առավոտյան, երեկոյան, ամռանը, անտառում, կրկեսում):*
- Հայտնաբերում է գործող անձին բնորոշ հատկանիշները:
- Գործող անձանց վարքից ելնելով՝ եզրակացություն է անում նրանց բնավորության, հատկանիշների վերաբերյալ *(օր., բարի է, չար է, ժլատ է, համարձակ է, վախկոտ է, ծուլ է):*
- Տեքստը մշակելուց հետո, ուսուցչի պատմածով քայլ առ քայլ իրականացնում է պատմության բեմականացում:
- Ստեղծում է տեքստի պատկերագրողումներ:

Օտ.տ.Յ.3. Աշակերտը կարող է հասկանալ լսած եղանակի պարզ տեսությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ճանաչում է ծանոթ աշխարհագրական անվանումները:
- Հասկանում է մթնոլորտային երևույթները և ջերմաստիճանը:

Լսելու ռազմավարությունները

Օտ.տ.Յ.4. Աշակերտը կարող է գործածել պատշաճ ռազմավարություններ՝ բովանդակությունը հասկանալու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Վերնագրի, պատկերագրողումների հիման վրա, կարծիք է հայտնում բովանդակության մասին:
- Անմիջական խոսքը/ձայնագրությունը լսելիս՝ հիմնվում է ոչ բառային տարրերի վրա *(ձայնային տեմբր, հնչերանգ, դիմախաղ, ձեռածություն, տարրեր տեսակի աղմուկ):*
- Ծանոթ տարրերի հիման վրա, փորձում է ինքնուրույն հասկանալ անծանոթ բառերի, արտահայտությունների, նախադասությունների նշանակությունը *(օր., համատեքստ, հնչերանգ, պատկերագրողում և այլն):*
- Մայրենի լեզվով նկարագրում է, թե ինչ եղանակով/ինչպես կարողացավ լուծել ունկնդրման խնդիրը:
- Օտար լեզուներով մանկական հեռուստահաղորդումներ է դիտում:

Ուղղություն. կարդալ

Օտ.տ.Յ.5. Աշակերտը կարող է կարդալ բացիկ, անձնական նամակ և հասկանալ դրանք:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ճանաչում է հեղինակին, հասցեատիրոջը (*հասակակցին, մեծահասակին*):
- Հասկանում է նամակագրության նպատակը (*օր., շնորհավորանք, ողջույն, հրավեր*):
- Հասկանում է կոնկրետ տեղեկատվությունը (*որտեղ, որքան, երբ և այլն*):

Օտ.տ.Յ.6. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ լսած տեքստը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տեքստում գտնում է ռեպլիկաներն ու դրանց հեղինակներին:
- Գտնում է մատնանշված դրվագները:
- Ուսուցչից ստացած ծրագրի առանձին կետերը կապում է համապատասխան հատվածների հետ:
- Որոնում և ժողովում է լրացուցիչ մանրամասնություններ (*ինչպիսի, որտեղ, որքան և այլն*), որոնք բաց է թողել լսելիս:
- Ծրագրի հիման վրա, հաղորդում է ընդհանուր բովանդակությունը:

Օտ.տ.Յ.7. Աշակերտը կարող է կոնկրետ տեղեկատվություն գտնել պրագմատիկ բնույթի մանկական տեղեկատվական տեքստում (*օր., դասացուցակ, խոհարարական բաղադրատոմս, մանկական հեռուստահաղորդումների ծրագիր, մանկական կատալոգ և այլն*):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կատալոգի մեջ ճանաչում է այս կամ այն առարկայի գինը, տվյալները (*օր., չափը, գույնը, նյութը, ձևը, եթե գրացուցակ է՝ մատենաշարը, հրատարակչությունը, հեղինակին, վերնագիրը, տարիքային խումբը և այլն*):
- Կատալոգից/հեռուստածրագրից ընտրում է ցանկալի իրը/հաղորդումը՝ նկատի առնելով որոշակի չափանիշ:

Օտ.տ.Յ.8. Աշակերտը կարող է կարդալ և հասկանալ ճանաչողական բնույթի պատկերագրող տեքստերը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Վերնագիրը կապում է տեքստի բովանդակության հետ:
- Հասկանում է պատկերագրողումների ներքո տրված մակագրությունների բովանդակությունը:
- Փնտրում և գտնում է, թե որ խորագրի, ենթավերնագրի հետ է կապված պատկերագրողումը, դրա մակագրությունը:
- Հասկանում է, թե որ խորագրի մեջ, տեքստի որ մասում պետք է փնտրի այս կամ այն տեղեկատվությունը: Տեքստի մեջ փնտրում և գտնում է կոնկրետ տեղեկատվությունը:
- Հայտնաբերում է տարբեր տեղեկատվությունների միջև առկա պարզ տրամաբանական կապերը:

Օտ.տ.Յ.9. Աշակերտը ձեռք է բերել բարձրաձայն կարդալու տարրական կարողություններ ու հմտություններ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ազատ կարդում է փոքրածավալ ծանոթ տեքստը:
- Աշակերտը համադասարանցիների համար բարձրաձայն, հստակ կերպով ընթերցում է ծանոթ տեքստի ցանկալի հատվածը / ծանոթ տեքստից ընտրած հատվածը:
- Տարբեր երանգի նախադասություններ արտասանելիս՝ փորձում է պահպանել համապատասխան հնչերանգը:
- Մասնակցում է երկխոսության, ձեպանկարի խմբային ընթերցանությանը:

Օտ.տ.Յ.10. Աշակերտը կարող է հայտնաբերել տարբեր տեսակի պարզ տեքստերի կառուցվածքային և լեզվական բնութագրիչները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ըստ կառուցվածքային կազմակերպման, տարբեր տեսակի տեքստերը համեմատում է իրար (*օր., հրահանգ և ճանաչողական բնույթի տեքստ*): Անվանում է տարբերությունները, նմանությունները:
- Ճանաչում է հաղորդակցական իրավիճակի համապատասխան արտահայտությունները, կլիշեները, լեզվական կառույցները (*օր., ողջույնի, շնորհավորանքի, հրավերի և այլն*):
- Հայտնաբերում է պարզ նախադասությունների անդամների միջև եղած շարահյուսական հարաբերակցությունները (*օր., գոյական և ածական անունների թվերի համապատասխանությունը*):
- Ճանաչում է բայի ներկա/անցյալ ժամանակներն արտահայտող ձևերը, մակբայները:
- Ճանաչում է տեղադրություն և ժամանակ արտահայտող պարզ լեզվական միջոցները (*մակբայ, բառակապակցություններ, նախդիրներ*):
- Հասկանում է կետադրական նշանների գործառույթները (*օր., կրկնակետի, միացման գծիկի*):

Կարդալու ռազմավարությունները

Օտ.տ.Յ.11. Աշակերտը կարող է գործածել տարբեր ռազմավարություններ, բովանդակության ըմբռնումը դյուրացնելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ծանոթ տարրերի միջոցով (*օր., համատեքստի, պատկերազարդման, ծանոթ տառերի*), ինքնուրույն հասկանում է անծանոթ բառերի, նախադասությունների նշանակությունը:
- Պատկերազարդումների, վերնագրի հիման վրա, մայրենի լեզվով կարծիք է հայտնում տեքստի բովանդակության մասին:
- Կոնկրետ տեղեկատվություն գտնելու նպատակով, ամբողջությամբ դիտարկում է տեքստը, դրա բառային և ոչ բառային կազմակերպիչ տարրերը (*վերնագիրը, խորագիրը, պատկերազարդումը, մակագրությունը, պարբերությունը, սյունակը, պատկերանիշը,*

տպագրական բնութագրիչները/օր., խոշոր տառատեսակ/ և այլն) և կիրառում է դրանք, որպես հիմք:

- Մայրենի լեզվով նկարագրում է, թե ինչ եղանակով կարողացավ կատարել ընթերցանության այս կամ այն առաջադրանքը: Իր կիրառած եղանակը համեմատում է ուրիշների ընտրած եղանակի հետ և եզրակացություն անում այն մասին, թե որ մոտեցումն էր առավել հարմարեցված/արդյունավետ, և ինչու:

Ուղղություն. գրել

Օտ.տ.III.12. Աշակերտը կարող է բացիկ գրել:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Պահպանում է նամակագրության պաշտոնական կոդը (*դիմում, ստորագրություն, ամսաթիվ*):
- Ձևակերպում է նամակագրության նպատակը (*օր., շնորհավորել, լուր հաղորդել, հրավիրել*):
- Նկատի առնելով ստացողի ինքնությունը՝ ընտրում է դիմելու և ողջունելու, հրաժեշտ տալու պատշաճ ձևերը:

Օտ.տ.III.13. Աշակերտը կարող է, օժանդակ միջոցների վրա հիմնվելով, փոքրածավալ տեքստեր կազմել:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տրված կադապարը լրացնում է այլ բովանդակությամբ (*օր., սենյակի, գործող անձի տրված նկարագրությունից տարբեր նկարագրություն*):
- Լրացնում է թերի տեքստը, դասացուցակը, օրակարգը, հարցաթերթը:
- Պատկերազարդումների հիման վրա, նկարագրում է փոքրածավալ տեքստը կամ փոխում է տեքստի հատվածը/ավարտը:
- Պատկերազարդումների համար մակագրություններ է սահմանում:
- Ըստ նմուշի կամ տրված պայմանի, տեքստ է գրում (*օր., ընկերոջ, բնակավայրի, իրերի, կենդանու բնութագրություն*):

Օտ.տ.III.14. Աշակերտը կարող է պահպանել գրավոր տեքստի կառուցվածքը: Ձեռք է բերել տարրական լեզվական կարողություններ ու հմտություններ և կարող է գործածել դրանք:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կիրառում է տեղադրություն արտահայտող պարզ լեզվական միջոցները (*օր., նախդիր, մակբայ*):
- Նախադասության անդամների միջև պահպանում է տարրական շարահյուսական հարաբերակցությունները (*օր., համապատասխանեցնում է գոյական ու ածական անունների թիվը/սեռը, համաձայնեցնում է բայի ու գոյականի դեմքը և թիվը*):
- Ցուցումներ տալու ժամանակ ընտրում է պատշաճ բայաձևեր:

- Հաստատական, ժխտական և հարցական բովանդակությամբ պարզ համառոտ և պարզ ընդարձակ նախադասությունների մեջ պահպանում է բառերի շարադասությունը:
- Պահպանում է ուղղագրական կանոնները: Ճիշտ է կիրառում կետադրական նշանները:

Օտ.տ.III.15. Աշակերտը կարող է գործածել գրելու ռազմավարությունները, գրավորը կատարելագործելու նպատակով:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Գտնում և պատրաստում է անհրաժեշտ ուսումնական ռեսուրսները (*օր., բառարան, նմուշ, անհրաժեշտ լեզվական նյութ, քերականական տեղեկատու և այլն*):
- Գրում է սևագիր տարբերակը:
- Վերընթերցում է սևագիր տարբերակը, ուսումնական ռեսուրսի հիման վրա ստուգում է գրավորը և ուղղում սխալները:
- Սրբագրում է գրավորը:

Ուղղություն. խոսել

Օտ.տ.III.16. Աշակերտը ձեռք է բերել խոսելու համար անհրաժեշտ կարողություններ ու հմտություններ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հստակ կերպով արտաբերում է ծանոթ բառերը, արտահայտությունները, շուտասելուկները:
- Ասմունքում է, բանավոր հաշվարկում է, երգեր է կատարում:
- Անգիր ներկայացնում է պարզ երկխոսություններ ու տեսարաններ:
- Տեքստերն արտահայտելիս պահպանում է համապատասխան հնչերանգն ու ռիթմը:

Օտ.տ.III.17. Աշակերտը կարող է մասնակցել պարզ ինտերակցիաներին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կոնկրետ դասարանային իրավիճակի վերաբերյալ հարցեր է տալիս/պատասխանում է հարցերին:
- Ծանոթ թեմաների շուրջ պարզ հարցեր է տալիս/պատասխանում է պարզ հարցերին (*օր., արձակուրդներ, բնակավայր, ընկերներ և այլն*):
- Պատասխանում է սովորած տեքստի բովանդակության շուրջ տրված հարցերին:
- Հարցնում և անվանում է պատճառը (*օր., «Բնչո՞ւ... Որովհետև...»*):
- Մասնակցում է կեղծակերպած իրավիճակներին (*օր., հարցազրույց, խանութում, հանդիպում կենդանաբանական այգում/հասակակցի/մեծահասակի, մրցակիցների հետ*):

Օտ.տ.III.18. Աշակերտը կարող է փոխկապակցված խոսել:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Նկարագրում է միջավայրը (*սենյակը, փողոցը, նկարը*):

- Պատկերագրողումների հիման վրա դեպք է պատմում:
- Փոքր պատմություն է պատմում, որի ականատեսն ինքն է եղել կամ իր հետ է կատարվել:
- Խոսում է ծանոթ թեմաների շուրջ (*օր, ընտանիքում, ազգականների/բարեկամների մասին, ազատ ժամանակ և այլն*):

Օտ.տ.Յ.19. Աշակերտը ձեռք է բերել տարրական լեզվական կարողություններ ու հմտություններ և կարող է գործածել դրանք:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ինտերակցիայի ժամանակ ընտրում է հաղորդակցական իրավիճակի համապատասխան դիմելաձևեր, արտահայտություններ, կլիշեներ, լեզվական կառույցներ:
- Ճշգրիտ կերպով է գործածում խոսքի բարեկիրթ և մտերմական ձևակերպումները:
- Պատշաճ կերպով է գործածում տարբեր բովանդակություն ունեցող (*պատմողական, հարցական, բացականչական*) նախադասությունները:
- Տարբեր երանգի նախադասություններ արտասանելիս՝ պահպանում է համապատասխան հնչերանգը:
- Կիրառում է տեղադրություն արտահայտող պարզ լեզվական միջոցները:
- Նախադասության անդամների միջև պահպանում է տարրական շարահյուսական հարաբերակցությունները (*բայի համապատասխան դեմքն ու թիվը*):
- Պատշաճ կերպով է կիրառում սովորած բառապաշարային միավորները:

Խոսելու ռազմավարությունները

Օտ.տ.Յ.20. Աշակերտը կարող է գործածել փոխհատուցման միջոցները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Բառը մոռանալու/չիմանալու դեպքում, գործածում է փոխհատուցման միջոցները (*օր., դիմախաղ, ձեռածություն, շրջասություն/նկարագրում է ենթադրված առարկան, կամ մատնանշում է, թե ինչի համար է կիրառվում այն/ և այլն*):
- Հասկանում և ուղղում է իր/ուրիշի սխալները:
- Օգնություն է խնդրում ուսուցչից կամ համադասարանցիներից:

Ուղղություն. Մշակույթների երկխոսություն

Օտ.տ.Յ.21. Աշակերտը հետաքրքրություն է ցուցաբերում մշակութային տարբերությունների նկատմամբ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Օտար և հայրենի մշակութային ու սոցիալ-մշակութային համատեքստերի միջև գուգահեռներ է անցկացնում և գտնում է նմանություններն ու տարբերությունները (*օր., լեզուն, ուտեստներ, դպրոցական օրացույց, հուշանվերներ, արժույթ և այլն*):
- Արտահայտում է սեփական կարծիքները, վերաբերմունքը:

- Լրացուցիչ տեղեկություններ է գտնում:
- Մայրենի լեզվում գտնում է սովորած առածի նմանօրինակը և համեմատում է արտահայտման ձևերը:

Ուղղություն. Օտար լեզվի գործնական կիրառություն (մեղիացիա)

Օտ.տ.III.22. Աշակերտը կարող է տարբեր տեսակի նախագծեր իրականացնել օտար լեզվով (օր., միջոցառում կազմակերպել, ծագումնաբանական ծառ կազմել, հեքիաթ բեմադրել և այլն):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ուսուցչի հետ ձևակերպում է նախագիծը հաջողությամբ իրականացնելու չափանիշները:
- Խմբի անդամների և ուսուցչի հետ ծրագրում է նախագծի իրագործման փուլերը:
- Խմբի անդամների հետ , ուսուցչի օգնությամբ սահմանում է և բաշխում գործառույթները:
- Խմբում կատարում է իրեն հատկացված գործառույթը:
- Ուսուցչի, ծնողի կամ այլ անձի աջակցությամբ գտնում է պատշաճ ռեսուրսներ:
- Խմբի անդամների հետ , ուսուցչի օգնությամբ ընտրում է և մշակում ձեռք բերած նյութը:
- Ուսուցչի աջակցությամբ կատարելագործում է և իրականացնում նախագիծը:

Ուղղություն. Ուսանման ուսանում

Օտ.տ.III.23. Աշակերտը կարող է կազմակերպել ուսումնական գործունեությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Արտագրում է առաջադրանքները:
- Խնամում և կարգավորում է ուսումնական իրերը:
- Իր մոտ է պահում անհրաժեշտ իրերը:
- Աշխատանքը բաժանում է փուլերի և պլանավորում, թե ինչպիսի հերթականությամբ կատարի այն:
- Ամեն տեսակի ակտիվություն իրականացնելիս՝ պահպանում է ժամանակի սահմանաչափը:

Օտ.տ.III.24. Աշակերտն ակտիվորեն ընդգրկված է ուսումնական գործընթացում:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Պատրաստակամությամբ է լրացնում ինքնագնահատման սխեմաները:
- Հետաքրքրվում է գնահատման արդյունքներով:
- Պատրաստակամությամբ է մասնակցում ակտիվություններին:
- Մատնանշում է որոշ թեբությունները շտկելու հնարավոր միջոցները (օր., ինչպես վարվի, որպեսզի մտապահի նոր բառերը) և փորձում է շտկել դրանք:
- Հասկանում և նշում է թե՛ իր, թե՛ ուրիշի սխալները:

Օտ.տ.Յ.25. Աշակերտը կարող է ռեսուրսները գործածել՝ ուսումնական գործունեությանը նպաստելու նպատակով:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Արդյունավետ է օգտագործում դասագրքի ռեսուրսները *(օր., բառարանը, կառուցվածքային նմուշները, քերականական տեղեկատուն, պատկերագրադրումները և այլն):*
- Տեղեկատվություն է գտնում ինչպես դպրոցում, այնպես էլ դպրոցից դուրս մատչելի ռեսուրսների մեջ *(օր., դասագրքի ակնբերությունները, բառարան, դպրոցի/գյուղի/քաղաքի գրադարան, ուսուցիչ, իրազեկ անձ, համացանց և այլն):*
- Ստեղծում է գործառնական ռեսուրսներ *(օր., այբբենական/թեմատիկ բառարան, պաստառ, պարզ սխեմա, հարցաթերթ և այլն)* և օգտագործում է դրանք:
- Տեղեկատվություն/ուսումնական նյութ է գտնում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) միջոցով:
- Այս կամ այն նյութը/տեքստը կազմելու/մշակելու համար կիրառում է ՏՀՏ-ը:

Օտ.տ.Յ.26. Աշակերտը կառուցողական վերաբերմունք ունի խոչընդոտների նկատմամբ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Չի խուսափում սխալներ թույլ տալուց:
- Դիտարկում է սխալը և փորձում է պարզել պատճառը:
- Հարցեր է տալիս, օգնություն է խնդրում, երբ կանգնում է դժվարության առջև:
- Չի խուսափում սեփական միտքը/հայեցակետը արտահայտելուց:
- Փորձում է ինքնուրույն հաղթահարել դժվարությունները:

Օտ.տ.Յ.27. Աշակերտը կարող է տարբեր եղանակներ կիրառել՝ բառապաշարային նյութը յուրացնելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կիրառում է մտապահելու տարբեր եղանակներ *(օր., մի քանի անգամ կարդալ կամ գրել, զուգորդել որևէ բանի հետ, կիրառել համատեքստում, խմբավորել ըստ մեկ թեմատիկայի և այլն):*
- Հետևողականորեն կրկնում է անցած բառապաշարային նյութը:
- Դուրս է գրում վատ յուրացրած բառապաշարային միավորները և մշակում է դրանք:

Օտ.տ.Յ.28. Աշակերտը կարող է ռազմավարություններ գործածել՝ քերականական երևույթները հասկանալու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դիտարկելով կոնկրետ օրինակներ՝ հայտնաբերում է լեզվական մեխանիզմները:
- Կիրառում է հայտնաբերված մեխանիզմները:
- Համեմատում է օտար և մայրենի լեզուների քերականական երևույթները:
- Կիրառում է սխեմաներ, աղյուսակներ, դասակարգումներ, կառուցվածքային մոդելներ:

Օտ.տ.III.29. Աշակերտը կարող է համագործակցել համադասարանցիների, ուսուցչի հետ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Սպասում է, մինչև ուրիշները պատասխանեն:
- Բանավեճի ժամանակ լսում է տարբեր կարծիքները:
- Հասակակցին օգնում է այն հարցերում, որոնցից ինքն ավելի ուժեղ է:
- Ջուլգի հետ լուծում է տրված խնդիրը:
- Ջուլգի հետ ներգրավված է ինտերակցիայի մեջ:
- Քաղաքավարի կերպով նշում է թույլ տրված սխալները:

Օտ.տ.III.30. Աշակերտը կարող է համագործակցել խմբի անդամների հետ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Խմբակիցների հետ խորհրդակցում է գործառույթները, աշխատանքը բաշխելու վերաբերյալ:
- Կարող է պայմանավորվել խմբակիցների հետ:
- Կարծիքներ է հայտնում, լսում է ուրիշների կարծիքները:
- Մեփական լուրսն է ներդնում առաջադրված նպատակին հասնելու գործում:

Տարրական աստիճան՝ IV մակարդակ (տIV)

Օտար լեզու

Զափոռոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների.

Լսել	Կարդալ	Գրել	Խոսել
<p>Օտ.տ.IV.1. Աշակերտը կարող է հասկանալ լսած փոքրածավալ երկխոսությունը:</p> <p>Օտ.տ.IV.2. Աշակերտը կարող է հասկանալ լսած եղանակի պարզ տեսությունը:</p>	<p>Օտ.տ.IV.6. Աշակերտը կարող է կարդալ և հասկանալ բացատրական բնույթի տեքստերը, ցուցումները <i>(օր., խաղի կանոնը, ինչպես պատրաստել այս կամ այն ձեռագործը և այլն):</i></p> <p>Օտ.տ.IV.7. Աշակերտը</p>	<p>Օտ.տ.IV.11. Աշակերտը կարող է պարզ լեզվով նամակ գրել:</p> <p>ա) Բացիկ է գրում:</p> <p>բ) Անձնական նամակ է գրում:</p> <p>Օտ.տ.IV.12. Աշակերտը կարող է փոքրածավալ տեքստեր հորինել:</p>	<p>Օտ.տ.IV.16. Աշակերտը կարող է մասնակցել պարզ ինտերակցիային:</p> <p>Օտ.տ.IV.17. Աշակերտը կարող է փոխկապակցված խոսել:</p>

<p>Օտ.տ.Վ.3. Աշակերտը կարող է հասկանալ լսած պատմողական բնույթի պատկերագարող տեքստը <i>(օր., հարմարեցված հեքիաթ, պատմվածք, պատմություն):</i></p> <p>Օտ.տ.Վ.4. Աշակերտը կարող է հասկանալ մանկական հաղորդումների ձայնագրությունների հիմնական բովանդակությունը:</p> <p>Օտ.տ.Վ.5. Աշակերտը կարող է գործածել պատշաճ ռազմավարություններ՝ բովանդակությունը հասկանալու համար:</p>	<p>կարող է կարդալ ու հասկանալ ճանաչողական բնույթի պատկերագարող տեքստերը:</p> <p>Օտ.տ.Վ.8. Աշակերտը ձեռք է բերել բարձրաձայն կարդալու տարրական կարողություններ ու հմտություններ:</p> <p>Օտ.տ.Վ.9. Աշակերտը կարող է հայտնաբերել տարբեր տեսակի պարզ տեքստերի կառուցվածքային և լեզվական բնութագրիչները:</p> <p>Օտ.տ.Վ.10. Աշակերտը կարող է, տեքստի ըմբռնումը դյուրացնելու համար, դիմել տարբեր ռազմավարությունների:</p>	<p>Օտ.տ.Վ.13. Աշակերտը կարող է, ըստ նմուշի, ճանաչողական բնույթի փոքրածավալ տեքստեր գրել մանկական հանրագիտարանի համար:</p> <p>Օտ.տ.Վ.14. Աշակերտը կարող է պահպանել գրավոր տեքստի կառուցվածքը: Ձեռք է բերել տարրական լեզվական կարողություններ ու հմտություններ և կարող է գործածել դրանք:</p> <p>Օտ.տ. Վ.15. Աշակերտը կարող է գործածել գրելու ռազմավարություններ՝ գրավոր կատարելագործելու նպատակով:</p>	<p>Օտ.տ.Վ.18. Աշակերտը ձեռք է բերել տարրական լեզվական կարողություններ ու հմտություններ և կարող է գործածել դրանք:</p> <p>Օտ.տ.Վ.19. Աշակերտը կարող է գործածել փոխհատուցման միջոցները:</p>
---	--	---	--

Մշակույթների երկխոսություն	Օտար լեզվի գործնական կիրառություն <i>(մեդիացիա)</i>	Ուսանման ուսանում
<p>Օտ.տ.Վ.20. Աշակերտը հետաքրքրություն է ցուցաբերում մշակութային տարբերությունների նկատմամբ:</p>	<p>Օտ.տ.Վ.21. Աշակերտը կարող է տարբեր տեսակի նախագծեր իրականացնել օտար լեզվով <i>(օր., ծագումնաբանական ծառ կազմել, կատալոգ կազմել ու ներկայացնել և այլն):</i></p>	<p>Օտ.տ.Վ.22. Աշակերտը կարող է ռեսուրսներ կիրառել՝ ուսումնական գործունեությանը նպաստելու նպատակով</p> <p>Օտ.տ.Վ.23. Աշակերտը կարող է տարբեր եղանակներ կիրառել՝ բառապաշարային նյութը յուրացնելու համար:</p>

		<p>Օտ.տ.IV.24. Աշակերտը կարող է ռազմավարություններ կիրառել՝ քերականական երևույթները հասկանալու համար:</p> <p>Օտ.տ.IV.25. Աշակերտը կարող է համագործակցել համադասարանցիների, ուսուցչի և խմբի անդամների հետ</p>
--	--	--

Տարեվերջին նվաճվելիք արդյունքները և դրանց ստուգիչները.

Ուղղություն. լսել

(Լսելու կարողությունը զարգացնելու համար, գործածվում են դիդակտիկացված ձայնագրություններ, որտեղ տեքստը հստակ է ու դանդաղ:)

Օտ.տ.IV.1. Աշակերտը կարող է հասկանալ լսած փոքրածավալ երկխոսությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է խոսակցության թեման, համատեքստը:
- Ժողովում է երկխոսության կոնկրետ մանրամասները *(օր., ով, որտեղ, որքան, երբ, ինչպիսի և այլն):*
- Տարբերում է գրուցակիցների կողմից հնչեցված հաղորդված արտահայտության եղանակը *(ինդրանք, պահանջ, հարց, հրաման):*
- Ռեպլիկաների հիման վրա, կոնկրետ եզրակացություններ է անում գրուցակիցների մասին *(օր., նրանց ցանկությունների, ծրագրերի, հետաքրքրությունների, գործունեության, վերաբերմունքի մասին):*
- Տարբերում է բարեկիրթ և մտերմական ձևակերպումները:

Օտ.տ.IV.2. Աշակերտը կարող է հասկանալ լսած եղանակի պարզ տեսությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ճանաչում է ծանոթ աշխարհագրական անվանումները:
- Հասկանում է մթնոլորտային երևույթներն ու ջերմաստիճանը:

Օտ.տ.IV.3. Աշակերտը կարող է հասկանալ լսած պատմողական բնույթի պատկերագրող տեքստը *(օր., հարմարեցված հեքիաթ, պատմվածք, դեպք):*

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է գործող անձանց միջև առկա հարաբերությունները:
- Հասկանում է փաստերի ու երևույթների հաջորդականությունը:
- Ընդգծում է սյուժեի ընթացքը (*ինչպես սկսվեց, ինչ կատարվեց, ինչպես ավարտվեց*):
- Սահմանում է գործողությունների ժամանակն ու տեղը:
- Հայտնաբերում է գործող անձին բնորոշ հատկանիշները:
- Գործող անձանց վարքից ելնելով՝ եզրակացություն է անում նրանց բնավորության, հատկությունների մասին:
- Կազմում է պարզ նախագիծ, դուրս է գրում հանգուցային բառերը, լեզվական կառույցները և, դրանց հիման վրա, պարզ լեզվական միջոցներով հաղորդում է տեքստի հիմնական բովանդակությունը:

Օտ.տ.IV.4. Աշակերտը կարող է հասկանալ մանկական հաղորդումների ձայնագրությունների հիմնական բովանդակությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է ծանոթ բառերը, ձևակերպումները, լեզվական կառույցները և, դրանց հիման վրա, եզրակացություն է անում անհիմացիոն ֆիլմի բովանդակության մասին:
- Մանկական ժամանցային-ճանաչողական հաղորդումներ է դիտում, «ըմբռնում է» ծանոթ բառերը, արտահայտությունները, հասկանում է կոնկրետ տեղեկատվությունը (*օր., մրցույթի մասնակցի հարցազրույցը. ով է, որտեղ է սովորում, ինչ հետաքրքրություններ ունի և այլն*):

Լսելու ռազմավարությունները

Օտ.տ.IV.5. Աշակերտը կարող է գործածել պատշաճ ռազմավարություններ՝ բովանդակությունը հասկանալու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Վերնագրի, պատկերազարդումների հիման վրա, կարծիք է հայտնում բովանդակության մասին:
- Անմիջական խոսքը/ձայնագրությունը լսելիս՝ հենվում է ոչ բառային տարրերի վրա (*ձայնային տեմբր, հնչերանգ, դիմախառ, ձեռածություն, տարրեր տեսակի աղմուկ*):
- Ծանոթ տարրերի (*օր., համատեքստ, հնչերանգ, պատկերազարդում և այլն*) հիման վրա, փորձում է ինքնուրույն հասկանալ անծանոթ բառերի, արտահայտությունների, նախադասությունների նշանակությունը:
- Մայրենի լեզվով նկարագրում է, թե ինչ եղանակով/ինչպես կարողացավ լուծել ունկնդրման խնդիրը:
- Օտար լեզուներով մանկական հեռուստահաղորդումներ է դիտում:

Օտ.տ.IV.6. Աշակերտը կարող է կարդալ և հասկանալ բացատրական բնույթի տեքստերը, ցուցումները (օր., խաղի կանոնը, ինչպես պատրաստել այս կամ այն ձեռագործը և այլն):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Առաջին հերթին դիտարկում է տեքստի կազմությունը, ոչ բառային և բառային կազմակերպիչ տարրերը (օր., վերնագրերը, խորագրերը, պատկերազարդումները, սխեմաները, սլաքները, պատկերանիշները, մակագրությունները, հիմնական տեքստի տեղաբաշխումը, տպագրական բնութագրիչները և այլն) և սահմանում է, թե տեքստի որ մասում պետք է փնտրի այս կամ այն տեղեկատվությունը:
- Հասկանում է կոնկրետ տեղեկատվությունը (օր., անհրաժեշտ նյութը, դրա բնութագրիչները, քանակը, գործողության վայրը և այլն):
- Հասկանում է հրահանգները:
- Հասկանում է գործողությունների հաջորդականությունը:

Օտ.տ.IV.7. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ ճանաչողական բնույթի պատկերազարդ տեքստերը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Վերնագիրը կապում է տեքստի բովանդակության հետ:
- Հասկանում է պատկերազարդումների ներքո տրված մակագրությունների բովանդակությունը:
- Փնտրում և գտնում է, թե որ խորագրի, ենթավերնագրի հետ է կապված պատկերազարդումը, մակագրությունը:
- Հասկանում է, թե որ խորագրի մեջ, տեքստի որ մասում պետք է փնտրի այս կամ այն տեղեկատվությունը: Տեքստի մեջ փնտրում և գտնում է կոնկրետ տեղեկատվությունը:
- Հայտնաբերում է տեքստի տարբեր հատվածների միջև առկա տրամաբանական կապը:
- Ճշգրիտ տեղեկատվության հիման վրա, եզրակացություն է անում:

Օտ.տ.IV.8. Աշակերտը ձեռք է բերել բարձրաձայն կարդալու տարրական կարողություններ ու հմտություններ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ազատ կարդում է փոքրածավալ ծանոթ տեքստը:
- Աշակերտը համադասարանցիների համար բարձրաձայն, հստակ կերպով ընթերցում է ծանոթ տեքստի ցանկալի հատվածը / ծանոթ տեքստից ընտրած հատվածը:
- Տարբեր երանգի նախադասություններն արտասանելիս՝ փորձում է պահպանել համապատասխան հնչերանգը:
- Մասնակցում է երկխոսության, ձեպանկարի խմբային ընթերցանությանը:

Օտ.տ.IV.9. Աշակերտը կարող է հայտնաբերել տարբեր տեսակի պարզ տեքստերի կառուցվածքային և լեզվական բնութագրիչները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տարբեր տեսակի տեքստերը համեմատում է ըստ կառուցվածքային կազմության (*օր., հրահանգն ու ճանաչողական բնույթի տեքստը*), անվանում է տարբերությունները, նմանությունները:
- Հասկանում է հաղորդակցական իրավիճակին համապատասխանող արտահայտությունները, կլիշեները, լեզվական կառույցները (*օր., ռիչույնի, շնորհավորանքի, հրավերի և այլն*):
- Հայտնաբերում է պարզ նախադասությունների անդամների միջև եղած շարահյուսական հարաբերակցությունները:
- Ճանաչում է բայի ներկա/անցյալ և ապառնի ժամանակներն արտահայտող ձևերը, մակբայները:
- Ճանաչում է տեղադրություն և ժամանակ արտահայտող պարզ լեզվական միջոցները (*մակբայ, բառակապակցություններ, նախդիրներ*):
- Հասկանում է կետադրական նշանների գործառույթները (*օր., կրկնակետի, միացման գծիկի*):

Կարդալու ռազմավարությունները

Օտ.տ.IV.10. Աշակերտը կարող է, տեքստի ըմբռնումը դյուրացնելու համար, դիմել տարբեր ռազմավարությունների:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ծանոթ տարրերի միջոցով (*օր., համատեքստի, պատկերազարդման, ծանոթ տառերի*), ինքնուրույն հասկանում է անծանոթ բառերի, նախադասությունների իմաստը:
- Պատկերազարդումների, վերնագրի հիման վրա, մայրենի լեզվով կարծիք է հայտնում տեքստի բովանդակության մասին:
- Կոնկրետ տեղեկատվություն գտնելու նպատակով, ամբողջությամբ դիտարկում է տեքստը, դրա բառային և ոչ բառային կազմակերպիչ տարրերը (*վերնագիրը, խորագիրը, պատկերազարդումը, մակագրությունը, պարբերությունը, սյունակը, պատկերանիշը, տպագրական բնութագրիչները/օր., խոշոր տառատեսակ/ և այլն*) և կիրառում է դրանք, որպես հիմք:
- Մայրենի լեզվով նկարագրում է, թե ինչ եղանակով կարողացավ լուծել այս կամ այն ընթերցանական խնդիրը: Իր կիրառած եղանակը համեմատում է ուրիշների ընտրած եղանակի հետ և եզրակացություն անում այն մասին, թե որ մոտեցումն էր առավել հարմարեցված/արդյունավետ, և ինչու:

Ուղղություն. գրել

Օտ.տ.IV.11. Աշակերտը կարող է պարզ լեզվով նամակ գրել:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

ա) Բացիկ է գրում:

- Պահպանում է նամակագրության պաշտոնական կողմը (*կիրառում է դիմում, ստորագրություն, ամսաթիվ*):
- Ձևակերպում է նամակագրության նպատակը (*օր., շնորհավորել, լուր հաղորդել, հրավիրել*):
- Նկատի առնելով հասցեատիրոջ ինքնությունը՝ ընտրում է դիմելու և ողջունելու/հրաժեշտ տալու պատշաճ ձևեր:

բ) Անձնական նամակ է գրում:

- Պահպանում է նամակագրության պաշտոնական կողմը:
- Նկատի առնելով հասցեատիրոջ ինքնությունը՝ ընտրում է դիմելու և ողջունելու/հրաժեշտ տալու պատշաճ ձևակերպումներ:
- Բնութագրում է մարդկանց, առարկաները:
- Արտահայտում է սեփական վերաբերմունքը:
- Ցանկալի տեղեկատվությունը գտնելու համար՝ հարցեր է տալիս (*օր., ինչպիսի՞ք եղանակ է, ժամը քանիսի՞ն էս քնում*):

Օտ.տ.IV.12. Աշակերտը կարող է փոքրածավալ տեքստեր հորինել:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տրված կադապարը լրացնում է այլ բովանդակությամբ:
- Ավարտում է պատմությունը կամ փոխում է տրված ավարտն իր երևակայությամբ, պատկերագրողումների հիման վրա և այլն:
- Պատկերագրողումների համար մակագրություններ է որոշում:
- Կազմում է պարզ ծաղրաշար, որի միջոցով հաղորդում է կատարված կամ հորինված դեպք:

Օտ.տ.IV.13. Աշակերտը կարող է, ըստ նմուշի, ճանաչողական բնույթի փոքրածավալ տեքստեր գրել մանկական հանրագիտարանի համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Թեմա է ընտրում (*օր., փիղ*):
- Ժողովում է, ի մի է բերում տեղեկատվություններ:
- Խորագրեր է սահմանում (*օր., ֆիզիկական տվյալներ, սնունդ, բնակավայր և այլն*):
- Յուրաքանչյուր խորագրի համար տեքստեր է կազմում:
- Պատկերագրողումներ է (*նկար, լուսանկար, աղյուսակ*) ստեղծում կամ հայթայթում:
- Գրում է տեքստի լրիվ տարբերակը, ուշադրություն է դարձնում ձևավորմանը, տեքստի կառուցվածքային կազմությանը, բառային և ոչ բառային մասերի տեղաբաշխմանը:

Օտ.տ.IV.14. Աշակերտը կարող է պահպանել գրավոր տեքստի կառուցվածքը: Ձեռք է բերել տարրական լեզվական կարողություններ ու հմտություններ և կարող է գործածել դրանք:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կիրառում է տեղադրություն արտահայտող պարզ լեզվական միջոցները (*օր., նախդիր, մակբայ*):

- Նախադասության անդամների միջև պահպանում է տարրական շարահյուսական հարաբերակցությունները (օր., *համաձայնեցնում է գոյական ու ածական անունների թիվը/սեռը, համաձայնեցնում է բայի ու գոյականի դեմքը և թիվը*):
- Ցուցումներ տալու ժամանակ ընտրում է պատշաճ բայաձևեր:
- Հաստատական, ժխտական և հարցական բովանդակությամբ պարզ համառոտ և պարզ ընդարձակ նախադասությունների մեջ պահպանում է շարադասությունը:
- Պահպանում է ուղղագրական կանոնները: Ճիշտ է կիրառում կետադրական նշանները:

Օտ.տ.IV.15. Աշակերտը կարող է գործածել գրելու ռազմավարությունները՝ գրավոր կատարելագործելու նպատակով:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Գտնում և պատրաստում է անհրաժեշտ ուսումնական ռեսուրսները (օր., *բառարան, նմուշ, անհրաժեշտ լեզվական նյութ, քերականական տեղեկատու և այլն*):
- Գրում է սևագիր տարբերակը:
- Վերընթերցում է սևագիր տարբերակը, ուսումնական ռեսուրսի հիման վրա ստուգում է գրավորը և ուղղում սխալները:
- Սրբագրում է գրավորը:

Ուղղություն. խոսել

Օտ.տ.IV.16. Աշակերտը կարող է մասնակցել պարզ ինտերակցիային:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ծանոթ թեմայի շուրջ հարցեր է տալիս/պատասխանում է հարցերին (օր., *հյուրընկալվել քաղաքում/գյուղում, իմ բակը/տունը, ընտանիքը/ընկերները, սիրելի գործունեությունը/ժամանց և այլն*):
- Պատասխանում է սովորած տեքստի բովանդակության շուրջ տրված հարցերին:
- Հայտնում է իր վերաբերմունքը որոշակի հարցի նկատմամբ, օրինակներ է բերում անձնական փորձից:
- Արտահայտում է հույզ, տրամադրություն, ցանկություն:
- Մասնակցում է կեղծակերպած իրավիճակներին (օր., *հեռախոսով հանդիպում նշանակել, սրճարանում, վկաների հարցում և այլն*):

Օտ.տ.IV.17. Աշակերտը կարող է փոխկապակցված խոսել:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Նկարագրում է միջավայրը (*սենյակը, փողոցը, նկարը*):
- Լուսանկարների հիման վրա, պարզ դեպք է հորինում և պատմում:
- Ըստ պլանի, պատմում է լսած/ընթերցած տեքստի համառոտ բովանդակությունը:
- Խոսում է ծանոթ թեմաների շուրջ (օր., *ծրագրեր, ընկերներ, հետաքրքրություններ, սիրելի գործունեություն և այլն*):

Օտ.տ.IV.18. Աշակերտը ձեռք է բերել տարրական լեզվական կարողություններ ու հմտություններ և կարող է գործածել դրանք:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ինտերակցիայի ժամանակ ընտրում է հաղորդակցական իրավիճակին համապատասխան դիմելաձևեր, արտահայտություններ, կլիշեներ, լեզվական կառույցներ:
- Ճշգրիտ կերպով է գործածում խոսքի բարեկիրթ և մտերմական ձևակերպումները:
- Պատշաճ կերպով է գործածում տարբեր բովանդակություն ունեցող (*պատմողական, հարցական, բացականչական*) նախադասությունները:
- Տարբեր երանգի նախադասություններ արտասանելիս՝ պահպանում է համապատասխան հնչերանգը:
- Կիրառում է տեղադրություն արտահայտող պարզ լեզվական միջոցները:
- Նախադասության անդամների միջև պահպանում է տարրական շարահյուսական հարաբերակցությունները (*բայի համապատասխան դեմքն ու թիվը*):
- Պատշաճ կերպով է կիրառում սովորած բառապաշարային միավորները:

Խոսելու ռազմավարությունները

Օտ.տ.IV.19. Աշակերտը կարող է գործածել փոխհատուցման միջոցները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Բառը մոռանալու/չիմանալու դեպքում, գործածում է փոխհատուցման միջոցները (*օր., դիմախաղ, ձեռածություն, շրջատություն/նկարագրում է ենթադրված առարկան, կամ մատնանշում է, թե ինչի համար է կիրառվում այն/ ն այլն*):
- Հասկանում և ուղղում է իր/ուրիշի սխալները:
- Օգնություն է խնդրում ուսուցչից կամ համադասարանցուց:

Ուղղություն. Մշակույթների երկխոսություն

Օտ.տ.IV.20. Աշակերտը հետաքրքրություն է ցուցաբերում մշակութային տարբերությունների նկատմամբ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Օտար և հայրենի մշակույթների ֆենոմենների միջև զուգահեռներ է անցկացնում և գտնում է նմանությունները/տարբերությունները:
- Արտահայտում է սեփական կարծիքները, վերաբերմունքը:
- Լրացուցիչ տեղեկություն է գտնում:
- Մայրենի լեզվում գտնում է սովորած առածի նմանօրինակը և համեմատում է արտահայտման ձևերը:

Ուղղություն. Օտար լեզվի գործնական կիրառություն (մեղհացիա)

Օտ.տ.IV.21. Աշակերտը կարող է տարբեր տեսակի նախագծեր իրականացնել օտար լեզվով (օր., ծագումնաբանական ծառ կազմել, քարտարան կազմել ու ներկայացնել և այլն):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ուսուցչի հետ ձևակերպում է նախագիծը հաջողությամբ իրականացնելու չափանիշները:
- Խմբի անդամների և ուսուցչի հետ պլանավորում է նախագծի իրագործման փուլերը:
- Խմբի անդամների հետ, ուսուցչի օգնությամբ սահմանում է և բաշխում գործառույթները:
- Խմբում կատարում է իրեն հանձնարարված գործառույթը:
- Ուսուցչի, ծնողի կամ այլ անձի աջակցությամբ գտնում է պատշաճ ռեսուրսներ:
- Խմբի անդամների հետ, ուսուցչի օգնությամբ ընտրում է և մշակում ձեռք բերած նյութը:
- Ուսուցչի աջակցությամբ կատարելագործում է և իրականացնում նախագիծը:

Ուղղություն. Ուսանման ուսանում

Օտ.տ.IV.22. Աշակերտը կարող է ռեսուրսներ գործածել՝ ուսումնական գործունեությանը նպաստելու նպատակով:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Արդյունավետ է օգտագործում դասագրքի ռեսուրսները (օր., բառարանը, կառուցվածքային նմուշները, քերականական տեղեկատուն, պատկերագրադրումները և այլն):
- Տեղեկատվություն է գտնում ինչպես դպրոցում, այնպես էլ դպրոցից դուրս մատչելի ռեսուրսների մեջ (օր., դասագրքի ակներևությունները, բառարան, դպրոցի/գյուղի/քաղաքի գրադարան, ուսուցիչ, իրազեկ անձ, համացանց և այլն):
- Օպերատիվ ռեսուրսներ է ստեղծում (օր., այբբենական/թեմատիկ բառարան, պաստառ, պարզ սխեմա, հարցաթերթ և այլն) և օգտագործում է դրանք:
- Տեղեկատվություն/ուսումնական նյութ է գտնում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների (S2S) միջոցով:
- Այս կամ այն նյութը/տեքստը կազմելու/մշակելու համար կիրառում է S2S-ը:

Օտ.տ.IV.23. Աշակերտը կարող է տարբեր եղանակներ գործածել՝ բառապաշարային նյութը յուրացնելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կիրառում է մտապահելու տարբեր եղանակներ (օր., մի քանի անգամ կարդալ կամ գրել, գուգորդել որևէ բանի հետ, կիրառել համատեքստում, խմբավորել ըստ մեկ թեմատիկայի և այլն):
- Հետևողականորեն կրկնում է անցած բառապաշարային նյութը:
- Դուրս է գրում վատ յուրացրած բառապաշարային միավորները և մշակում է դրանք:

Օտ.տ.IV.24. Աշակերտը կարող է ռազմավարություններ կիրառել՝ քերականական երևույթները հասկանալու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դիտարկելով կոնկրետ օրինակներ՝ հայտնաբերում է լեզվական մեխանիզմները:
- Կիրառում է հայտնաբերված մեխանիզմները:
- Համեմատում է օտար և մայրենի լեզուների քերականական երևույթները:
- Կիրառում է սխեմաներ, աղյուսակներ, դասակարգումներ, կառուցվածքային մոդելներ:

Օտ.տ.IV.25. Աշակերտը կարող է համագործակցել համադասարանցիների, ուսուցչի և խմբի անդամների հետ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Սպասում է, մինչև ուրիշները պատասխանեն:
- Բանավեճի ժամանակ լսում է տարբեր կարծիքները:
- Հասակակցին օգնում է այն հարցերում, որոնցից ինքն ավելի ուժեղ է:
- Ջուլգի հետ լուծում է տրված խնդիրը:
- Ջուլգի հետ ներգրավված է ինտերակցիայի մեջ:
- Քաղաքավարի կերպով նշում է ուրիշի կողմից թույլ տրված սխալները:
- Խմբակիցների հետ խորհրդակցում է գործառույթները, աշխատանքը բաշխելու վերաբերյալ:
- Կարող է համաձայնության գալ խմբակիցների հետ:
- Հայտնում է սեփական կարծիքները, լսում է ուրիշի կարծիքները:
- Սեփական լուրման է ներդնում տրված խնդիրը լուծելու գործում:

Գլուխ XXVI

**Բազային և միջնակարգ աստիճանի առարկայական իրազեկությունները
I մակարդակ (բ.1)
Օտար լեզու**

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների.

Լսել	Կարդալ	Գրել
<p>Օտ.բ.1.1. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ միջազգային բառերը, պարզ դարձվածքները, արտահայտությունները:</p> <p>Օտ.բ.1.2. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ պարզ հրահանգներն ու վարժության ցուցումները:</p>	<p>Օտ.բ.1.5. Աշակերտը կարող է կարդալ այբուբենը:</p> <p>Օտ.բ.1.6. Աշակերտը տիրապետում է բարձրաձայն կարդալու տարրական կարողությանը:</p>	<p>Օտ.բ.1.15. Աշակերտը կարող է տառեր, բառեր, նախադասություններ գրել:</p> <p>Օտ.բ.1.16. Աշակերտը կարող է լրացնել դասացուցակը, շարաթվա</p>

<p>Օտ.բ.Ի.3. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ ծանոթ թեմայի հիման վրա կազմած փոքրածավալ տեքստը <i>(երկխոսություն/մենախոսություն):</i></p> <p>Օտ.բ.Ի.4. Աշակերտը կարող է, տեքստի ընկալումը դյուրացնելու համար, դիմել տարբեր ռազմավարությունների:</p>	<p>Օտ.բ.Ի.7. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ հանրային արձանագրությունները <i>(օր., զգուշացնող արձանագրություն, կանգառի/փողոցի/խանութի/ հանրային շինության անվանումը և այլն):</i></p> <p>Օտ.բ.Ի.8. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ վարժության պայմանը:</p> <p>Օտ.բ.Ի.9. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ պաշտոնական/վարչական բնույթի փաստաթղթերը, հարցաթերթերը <i>(օր., շաբաթվա աշխատակարգ, դասացուցակ, այցեքարտ, ինքնության վկայական, տոմս և այլն):</i></p> <p>Օտ.բ.Ի.10. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ կենցաղային բնույթի տեղեկատվական տեքստը:</p> <p>ա. Կատալոգ: բ. Երթուղային պլան: գ. Ճաշացուցակ: դ. Խոհարարական բաղադրատոմս:</p> <p>Օտ.բ.Ի.11. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ պարզ նամակագրությունը՝ բազմաբնույթ բացիկներ <i>(շնորհավորանք, հրավիրատոմս, հրավիրման շնորհակալական և այլն),</i> պարզ հաղորդագրություններ:</p> <p>Օտ.բ.Ի.12. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ փոքրածավալ պատմողական տեքստը:</p>	<p>աշխատակարգը/ օրակարգը, հարցաթերթը:</p> <p>Օտ.բ.Ի.17. Աշակերտը կարող է, ըստ նմուշի, բացիկ կազմել:</p> <p>Օտ.բ.Ի.18. Աշակերտը կարող է կենցաղային բնույթի տեղեկատվական տեքստեր <i>(կատալոգ, ճաշացուցակ, խոհարարական բաղադրատոմս)</i> կազմել, ըստ նմուշի:</p> <p>Օտ.բ.Ի.19. Աշակերտը կարող է փոքրածավալ նկարագրական տեքստ կազմել, ըստ նմուշի:</p> <p>Օտ.բ.Ի.20. Աշակերտը կարող է պահպանել գրավոր տեքստի կառուցվածքը: Տիրապետում է տարրական լեզվական կարողություններին ու հմտություններին և կարող է գործածել դրանք:</p> <p>Օտ.բ.Ի.21. Աշակերտը կարող է գործածել գրելու ռազմավարությունները՝ գրավորը կատարելագործելու նպատակով:</p>
---	--	---

	<p>Օտ.բ. I.13. Աշակերտը կարող է հայտնաբերել տեքստի կազմության բնութագրիչները և սովորած լեզվական ձևերը:</p> <p>Օտ.բ. I.14. Աշակերտը կարող է, բովանդակության ընկալումը դյուրացնելու համար, դիմել տարբեր ռազմավարությունների:</p>	
--	--	--

Խոսել	Մշակույթների կիստություն	Օտար լեզվի գործնական կիրառություն (մեղիացիա)	Ուսանման ուսանում
<p>Օտ.բ. I.22. Աշակերտը տիրապետում է տարրական հնչույթաբանական կարողությունների ու հմտությունների:</p> <p>Օտ.բ. I.23. Աշակերտը կարող է մասնակցել պարզ ինտերակցիային:</p> <p>Օտ.բ. I.24. Աշակերտը կարող է նկարագրել միջավայրը:</p> <p>Օտ.բ. I.25. Աշակերտը տիրապետում է տարրական լեզվական կարողությունների ու հմտությունների և գործածում է դրանք:</p> <p>Օտ.բ. I.26. Աշակերտը կարող է ռազմավարություններ</p>	<p>Օտ.բ. I.27. Աշակերտը կարող է ձանաչել մշակութային բնագավառի տեղեկատվությունը:</p> <p>Օտ.բ. I.28. Աշակերտը հետաքրքրություն և հանդուրժողական վերաբերմունք է ցուցաբերում մշակույթների յուրահատկությունների նկատմամբ:</p>	<p>Օտ.բ. I.29. Աշակերտը կարող է տարբեր տեսակի նախագծեր իրականացնել օտար լեզվով (օր., կազմել <i>խոհարարական բաղադրատոմսերի ժողովածու, դպրոցի աշակերտների նկարների/ ձեռագործերի կատալոգ՝ օտարալեզու աշակերտների ուշադրությունը գրավելու նպատակով կայքէջում տեղադրելու համար և այլն):</i></p>	<p>Օտ.բ. I.30. Աշակերտը կարող է ուսուցչի օգնությամբ սահմանել առաջադրանքի պահանջները:</p> <p>Օտ.բ. I.31. Աշակերտը տիրապետում է հաջող ուսումնառությունն ապահովելու ռազմավարական կարողություններին:</p> <p>Օտ.բ. I.32. Աշակերտը կարող է ռեսուրսներ գործածել՝ ուսումնական գործունեությանը նպաստելու նպատակով:</p> <p>Օտ.բ. I.33. Աշակերտը կարող է տարբեր եղանակներ գործածել՝ բառապաշարն ամրապնդելու և հարստացնելու համար:</p>

<p>գործածել՝ խոսելու կարողությունը կատարելագործելու նպատակով:</p>			<p>Օտ.բ.Ի.34. Աշակերտը կարող է դիմել ռազմավարությունների՝ քերականությունը հեշտ յուրացնելու համար:</p> <p>Օտ.բ.Ի.35. Աշակերտը կարող է, արդյունքները կատարելագործելու նպատակով, համագործակցել համադասարանցիների, ուսուցչի և գույզի հետ:</p>
---	--	--	---

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ու դրանց ստուգիչները.

Ուղղություն. լսել

(Լսելու կարողությունը զարգացնելու համար, գործածվում են դիդակտիկացված ձայնագրություններ, որտեղ տեքստը հասակ է ու դանդաղ:)

Օտ.բ.Ի.1. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ միջազգային բառերը, պարզ դարձվածքները, արտահայտությունները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Բառերի հոսքի մեջ տարբերում է առանձին բառերը/դարձվածքները:
- Հասկանում է դարձվածքների/արտահայտությունների նշանակությունը:

Օտ.բ.Ի.2. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ պարզ հրահանգներն ու վարժության ցուցումները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Պատշաճորեն է արձագանքում ուսուցչի հրահանգներին:
- Վարժություններ է կատարում:

Օտ.բ.Ի.3 Աշակերտը կարող է լսել ու հասկանալ ծանոթ թեմայի հիման վրա կազմած փոքրածավալ տեքստը (երկխոսություն/մենախոսություն):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ճանաչում է թեման *(գործող անձանց/գրուցակիցներին, երևույթները և այլն):*
- Տեքստից ժողովում է փաստական տեղեկատվությունը *(ով, որտեղ, երբ, որքան, որը, ինչպիսի և այլն):*
- Հասկանում է հնչերանգով արտահայտված հույզերը *(երջանկություն, զարմանք, զայրույթ և այլն):*

- Երկխոսության մեջ տարբերում է խոսքի մտերմական ու բարեկիրթ ձևը:

Լսելու ռազմավարությունները

Օտ.բ.1.4. Աշակերտը կարող է, տեքստի ընկալումը դյուրացնելու համար, դիմել տարբեր ռազմավարությունների:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Պատկերագրողումների, վերնագրի հիման վրա, կարծիք է հայտնում տեքստի բովանդակության մասին:
- Կենդանի խոսքը/ձայնագրությունները հասկանալու համար՝ օգտագործում է ոչ բառային տարրեր (*ձայնային տեմբր, հնչերանգ, դիմախաղ, ձեռածություն, տարբեր տեսակի աղմուկ, տրամաբանական շեշտեր*):
- Ծանոթ տարրերի (*համատեքստ, հնչերանգ, պատկերագրողում և այլն*) հիման վրա, ինքնուրույն հասկանում է անծանոթ բառերի, արտահայտությունների, նախադասությունների նշանակությունը:
- Մայրենի լեզվով նկարագրում է, թե ինչ եղանակով կարողացավ լուծել այս կամ այն ընթերցանական խնդիրը: Իր կիրառած եղանակը համեմատում է ուրիշների ընտրած եղանակի հետ և եզրակացություն անում այն մասին, թե որ մոտեցումն էր առավել հարմարեցված/արդյունավետ, և ինչու:
- Չհասկանալու դեպքում, խնդրում է մեկնաբանել, դանդաղ ու հստակ արտահայտել, կրկնել:

Ուղղություն. կարդալ

(Կարդալու կարողությունը զարգացնելու համար, գործածվում են դիդակտիկացված տեքստեր:)

Օտ.բ.1.5. Աշակերտը կարող է կարդալ այբուբենը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ճանաչում է բոլոր մեծատառ ու փոքրատառ տպագիր/ձեռագիր տառերը, ճիշտ է արտաբերում դրանք:

Օտ.բ.1.6. Աշակերտը տիրապետում է բարձրաձայն կարդալու տարրական կարողությանը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հնչեցնում է տառերը, տառակապակցությունները, վանկերը:
- Հնչյունները կապում է համապատասխան տառերի, տառակապակցությունների, վանկերի հետ:
- Բարձրաձայն ու հստակ կերպով կարդում է սովորած բառերը, արտահայտությունները, նախադասությունները, տեքստերը:

Օտ.բ.1.7. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ հանրային արձանագրությունները (*օր., զգուշացնող արձանագրություն, կանգառի/փողոցի/խանութի/հանրային շինության անվանումը և այլն*):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է մատնանշված տեղեկատվությունը:

Օտ.բ.Ի.8. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ վարժության պայմանը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում և կատարում է ցուցումները:

Օտ.բ.Ի.9. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ պաշտոնական/վարչական բնույթի փաստաթղթերը, հարցաթերթերը (օր., շաբաթվա աշխատակարգ, դասացուցակ, այցեքարտ, ինքնության վկայական, տոմս և այլն):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է տվյալները:
- Հասկանում է կոնկրետ տեղեկատվությունը:

Օտ.բ.Ի.10. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ կենցաղային բնույթի տեղեկատվական տեքստը:

ա. Կատարող:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ճանաչում է իրի, առարկայի հատկանիշները (*կշիռը, չափը, գույնը, նյութը*):
- Ճանաչում է գինը:

բ. Երթուղային պլան:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է պայմանական նշանները:
- Հասկանում է մակագրությունները:

գ. Ճաշացուցակ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ճանաչում է խորագրերը (*օր., տաք/սառը կերակուրները, անուշեղենը, ըմպելիքները և այլն*):
- Ճանաչում է կերակուրները/ըմպելիքները:
- Ճանաչում է դրանց բաղադրիչներն ու գինը:

դ. Խոհարարական բաղադրատոմս:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ճանաչում է առանձին բաղադրիչները:
- Ճանաչում է բաղադրիչների մատնանշված քանակը:
- Հասկանում է առանձին գործողությունները (*օր., կլպել, խառնել, լցնել և այլն*):

Օտ.բ.Ի.11. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ պարզ նամակագրությունը՝ բազմաբնույթ բացիկներ (*շնորհավորանք, հրավիրատոմս, հրավիրման շնորհակալական և այլն*), պարզ հաղորդագրություններ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հայտնաբերում է հեղինակի/ հասցեատիրոջ ինքնությունը:
- Ճանաչում է ուղարկման ամսաթիվն ու հեղինակի/ հասցեատիրոջ հասցեն:
- Հասկանում է նամակագրության նպատակը (*օր., շնորհավորանք Սուրբ Ծննդյան, ծննդյան օրվա առիթով, ողջույն, հրավեր և այլն*):
- Հասկանում է փաստացի տեղեկատվությունը (*երբ, որտեղ, ով, ինչու և այլն*):

Օտ.բ.Ի.12. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ փոքրածավալ պատմողական տեքստը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ճանաչում է գործող անձանց:
- Ճանաչում է գործող անձանց հատկությունները:
- Հասկանում է գործողությունները, երևույթները:
- Հասկանում է գործողությունների ժամանակն ու տեղը:

Օտ.բ. Ի.13. Աշակերտը կարող է հայտնաբերել տեքստի կազմության բնութագրիչները և սովորած լեզվական ձևերը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տարբերում է բազմապիսի տեքստերի կազմության յուրահատկությունը (*օր., կատալոգի և ճաշացանկի*):
- Հասկանում է տեքստի կառուցվածքային կազմակերպման յուրահատկությունները (*օր., վերնագիր/ենթավերնագիր, խորագրեր ունի՞, թե՞ ոչ, մատնանշված են հեղինակը կամ հասցեատերը, տեքստը սյունակների՞ ց է կազմված, թե՞ պարբերություններից և այլն*):
- Հասկանում է հաղորդակցական իրավիճակին համապատասխանող արտահայտությունները, կլիշեները, լեզվական կառույցները (*օր., դիմելու/հրաժեշտ տալու ձևակերպումը նամակագրության մեջ*):
- Ճանաչում է ներկա/անցյալ ժամանակն արտահայտող բայաձևերը, մակբայները:
- Տարբերում է պատմողական և հրամայական եղանակն արտահայտող բայաձևերը:
- Ճանաչում է տեղադրություն և ժամանակ արտահայտող պարզ լեզվական միջոցները (*մակբայ, բառակապակցություն, նախդիր*):
- Հասկանում է պարզ նախադասությունների անդամների միջև եղած շարահյուսական հարաբերակցությունները (*օր., գոյական և ածական անունների թվերի համաձայնությունը*):

Կարդալու ռազմավարությունները

Օտ.բ.Ի.14. Աշակերտը կարող է բովանդակության ընկալումը դյուրացնելու համար, դիմել տարբեր ռազմավարությունների:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կոնկրետ տեղեկատվություն գտնելու նպատակով՝ ամբողջությամբ դիտարկում է տեքստը, դրա բառային և ոչ բառային կազմակերպիչ տարրերը (*օր., վերնագիրը, խորագիրը, պատկերագրությունը, մակագրությունը, պարբերությունը, սյունակը, պատկերանիշը, տպագրական բնութագրիչները՝ խոշոր տառատեսակ, և այլն*):
- Ծանոթ տարրերի միջոցով (*ինչպիսիք են. պատկերագրումները, ծանոթ արմատը, համատեքստը, մայրենի լեզվում հաստատված օտար բառերը/օր. տաքսի/ և այլն*), ինքնուրույն հասկանում է անծանոթ բառերի, նախադասությունների նշանակությունը:
- Մայրենի լեզվով նկարագրում է, թե ինչ եղանակով կարողացավ լուծել այս կամ այն ընթերցանական խնդիրը: Իր կիրառած եղանակը համեմատում է ուրիշների ընտրած եղանակի հետ և եզրակացություն անում այն մասին, թե որ մոտեցումն էր առավել հարմարեցված/արդյունավետ, և ինչու:
- Մտաբերում է, ուրիշ լեզուներ կամ առարկաներ սովորելիս, ուսումնասիրել է արդյոք այսպիսի տեքստեր և գործածել է արդյոք այսպիսի ռազմավարություններ:
- Սահմանում է, թե ինչ տեսակի տեքստեր յուրացնելիս կարելի է գործածել նման ռազմավարություններ:

Ուղղություն. գրել

Օտ.բ.1.15. Աշակերտը կարող է գրել տառեր, բառեր, նախադասություններ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ձեռագիր կամ տպագիր աղբյուրից արտագրում է բառերը և նախադասությունները:
- Պահպանում է տառերի միացման օրենքները:
- Թելադրելով գրում է սովորած բառերը, նախադասությունները:

Օտ.բ.1.16. Աշակերտը կարող է լրացնել դասացուցակը, շաբաթվա աշխատակարգը/օրակարգը, հարցաթերթը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տվյալները/գործունեությունները գրում է համապատասխան տեղում:

Օտ.բ.1.17. Աշակերտը կարող է ըստ նմուշի, բացիկ կազմել:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Պահպանում է նամակագրության պաշտոնական կոդը (*դիմում, ստորագրություն, հասցե, ամսաթիվ*):
- Ձևակերպում է նամակագրության նպատակը (*շնորհավորել ծննդյան օրվա, Մուրթ Ծննդյան/Նոր տարվա առթիվ և այլն*):

Օտ.բ.1.18. Աշակերտը կարող է կենցաղային բնույթի տեղեկատվական տեքստեր (*կատալոգ, ճաշացուցակ, խոհարարական բաղադրատոմս*) կազմել, ըստ նմուշի:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տրված կադապարը լրացնում է այլ բովանդակությամբ (օր., ըստ չափահասների համար հատկացված գրացուցակի, կազմում է մանկական գրքերի գրացուցակ, ըստ ձմեռային հագուստների կատալոգի՝ ամառային հագուստներինը):

Օտ.բ.1.19. Աշակերտը կարող է փոքրածավալ նկարագրական տեքստ կազմել, ըստ նմուշի:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Բնութագրում է մարդուն (աչքի գույնը, մազերի գույնը, հասակը, կշիռը):
- Առարկան, իրը նկարագրում է ըստ տարբեր պարամետրերի (գույնը, չափը, պարունակությունը, ձևը, դիրքը և այլն):
- Նկարագրում է բնակավայրը (դիրքը, սենյակների, իրերի տեղաբաշխումը և այլն):
- Նկարագրում է ամենօրյա գործունեությունները:
- Նկարագրում է արվեստի նմուշը (անվանումը, տեղադրությունը, տարբեր բնութագրիչները):
- Պարզ դրական կամ բացասական գնահատական է տալիս:

Օտ.բ.1.20. Աշակերտը կարող է պահպանել գրավոր տեքստի կառուցվածքը: Տիրապետում է տարրական լեզվական կարողություններին ու հմտություններին և կարող է գործածել դրանք:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կիրառում է տեղադրություն արտահայտող պարզ լեզվական միջոցները (օր., նախդիր, մակբայ և այլն):
- Նախադասության անդամների միջև պահպանում է տարրական շարահյուսական հարաբերակցությունները (օր., համաձայնեցնում է գոյական ու ածական անունների թիվը/սեռը, համաձայնեցնում է բայի ու գոյականի դեմքը և թիվը):
- Ցուցումներ տալու ժամանակ ընտրում է պատշաճ բայաձևեր:
- Հաստատական, ժխտական և հարցական բովանդակությամբ պարզ համատոտ և պարզ ընդարձակ նախադասությունների մեջ պահպանում է շարահյուսությունը:
- Պահպանում է ուղղագրական օրենքները: Ճիշտ է կիրառում կետադրական նշանները:

Գրելու ռազմավարությունները

Օտ.բ.1.21. Աշակերտը կարող է գործածել գրելու ռազմավարությունները՝ գրավորը կատարելագործելու նպատակով:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Գտնում և պատրաստում է անհրաժեշտ ուսումնական ռեսուրսները (օր., բառարան, նմուշ, անհրաժեշտ լեզվական նյութ, քերականական տեղեկատու և այլն):
- Գրում է սևագիր տարբերակը:
- Վերլնթեքցում է սևագիր տարբերակը, ուսումնական ռեսուրսի հիման վրա ստուգում է գրավորը և ուղղում սխալները:

- Սրբագրում է գրավորը:

Ուղղություն. խոսել

Օտ.բ.Ի.22. Աշակերտը տիրապետում է տարրական հնչույթաբանական կարողությունների ու հմտությունների:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հստակ կերպով կրկնում է հնչյունները, բառերը, արտահայտությունները:
- Երկխոսությունները, ճեպանկարները ներկայացնելիս կամ փոքրածավալ տեքստերն անգիր արտասանելիս՝ փորձում է պահպանել օտար լեզվին բնորոշ հնչերանգը, առոգանությունը:

Երկխոսություն

Օտ.բ.Ի.23. Աշակերտը կարող է մասնակցել պարզ ինտերակցիային:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ծանոթ թեմատիկայի շուրջ հարցեր է տալիս և պատասխանում է հարցերին (*օր., ընտանիք, բնակավայր, արձակուրդներ, ակտիվություններ, եղանակ, սիրելի իր, կենդանի և այլն*):
- Մասնակցում է կեղծակերպած իրավիճակներին (*հանդիպել, ծանոթանալ, սրճարանում պատվեր տալ և այլն*):
- Հեռախոսով զրուցում է ամենօրյա իրավիճակների հետ կապված հարցերի շուրջ (*օր., դասացուցակ, հանդիպումների նշանակում և այլն*):
- Պատշաճ կերպով է արձագանքում զրուցակցի ռեպլիկաներին:
- Փորձում է ուսումնական գործընթացում ծառայած խնդիրների վերաբերյալ ասելիքը օտար լեզվով հաղորդել (*օր., «չհասկացա», «ի՞նչ է նշանակում սա», «տետրս տանն եմ թողել», «ժամանակավորապես տուր մատիտդ» և այլն*):

Մենախոսություն

Օտ.բ.Ի.24. Աշակերտը կարող է նկարագրել միջավայրը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Պարզ արտահայտություններով նկարագրում է սեփական բնակարանը/սենյակը:
- Խոսում է իր մասին, մերձավորների մասին (*օր., անձնական տվյալների, ամենօրյա գործունեությունների, հետաքրքրությունների մասին և այլն*):
- Նկարագրում է լուսանկարը:

Օտ.բ.Ի.25. Աշակերտը տիրապետում է տարրական լեզվական կարողություններին ու հմտություններին և գործածում է դրանք:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ինտերակցիայի ժամանակ ընտրում է հաղորդակցական իրավիճակին համապատասխան դիմելաձևեր, արտահայտություններ, կլիշեներ, լեզվական կառույցներ:
- Ճշգրիտ կերպով է գործածում խոսքի բարեկիրթ և մտերմական ձևակերպումները:
- Պատշաճ կերպով է գործածում տարբեր բովանդակություն ունեցող (*պատմողական, հարցական, բացականչական*) նախադասությունները:
- Տարբեր երանգի նախադասություններն արտասանելիս՝ պահպանում է համապատասխան հնչերանգը:
- Կիրառում է տեղադրություն արտահայտող պարզ լեզվական միջոցները:
- Նախադասության անդամների միջև պահպանում է տարրական շարահյուսական հարաբերակցությունները (*բայի համապատասխան դեմքն ու թիվը*):
- Պատշաճ կերպով է կիրառում սովորած բառապաշարային միավորները:

Բանավոր խոսքի ռազմավարությունները

Օտ.բ.Ի.26. Աշակերտը կարող է ռազմավարություններ գործածել՝ խոսելու կարողությունը կատարելագործելու նպատակով:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հաղորդակցվելու համար գործածում է անհրաժեշտ ռեսուրսները (*օր., մոդելներ, նախադասություններ, արտահայտություններ, կլիշեներ*):
- Բառը մոռանալու/չիմանալու դեպքում, գործածում է փոխհատուցման միջոցները (*օր., դիմախաղ, ձեռածություն, ձևակերպում/նկարագրում է ենթադրված առարկան կամ մատնանշում է, թե ինչի համար է կիրառվում այն/ և այլն*):
- Հայտնաբերում և ուղղում է իր/ուրիշի սխալները:

Ուղղություն. Մշակույթների երկխոսություն

Օտ.բ.Ի.27. Աշակերտը կարող է ճանաչել մշակութային բնագավառի տեղեկատվությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դիտարկում և ճանաչում է պատկերագրողումներում/տեքստերում արտացոլված պետական խորհրդանիշները, մշակութային իրողությունները (*օր., դրոշ, հուշարձան և այլն*):

Օտ.բ.Ի.28. Աշակերտը հետաքրքրություն և հանդուրժողական վերաբերմունք է ցուցաբերում մշակույթների յուրահատկությունների նկատմամբ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հայտնաբերում է օտար մշակույթին բնորոշ վարքաձևեր և, ձևական իրավիճակներ ներկայացնելիս, պահպանում է օտար սոցիալ-մշակութային միջավայրին բնորոշ նորմերը:
- Մայրենի լեզվով հարցեր է տալիս/բացատրություն է խնդրում կոնկրետ սոցիալ-մշակութային հարցերի վերաբերյալ:
- Մշակույթների յուրահասկությունները քննարկելիս՝ ճշգրիտ կերպով է արտահայտում սեփական միտքը, հայեցակետը, վերաբերմունքը:

Ուղղություն. Օտար լեզվի գործնական կիրառություն (մեղհացիա)

Օտ.բ.Ի.29. Աշակերտը կարող է տարբեր տեսակի նախագծեր իրականացնել օտար լեզվով (օր., կազմել խոհարարական բաղադրատոմսերի ժողովածու, դպրոցի աշակերտների նկարների/ձեռագործերի կատալոգ՝ օտարալեզու աշակերտների ուշադրությունը գրավելու նպատակով կայք-էջում տեղադրելու համար և այլն):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ուսուցչի և խմբի անդամների հետ ձևակերպում է նախագիծը հաջողությամբ իրականացնելու չափանիշները:
- Խմբի անդամների հետ սահմանում և պլանավորում է իրականացվելիք փուլերը:
- Ուսուցչի և խմբի անդամների հետ սահմանում է կատարման ժամկետները:
- Ուսուցչի օգնությամբ համախմբում է գիտելիքներն ու կարողությունները: Սահմանում է, թե ինչ գիտելիքներ ու կարողություններ պետք է ձեռք բերի՝ տրված խնդիրները լուծելու համար:
- Խմբի անդամների հետ, ուսուցչի օգնությամբ սահմանում է սեփական գործառնությունները:
- Խմբի անդամների հետ փնտրում է, ընտրում և մշակում է տեղեկատվությունը: Նախագիծ է իրականացնում:
- Նախագծի պլանի սևագիր տարբերակը խմբի անդամների հետ ներկայացնում է ուրիշ խմբի:
- Նկատի առնելով դիտողություններն ու մեկնաբանությունները՝ խմբի անդամների հետ կատարելագործում և իրականացնում է նախագիծը:

Ուղղություն. Ուսանման ուսանում

Օտ.բ.Ի.30. Աշակերտը կարող է, ուսուցչի օգնությամբ, սահմանել առաջադրանքի պահանջները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Մասնակցում է առաջադրանքի հաջող կատարման չափանիշները ձևակերպելուն:
- Ընդգծում է առաջադրանքի կատարման փուլերը:
- Սահմանում է այն գիտելիքներն ու կարողությունները, որոնց տիրապետում է, և գործածում է դրանք առաջադրանքը կատարելու համար:
- Սահմանում է, թե ինչ գիտելիքներ ու կարողություններ պետք է ձեռք բերի նոր առաջադրանքը կատարելու համար:

- Սահմանում է, թե ինչը հեշտ կլինի իր համար, ինչը՝ դժվար, երբ հարկավոր կլինի օգնություն, խորհրդակցություն:

Օտ.բ.Ի.31. Աշակերտը տիրապետում է հաջող ուսումնառությունն ապահովելու ռազմավարական կարողություններին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Անհրաժեշտության դեպքում, օգնություն է խնդրում:
- Աշխատանքն ավարտելուց հետո, ներկայացնում է կիրառած ռազմավարությունները, համեմատում է ուրիշների կիրառած ռազմավարությունների հետ:
- Մասնակցում է կիրառված ռազմավարությունների արդյունավետության գնահատմանը:
- Համաձայնվում է փորձել ու կիրառել տարբեր ռազմավարություններ:
- Համեմատում է տարբեր լեզուների, այդ թվում նաև մայրենի լեզվի ուսումնասիրման ժամանակ ստացած փորձառությունը: Սահմանում է, թե որքանով օգտակար կլինի այս կամ այն ռազմավարությունն այլ լեզու կամ այլ առարկա սովորելու գործընթացում:
- Վերլուծում է սխալների, թերությունների պատճառները:
- Մասնակցում է ինքնագնահատմանն ու համագնահատմանը *(աշակերտը և ուսուցիչը կամ աշակերտն ու աշակերտը միևնույն աշխատանքն ուղղում են միմյանցից անկախ):*
- Դիտարկելով արդյունքները, նշում է, թե որտեղ է առաջադիմել:
- Վերլուծում է թե՛ հաջողության, թե՛ անհաջողության պատճառները՝ հետազայում դրանք նկատի առնելու նպատակով:
- Անվանում է այն գործոններն ու պատճառները, որոնք խափանում են առաջընթացը *(օր., անուշադիր է, չի կրկնում նյութը, չի համարձակվում հարց տալ, վախենում է սխալ թույլ տալուց և այլն):*
- Անվանում է, թե կյանքի որ իրավիճակներում կարող է գործածել օտար լեզվից ստացած գիտելիքն ու փորձառությունը:

Օտ.բ.Ի.32. Աշակերտը կարող է ռեսուրսներ գործածել՝ ուսումնական գործունեությանը նպաստելու նպատակով:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Արդյունավետ է օգտագործում դասագրքի ռեսուրսները *(օր., բառարանը, կառուցվածքային նմուշները, քերականական տեղեկատուն, պատկերազարդումները և այլն):*
- Տեղեկատվություն է գտնում ինչպես դպրոցում, այնպես էլ դպրոցից դուրս մատչելի ռեսուրսների մեջ *(օր., դասագրքի ակներևությունները, բառարան, դպրոցի/գյուղի/քաղաքի գրադարան, ուսուցիչ, իրազեկ անձ, համացանց և այլն):*
- Տեղեկատվություն/ուսումնական նյութ է գտնում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների (S2S) միջոցով:
- Այս կամ այն նյութը/տեքստը կազմելու/մշակելու համար կիրառում է S2S-ը:

Օտ.բ.Ի.33. Աշակերտը կարող է տարբեր եղանակներ գործածել՝ բառապաշարն ամրապնդելու և հարստացնելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հետևողականորեն կրկնում է անցած բառապաշարային նյութը:

- Ժողովում է վատ յուրացրած բառապաշարային միավորները:
- Կիրառում է մտապահելու տարբեր եղանակներ (*օր., մի քանի անգամ արտագրել, բարձրաձայն կրկնել, խմբավորել, զուգորդել նույն հիմքն ունեցող բառերը, հականիշների/հոմանիշների զույգերը, գործածել համատեքստում, խմբավորել ըստ թեմատիկայի և այլն*):

Օտ.բ.1.34. Աշակերտը կարող է դիմել ռազմավարությունների, քերականությունը դյուրին յուրացնելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դիտարկելով կոնկրետ օրինակներ՝ հայտնաբերում է քերականական կառույցները/օրենքները:
- Հայտնաբերած կառույցները/օրենքները գործածում է տարբեր համատեքստերում:
- Օտար և մայրենի լեզուների քերականական կառույցները/օրինաչափությունները համեմատում է իրար:
- Գործածում է և ինքն էլ է կազմում սխեմաներ, աղյուսակներ, կառուցվածքային մոդելներ:

Օտ.բ.1.35. Աշակերտը կարող է, արդյունքները կատարելագործելու նպատակով, համագործակցել համադասարանցիների, ուսուցչի և զույգի հետ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Խրախուսում է զույգին, խմբակիցներին:
- Օգնություն է խնդրում /առաջարկում:
- Կոնկրետ մատնանշում է ուրիշների կողմից թույլ տրված սխալները:
- Արդյունքների փոխադարձ կատարելագործմանը նպաստելու համար՝ մասնակցում է համազանհատմանը:

Բազային և միջնակարգ աստիճան՝ II մակարդակ (բ.II)

Օտար լեզու

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների.

Լսել	Կարդալ	Գրել
Օտ.բ.II.1. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ ուսուցչի հրահանգներն ու վարժության ցուցումները:	Օտ.բ.II.7. Աշակերտը տիրապետում է բարձրաձայն կարդալու կարողությանը:	Օտ.բ.II.16. Աշակերտը կարող է տարբեր բովանդակության բացիկներ կազմել, ըստ նմուշի:
Օտ.բ.II.2. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ ծանոթ թեմայի հիման վրա կազմված տեքստը	Օտ.բ.II.8. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ հանրային	Օտ.բ.II.17. Աշակերտը կարող է նամակ գրել հասակակցին, մերձավորին

<p><i>(երկխոսություն/մենախոսություն):</i></p> <p>Օտ.բ.Ու.3. Աշակերտը կարող է տեղեկատվական ձայնագրություններ լսել ու հասկանալ: ա) Եղանակի տեսություն: բ) Սպորտի նորություններ:</p> <p>Օտ.բ.Ու.4. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ հասարակական հավաքատեղերում արած հայտարարությունները:</p> <p>Օտ.բ.Ու.5. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ երթուղին:</p> <p>Օտ.բ. Ու.6. Աշակերտը կարող է պատշաճ ռազմավարություններ գործածել՝ տեքստի ընկալումը դյուրացնելու նպատակով:</p>	<p>արձանագրությունները <i>(օր., զգուշացնող արձանագրություն, զնելու և վարձակալելու մասին տեղեկություն, հուշատախտակ, տարբեր տեսակի ցուցանակներ և այլն):</i></p> <p>Օտ.բ.Ու.9. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ պարզ նամակագրությունը <i>(տարբեր բնույթի բացիկներ, անձնական նամակներ):</i></p> <p>Օտ.բ.Ու.10. Աշակերտը կարող է մամուլում ծանոթանալ կենցաղային բնույթի տեղեկատվական տեքստերի <i>(օր., գործնական հայտարարություն, հարցազրույց, հեռուստահաղորդում)</i> և հասկանալ ճշգրտորեն տրված տեղեկատվությունը: ա) Կարդում և հասկանում է գործնական հայտարարությունները: բ) Կարդում և հասկանում է հարցազրույցը, ռեպորտաժը: գ) Կարդում և հասկանում է հեռուստահաղորդումը: դ) Կարդում և հասկանում է տեղեկագիրքը:</p> <p>Օտ.բ.Ու.11. Աշակերտը կարող է կարդալ և հասկանալ գովազդային բնույթի տեքստը <i>(զբոսաշրջական բրոշյուր, միջոցառումների օրացույց, անոնս):</i></p> <p>Օտ.բ.Ու.12. Աշակերտը կարող է կարդալ և հասկանալ տարբեր</p>	<p><i>(ձեռագիր կամ էլեկտրոնային տարբերակ):</i></p> <p>Օտ.բ.Ու.18. Աշակերտը կարող է գովազդային բնույթի տեղեկատվական տեքստ կազմել <i>(բրոշյուր, միջոցառումների օրացույց):</i></p> <p>Օտ.բ.Ու.19. Աշակերտը կարողանում է առօրյա կյանքի հետ կապված տեղեկատվական բնույթի տեքստեր կազմել, ըստ նմուշի <i>(օր., գործնական հայտարարություն, հարցազրույց, հեռուստահաղորդում):</i></p> <p>Օտ.բ.Ու.20. Աշակերտը պահպանում է գրավոր տեքստի կառուցվածքը, տիրապետում է տարրական լեզվական ձևերին և գործածում է դրանք:</p> <p>Օտ.բ.Ու.21. Աշակերտը կարող է դիմել գրելու պատշաճ ռազմավարություններին:</p>
--	--	--

	<p>թեմաներին վերաբերող ճանաչողական տեքստերը <i>(մշակութային և բնագիտական ոլորտներից):</i></p> <p>Օտ.բ.Մ.13. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ պատմողական տեքստը <i>(կյանքի պատմություն, հուշագրություն, օրագիր):</i></p> <p>Օտ.բ.Մ.14. Աշակերտը կարող է հայտնաբերել տեքստի կառուցվածքային բնութագրիչներն ու սովորած լեզվական ձևերը:</p> <p>Օտ.բ.Մ.15. Աշակերտը կարող է սահմանել կարդալու նպատակը և համապատասխանաբար գործածել ընթերցանության տարբեր տեխնիկաները <i>(ճանաչողական, ուսումնական, որոնողական):</i></p> <p>ա) Ընդհանուր բովանդակությունը հասկանալու համար՝ դիմում է ճանաչողական ընթերցանության տեխնիկային:</p> <p>բ) Տեքստը մշակելու նպատակով՝ դիմում է ուսումնական ընթերցանության տեխնիկային:</p> <p>գ) Տեքստում կոնկրետ տեղեկատվություն գտնելու համար՝ դիմում է որոնողական ընթերցանության տեխնիկային:</p>	
--	--	--

Խոսել	Մշակույթների կախություն	Օտար լեզվի գործնական կիրառություն (մեդիացիա)	Ուսանման ուսանում
<p>Օտ.բ.Մ.22. Աշակերտը տիրապետում է հնչույթաբանական կարողությունների ու հմտությունների:</p> <p>Օտ.բ.Մ.23. Աշակերտը կարող է մասնակցել ինտերակցիային:</p> <p>Օտ.բ.Մ.24. Աշակերտը կարող է գրուցել հեռախոսով:</p> <p>Օտ.բ.Մ.25. Աշակերտը կարող է փոխկապակցված խոսել:</p> <p>Օտ.բ.Մ.26. Աշակերտը կարող է խոսելիս գործածել սովորած լեզվական ու քերականական ձևերը:</p> <p>Օտ.բ.Մ.27. Աշակերտը կարող է գործածել բանավոր խոսքի համապատասխան ռազմավարություններ:</p>	<p>Օտ.բ.Մ.28. Աշակերտը կարող է ճանաչել մշակութային բնագավառի տեղեկատվությունը:</p> <p>Օտ.բ.Մ.29. Աշակերտը հետաքրքրություն և հանդուրժողական վերաբերմունք է ցուցաբերում օտարալեզու երկրի մշակույթի և սոցիալ-մշակութային յուրահատկությունների նկատմամբ:</p>	<p>Օտ.բ.Մ.30. Աշակերտը կարող է տարբեր տեսակի նախագծեր իրականացնել օտար լեզվով (օր., <i>«Ցուցահանդես: Տոնական սեղան: Օտարերկրացիների համար զբոսաշրջական բրոշյուր կազմել և տեղադրել դպրոցի կայք-էջում: Ընկերանալ աշխարհի որևէ երկրում ապրող հասակակցի հետ, որը նույն լեզուն է սովորում» և այլն):</i></p>	<p>Օտ.բ.Մ.31. Աշակերտը կարող է, ուսուցչի օգնությամբ, սահմանել առաջադրանքի պահանջները:</p> <p>Օտ.բ.Մ.32. Աշակերտը տիրապետում է հաջող ուսումնառությունն ապահովելու ռազմավարական կարողություններին:</p> <p>Օտ.բ.Մ.33. Աշակերտը կարող է ռեսուրսներ գործածել՝ ուսումնական գործունեությանը նպաստելու նպատակով:</p> <p>Օտ.բ.Մ.34. Աշակերտը կարող է դիմել տարբեր եղանակների՝ բառապաշարն ամրապնդելու և հարստացնելու համար:</p> <p>Օտ.բ.Մ.35. Աշակերտը կարող է ռազմավարություններ գործածել՝ քերականության յուրացումը հեշտացնելու</p>

			<p>համար:</p> <p>Օտ.բ.Ու.36. Աշակերտը կարող է, արդյունքները կատարելագործելու նպատակով, համագործակցել համադասարանցիների, ուսուցչի և գույզի հետ:</p>
--	--	--	--

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ու դրանց ստուգիչները.

Ուղղություն. Լսել

(Լսելու կարողությունը զարգացնելու համար, գործածվում են դիդակտիկացված ձայնագրություններ, որտեղ տեքստը հստակ է ու դանդաղ:)

Օտ.բ.Ու.1. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ ուսուցչի հրահանգներն ու վարժության ցուցումները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Պատշաճորեն է արձագանքում ուսուցչի հրահանգներին:
- Վարժություններ է կատարում:

Օտ.բ.Ու.2. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ ծանոթ թեմայի հիման վրա կազմված տեքստը (երկխոսություն/մենախոսություն):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է հաղորդակցական իրավիճակը *(գրուցակիցներ, խոսակցության թեմա):*
- Ժողովում է փաստացի տեղեկատվությունը *(ով, որտեղ, երբ, որքան, որը, ինչպիսի և այլն):*
- Հասկանում է դրական ու բացասական գնահատականները:

Օտ.բ.Ու.3. Աշակերտը կարող է տեղեկատվական ձայնագրություններ լսել ու հասկանալ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

ա) Եղանակի տեսություն:

- Ճանաչում է աշխարհագրական վայրերը:
- Հասկանում է մթնոլորտային երևույթներն ու ջերմաստիճանը:

բ) Սպորտի նորություններ:

- Ճանաչում է մարզաձևերը:
- Ճանաչում է հաղթող ու պարտվող խմբերին/խաղացողներին:
- Հասկանում է հաշիվը:

Օտ.բ.II. 4. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ հասարակական հավաքատեղերում արած հայտարարությունները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է, թե որտեղ է արված հայտարարությունը (*օր., սուպերմարկետում, կայանում և այլն*):
- Հասկանում է հայտարարության նպատակը:
- Ժողովում է փաստացի տեղեկատվությունը (*օր., մեկնելու ժամանակը, հարթակը, գինը, բաժինը և այլն*):

Օտ.բ.II.5. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ երթուղին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ըստ համապատասխան ցուցումների, գտնում է ճանապարհը (*օր., թեքվի՛ր աջ, քայլի՛ր ուղիղ և այլն*):
- Գտնում է նշանակման վայրը:

Լսելու ռազմավարությունները

Օտ.բ.II.6. Աշակերտը կարող է պատշաճ ռազմավարություններ գործածել՝ տեքստի ընկալումը դյուրացնելու նպատակով:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Վերնագրի, պատկերագրողումների հիման վրա, կարծիք է հայտնում տեքստի բովանդակության մասին:
- Կենդանի խոսքը/ձայնագրությունները լսելիս՝ օգտագործում է ոչ բառային տարրեր (*ձայնային տեմբր, հնչերանգ, դիմախաղ, ձեռածություն, տարրեր տեսակի աղմուկ, տրամաբանական շեշտ*):
- Ծանոթ տարրերի (*համատեքստ, հնչերանգ, բառի հիմք և այլն*) հիման վրա, ինքնուրույն հասկանում է անձանոթ բառերի, արտահայտությունների, նախադասությունների նշանակությունը:
- Նպատակին համապատասխան՝ փոխում է լսելու ռազմավարությունը. ընդհանուր բովանդակությունը հասկանալու համար՝ հենվում է ծանոթ բառերի, ոչ բառային տարրերի վրա և ընկալում հաղորդակցական իրավիճակը, համատեքստը, խոսակցության թեման: Կոնկրետ տեղեկատվությունը հասկանալու համար՝ ընտրում է կոնկրետ հենարաններ, դրանց վրա ուշադրությունը կենտրոնացնելով, ժողովում է անհրաժեշտ տեղեկատվությունը:

(Կարդալու կարողությունը զարգացնելու համար՝ գործածվում են կիսավավերական կամ վավերական տեքստեր:)

Օտ.բ.II.7. Աշակերտը տիրապետում է բարձրաձայն կարդալու կարողությանը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ծանոթ տեքստը կարդում է հստակ ու ճշգրիտ կերպով:
- Համադասարանցիների հետ բարձրաձայն ու արտահայտիչ կերպով կարդում է ծանոթ երկխոսությունը/ճեպանկարը, տարբեր երանգի նախադասություններն արտահայտելիս, պահպանում է համապատասխան հնչերանգը:

Օտ.բ.II.8. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ հանրային արձանագրությունները (օր., զգուշացնող արձանագրություն, զնելու և վարձակալելու մասին տեղեկություն, հուշատախտակ, տարբեր տեսակի ցուցանակներ և այլն):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է մատնանշված տեղեկատվությունը:

Օտ.բ.II.9. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ պարզ նամակագրությունը (տարբեր բնույթի բացիկներ, անձնական նամակներ):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է հաղորդակցական իրավիճակը *(հեղինակին, հասցեատիրոջը, նամակագրության նպատակը):*
- Ճանաչում է ուղարկման ամսաթիվն ու հեղինակի/ հասցեատիրոջ հասցեն:
- Հասկանում է նամակագրության նպատակը *(օր., շնորհավորանքը, հրավերը, առաջարկը և այլն):*
- Հասկանում է փաստացի տեղեկատվությունը *(ով, որտեղ, երբ, ինչ, որքան, ինչպես, ինչու և այլն):*
- Հասկանում է հույզերը, վերաբերմունքը:

Օտ.բ.II.10. Աշակերտը կարող է մամուլում ծանոթանալ կենցաղային բնույթի տեղեկատվական տեքստերի (օր., գործնական հայտարարություն, հարցազրույց, հեռուստահաղորդում) և հասկանալ ճշգրտորեն տրված տեղեկատվությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

ա) Կարդում և հասկանում է գործնական հայտարարությունները:

- Հասկանում է հայտարարության նպատակը *(օր., ամառային առաջարկներ):*
- Ժողովում է կոնկրետ տեղեկատվությունը:

բ) Կարդում և հասկանում է հարցազրույցը, ռեպորտաժը:

- Ճանաչում է թղթակցին և հարցվողին:
- Հասկանում է թեման/հարցերը:
- Հասկանում է փաստացի տեղեկատվությունը:

- Հասկանում է հարցվողի դրական ու բացասական վերաբերմունքը:

զ) Կարդում և հասկանում է հեռուստահաղորդումը:

- Հասկանում է ծրագրի ձևաչափը *(օր., շաբաթվա աշխատակարգը, հաղորդման վերնագրումը, ալիքների լոգոները)*:
- Ճանաչում է հաղորդման տեսակը:
- Հասկանում է ծանոթագրության ընդհանուր բովանդակությունը:
- Հասկանում է կոնկրետ տեղեկատվությունը *(մասնակից, կատարող, օր, ժամանակ և այլն)*:

դ) Կարդում և հասկանում է տեղեկագիրքը:

- Հասկանում է յուրաքանչյուր դեպքի ընդհանուր բովանդակությունը:
- Վերնագիրը կապում է բովանդակության հետ:

Օտ.բ.Մ.11. Աշակերտը կարող է կարդալ և հասկանալ գովազդային բնույթի տեքստը *(զբոսաշրջական բրոշյուր, միջոցառումների օրացույց, անոնս)*:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է հաղորդակցական իրավիճակը *(հեղինակ, տեքստի նպատակը, հասցեատեղը)*:
- Ճանաչում է վերնագիրը, ենթավերնագրերը, խորագրերը, պատկերազարդումների մակագրությունները:
- Ճանաչում է փաստացի տեղեկատվությունը *(ամսաթիվը, գինը, տեղը, պայմանները, մասնակցին և այլն)*:
- Ճանաչում է գնահատականները, խորհուրդները:

Օտ.բ.Մ.12. Աշակերտը կարող է կարդալ և հասկանալ տարբեր թեմաներին վերաբերող ճանաչողական տեքստերը *(մշակութային և բնագիտական ոլորտներից)*:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է գլխավոր թեման/հարցերը:
- Հասկանում է փաստացի տեղեկատվությունը:

Օտ.բ.Մ.13. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ պատմողական տեքստը *(կյանքի պատմություն, հուշագրություն, օրագիր)*:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ճանաչում է գործող անձանց:
- Հասկանում է գործող անձանց տրամադրվածությունը, զգացմունքները, հատկությունները:
- Հասկանում է գործողությունները, դրանց հաջորդականությունը:
- Հասկանում է գործողությունների ժամանակն ու վայրը:

Օտ.բ.II.14. Աշակերտը կարող է հայտնաբերել տեքստի կառուցվածքային բնութագրիչներն ու սովորած լեզվական ձևերը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է տեքստի կառուցվածքային կազմակերպման յուրահատկությունները (*օր., վերնագիր/ենթավերնագիր, խորագրեր ունի՞, թե՞ ոչ, մատնանշվա՞ծ են հեղինակը կամ հասցեատերը, տեքստը սյունակների՞ց է կազմված, թե՞ պարբերություններից և այլն*):
- Հասկանում է հաղորդակցական իրավիճակին/նպատակին համապատասխանող արտահայտությունները, կլիշեները, լեզվական կառույցները (*օր., դիմելու/հրաժեշտի ձևակերպումները նամակագրության մեջ, խորհուրդ արտահայտող ձևակերպումը գովազդային բրոշյուրի մեջ*):
- Հասկանում է գնահատական ու վերաբերմունք արտահայտող լեզվական ձևակերպումները:
- Ճանաչում է ուղղություն ու կողմնորոշում արտահայտող լեզվական միջոցները (*գոյական անուն, մակբայ, նախդիր, բայական նախածանց*):
- Ճանաչում է ներկա, անցյալ և ապառնի ժամանակներն արտահայտող պարզ լեզվական միջոցները (*սովորած բայաձևեր, մակբայը*):
- Ճանաչում է համեմատություն/նմանություն արտահայտող պարզ լեզվական միջոցները:

Կարդալու ռազմավարությունները

Օտ.բ.II.15. Աշակերտը կարող է սահմանել կարդալու նպատակը և համապատասխանաբար գործածել ընթերցանության տարբեր տեխնիկաները (*ճանաչողական, ուսումնական, որոնողական*):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

ա) Ընդհանուր բովանդակությունը հասկանալու համար՝ դիմում է ճանաչողական ընթերցանության տեխնիկային:

- Ամբողջությամբ դիտարկում է տեքստը, դրա կառուցվածքը, կազմակերպիչ տարրերը: Սահմանում է, թե ինչ բովանդակություն ունի տեքստի այս կամ այն մասը: Տարբեր տարրերի (*օր., վերնագրի, ենթավերնագրի, պատկերազարդման, հանգուցային բառերի, պարբերությունների սկզբի, պարբերություններից մեկի, առանձնացված բառերի և այլն*) հիման վրա կարծիք է հայտնում տեքստի բովանդակության մասին:
- Վերընթերցում է տեքստը, ուշադրություն չի դարձնում անծանոթ բառերին: Ընդհանուր բովանդակությունը հասկանալու համար՝ հենվում է ծանոթ բառերի վրա:

բ) Տեքստը մշակելու նպատակով՝ դիմում է ուսումնական ընթերցանության տեխնիկային:

- Նախ՝ ընդհանուր առմամբ ծանոթանում է տեքստի հետ (*տե՛ս. ճանաչողական ընթերցանությունը*):
- Այնուհետև, մանրամասնորեն կարդում է տեքստը, ծանոթ տարրերի (*օր., համատեքստի, մայրենի լեզվում հաստատված օտար բառերի, բառի ծանոթ հիմքի, ածանցի և այլնի*) հիման վրա փորձում է հասկանալ անծանոթ բառերը, արտահայտությունները:
- Անծանոթ բառերը, արտահայտությունները փնտրում է իրեն մատչելի ռեսուրսների մեջ (*օր., դասագիրք, բառարան, իրազեկ անձ*):
- Անհրաժեշտության դեպքում, երկրորդ անգամ է ընթերցում տեքստը կամ դրա առանձին մասերը:

գ) Տեքստում կոնկրետ տեղեկատվություն գտնելու համար՝ դիմում է որոնողական ընթերցանության տեխնիկային:

- Դիտում է տեքստի կառուցվածքը, բառային և ոչ բառային կազմակերպիչ տարրերը և, դրանց հիման վրա, գտնում է ու ժողովում իրեն անհրաժեշտ տեղեկատվությունը:

Ուղղություն. գրել

Օտ.բ.Ու.16. Աշակերտը կարող է տարբեր բովանդակության բացիկներ կազմել, ըստ նմուշի:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Պահպանում է նամակագրության պաշտոնական կոդը (*օր., դիմելաձևը, հրաժեշտի ձևակերպումը, ստորագրությունը, հասցեն, ամսաթիվը*):
- Բովանդակությունը համապատասխանեցնում է նամակագրության նպատակին (*օր., հրավեր, առաջարկ, ընդունել/վերժել հրավերը/առաջարկը, ողջունել, լուրեր հաղորդել*):
- Նկարագրում է ամենօրյա դեպքերը:
- Կոնկրետ տեղեկատվությունը ճշտելու համար, հարցեր է տալիս:

Օտ.բ.Ու.17. Աշակերտը կարող է նամակ գրել հասակակցին, մերձավորին (*ձեռագիր կամ էլեկտրոնային տարբերակ*):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Նկատի առնելով հասցեատիրոջ ինքնությունը՝ ընտրում է դիմելու և հրաժեշտ տալու պատշաճ ձևակերպումները:
- Պատմվածք է հորինում, հերթականությամբ է հաղորդում երևույթները, փաստերը:
- Արտահայտում է զգացմունքները, տրամադրվածությունը, ցանկությունները:

Օտ.բ.Ու.18. Աշակերտը կարող է գովազդային բնույթի տեղեկատվական տեքստ կազմել (*բրոշյուր, միջոցառումների օրացույց*):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Սահմանում է հաղորդակցական իրավիճակը (*հեղինակին, գովազդի նպատակը, տեքստի ձևաչափը, հասցեատիրոջը*):
- Վերնագիր է մտածում:
- Գրում է պատկերազարդման մեկնաբանությունները:
- Հակիրճ ձևով կազմում է հիմնական տեքստը (*ծանոթագրությունը*):
- Մատնանշում է փաստացի տեղեկատվությունը (*ամսաթիվը, գինը, տեղը, պայմանները և այլն*):
- Փաստացի տեղեկատվությանը գնահատականներ է հավելում:

Օտ.բ.Ու.19. Աշակերտը կարողանում է առօրյա կյանքի հետ կապված տեղեկատվական բնույթի տեքստեր կազմել, ըստ նմուշի (*օր., գործնական հայտարարություն, հարցազրույց, հեռուստահաղորդում*):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տրված կադապարը լրացնում է այլ բովանդակությամբ (*նմուշի գործածությամբ գրում է ցանկայի հեռուստածրագիրը*):

Օտ.բ.Մ.20. Աշակերտը պահպանում է գրավոր տեքստի կառուցվածքը, տիրապետում և գործածում է տարրական լեզվական ձևերը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Պահպանում է այս կամ այն տեսակի տեքստի կառուցվածքային բնութագրիչները:
- Պարզ լեզվական կառույցների մեջ պահպանում է շարահյուսական հարաբերակցությունները:
- Ներկա, անցյալ և ապառնի ժամանակն արտահայտելու համար՝ գործածում է մակբայներ ու համապատասխան բայաձևեր:
- Պատմություններ հաղորդելիս՝ գործածում է տեղադրություն արտահայտող լեզվական միջոցները (*օր., մակբայներ, նախդիրներ*):
- Պատշաճ կերպով է գործածում սովորած բառապաշարային միավորները:
- Նկարագրման ժամանակ համեմատելիս գործածում է նմանություն արտահայտող պարզ լեզվական միջոցները:
- Հաստատական, ժխտական և հարցական բովանդակությամբ պարզ և համադաս նախադասությունների մեջ պահպանում է շարահյուսությունը:
- Ընտրում է հաղորդակցական իրավիճակին/նպատակին համապատասխան արտահայտություններ, կլիշեներ, լեզվական կառույցներ:
- Հույզերն ու վերաբերմունքը (*օր., երջանկություն, հիացմունք, հավանություն, երախտագիտություն*) արտահայտելու համար՝ գործածում է պատշաճ բառապաշարային միավորներ, լեզվական ձևակերպումներ:
- Ճշգրիտ կերպով է գործածում բարեկիրթ և մտերմական ձևակերպումները:
- Պահպանում է ուղղագրական կանոնները: Ճիշտ է գործածում կետադրական նշանները:

Գրելու ռազմավարությունները

Օտ.բ.Մ.21. Աշակերտը կարող է դիմել գրելու պատշաճ ռազմավարություններին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Գտնում և ի մի է բերում անհրաժեշտ ուսումնական ռեսուրսները (*օր., բառարան, նմուշ, քերականական տեղեկատու և այլն*):
- Կազմում է կատարվելիք աշխատանքի պլանը: Հաղորդակցական նպատակից ելնելով՝ ընտրում է պատշաճ լեզվական նյութը (*օր., բառապաշարային միավորներ, կլիշեներ, քերականական ձևեր և այլն*):
- Գրում է սևագիր տարբերակը:
- Վերընթերցում է սևագիր տարբերակը, ուսումնական ռեսուրսի հիման վրա ստուգում է գրավորը և ուղղում լեզվական սխալները:
- Սրբագրում է գրավորը:

Ուղղություն. խոսել

Օտ.բ.Ու.22. Աշակերտը տիրապետում է հնչույթաբանական կարողությունների ու հմտությունների:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Երկխոսությունները ներկայացնելիս, անգիր արտահայտելիս պահպանում է օտար լեզվին բնորոշ հնչերանգը, հնչեղությունը, ունի պատշաճ առոգանություն:

Երկխոսություն

Օտ.բ.Ու.23. Աշակերտը կարող է մասնակցել ինտերակցիային:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ծանոթ թեմատիկայի շուրջ հարցեր է տալիս և պատասխանում է հարցերին *(օր., հագուստ, սիրելի հերոսը, հետաքրքրություն, ազատ ժամանակ, դպրոց, ընկերներ և այլն):*
- Մասնակցում է կեղծակերպած իրավիճակներին *(օր., խանութում, բժշկի մոտ, հրավիրել, հանդիպում նշանակել և այլն):*
- Կարող է զրուցել հեռախոսով:
- Պատշաճ կերպով է արձագանքում զրուցակցի ռեպլիկաներին:
- Կիրառում է հաղորդակցական իրավիճակի համապատասխան կլիշեներ, լեզվական ձևակերպումներ:
- Պատասխանում է սովորած տեքստի շուրջ տրված պարզ հարցերին:
- Արտահայտում է հույզեր, հայեցակետ, տրամադրվածություն:
- Գնահատում է երևույթները, փաստերը, մարդկանց:
- Ուսումնական գործընթացում ծառայած խնդիրների վերաբերյալ ասելիքն արտահայտում է օտար լեզվով:

Օտ.բ.Ու.24. Աշակերտը կարող է զրուցել հեռախոսով:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Գործածում է պատշաճ կլիշեներ:
- Արձագանքում է զրուցակցի ռեպլիկաներին:

Մենախոսություն

Օտ.բ.Ու.25. Աշակերտը կարող է փոխկապակցված խոսել:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Խոսում է ծանոթ թեմատիկայի շուրջ *(օր., ընտանիք, բնակավայր, դպրոց, սիրելի առարկաներ, ամենօրյա գործունեություն, հետաքրքրություններ և այլն):*
- Պարզ պլանի կամ լուսանկարների հիման վրա հասարակ պատմություն է պատմում:
- Պարզ արտահայտություններով նկարագրում է իր միջավայրը:
- Նկարագրում է լուսանկարը:

- Նկարագրում և բնութագրում է մարդկանց (*հասակը, կշիռը, մազերի գույնը, աչքերի գույնը, հագուստը, բնավորությունը, հույզերը, հետաքրքրությունները*):

Օտ.բ.II.26. Աշակերտը կարող է խոսելիս գործածել սովորած լեզվական ու քերականական ձևերը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ինտերակցիայի ժամանակ ընտրում է հաղորդակցական իրավիճակին/սպասարկին համապատասխան դիմելաձևեր, արտահայտություններ, կլիշեներ, լեզվական կառույցներ:
- Ճշգրիտ կերպով է գործածում խոսքի բարեկիրթ և մտերմական ձևերը:
- Ներկա, անցյալ և ապառնի ժամանակն արտահայտելիս՝ պատշաճ կերպով է գործածում մակբայներն ու սովորած բայաձևերը:
- Գործածում է տեղադրություն արտահայտող լեզվական միջոցները:
- Պարզ լեզվական կառույցների մեջ պահպանում է շարահյուսական հարաբերակցությունները:
- Տարբեր երանգի նախադասություններ արտասանելիս՝ պահպանում է համապատասխան հնչերանգը:
- Պատշաճորեն է գործածում սովորած բառապաշարը:

Բանավոր խոսքի ռազմավարությունները

Օտ.բ.II.27. Աշակերտը կարող է գործածել բանավոր խոսքի համապատասխան ռազմավարություններ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հաղորդակցվելու համար գործածում է անհրաժեշտ ռեսուրսները (*օր., մոդելներ, հանգուցային բառեր, դարձվածքներ, արտահայտություններ, կլիշեներ*):
- Գործածում է փոխհատուցման միջոցներ (*օր., դիմախաղ, ձեռածություն, հակահիշի/հումանիշի մատնանշում, ձևակերպում/ենթադրված առարկայի նկարագրություն, կամ դրա նշանակման մատնանշում/ և այլն*):
- Նախօրոք վարժություններ է անում, փորձեր է անում գույզի, խմբի անդամների հետ:
- Հասկանում և ուղղում է իր/ուրիշի սխալները:
- Չհասկանալու դեպքում, խնդրում է կրկնել, մեկնաբանել, դանդաղ ու հստակ արտահայտել:

Ուղղություն. Մշակույթների երկխոսություն

Օտ.բ.II.28. Աշակերտը կարող է ճանաչել մշակութային բնագավառի տեղեկատվությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ճանաչում է պետական խորհրդանիշները (*դրոշ, զինանշան, օրհներգ*):
- Դիտարկում և ճանաչում է պատկերազարդումներում/տեքստերում/ուսումնական նյութերում արտացոլված պետական խորհրդանիշները, մշակութային կամ կենցաղային իրողությունները:

Օտ.բ.II.29. Աշակերտը հետաքրքրություն և հանդուրժողական վերաբերմունք է ցուցաբերում օտարալեզու երկրի մշակույթի և սոցիալ-մշակութային յուրահատկությունների նկատմամբ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է հասարակության մեջ վարվելու ձևը, կանոնները և պահպանում է դրանք՝ ձևական իրավիճակներ ներկայացնելիս:
- Մայրենի լեզվով հարցեր է տալիս/բացատրություն է խնդրում կոնկրետ սոցիալ-մշակութային հարցերի վերաբերյալ:
- Մշակույթների յուրահատկությունների մասին դատողություն անելիս՝ կոնկրետ է արտահայտում իր կարծիքը, հայեցակետը, վերաբերմունքը:

Ուղղություն. Օտար լեզվի գործնական կիրառություն (մեղիացիա)

Օտ.բ.II.30. Աշակերտը կարող է տարբեր տեսակի նախագծեր իրականացնել օտար լեզվով (օր., «Ցուցահանդես: Տոնական սեղան: Օտարերկրացիների համար զբոսաշրջական բրոշյուր կազմել և տեղադրել դպրոցի կայք-էջում: Ընկերանալ աշխարհի որևէ երկրում ապրող հասակակցի հետ, որը նույն լեզուն է սովորում» և այլն):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ուսուցչի հետ ձևակերպում է նախագիծը հաջողությամբ իրականացնելու չափանիշները:
- Խմբի անդամների հետ սահմանում և պլանավորում է իրականացման փուլերը: Այնուհետև, խմբերը ծանոթանում են կազմված ծրագրերի հետ, համեմատում են, կատարելագործում են:
- Ուսուցչի և խմբի անդամների հետ սահմանում է կատարման ժամկետները:
- Խմբի անդամների հետ համախմբում է գիտելիքներն ու կարողությունները: Սահմանում է, թե ինչ գիտելիքներ ու կարողություններ պետք է ձեռք բերի՝ տրված խնդիրները լուծելու համար:
- Խմբի անդամների հետ պայմանավորվելով՝ սահմանում է սեփական գործառույթները:
- Խմբի անդամների հետ փնտրում է, ընտրում և մշակում է տեղեկատվությունը:
- Խմբի անդամների հետ ընտրում է նախագիծը ներկայացնելու ձևը:
- Խմբի անդամների հետ իրականացնում է նախագիծը:
- Խմբի անդամների հետ փորձեր է անում, ուրիշ խմբի առջև անում է շնորհանդեսի կեղծակերպում: Նկատի առնելով մեկնաբանությունները, դիտողությունները, կատարելագործում է նախագիծը, ուղղումներ է ներմուծում:
- Խմբի անդամների հետ մշակում է նախագծի վերջնական տարբերակը, և այն ներկայացնում են լսարանին:

Ուղղություն. Ուսանման ուսանում

Օտ.բ.II.31. Աշակերտը կարող է, ուսուցչի օգնությամբ, սահմանել առաջադրանքի պահանջները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Մասնակցում է առաջադրանքի հաջողությամբ կատարման չափանիշների ձևակերպմանը:
- Ընդգծում է առաջադրանքի կատարման փուլերը:
- Սահմանում է այն գիտելիքներն ու կարողությունները, որոնց տիրապետում է, և գործածում է դրանք առաջադրանքը կատարելու համար:
- Սահմանում է, թե ինչ գիտելիքներ ու կարողություններ պետք է ձեռք բերի՝ նոր առաջադրանքը կատարելու համար:
- Սահմանում է, թե ինչը հեշտ կլինի իր համար, ինչը՝ դժվար, երբ հարկավոր կլինի օգնություն, խորհրդակցություն:
- Առաջադրանքի յուրաքանչյուր փուլի համար սահմանում է անհրաժեշտ ռազմավարությունները:

Օտ.բ.Մ.32. Աշակերտը տիրապետում է հաջող ուսումնառությունն ապահովելու ռազմավարական կարողություններին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Մինչև աշխատանքն սկսելը, համախմբում է գիտելիքները:
- Մասնակցում է մտքերի փոխանակմանն այն մասին, թե ինչ մոտեցումներ կկիրառի այս կամ այն փուլում՝ կոնկրետ խնդիրը լուծելու համար:
- Անհրաժեշտության դեպքում օգնություն, խորհրդատվություն է խնդրում:
- Աշխատանքն ավարտելուց հետո, ներկայացնում է կիրառած ռազմավարությունները, համեմատում է ուրիշների կիրառած ռազմավարությունների հետ:
- Մասնակցում է կիրառված ռազմավարությունների արդյունավետության գնահատմանը:
- Համաձայնվում է փորձել ու կիրառել տարբեր ռազմավարություններ:
- Համեմատում է տարբեր լեզուների, այդ թվում նաև մայրենի լեզվի, ուսումնասիրման ժամանակ ստացած փորձառությունը: Սահմանում է, թե որքանով օգտակար կլինի այս կամ այն ռազմավարությունն այլ լեզու կամ այլ առարկա սովորելու գործընթացում:
- Վերլուծում է սխալների, թերությունների պատճառները:
- Մասնակցում է ինքնագնահատմանն ու համագնահատմանը *(աշակերտը և ուսուցիչը կամ աշակերտն ու աշակերտը միևնույն աշխատանքն ուղղում են միմյանցից անկախ):*
- Դիտարկելով արդյունքները՝ նշում է, թե որտեղ է առաջադիմել:
- Վերլուծում է թե՛ հաջողության, թե՛ անհաջողության պատճառները՝ հետագայում դրանք նկատի առնելու նպատակով:
- Անվանում է անհաջողության գործոնները, պատճառները *(օր., պատշաճ կերպով չի գործածել ռեսուրսը, չի կարողացել առանձնացնել գործունեության հիմնական խնդիրը, մեկ փուլ բաց է թողել, խնդիրն անհաղթահարելի է թվացել, անտրամադիր է եղել և այլն):*
- Նկատում և անվանում է սեփական թերությունները:
- Որոշում է, թե ինչ միջոցների պետք է դիմի թերությունները վերացնելու համար:
- Սեփական նախաձեռնությամբ դիմում է ուղղման միջոցների:

Օտ.բ.Մ.33. Աշակերտը կարող է ռեսուրսներ գործածել՝ ուսումնական գործունեությանը նպաստելու նպատակով:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Արդյունավետ է օգտագործում դասագրքի ռեսուրսները *(օր., բառարանը, կառուցվածքային նմուշները, քերականական տեղեկատուն, պատկերագրողումները և այլն):*
- Տեղեկատվություն է գտնում ինչպես դպրոցում, այնպես էլ դպրոցից դուրս մատչելի ռեսուրսների մեջ *(օր., դասագրքի ակներևությունների, բառարանի մեջ, դպրոցի/գյուղի/քաղաքի գրադարանում, ուսուցչի, իրագեկ անձի միջոցով, համացանցում և այլն):*
- Տեղեկատվություն/ուսումնական նյութ է գտնում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների (S2S/համացանց) միջոցով:
- Այս կամ այն նյութը/տեքստը կազմելու/մշակելու համար կիրառում է S2S-ը:
- Նախագծեր իրականացնելու համար օգտվում է S2S-ից:

Օտ.բ.Մ.34. Աշակերտը կարող է դիմել տարբեր եղանակների՝ բառապաշարն ամրապնդելու և հարստացնելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հետևողականորեն կրկնում է անցած բառապաշարային նյութը:
- Դուրս է գրում վատ յուրացրած բառապաշարային միավորները:
- Կիրառում է մտապահելու տարբեր եղանակներ *(օր., մի քանի անգամ արտագրել, բարձրաձայն կրկնել, խմբավորել, զուգորդել նույն հիմքն ունեցող բառերը, հականիշների/հոմանիշների զույգերը, գործածել համատեքստում, խմբավորել ըստ թեմատիկայի և այլն):*

Օտ.բ.Մ.35. Աշակերտը կարող է ռազմավարություններ գործածել՝ քերականության յուրացումը հեշտացնելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դիտարկելով կոնկրետ օրինակները՝ հայտնաբերում է քերականական կառույցները/օրենքները:
- Հայտնաբերած կառույցները/օրենքները գործածում է տարբեր համատեքստերում:
- Օտար և մայրենի լեզուների քերականական կառույցները/օրինաչափությունները համեմատում է իրար:
- Գործածում է և ինքն էլ է կազմում սխեմաներ, աղյուսակներ, կառուցվածքային մոդելներ:

Օտ.բ.Մ.36. Աշակերտը կարող է, արդյունքները կատարելագործելու նպատակով, համագործակցել համադասարանցիների, ուսուցչի և գույզի հետ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Խրախուսում է գույզին, խմբակիցներին:
- Օգնություն է խնդրում /առաջարկում:
- Գործում է խմբի անդամների հետ համաձայնեցված: Խմբի անդամների հետ դատողություններ է անում՝ խնդիրը լուծելու, գործառույթները բաշխելու վերաբերյալ:
- Լսում է ուրիշների տեսակետները, արտահայտում է սեփական տեսակետը:
- Անհամաձայնության դեպքում փորձում է հասնել համաձայնության:
- Փորձում է սեփական լուծման ներդնել ընդհանուր գործում:

- Հարկ եղած դեպքում մասնակցում է գույզի/խմբի անդամների համագնահատմանը:
- Քննադատում է գաղափարները, ոչ թե գաղափարների հեղինակներին, գնահատելիս կոռեկտություն է դրսևորում:
- Քաղաքավարի կերպով է մատնանշում ուրիշների կողմից թույլ տրված սխալները:
- Արդյունքների կատարելագործմանը նպաստելու համար՝ մասնակցում է համագնահատմանը:

Բազային և միջնակարգ աստիճան՝ III մակարդակ (բ.III)

Օտար լեզու

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների.

Լսել	Կարդալ	Գրել
<p>Օտ.բ.III.1. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ օտարալեզու զրուցակիցների միջև կենցաղային թեմաների շուրջ տեղի ունեցող ինտերակցիան (երկխոսություն, մենախոսություն, հարցազրույց):</p>	<p>Օտ.բ.III.5. Աշակերտը կարող է հասկանալ նամակագրությունը (պաշտոնական բնույթի բացիկ, անձնական նամակ կամ դրա էլեկտրոնային տարբերակը):</p>	<p>Օտ.բ.III.11. Աշակերտը կարող է նամակ գրել երևակայական կամ իրական հասցեատիրոջը (օտարերկրացի հասակակցին, ընկերոջը և այլն):</p>
<p>Օտ.բ.III.2. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ համառոտ հրահանգները, տեղեկագրերը, հասարակական հավաքատեղերում արված հայտարարությունները:</p>	<p>Օտ.բ.III.6. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ տարբեր տեսակի տեղեկատվական տեքստեր (օր., տեղեկագիրք, կենսագրական տեղեկատու, ծանոթագրություն և այլն):</p>	<p>Օտ.բ.III.12. Աշակերտը կարող է կազմել տարբեր տեսակի փոքրածավալ տեղեկատվական տեքստեր (տեղեկատու, ծանոթագրություն, տեղեկագիրք և այլն):</p>
<p>Օտ.բ.III.3. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ տեղեկատվական ձայնագրությունները:</p>	<p>Օտ.բ.III.7. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ փոքրածավալ պատմողական տեքստը (օր., հարմարեցված պատմվածք, հուշագրություն, իրական պատմություն և այլն):</p>	<p>Օտ.բ.III.13. Աշակերտը կարող է, օժանդակ միջոցների հիման վրա, փոքրածավալ տեքստեր կազմել և ստեղծագործական վերաբերմունք դրսևորել:</p>
<p>Օտ.բ.III.4. Աշակերտը կարող է դիմել տարբեր</p>	<p>Օտ.բ.III.8. Աշակերտը կարող</p>	<p>Օտ.բ.III.14. Գրելիս</p>

<p>ռազմավարությունների՝ ունկնդրման խնդիրների արդյունավետ լուծմանը նպաստելու և լսելու կարողությունը կատարելագործելու համար:</p>	<p>է հայտնաբերել տեքստի կառուցվածքային բնութագրիչները, սովորած լեզվական ձևերը և դրանց գործառույթը բովանդակալից համատեքստում:</p> <p>Օտ.բ.III.9. Աշակերտը կարող է բարձրաձայն կարդալ տեքստը/հատվածը:</p> <p>Օտ.բ.III.10. Աշակերտը կարող է դիմել տարբեր ռազմավարությունների՝ ընթերցանության խնդիրների արդյունավետ լուծմանը նպաստելու և ընթերցման կարողությունը կատարելագործելու համար:</p>	<p>աշակերտը կարող է պահպանել տեքստի կառուցվածքը, տիրապետում է բազային լեզվական կարողությունների ու հմտությունների և փորձում է գործածել դրանք:</p> <p>Օտ.բ.III.15. Աշակերտը կարող է դիմել տարբեր ռազմավարությունների՝ գրավոր խնդիրների արդյունավետ լուծմանը նպաստելու և գրավոր խոսքի կարողությունը կատարելագործելու համար:</p>
--	---	--

Խոսել	Մշակույթների կիրառություն	Օտար լզգվի գործնական կիրառություն (մեդիացիա)	Ուսանման ուսանում
<p>Օտ.բ.III.16. Աշակերտը կարող է մասնակցել ինտերակցիային:</p> <p>Օտ.բ.III.17. Աշակերտը գլուխ է հանում կենցաղային հաղորդակցական իրավիճակից:</p> <p>Օտ.բ.III.18. Աշակերտը կարող է խոսել՝ հենվելով օժանդակ միջոցների վրա:</p> <p>Օտ.բ.III.19. Աշակերտը տիրապետում է բազային լեզվական կարողությունների ու հմտությունների և գործածում է դրանք:</p>	<p>Օտ.բ.III.21. Աշակերտը ճանաչում է նպատակային երկրի/երկրների մշակութային իրողությունները:</p> <p>Օտ.բ.III.22. Աշակերտը հետաքրքրություն և հանդուրժողական վերաբերմունք է ցուցաբերում օտարալեզու մշակութային ու սոցիալ-մշակութային յուրահատկությունների նկատմամբ:</p>	<p>Օտ.բ.III.23. Աշակերտը կարող է տարբեր տեսակի նախագծեր իրականացնել օտար լեզվով (<i>օր., «Ցուցահանդես: Տոնական սեղան: Զբոսաշրջական բրոշյուր կազմել օտարերկրացիների համար, կամ տեղադրել դպրոցական կայք-էջում, ընկերանալ աշխարհի որևէ անկյունի այնպիսի դասարանի հետ, որը նույն լեզուն է սովորում» և այլն</i>):</p>	<p>Օտ.բ.III.24. Աշակերտը կարող է ուսուցչի օգնությամբ սահմանել առաջադրանքի պահանջները:</p> <p>Օտ.բ.III.25. Աշակերտը տիրապետում է հաջող ուսումնառությունն ապահովելու ռազմավարական կարողություններին:</p> <p>Օտ.բ.III.26. Աշակերտը կարող է ռեսուրսներ գործածել՝ ուսումնական գործունեությանը նպաստելու նպատակով:</p> <p>Օտ.բ.III.27.</p>

<p>Օտ.բ.III.20. Աշակերտը կարող է դիմել տարբեր ռազմավարությունների՝ խոստողական խնդիրների արդյունավետ լուծմանը նպաստելու և բանավոր խոսքի կարողությունը կատարելագործելու համար:</p>		<p>Աշակերտը կարող է դիմել տարբեր եղանակների՝ բառապաշարն ամրապնդելու և հարստացնելու համար:</p> <p>Օտ.բ.III.28. Աշակերտը կարող է ռազմավարություններ գործածել՝ քերականության յուրացումը հեշտացնելու համար:</p> <p>Օտ.բ.III.29. Աշակերտը կարող է, արդյունքները կատարելագործելու նպատակով, համագործակցել համադասարանցիների, ուսուցչի և զույգի հետ:</p>
---	--	---

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ու դրանց ստուգիչները.

Ուղղություն. լսել

(Լսելու կարողությունը զարգացնելու համար, գործածվում են դիդակտիկացված ձայնագրություններ, որտեղ տեքստը հաստակ է ու դանդաղ:)

Օտ.բ.III.1. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ օտարալեզու զրուցակիցների միջև կենցաղային թեմաների շուրջ տեղի ունեցող ինտերակցիան *(երկխոսություն, մենախոսություն, հարցազրույց):*

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է, թե որտեղ և երբ է տեղի ունենում խոսակցությունը:
- Ճանաչում է զրուցակիցներին, հարցազրուցավարին, հարցվողին:
- Հասկանում է խոսակցության հիմնական թեման/հարցերը:
- Ժողովում է կոնկրետ տեղեկատվությունը *(ույլ, ինչ, որտեղ, երբ, որը, ինչպիսի, որքան, ինչու և այլն):*
- Խոսակցության բովանդակությունից ելնելով՝ եզրակացություն է անում զրուցակիցների բնավորության, գործունեության, հետագա ծրագրերի, հետաքրքրությունների և նրանց հարաբերությունների *(օր., ընկերական, կոնֆլիկտային, վաղեմի ծանոթներ, նոր ծանոթներ և այլն)* մասին:

- Հնչերանգով տարբերում է ասելիքի եղանակը (*հարց, խնդրանք, պահանջ և այլն*):

Օտ.բ.III.2. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ համառոտ հրահանգները, տեղեկագրերը, հասարակական հավաքատեղերում արված հայտարարությունները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է հայտարարության թեման (*օր., կորած իր, միջոցառում, ճանապարհորդություն և այլն*):
- Հասկանում է նպատակը (*օր., գովազդ, զգուշացում, տեղեկացում և այլն*):
- Ճանաչում է հասցեատիրոջը (*ու՛մ համար է հատկացված հաղորդումը, հայտարարությունը*):
- Ժողովում է կոնկրետ տեղեկատվությունը (*օր., կորած իրերի բնութագրիչները, պարենամթերքի զինը, մեկնման ժամանակը, անվտանգության կանոնները և այլն*):

Օտ.բ.III.3. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ տեղեկատվական ձայնագրությունները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ճանաչում է հաղորդման տեսակը (*օր., եղանակի տեսություն, տեղեկագիրք, սպորտի/մշակույթի նորություններ և այլն*):
- Հասկանում է հիմնական թեման/հարցերը (*օր., պարզևատրություն, հետաքրքրություններ, կինոփառատոն և այլն*):
- Ժողովում է կոնկրետ տեղեկատվությունը (*ու՛լ, երբ, որտեղ, ինչպիսի, որքան և այլն*):

Լսելու ռազմավարությունները

Օտ.բ.III.4. Աշակերտը կարող է դիմել տարբեր ռազմավարությունների՝ ունկնդրման խնդիրների արդյունավետ լուծմանը նպաստելու և լսելու կարողությունը կատարելագործելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կենդանի խոսքը/ձայնագրությունը հասկանալու համար, օգտագործում է ոչ բառային տարրեր (*ձայնային տեմբր, հնչերանգ, դիմախաղ, ձեռածություն, տարբեր տեսակի աղմուկ, տրամաբանական շեշտեր, պատկերազարդում, սխեմա և այլն*):
- Ծանոթ տարրերի (*հաղորդակցական իրավիճակի, համատեքստի, ծանոթ լեզվական կառույցների*) հիման վրա հասկանում է անծանոթ բառերի, արտահայտությունների նշանակությունը:
- Նշում է անծանոթ բառերը՝ դրանց նշանակությունը պարզելու համար:
- Նկարագրում է, թե ինչ եղանակով/ինչպես կարողացավ լուծել լսողական խնդիրը:
- Համեմատում է ուրիշների կիրառած եղանակին և եզրակացնում, թե որ մոտեցումն էր ավելի արդյունավետ:
- Նպատակին համապատասխան՝ փոխում է լսելու ռազմավարությունը. ընդհանուր բովանդակությունը հասկանալու համար, հենվում է ծանոթ բառերի, ոչ բառային տարրերի վրա և ընկալում հաղորդակցական իրավիճակը, համատեքստը, խոսակցության թեման: Կոնկրետ տեղեկատվությունը հասկանալու համար, ընտրում է

կոնկրետ հենարաններ, ուշադրությունը կենտրոնացնում է դրանց վրա՝ անհրաժեշտ տեղեկատվությունը ժողովելու համար:

- Օտար լեզվով դիտում և լսում է իրեն հետաքրքրող հեռուստա-/ռադիոհաղորդումները, ֆիլմերը:

Ուղղություն. կարդալ

Օտ.բ.III.5. Աշակերտը կարող է հասկանալ նամակագրությունը (պաշտոնական բնույթի բացիկ, անձնական նամակ կամ դրա էլեկտրոնային տարբերակը):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Անվանում է հեղինակին, հասցեատիրոջը, նրանց հասցեները, ուղարկման ամսաթիվը:
- Անվանում է նամակագրության նպատակը (*օր., շնորհավորանք, հրավեր, շնորհակալության հայտնում, տպավորությունների փոխանակում, բացատրություն ու մեկնաբանություն և այլն*):
- Հասկանում է իրավիճակը/համատեքստը, որում գրվել է նամակը: Ճանաչում է փաստացի տեղեկատվությունը (*որտեղ, ինչ, երբ, որքան, ինչպիսի, ինչու, ում համար և այլն*):
- Հասկանում է պատասխանողի վերաբերմունքը, տրամադրվածությունը:
- Տեղեկատվության հիման վրա, կոնկրետ եզրակացություններ է անում թե՛ հեղինակի, թե՛ հասցեատիրոջ մասին:

Օտ.բ.III.6. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ տարբեր տեսակի տեղեկատվական տեքստեր (օր., տեղեկագիրք, կենսագրական տեղեկատու, ծանոթագրություն և այլն):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է գլխավոր թեման/հարցերը:
- Հասկանում է տեքստի մակերեսային (ճշգրիտ) տրված փաստացի տեղեկատվությունը:
- Տարբեր տեղեկատվությունները կապում է իրար և հետևություն անում:
- Սահմանում է իրադարձությունների ժամանակն ու վայրը:
- Փաստն առանձնացնում է ենթադրությունից, գնահատումից:
- Հայտնաբերում է փաստերի և իրադարձությունների միջև առկա տրամաբանական կապերը:
- Տեքստում տրված տեղեկատվությունը կապում է սեփական փորձի հետ:

Օտ.բ.III.7. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ փոքրածավալ պատմողական տեքստը (օր., հարմարեցված պատմվածք, հուշագրություն, իրական պատմություն և այլն):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է ընդհանուր բովանդակությունը:
- Վերնագիրը հասկանալով կապում է տեքստի հետ:
- Ճանաչում է պատմողին, գործող անձանց, հեղինակին:
- Հասկանում է գործողությունների հաջորդականությունը:
- Անվանում է կոնկրետ տեղեկատվությունը (*ով, որտեղ, ինչպիսի, ինչպես, ինչու և այլն*):
- Հասկանում է գործող անձանց միջև առկա հարաբերությունները:
- Ճշգրիտ կերպով տրված տեղեկատվության հիման վրա բնութագրում է գործող անձանց:
- Հասկանում է պատմողի/գործող անձի տրամադրվածությունը, հույզերը, վերաբերմունքը:

Օտ.բ.III.8. Աշակերտը կարող է հայտնաբերել տեքստի կառուցվածքային բնութագրիչները, սովորած լեզվական ձևերը և դրանց գործառույթը բովանդակակալից համատեքստում:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Միննույն տեսակի տեքստերը (*օր., ճանաչողական բնույթի երկու տեքստը*) համեմատում է ըստ կառուցվածքային կազմակերպման և մայրենի լեզվով քննարկում է, թե որի կառուցվածքն է ավելի շատ նպաստում տեքստի ըմբռնմանը, և ինչու:
- Ճանաչում է գործողությունների հաճախականությունն ու տևողությունն արտահայտող լեզվական միջոցները (*մակբայ, պատշաճ բայաձև*):
- Ճանաչում է տեղադրություն, ուղղություն, հեռավորություն արտահայտող լեզվական միջոցները:
- Ճանաչում է գործողությունների հաջորդականությունը (*նախորդող և հաջորդող գործողության*) արտահայտող պարզ լեզվական կառույցները:
- Ճանաչում է տրամաբանական կապերը (*օր., պատճառ, հետևանք, հակադրություն*) արտահայտող պարզ լեզվական կառույցները:

Օտ.բ.III.9. Աշակերտը կարող է բարձրաձայն կարգալ տեքստը/հատվածը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ընտրում է տեքստ/հատված, որը ցանկանում է ընթերցել լսարանի համար:
- Մինչև ընթերցելը վերլուծում է տեքստի բովանդակությունը:
- Բովանդակության համապատասխան փոխում է խոսքի տեմպը, ձայնի տեմբրը:
- Տեքստում արտացոլված հույզերն արտահայտում է հնչերանգով:
- Հնչերանգը գործածում է կետադրական նշանների գործառույթով:
- Կարդալու ընթացքում փորձում է տեսողական կապ հաստատել լսարանի հետ:
- Խոսում է հասկանալի ու հստակ:

Կարդալու ռազմավարությունները

Օտ.բ.III.10. Աշակերտը կարող է դիմել տարբեր ռազմավարությունների՝ ընթերցանության խնդիրների արդյունավետ լուծմանը նպաստելու և ընթերցման կարողությունը կատարելագործելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կիրառում է ճանաչողական ընթերցանության եղանակները. դիտարկում է տեքստի կառուցվածքը, վերնագիրը, պարբերությունները, պատկերազարդումները, մակագրությունները, ընդգծված բառերը և այլն: Կանգ չի առնում անծանոթ բառերի վրա:
- Կիրառում է ուսումնական ընթերցանության եղանակները. առաջին անգամ կարդալիս ամբողջությամբ ծանոթանում է տեքստին: Բարդությունները հաղթահարելու համար՝ վերընթերցում է անհասկանալի, բարդ կամ կարևոր մասերը: Համատեքստի, փորձառության կամ բառարանի միջոցով ճշտում է անծանոթ բառերի նշանակությունը:
- Կիրառում է որոնողական ընթերցանության եղանակները. կոնկրետ տեղեկատվությունը գտնելու նպատակով, արագ վերընթերցում է տեքստը, փնտրում է հենարաններ. հանգուցային բառերը, պարբերությունների առաջին նախադասությունները, խորագրերը, մեկնաբանությունները, սխեմաները, աղյուսակները և այլն:

- Ծանոթ տարրերի (*պատկերագրողումների, ծանոթ հիմքի, համատեքստի, մայրենի լեզվում հաստատված օտար բառերի և այլն*) հիման վրա, ինքնուրույն հասկանում է անծանոթ բառերի, արտահայտությունների նշանակությունը:
- Տարբեր տարրեր գործածելով (*վերնագիր, պարբերությունների սկիզբ, հանգուցային բառեր, պարբերություններից մեկը, ընդգծված բառեր*), կարծիք է հայտնում տեքստի բովանդակության մասին:
- Նկարագրում է, թե ինչ եղանակով/ինչպես կարողացավ լուծել ընթերցանության խնդիրը:
- Համեմատում է ուրիշների ընտրած եղանակի հետ և եզրակացնում, թե որ մոտեցումն էր ավելի արդյունավետ:

Ուղղություն. գրել

Օտ.բ.III.11. Աշակերտը կարող է նամակ գրել երևակայական կամ իրական հասցեատիրոջը (*օտարերկրացի հասակակցին, ընկերոջը և այլն*):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Պահպանում է նամակագրության պաշտոնական կոդը (*դիմելու և հրաժեշտ տալու ձևակերպումները, թեման, ստորագրությունը, հասցեն, ամսաթիվը*):
- Ներկայացնում է սեփական անձը, ընտանիքին:
- Մատնանշում է իր տարածաշրջանի/քաղաքի/գյուղի տեղադրությունը:
- Նկարագրում է, թե ինչով է զբաղված, ինչպես է անցկացնում ազատ ժամանակը:
- Հաղորդում է առօրյա կյանքի հետ կապված դեպքերը:
- Բնութագրում է իր ընկերներին:
- Իրեն հետաքրքրող հարցերի պատասխանն ստանալու համար՝ հարցեր է տալիս հասցեատիրոջը:
- Հրավիրում է և բացատրում, թե ինչ կանեն, ինչպես կանցկացնեն ժամանակը, եթե ժամանեն:

Օտ.բ.III.12. Աշակերտը կարող է կազմել տարբեր տեսակի փոքրածավալ տեղեկատվական տեքստեր (*տեղեկատու, ծանոթագրություն, տեղեկագիրք և այլն*):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ի մի է բերում անհրաժեշտ տեղեկատվությունը, պատկերագրողումները:
- Սահմանում է տեղեկատվության կազմակերպման օրենքը:
- Տեքստ է հորինում:
- Վերնագրում է:
- Ձևավորում է պատկերագրողումներով:

Օտ.բ.III.13. Աշակերտը կարող է, օժանդակ միջոցների հիման վրա, փոքրածավալ տեքստեր կազմել և ստեղծագործական վերաբերմունք դրսևորել:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ի մի է բերում կարդացած տեքստի ուսումնասիրած հանգուցային բառերը, լեզվական կառույցներն ու, դրանց հիման վրա, հորինում է նման կառուցվածքով տեքստ:
- Ընդարձակում է սեղմ, համառոտ հաղորդված պատմությունը:
- Հասկանալի կերպով է հաղորդում բովանդակությունը:

Օտ.բ.III.14. Գրելիս աշակերտը կարող է պահպանել տեքստի կառուցվածքը, տիրապետում է բազային լեզվական կարողությունների ու հմտությունների և փորձում է գործածել դրանք:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տեքստը կազմելիս՝ գործածում է իմաստային կապակցման պարզ լեզվական ու քերականական միջոցները *(օր., գոյականները ճշգրտորեն է փոխարինում դերանուններով ու պարզ մակբայներով)*:
- Պատշաճ կերպով է գործածում նոր սովորած բառերն ու արտահայտությունները:
- Դեպքեր/փաստեր հաղորդելիս՝ ներկա, անցյալ և ապառնի ժամանակն արտահայտելու համար գործածում է համապատասխան բայաձևերը:
- Գործողությունների, իրադարձությունների ժամանակը ճշտելու համար *(օր., երեկոյան, վաղը, երեկ, մի քանի ժամից և այլն)*՝ գործածում է մակբայներ, նախդիրներ, կայուն բառակապակցություններ:
- Իրադարձությունների միջև տրամաբանական կապերը *(օր., պատճառա-հետևանքային, հակադրական)* արտահայտելու համար *(օր., համադասական նախադասություն, պարզ ստորադասություն)*՝ գործածում է պարզ լեզվական կառույցներ:
- Հաղորդակցական իրավիճակին/նպատակին համապատասխան՝ ընտրում է սովորած լեզվական կառույցները, կլիշեները, ձևակերպումները, բարեկիրթ և մտերմական ձևերը:
- Ճշգրտորեն է գործածում սովորած շարահյուսական հարաբերակցությունները բառերի միջև:
- Նկարագրելիս, տեղադրությունը ճշտում է մակբայների, պարզ լեզվական ձևակերպումների միջոցով:
- Պահպանում է կետադրական և ուղղագրական նորմերը:

Գրելու ռազմավարությունները

Օտ.բ.III.15. Աշակերտը կարող է դիմել տարբեր ռազմավարությունների՝ գրավոր խնդիրների արդյունավետ լուծմանը նպաստելու և գրավոր խոսքի կարողությունը կատարելագործելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Գտնում և պատրաստում է անհրաժեշտ ուսումնական ռեսուրսներ *(օր., բառարան, նմուշ, քերականական տեղեկատու և այլն)*:
- Դուրս է գրում, ընտրում է, տեսակավորում է գաղափարները և կազմում է տեքստի պլան:
- Գտնում է համապատասխան պատկերազարդումներ:
- Գրում է սևագիր տարբերակ:
- Ուսումնական ռեսուրսի հիման վրա, ստուգում է գրավորը և ուղղում է սխալները:

Երկխոսություն

Օտ.բ.III.16. Աշակերտը կարող է մասնակցել ինտերակցիային:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ծանոթ թեմատիկայի շուրջ հարցեր է տալիս և պատասխանում է հարցերին:
- Կարող է արձագանքել գրուցակիցների ռեպլիկաներին:
- Նախօրոք պատրաստվելու հիման վրա, կարող է սեփական վերաբերմունքն արտահայտել այս կամ այն հարցի շուրջ և մեկնաբանել այն (*ինչն է դուր գալիս/ինչը դուր չի գալիս, ինչու*):
- Նախօրոք պատրաստվելու հիման վրա, տարբեր տեսակի ընտրություններ է անում և մեկնաբանում է դրանք (*օր., որ դերասանին է նախընտրում և ինչու, որտեղ է նախընտրում գնալ և ինչու և այլն*):
- Ուսումնական գործընթացում առաջացած անհրաժեշտությունների վերաբերյալ դիմում է ուսուցչին, համադասարանցիներին:
- Պատասխանում է կարդացած տեքստի հետ կապված հարցերին:

Օտ.բ.III.17. Աշակերտը գլուխ է հանում կենցաղային հաղորդակցական իրավիճակից:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Նախօրոք պատրաստվելու հիման վրա, մասնակցում է դերային խաղերին, ձևական իրավիճակներին, որոնք արտացոլում են սովորական կենցաղային իրավիճակը (*օր., հեռախոսով տեղեկատվություն ստանալ կինոցուցադրումների ժամանակացույցի մասին, արդարանալ ուշացման համար և այլն*):

Մենախոսություն

Օտ.բ.III.18. Աշակերտը կարող է խոսել՝ հենվելով օժանդակ միջոցների վրա:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Նախօրոք պատրաստվելու հիման վրա, պարզ լեզվով խոսում է ծանոթ թեմաներով (*ագատ ժամանակ, նորաձևություն և այլն*):
- Նախօրոք պատրաստվելու հիման վրա, պարզ լեզվով պատմում է իր հետ կատարված, լսած, կարդացած դեպքը:
- Հենվելով հանգուցային բառերի և լեզվական կառույցների վրա, հաղորդում է լսած տեքստի բովանդակությունը:

Օտ.բ.III.19. Աշակերտը տիրապետում է բազային լեզվական կարողություններին ու հմտություններին և գործածում է դրանք:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ինտերակցիայի ժամանակ պատշաճորեն է ընտրում սովորած լեզվական կառույցներն ու ձևակերպումները, կլիշեները:
- Ինտերակցիայի ժամանակ պատշաճորեն է գործածում մտերմական և բարեկիրթ ձևերը:
- Գործածում է խոսակցության թեմային համապատասխան սովորած բառապաշարը:
- Ազատ գործածում է պարզ և համադասական նախադասությունների կառուցվածքները:

- Կիրառում է հաճախակի գործածվող պարզ կառուցվածքով ստորադասական նախադասություններ:
- Սովորած լեզվական կառույցների մեջ պահպանում է շարահյուսական հարաբերակցությունները:
- Պատմություններ հաղորդելիս, անցյալ, ներկա և ապառնի ժամանակն արտահայտելու համար՝ փորձում է ճիշտ գործածել սովորած բայաձևերը:
- Գործածում է սուբյեկտիվ վերաբերմունք արտահայտող բայեր, բառերի համակցություններ (*ինձ դուր է գալիս, ինձ դուր չի գալիս, նախընտրում եմ, իմ կարծիքով*):
- Գործածում է հույզեր (*երջանկություն, զարմանք, զղջում և այլն*) արտահայտող բառապաշարային միավորներ, հաճախակի գործածվող լեզվական ձևակերպումներ:
- Չգացմունքներն ու հույզերը փոխանցելիս՝ կիրառում է կոնկրետ եղանակին բնորոշ հնչերանգը:

Խոսելու ռազմավարությունները

Օտ.բ.III.20. Աշակերտը կարող է դիմել տարբեր ռազմավարությունների՝ խոսողական խնդիրների արդյունավետ լուծմանը նպաստելու և բանավոր խոսքի կարողությունը կատարելագործելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Նախօրոք պատրաստում է անհրաժեշտ ռեսուրսները, ի մի է բերում մոդելները, արտահայտությունները, կլիշեները, հանգուցային բառերը:
- Լսարանի առջև ելույթ ունենալուց առաջ՝ փորձ է անում:
- Չհասկանալու դեպքում, խնդրում է մեկնաբանել, դանդաղ ու հստակ արտահայտել, կրկնել:
- Բառը մոռանալու/չիմանալու դեպքում գործածում է փոխհատուցման միջոցները (*օր., դիմախաղ, ձեռածություն, ձևակերպում/ նկարագրում է ենթադրված առարկան կամ մատնանշում է, թե ինչի համար է այն օգտագործվում/ և այլն*):

Ուղղություն. Մշակույթների երկխոսություն

Օտ.բ.III.21. Աշակերտը ճանաչում է նպատակային երկրի/երկրների մշակութային իրողությունները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ճանաչում է պետական խորհրդանիշները (*դրոշ, զինանշան, օրհներգ և այլն*):
- Անվանում է նպատակային երկրի/երկրների հետ կապված աշխարհագրական, ժողովրդագրական տվյալները, կարևոր պատմական իրադարձությունները (*օր., նպատակային երկրների մայրաքաղաքները, Գերմանիայի միավորման օրը, Բաստիլի գրավման օրը և այլն*):

- Ճանաչում է մշակութային ու ճարտարապետական նմուշները (օր., *Բրանդենբուրգի դարպասը, Փարիզի Աստվածամոր տաճարը, Բիզ Բենը, Օստանկինոյի աշտարակը և այլն*):
- Ճանաչում է պատմական անձանց և ականավոր մարդկանց (օր., *Վոլֆգանգ Գյոթեին, Շարլ դե Գոլին, Եղիսարեթ Երկրորդ թագուհուն, Ալեքսանդր Պուշկինին*), անվանում է նրանց գործունեության ոլորտները, դարաշրջանը, վաստակը:
- Անվանում է տոներն ու տոնակատարությունները:

Օտ.բ.III.22. Աշակերտը հետաքրքրություն և հանդուրժողական վերաբերմունք է ցուցաբերում օտարալեզու մշակութային ու սոցիալ-մշակութային յուրահատկությունների նկատմամբ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է հասարակության մեջ վարվելու ձևը, կանոնները և պահպանում է դրանք՝ կեղծակերպած իրավիճակներ ներկայացնելիս:
- Ճանաչում է ավանդույթները, ծեսերը, սովորույթները և համեմատում է հայրենիի հետ, գտնում է նմանությունները, տարբերությունները:
- Մշակութային յուրահատկությունները քննարկելիս՝ ճշգրտորեն է արտահայտում սեփական միտքը, հայեցակետը, վերաբերմունքը:

Ուղղություն. Օտար լեզվի գործնական կիրառություն (մեղիացիա)

Օտ.բ.III.23. Աշակերտը կարող է տարբեր տեսակի նախագծեր իրականացնել օտար լեզվով (օր., «Ցուցահանդես: Տոնական սեղան: Զրոսաշրջական բրոշյուր կազմել օտարերկրացիների համար, կամ տեղադրել դպրոցական կայք-էջում, ընկերանալ աշխարհի որևէ անկյունի այնպիսի դասարանի հետ, որը նույն լեզուն է սովորում» և այլն):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ուսուցչի հետ ձևակերպում է նախագիծը հաջողությամբ իրականացնելու չափանիշները:
- Խմբի անդամների հետ սահմանում և պլանավորում է իրականացվելիք փուլերը:
- Ուսուցչի հետ սահմանում է կատարման ժամկետները:
- Համախմբում է գիտելիքներն ու կարողությունները, սահմանում է, թե ինչ գիտելիքներ ու կարողություններ պետք է ձեռք բերի՝ տրված խնդիրները լուծելու համար:
- Խմբի անդամների հետ սահմանում և բաշխում է գործառույթները:
- Խմբի անդամների հետ փնտրում է, ընտրում և մշակում է տեղեկատվությունը:
- Ընտրում է նախագիծը ներկայացնելու ձևը:
- Իրականացնում է նախագիծը:
- Խմբի անդամների հետ փորձեր է անում, ուրիշ խմբի առջև անում է շնորհանդեսի կեղծակերպում: Նկատի առնելով մեկնաբանությունները, դիտողությունները, կատարելագործում է նախագիծը, ուղղումներ է անում:
- Խմբի անդամների հետ մշակում է նախագծի վերջնական տարբերակը և ներկայացնում է լսարանին:

Օտ.բ.III.24. Աշակերտը կարող է ուսուցչի օգնությամբ սահմանել առաջադրանքի պահանջները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Մասնակցում է առաջադրանքի հաջողությամբ կատարման չափանիշների ձևակերպմանը:
- Ընդգծում է առաջադրանքի կատարման փուլերը:
- Սահմանում է այն գիտելիքներն ու կարողությունները, որոնց տիրապետում է, և գործածում է դրանք առաջադրանքը կատարելու համար:
- Սահմանում է, թե ինչ գիտելիքներ ու կարողություններ պետք է ձեռք բերի՝ նոր առաջադրանքը կատարելու համար:
- Սահմանում է, թե ինչը հեշտ կլինի իր համար, ինչը՝ դժվար, երբ հարկավոր կլինի օգնություն, խորհրդակցություն:
- Առաջադրանքի յուրաքանչյուր փուլի համար սահմանում է անհրաժեշտ ռազմավարությունները:

Օտ.բ.III.25. Աշակերտը տիրապետում է հաջող ուսումնասիրությունն ապահովելու ռազմավարական կարողություններին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Մինչև աշխատանքն սկսելը՝ համախմբում է գիտելիքները:
- Մասնակցում է մտքերի փոխանակմանն այն մասին, թե ինչ մտտեցումներ կկիրառի այս կամ այն փուլում կոնկրետ խնդիրը լուծելու համար:
- Աշխատանքային գործընթացում ծառացած խնդիրները լուծելիս՝ փոփոխություններ է ներմուծում ռազմավարությունների մեջ:
- Անհրաժեշտության դեպքում օգնություն, խորհրդատվություն է խնդրում:
- Աշխատանքն ավարտելուց հետո, ներկայացնում է կիրառած ռազմավարությունները, համեմատում է ուրիշների կիրառած ռազմավարությունների հետ:
- Մասնակցում է կիրառված ռազմավարությունների արդյունավետության գնահատմանը:
- Համաձայն է փորձել ու կիրառել տարբեր ռազմավարություններ:
- Համեմատում է տարբեր լեզուների, այդ թվում նաև մայրենի լեզվի, ուսումնասիրման ժամանակ ստացած փորձառությունը: Սահմանում է, թե որքանով օգտակար կլինի այս կամ այն ռազմավարությունն այլ լեզու կամ այլ առարկա սովորելու գործընթացում:
- Վերլուծում է սխալների, թերությունների պատճառները:
- Մասնակցում է ինքնագնահատմանն ու համագնահատմանը *(աշակերտը և ուսուցիչը կամ աշակերտն ու աշակերտը միևնույն աշխատանքն ուղղում են միմյանցից անկախ):*
- Դիտարկում է արդյունքները և նշում է, թե որտեղ է առաջադիմել:
- Վերլուծում է թե՛ հաջողության, թե՛ անհաջողության պատճառները՝ հետագայում դրանք նկատի առնելու նպատակով:
- Անվանում է անհաջողության գործոնները, պատճառները *(օր., պատշաճ կերպով չի գործածել ռեսուրսը, չի կարողացել առանձնացնել գործունեության հիմնական խնդիրը, մեկ փուլ բաց է թողել, խնդիրն անհաղթահարելի է թվացել, անտրամադիր է եղել և այլն):*
- Նկատում և անվանում է սեփական թերությունները:
- Որոշում է, թե ինչ միջոցների պետք է դիմի թերությունները վերացնելու համար:
- Սեփական նախաձեռնությամբ դիմում է ուղղման միջոցներին:

Օտ.բ.III.26. Աշակերտը կարող է ռեսուրսներ գործածել՝ ուսումնական գործունեությանը նպաստելու նպատակով:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Արդյունավետ է օգտագործում դասագրքի ռեսուրսները *(օր., բառարանը, կառուցվածքային նմուշները, քերականական տեղեկատուն, պատկերագրողումները և այլն):*
- Տեղեկատվություն է գտնում ինչպես դպրոցում, այնպես էլ դպրոցից դուրս մատչելի ռեսուրսների մեջ *(օր., դասագրքի ակներևությունների, բառարանի մեջ, դպրոցի/գյուղի/քաղաքի գրադարանում, ուսուցչի, իրագեկ անձի միջոցով, համացանցում և այլն):*
- Տեղեկատվություն/ուսումնական նյութ է գտնում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների (S2S) միջոցով:
- Այս կամ այն նյութը/տեքստը կազմելու/մշակելու համար կիրառում է S2S-ը:
- Նախագծեր իրականացնելու համար կիրառում է S2S-ը:

Օտ.բ.III.27. Աշակերտը կարող է դիմել տարբեր եղանակների՝ բառապաշարն ամրապնդելու և հարստացնելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հետևողականորեն կրկնում է անցած բառապաշարային նյութը:
- Դուրս է գրում վատ յուրացրած բառապաշարային միավորները:
- Կիրառում է մտապահելու տարբեր եղանակներ *(մի քանի անգամ արտագրել, բարձրաձայն կրկնել, խմբավորել, զուգորդել նույն հիմքն ունեցող բառերը, հականիշների/հոմանիշների զույգերը, գործածել համատեքստում, խմբավորել ըստ թեմատիկայի և այլն):*

Օտ.բ.III.28. Աշակերտը կարող է ռազմավարություններ գործածել՝ քերականության յուրացումը հեշտացնելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դիտարկելով կոնկրետ օրինակներ՝ հայտնաբերում է քերականական կառույցները/օրենքները:
- Հայտնաբերած կառույցները/օրենքները գործածում է տարբեր համատեքստերում:
- Օտար և մայրենի լեզուների քերականական կառույցները/օրինաչափությունները համեմատում է իրար:
- Գործածում է և ինքն էլ է կազմում սխեմաներ, աղյուսակներ, կառուցվածքային մոդելներ:

Օտ.բ.III.29. Աշակերտը կարող է, արդյունքները կատարելագործելու նպատակով, համագործակցել համադասարանցիների, ուսուցչի և զույգի հետ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Խրախուսում է զույգին, խմբակիցներին:
- Օգնություն է խնդրում /առաջարկում:
- Խմբի անդամների հետ համաձայնեցված է գործում:

- Խմբի անդամների հետ քննարկումներ է անում (*խնդիրը լուծելու, գործառույթները բաշխելու վերաբերյալ*):
- Լսում է ուրիշների տեսակետները, արտահայտում է սեփական տեսակետը:
- Անհամաձայնության դեպքում փորձում է հասնել համաձայնության:
- Փորձում է սեփական լուրջ ներդրումներ ցուցաբերել ընդհանուր գործում:
- Հարկ եղած դեպքում մասնակցում է զույգի/խմբի անդամների համագնահատմանը:
- Քննադատում է գաղափարները, ոչ թե գաղափարների հեղինակներին, գնահատելիս ստույգություն է դրսևորում:
- Կոռեկտ կերպով է մատնանշում ուրիշների թույլ տված սխալները:
- Արդյունքների կատարելագործմանը նպաստելու համար՝ մասնակցում է համագնահատմանը:

Բազային և միջնակարգ աստիճան՝ IV մակարդակ (բ.IV)

Օտար լեզու

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների.

Լսել	Կարդալ	Գրել
<p>Օտ.բ.IV.1. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ օտարալեզու զրուցակիցների միջև առօրյա թեմաների շուրջ տեղի ունեցող ինտերակցիան (<i>երկխոսություն, հարցազրույց</i>):</p>	<p>Օտ.բ.IV.5. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ բազմաստիճան ցուցումները (<i>համալիր առաջադրանքի ցուցումներ, խորհուրդ, խաղի կանոններ, հանձնարարություններ և այլն</i>):</p>	<p>Օտ.բ.IV.12. Աշակերտը կարող է գրել տարբեր տեսակի տեքստեր, որոնց մեջ հանգամանորեն նկարագրում է սեփական փորձը (<i>օր., անձնական նամակ, օրագիր</i>):</p> <p>ա) Նամակ է գրում օտարերկրացի հասակակցին (<i>ձեռագիր կամ էլեկտրոնային տարբերակ</i>):</p>
<p>Օտ.բ.IV.2. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ համառոտ հրահանգները, տեղեկագրերը, հասարակական հավաքատեղերում արված հայտարարությունները:</p>	<p>Օտ.բ.IV.6. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ տարբեր տեսակի տեղեկատվական տեքստեր (<i>օր., մանկական հանրագիտարանի նյութը, երիտասարդական հանդեսի/օրաթերթի հոդվածը, ծանոթագրություն, տեղեկատու և այլն</i>):</p>	<p>բ) Անձնական նամակներ է գրում մերձավորին (<i>ձեռագիր կամ էլեկտրոնային տարբերակ</i>):</p> <p>գ) Օրագիր է գրում:</p>
<p>Օտ.բ.IV.3. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ ծանոթ թեմատիկային վերաբերող ռադիոհաղորդումները (<i>լրատվական հաղորդում</i>,</p>	<p>Օտ.բ.IV.7. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ</p>	<p>Օտ.բ.IV.13. Աշակերտը կարող է փոքրածավալ տեքստ կազմել, որտեղ դրսևորում է ինքնարտահայտման</p>

<p><i>ռեպրոտած գրոսաշրջական ճանապարհորդության մասին, հարցազրույց):</i></p> <p>Օտ.բ.IV.4. Աշակերտը կարող է դիմել տարբեր ռազմավարությունների՝ ունկնդրման խնդիրների արդյունավետ լուծմանը նպաստելու և լսելու կարողությունը կատարելագործելու համար:</p>	<p>հարմարեցված նորավեպը, պատմվածքը (<i>կամ պատմվածքի հատվածը</i>):</p> <p>Օտ.բ.IV.8. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ ծաղրաշարը:</p> <p>Օտ.բ.IV.9. Աշակերտը կարող է վերլուծել տեքստն ըստ կառուցվածքային բնութագրիչների, հասկանալ լեզվական ձևերը և դրանց գործառույթը բովանդակային համատեքստում:</p> <p>Օտ.բ.IV.10. Աշակերտը կարող է բարձրաձայն կարդալ տեքստը/հատվածը:</p> <p>Օտ.բ.IV.11. Աշակերտը կարող է դիմել տարբեր ռազմավարությունների՝ ընթերցանության խնդիրների արդյունավետ լուծմանը նպաստելու և ընթերցման կարողությունը կատարելագործելու համար:</p>	<p>կարողությունը:</p> <p>Օտ.բ.IV.14. Գրելիս աշակերտը կարող է պահպանել տեքստի կառուցվածքը, տիրապետում է բազային լեզվական կարողությունների ու հմտությունների և փորձում է գործածել դրանք:</p> <p>Օտ.բ.IV.15. Աշակերտը կարող է գրելու գործընթացի բոլոր փուլերում գործածել գրելու արդյունավետ ռազմավարություններ՝ արդյունքը կատարելագործելու համար (<i>նախապատրաստական տեքստի կազմում, տեքստի կատարելագործում</i>):</p>
---	---	--

Խոսել	Մշակույթների երկխոսություն	Օտար լեզվի գործնական կիրառություն (<i>մեդիացիա</i>)	Ուսանման ուսանում
<p>Օտ.բ.IV.16. Աշակերտը կարող է մասնակցել ինտերակցիային:</p> <p>Օտ.բ.IV.17. Աշակերտը գլուխ է հանում կենցաղային հաղորդակցական իրավիճակից:</p> <p>Օտ.բ.IV.18. Աշակերտը կարող է խոսել ծանոթ թեմաներով:</p>	<p>Օտ.բ.IV.21. Աշակերտը ճանաչում է նպատակային երկրի/երկրների մշակութային իրողությունները:</p> <p>Օտ.բ.IV.22. Աշակերտը ճանաչում է նպատակային երկրի/երկրների</p>	<p>Օտ.բ.IV.24. Աշակերտը կարող է տարբեր տեսակի նախագծեր իրականացնել օտար լեզվով (<i>օր., խնջույք կազմակերպել, հանդիպումներ նույն քաղաքի/տարածաշրջանի օտարալեզու գործիչների հետ, կազմել թանգարանի կատալոգի</i></p>	<p>Օտ.բ.IV.25. Աշակերտը կարող է ինքնուրույն սահմանել առաջադրանքի պահանջները:</p> <p>Օտ.բ.IV.26. Աշակերտը կարող է գործածել ռազմավարական կարողություններ՝ հաջող</p>

<p>Օտ.բ.IV.19. Աշակերտը տիրապետում է բազային լեզվական կարողություններին ու հմտություններին և գործածում է դրանք:</p> <p>Օտ.բ.IV.20. Աշակերտը կարող է դիմել տարբեր ռազմավարությունների՝ խոսողական խնդիրների արդյունավետ լուծմանը նպաստելու և բանավոր խոսքի կարողությունը կատարելագործելու համար:</p>	<p>սոցիալ-մշակութային իրողությունները:</p> <p>Օտ.բ.IV.23. Աշակերտը հետաքրքրություն և հանդուրժողական վերաբերմունք է ցուցաբերում մշակույթների յուրահատկությունների նկատմամբ:</p>	<p><i>օտարալեզու տարբերակը՝ դպրոցի կայք-էջում տեղադրելու համար և այլն):</i></p>	<p>ուսումնառությունն ապահովելու համար:</p> <p>Օտ.բ.IV.27. Աշակերտը կարող է ռեսուրսներ գործածել՝ ուսումնական գործունեությանը նպաստելու համար:</p> <p>Օտ.բ.IV.28. Աշակերտը կարող է մշակել տեղեկատվությունը՝ այն մտապահելու և արդյունավետ օգտագործելու նպատակով:</p> <p>Օտ.բ.IV.29. Աշակերտը կարող է համագործակցել համադասարանցիների, ուսուցչի, զույգի հետ, արդյունքները կատարելագործելու նպատակով:</p>
--	---	---	---

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ու դրանց ստուգիչները.

Ուղղություն. լսել

(Լսելու կարողությունը զարգացնելու համար՝ գործածվում են դիդակտիկացված ձայնագրություններ, որտեղ տեքստը հստակ է ու դանդաղ:)

Օտ.բ.IV.1. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ օտարալեզու գրուցակիցների միջև առօրյա թեմաների շուրջ տեղի ունեցող ինտերակցիան *(երկխոսություն, հարցազրույց):*

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է, թե որտեղ է տեղի ունենում խոսակցությունը:
- Ճանաչում է գրուցակիցներին:
- Հասկանում է խոսակցության հիմնական թեման/հարցերը:

- Ժողովում է կոնկրետ տեղեկատվությունը *(ով, ինչ, որտեղ, երբ, որը, ինչպիսի, որքան, ինչու և այլն)*:
- Հասկանում է գրուցակիցների վերաբերմունքը, գնահատականը այս կամ այն հարցի կապակցությամբ:
- Խոսակցության բովանդակությունից էլենելով՝ եզրակացություն է անում գրուցակիցների բնավորության, գործունեության, հետաքրքրությունների, սոցիալական վիճակի և նրանց հարաբերությունների *(օր., ընկերական, կոնֆլիկտային, գործնական, վաղեմի ծանոթներ, նոր ծանոթներ և այլն)* մասին:
- Հնչերանգով տարբերում է ասելիքի եղանակը *(օր., հարց, խնդրանք, պահանջ, նկատողություն, գղջում, բողոքարկում)*:
- Տարբերում է մտերմական և բարեկիրթ դիմելաձևերը:

Օտ.բ.IV.2. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ համառոտ հրահանգները, տեղեկագրերը, հասարակական հավաքատեղերում արված հայտարարությունները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է տեքստի նպատակը *(օր., գովազդ, զգուշացում, տեղեկացում և այլն)*:
- Ճանաչում է հասցեատիրոջը *(ով համար է հատկացված տեղեկատվությունը)*:
- Ժողովում է կոնկրետ տեղեկատվությունը *(օր., իրերի օգտագործման կանոններ, զբոսաշրջական գործակալության կոնկրետ առաջարկներ և այլն)*:

Օտ.բ.IV.3. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ ծանոթ թեմատիկային վերաբերող ռադիոհաղորդումները *(լրատվական հաղորդում, ռեպորտաժ զբոսաշրջական ճանապարհորդության մասին, հարցազրույց և այլն)*:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է հաղորդման խորագիրը *(օր., նորություններ արտասահմանից, սպորտի/մշակույթի նորություններ, մամուլի ակնարկ, ռեպորտաժ և այլն)*:
- Հասկանում է հիմնական թեման/հարցերը:
- Ժողովում է կոնկրետ տեղեկատվությունը *(ով, երբ, որտեղ, ինչպիսի, որքան և այլն)*:
- Հարցազրուցավարի և հարցվողի վերաբերմունքը, գնահատականները սահմանազատում է իրարից:
- Փաստերը տարբերում է վերաբերմունքներից, գնահատումից:
- Կոնկրետ մանրամասները կապում է հիմնական տեղեկատվության հետ:
- Անում է կոնկրետ եզրակացություններ:

Լսելու ռազմավարություններ

Օտ.բ.IV.4. Աշակերտը կարող է դիմել տարբեր ռազմավարությունների՝ ունկնդրման խնդիրների արդյունավետ լուծմանը նպաստելու և լսելու կարողությունը կատարելագործելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կենդանի խոսքը/ձայնագրությունը հասկանալու համար՝ օգտագործում է ոչ բառային տարրեր *(ձայնային տեմբր, հնչերանգ, դիմախաղ, ձեռածություն, տարբեր տեսակի աղմուկ, տրամաբանական շեշտեր, պատկերազարդում, սխեմա)*:

- Ծանոթ տարրերի (*հաղորդակցական իրավիճակ, համատեքստ*) հիման վրա հասկանում է անձանոթ բառերի, արտահայտությունների նշանակությունը:
- Նշում է անձանոթ բառերը՝ դրանց նշանակությունը պարզելու համար:
- Կոնկրետ տեղեկատվությունը հասկանալու համար կիրառում է ընտրողական ունկնդրական ռազմավարությունը:
- Նպատակին համապատասխան՝ փոխում է լսելու ռազմավարությունը. ընդհանուր բովանդակությունը հասկանալու համար, հենվում է ծանոթ բառերի, ոչ բառային տարրերի վրա և ընկալում հաղորդակցական իրավիճակը, համատեքստը, խոսակցության թեման: Կոնկրետ տեղեկատվությունը հասկանալու համար՝ ընտրում է կոնկրետ հենարաններ, ուշադրությունը կենտրոնացնում է դրանց վրա՝ անհրաժեշտ տեղեկատվությունը ժողովելու համար:
- Նկարագրում է, թե ինչ եղանակով/ինչպես կարողացավ լուծել ունկնդրման խնդիրը:
- Համեմատում է ուրիշների կիրառած եղանակի հետ և եզրակացնում, թե որ մոտեցումն էր ավելի արդյունավետ:
- Մտաբերում է, թե այլ առարկաներից ինչ տեսակի ռազմավարություններ է գործածել՝ տեղեկատվություն լսելիս, համեմատում է հին և նոր փորձառությունը, եզրակացություններ է անում:
- Քննարկում է, թե որ ուսումնական կամ կենսական իրավիճակում կարող են օգտակար լինել կիրառված/քննարկված ռազմավարությունները:
- Օտար լեզվով դիտում և լսում է իրեն հետաքրքրող հեռուստա-/ռադիոհաղորդումներ, ֆիլմեր:

Ուղղություն. կարդալ

Օտ.բ.IV.5. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ բազմաստիճան ցուցումները (*համալիր առաջադրանքի ցուցումներ, խորհուրդ, խաղի կանոններ, հանձնարարություններ և այլն*):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ճանաչում է հասցեատիրոջը:
- Հասկանում է կատարվելիք գործողությունները:
- Հասկանում է գործողությունների կատարման հաջորդականությունը:

Օտ.բ.IV.6. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ տարբեր տեսակի տեղեկատվական տեքստեր (*օր., մանկական հանրագիտարանի նյութը, երիտասարդական հանդեսի/օրաթերթի հոդվածը, ծանոթագրություն, տեղեկատու և այլն*):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է գլխավոր թեման/հարցերը:
- Հասկանում է տեքստի մակերեսային (ճշգրիտ) տրված փաստացի տեղեկատվությունը:
- Տեքստը բաժանում է իմաստային մասերի:
- Տեղեկատվությունը ժողովում է տարբերակելով և խմբավորում է տարբեր նշաններով:
- Փաստը սահմանազատում է ենթադրությունից, գնահատումից:
- Տեքստում տրված տեղեկատվությունը կապում է սեփական փորձի հետ:

Օտ.բ.IV.7. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ հարմարեցված նորավեպը, պատմվածքը (կամ պատմվածքի հատվածը):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Վերնագիրը հասկանալով կապում է տեքստի հետ:
- Ճանաչում է պատմողին, գործող անձանց:
- Հասկանում է գործողությունների հաջորդականությունը:
- Հասկանում է կոնկրետ տեղեկատվությունը *(ով, որտեղ, ինչու, ինչ նպատակով և այլն):*
- Հասկանում է գործող անձանց վարմունքի դրդապատճառն ու գնահատում է նրանց վարքը:
- Հասկանում է գործող անձանց միջև առկա հարաբերությունները:
- Ճշգրիտ կերպով տրված տեղեկատվության հիման վրա բնութագրում է գործող անձանց:
- Առանձնացնում է ստեղծագործության սյուժեի զարգացման աստիճանները *(սկիզբը, դեպքի ընթացքը, ավարտը):*

Օտ.բ.IV.8. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ ծաղրաշարը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Իրարից տարբերում է երկխոսության և պատմողական տեքստի ձևավորումը:
- Տեքստն ու նկարը կապում է իրար:
- Հասկանում է պատկերավոր ու տպագիր եղանակներով արտահայտված հույզերը, տրամադրվածությունը *(օր., խոշոր տառատեսակ՝ ճիչ, գայրույթ արտահայտելու համար և այլն):*
- Նկարների հիման վրա հասկանում է դրվագների բովանդակությունը:
- Ճանաչում է թե՛ նկարներում, թե՛ տեքստում ակնարկված մշակութային բնագավառի անուղղակի տեղեկատվությունը *(դարաշրջանը, երկիրը, պատմական իրադարձությունը, այս կամ այն սոցիալական շրջանի տիպիկ ներկայացուցիչն և այլն):*

Օտ.բ.IV.9. Աշակերտը կարող է վերլուծել տեքստն ըստ կառուցվածքային բնութագրիչների, հասկանալ լեզվական ձևերը և դրանց գործառնությունը բովանդակալից համատեքստում:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Գնահատում է, թե որքանով է տեքստի ձևավորումը նպաստում տեքստի բովանդակության ընկալմանը *(պատկերզարդման և տեքստի հարաբերակցությունը, տառատեսակի չափն ու տարատեսակությունը, տեքստի բաժանումը պարբերությունների/սյունակների, մասերի վերնագրումը և այլն):*
- Հայտնաբերում է դարձվածքներն ու բառերը, որոնք օժանդակում են ընթերցողին փաստն առանձնացնել գնահատումից/վերաբերմունքից/տեսակետից *(օր., միջանկյալ բառեր և արտահայտություններ, տարբեր եղանակներ արտահայտող բայեր):*
- Մեկնաբանում է, թե որտեղ են սկսվում և որտեղ են ավարտվում դեպքի զարգացման աստիճանները և ինչ նշաններ են կիրառվում դրանց համար *(օր., այն ժամանակ, երբ, շատ ժամանակ առաջ, նախ, հետո, վերջում...):*
- Տեքստը կամ դրա հատվածը բնութագրում է խոսողության գործընթացին մասնակցող անձանց քանակի համաձայն *(մենախոսություն, երկխոսություն, բազմախոսություն):*
- Նշում է, թե որ դեմքում է (I, թե՞ III) հեղինակը տեքստի մեջ:

- Ճանաչում է անհրաժեշտություն, խորհուրդ, արգելանք արտահայտող լեզվական կառույցները:
- Ճանաչում է գործողությունների ինտենսիվություն (հաճախականություն) արտահայտող լեզվական միջոցները (*օր., մակբայը, բայի եղանակը, կայուն բառակապակցությունը*):
- Ճանաչում է հույզեր (*օր., թախիծ, մխիթարանք, դժգոհություն, ուրախություն և այլն*) արտահայտող լեզվական միջոցները:
- Ճանաչում է ուղղություն, ուղղվածություն, տեղադրություն, հեռավորություն, դիրք արտահայտող լեզվական կառույցները, ձևակերպումները, բառերը:
- Ճանաչում է համեմատություն (*նմանություն, տարբերություն, համեմատականություն, գերադրականություն և այլն*) արտահայտող լեզվական միջոցները:
- Ճանաչում է համաժամանակություն և հաջորդականություն (*օր., նախորդ, հաջորդ*) արտահայտող լեզվական կառույցները:
- Ճանաչում է կամք ու ցանկություն, խորհուրդ (*արգելանք, պարտադրություն, թույլտվություն, խորհուրդ*) արտահայտող լեզվական կառույցները:
- Ճանաչում է տրամաբանական կապեր (*պատճառ, հետևանք, նպատակ, հակադրություն*) արտահայտող պարզ լեզվական կառույցները:
- Ճանաչում է իմաստային շաղկապման լեզվական միջոցները (*օր., փոխադարձ դերանուններ, մակբայներ, հոդեր, բառի բառապաշարային և իմաստաբանական կրկնություններ, հոմանիշ և հականիշ փոխարինումներ, բայ-ստորոցյալի ժամանակաձևերն ու եղանակների ձևեր և այլն*):

Օտ.բ.IV.10. Աշակերտը կարող է բարձրաձայն կարդալ տեքստը/հատվածը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ընտրում է տեքստ/հատված, որը ցանկանում է ընթերցել լսարանի առջև:
- Բարձրաձայն ընթերցումից առաջ վերլուծում է տեքստի բովանդակությունը:
- Բովանդակությանը համապատասխան փոխում է խոսողության տեմպը, ձայնային տեմբրը և բարձրությունը:
- Տեքստում արտացոլված հույզերն արտահայտում է հնչերանգով:
- Հնչերանգը գործածում է կետադրական նշանների գործառնությունով:
- Կարդալու ընթացքում փորձում է տեսողական կապ հաստատել լսարանի հետ:
- Խոսում է հասկանալի ու հստակ:

Կարդալու ռազմավարությունները

Օտ.բ.IV.11. Աշակերտը կարող է դիմել տարբեր ռազմավարությունների՝ ընթերցանության խնդիրների արդյունավետ լուծմանը նպաստելու և ընթերցման կարողությունը կատարելագործելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կիրառում է ճանաչողական ընթերցանության եղանակները. դիտարկում է տեքստի կառուցվածքը, վերնագիրը, պարբերությունները, պատկերազարդումները, մակագրությունները, ընդգծված բառերը և այլն: Կանգ չի առնում անծանոթ բառերի վրա:
- Կիրառում է ուսումնական ընթերցանության եղանակները. առաջին անգամ կարդալիս ամբողջությամբ ծանոթանում է տեքստին: Բարդությունները հաղթահարելու համար՝

վերընթերցում է անհասկանալի, բարդ կամ կարևոր մասերը: Համատեքստի, փորձառության կամ բառարանի միջոցով ճշտում է անծանոթ բառերի նշանակությունը:

- Կիրառում է որոնողական ընթերցանության եղանակները. կոնկրետ տեղեկատվությունը գտնելու նպատակով, արագ վերընթերցում է տեքստը, փնտրում է հենարաններ, հանգուցային բառերը, պարբերությունների առաջին նախադասությունները, խորագրերը, մեկնաբանությունները, սխեմաները, աղյուսակները և այլն:
- Ծանոթ տարրերի (*պատկերագրողումներ, ծանոթ հիմք, համատեքստ, մայրենի լեզվում հաստատված օտար բառեր և այլն*) հիման վրա, ինքնուրույն հասկանում է անծանոթ բառերի, արտահայտությունների նշանակությունը:
- Տարբեր տարրեր գործածելով (*օր., վերնագիր, պարբերությունների սկիզբ, հանգուցային բառեր, պարբերություններից մեկը, ընդգծված բառեր*), կարծիք է հայտնում տեքստի բովանդակության մասին:
- Նկարագրում է, թե ինչ եղանակով/ինչպես կարողացավ լուծել ընթերցանության խնդիրը:
- Համեմատում է ուրիշների ընտրած եղանակի հետ և եզրակացնում, թե որ մոտեցումն էր ավելի արդյունավետ:
- Մտաբերում է, թե այլ առարկաներից ինչ տեսակի ռազմավարություններ է գործածել տեղեկատվություն լսելիս, համեմատում է հին և նոր փորձառությունը, եզրակացություններ է անում:
- Քննարկում է, թե որ ուսումնական կամ կենսական իրավիճակում կարող են օգտակար լինել կիրառված/քննարկված ռազմավարությունները:
- Ընթերցանության խնդիրները լուծելու համար՝ օգտագործում է ինչպես մայրենի, այնպես էլ այլ լեզվից ստացած փորձառությունը:

Ուղղություն. գրել

Օտ.բ.IV.12. Աշակերտը կարող է գրել տարբեր տեսակի տեքստեր, որոնց մեջ հանգամանորեն նկարագրում է սեփական փորձը (*օր., անձնական նամակ, օրագիր*):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

ա) Նամակ է գրում օտարերկրացի հասակակցին (*ձեռագիր կամ էլեկտրոնային տարբերակ*):

- Պահպանում է նամակագրության պաշտոնական կոդեր (*դիմելու և հրաժեշտ տալու ձևակերպումները, ստորագրությունը, հասցեն, ամսաթիվը*):
- Ներկայացնում է սեփական անձը, ընտանիքին:
- Մատնանշում է իր տարածաշրջանի/քաղաքի/գյուղի տեղադրությունը:
- Նկարագրում է, թե ինչով է զբաղված, ինչպես է անցկացնում ազատ ժամանակը:
- Բնութագրում է իր ընկերներին:
- Հանգամանորեն նկարագրում է իր մարզի հետաքրքիր սովորույթները (*օր., տոն, երբ և որտեղ են նշում, ինչպես անցավ, ինչ էր անում ինքը, ինչպիսի տպավորություններ ունի*):
- Իրեն հետաքրքրող հարցերի պատասխանն ստանալու համար՝ հարցեր է տալիս հասցեատիրոջը:
- Հրավիրում է և բացատրում, թե ինչ կանեն, ինչպես կանցկացնեն ժամանակը՝ ժամանելու դեպքում:
- Հաջորդականությամբ, հստակ ու հասկանալի կերպով է ձևակերպում իր միտքը:

բ) Անձնական նամակներ է գրում մերձավորին (*ձեռագիր կամ էլեկտրոնային տարբերակ*):

- Պահպանում է նամակագրության պաշտոնական կողմը (*դիմելու և հրաժեշտ տալու ձևակերպումները, ստորագրությունը, հասցեն, ամսաթիվը*):
- Ողջունում է հասցեատիրոջը:
- Հաղորդում է իր անձնական կյանքի հետ կապված նորությունները:
- Նկարագրում է կոնկրետ դեպքեր (*օր., ինչպես իրեն դիմավորեց վաղուց չտեսած ընկերը, որտեղ, ինչ հանգամանքներում, ինչպես անցավ հանդիպումը, ինչով ավարտվեց*):
- Նկարագրում է սեփական վերաբերմունքը, տրամադրվածությունը, արձագանքները կոնկրետ իրավիճակի, երևույթի վերաբերյալ:
- Խորհուրդ, օգնություն է խնդրում/տալիս:
- Հաջորդականությամբ, հստակ ու հասկանալի կերպով է ձևակերպում իր միտքը:

գ) Օրագիր է գրում:

- Մտաբերում և հաղորդում է կոնկրետ դեպք, պատմություն:
- Հանգամանորեն նկարագրում է իրադրությունը:
- Նկարագրում է սեփական հուզական արձագանքները, տրամադրվածությունը:
- Սեփական դիրքորոշմամբ գնահատում է փաստերը, վարմունքները, երևույթները:
- Թվագրում է գրառումները:

Օտ.բ.IV.13. Աշակերտը կարող է փոքրածավալ տեքստ կազմել, որտեղ դրսևորում է ինքնարտահայտման կարողությունը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կոնկրետ հարցի վերաբերյալ ձևակերպում է սեփական վերաբերմունքը և մեկնաբանում է այն:
- Նկարագրում է տեսածից, կարդացածից ստացած տպավորությունները:
- Պատմության ավարտը փոխում է սեփական երևակայությամբ:
- Մի քանի բառով ընդարձակում է հաղորդված դեպքը:

Օտ.բ.IV.14. Գրելիս աշակերտը կարող է պահպանել տեքստի կառուցվածքը, տիրապետում է բազային լեզվական կարողությունների ու հմտությունների և փորձում է գործածել դրանք:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Գործածում է կամք ու ցանկություն, խորհուրդ արտահայտող լեզվական կառույցները, ձևակերպումները:
- Ներկա, ապառնի, անցյալ ժամանակներն արտահայտելիս ազատ գործածում է բայաձևերը:
- Տրամաբանական կապերն (*պատճառ, հետևանք, նպատակ, հակադրություն, պայմանականություն*) արտահայտելու համար, գործածում է պարզ լեզվական կառույցներ:
- Հաղորդակցական իրավիճակի/նպատակի համապատասխան՝ գործածում է սովորած լեզվական կառույցները, կլիշեները, ձևակերպումները:
- Կիրառում է հույզեր, վերաբերմունք, տպավորություն արտահայտող հաճախակի գործածության լեզվական միջոցներ (*բառապաշարային միավորներ, կայուն բառակապակցություններ, կլիշեներ, լեզվական կառույցներ*):

- Գործողությունների համաժամանակությունն ու հաջորդականությունը *(նախորդող/հաջորդող գործողությունների)* արտահայտելու համար՝ գործածում է պարզ կառույցներ:
- Անձին, առարկան, երևույթը բնութագրելիս ընտրում է պատշաճ լեզվական միջոցներ *(օր., որոշիչներ, համեմատություններ)*:
- Տեքստ կազմելիս պահպանում է իմաստային շաղկապման պարզ լեզվական ու քերականական միջոցները, համապատասխան համատեքստում անունները ճշգրտորեն է փոխարինում դերանուններով ու պարզ մակբայներով:
- Նկարագրելիս ու բնութագրելիս գործածում է տարբեր տեսակի համեմատություններ:
- Պահպանում է կետադրական *(բարդ նախադասություններում, երկխոսությունը փոխանցելիս)* և ուղագրական նորմերը:

Գրելու ռազմավարությունները

Օտ.բ.IV.15. Աշակերտը կարող է գրելու գործընթացի բոլոր փուլերում գործածել գրելու արդյունավետ ռազմավարություններ՝ արդյունքը կատարելագործելու համար *(նախապատրաստական տեքստի կազմում, տեքստի կատարելագործում)*:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Նկատի առնելով տրված հաղորդակցական խնդիրը՝ հիշողության մեջ փնտրում է անհրաժեշտ տեղեկատվությունը, այսինքն՝ ակտիվացնում է անհրաժեշտ գիտելիքները ինչպես լեզվական, այնպես էլ իմաստային և հաղորդակցական տեսակետից. ինչ գիտելիքների է տիրապետում ընդարձակվելիք սյուժեի կապակցությամբ, ինչպես նաև տեքստի տեսակի և դրա կառուցվածքային ու լեզվական բնութագրիչների կապակցությամբ: Մտաբերում է այլ լեզուներից ստացած փորձառությունը:
- Անհրաժեշտության դեպքում, ռեսուրսների մեջ լրացուցիչ տեղեկատվություն է փնտրում:
- Դիմում է «մտավոր գրոհին» և դուրս է գրում մտքին եկած բոլոր գաղափարները, որոնք առնչվում են գրավոր թեմատիկայի հետ:
- Տեղեկատվություններ ու գաղափարներ է ընտրում: Մտածում է, թե ինչպես կապի դրանք իրար, այսինքն՝ պլան մշակի:
- Պլանի հիման վրա տեքստ է գրում:
- Գրավորն ուղղելիս փորձում է գնահատել հասցեատիրոջ, այսինքն՝ պոտենցիալ ընթերցողի տեսանկյունից, թե որքանով արդյունավետորեն է գրավորի մեջ արտացոլվել հաղորդակցության նպատակը:
- Փորձում է ուղղել իմաստային թերությունները, որոնք կարող են խնդիրներ ստեղծել ընթերցողի համար և, որոշ չափով, խափանել հաղորդակցությունը. ավելացնում կամ հանում է բառը, նախադասությունը, տեքստի մի հատվածը, փոխում է կառուցվածքը, կատարելագործում է ձևավորումը:
- Ուղղում է քերականական և ուղագրական սխալները: Ուսումնական ռեսուրսներ է գործածում դրա համար:
- Կարդալ է տալիս համադասարանցուն: Նկատի առնելով նրա դիտողությունները՝ կատարելագործում է գրավորը:
- Սրբագրում է գրավորը:
- Մտաբերում է, թե այլ առարկաներից ինչ տեսակի ռազմավարություններ է գործածել, տեքստ կազմելիս, համեմատում է հին և նոր փորձառությունը, եզրակացություններ է անում:

- Քննարկում է, թե որ ուսումնական կամ կենսական իրավիճակում կարող են օգտակար լինել կիրառված ռազմավարությունները:

Ուղղություն. խոսել

Երկխոսություն

Օտ.բ.IV.16. Աշակերտը կարող է մասնակցել հնտերակցիային:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Առանց նախապատրաստվելու, կարող է փոխանակել իրեն լավ ծանոթ թեմատիկայի վերաբերյալ տեղեկատվությունը:
- Այս կամ այն վիճահարույց հարցի վերաբերյալ, առանց պատրաստվելու, արտահայտում է սեփական վերաբերմունքը, դիրքորոշումը և մեկնաբանում է այն *(ինչն է դուր գալիս/ինչը դուր չի գալիս, ինչու)*:
- Կոնկրետ ընտրություն է անում և մեկնաբանում է այն *(օր., որ հեռուստահաղորդումն է նախընտրում և ինչու, որ երկրում է ցանկանում ճանապարհորդել և ինչու և այլն)*:
- Կարող է արձագանքել գրուցակիցների ռեպլիկաներին՝ ճշտում է տեղեկատվությունը, մեկնաբանություն է անում:
- Արտահայտում է սեփական հույզերը, տրամադրվածությունը:
- Կարող է, սեփական դիրքորոշումից ելնելով, գնահատել երևույթները, փաստերը, վարքագծերը:
- Ծանոթ արդիական հարցի վերաբերյալ հարցազրույց է անցկացնում/տալիս:

Օտ.բ.IV.17. Աշակերտը գլուխ է հանում կենցաղային հաղորդակցական իրավիճակից:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Առանց պատրաստվելու, մասնակցում է դերախաղերին, ձևական իրավիճակներին, որոնց մեջ արտացոլում է սովորական կենցաղային իրավիճակը *(ընկերները պլանավորում են շաբաթ-կիրակի օրերը էքսկուրսիայի գնալ, քննարկում են, թե ուր և ինչպես կգնան, ինչ կանեն այնտեղ, որտեղ կճաշեն և այլն)*:
- Նախօրոք պատրաստվելու հիման վրա, մասնակցում է այնպիսի ձևական իրավիճակների, որոնք անսպասելի կենցաղային իրադրություն են արտացոլում *(օր., մի մարդ զանգահարում է մյուսին և հաղորդում, որ պատրաստվում է գնալ նրա մոտ, տարածաշրջանը ուսումնասիրելու նպատակով)*:

Մենախոսություն

Օտ.բ.IV.18. Աշակերտը կարող է խոսել ծանոթ թեմաներով:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Փոխանցում է լսած/կարդացած տեքստի բովանդակությունը:
- Հաղորդում է որևէ դեպքի կարևոր մանրամասները:
- Դեպք է պատմում:
- Նկարագրում է իրական կամ երևակայական երևույթը:

- Հստակ ու հասկանալի կերպով է ձևակերպում միտքը:

Օտ.բ.IV.19. Աշակերտը տիրապետում է բազային լեզվական կարողություններին ու հմտություններին և գործածում է դրանք:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ինտերակցիայի ժամանակ համապատասխանաբար է ընտրում սովորած լեզվական կառույցներն ու ձևակերպումները, կլիշեները:
- Ինտերակցիայի ժամանակ համապատասխանաբար է գործածում մտերմական ու բարեկիրթ ձևակերպումները:
- Գործածում է խոսակցության թեմայի համապատասխան սովորած բառապաշարը:
- Կիրառում է հաճախ գործածվող պարզ կառուցվածքով ստորադասական նախադասություններ:
- Գործածում է կամք ու ցանկություն, խորհուրդ արտահայտող լեզվական կառույցներ, ձևակերպումներ:
- Պահպանում է սովորած լեզվական կառույցների շարահյուսական հարաբերակցությունները:
- Դեպքեր հաղորդելիս՝ անցյալ, ներկա և ապառնի ժամանակներն արտահայտելու համար, ճշգրտորեն է գործածում սովորած բայաձևերը:
- Գործածում է հույզեր, վերաբերմունք, տպավորություն արտահայտող հաճախակի գործածության լեզվական միջոցները (*օր., բառապաշարային միավորներ, կայուն բառակապակցություններ, կլիշեներ, լեզվական կառույցներ*):
- Գործողությունների համաժամանակությունն ու հաջորդականությունը (*նախորդող/հաջորդող գործողություններ*) արտահայտելու համար, պարզ կառույցներ է գործածում:
- Անձին, առարկան, երևույթը բնութագրելիս՝ ընտրում է պատշաճ լեզվական միջոցներ (*որոշիչներ, համեմատություններ, ածական դերբայներ*):
- Ջգացմունքներ ու հույզեր փոխանցելիս՝ գործածում է կոնկրետ եղանակին բնորոշ հնչերանգը:
- Տրամաբանական կապերն արտահայտելու համար, գործածում է պարզ լեզվական կառույցներ:

Խոսելու ռազմավարությունները

Օտ.բ.IV.20. Աշակերտը կարող է դիմել տարբեր ռազմավարությունների՝ խոսողական խնդիրների արդյունավետ լուծմանը նպաստելու և բանավոր խոսքի կարողությունը կատարելագործելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Նախօրոք պատրաստում է անհրաժեշտ ռեսուրսները, ի մի է բերում մոդելները, արտահայտությունները, կլիշեները, հանգուցային բառերը:
- Լսարանի առջև ելույթ ունենալուց առաջ, փորձ է անում:
- Չհասկանալու դեպքում խնդրում է մեկնաբանել, արտաբերել դանդաղ ու հասկանալի, կրկնել:

- Բառը մոռանալու/չիմանալու դեպքում գործածում է փոխհատուցման միջոցները (*օր., դիմահաղ, ձեռածություն, ձևակերպում/ նկարագրում է ենթադրված առարկան կամ մատնանշում է, թե ինչի համար է այն օգտագործվում/ ն այլն*):
- Խոսքային խնդիրները լուծելու համար՝ գործածում է այլ լեզուներից ստացած փորձը:
- Վերլուծում է այն գործոնները, որոնք նպաստել են հաջողությանը կամ անհաջողություն են բերել բանավոր ելույթի ժամանակ, և ուսուցչի հետ կազմում է ուղղելու պլանը:

Ուղղություն. Մշակույթների երկխոսություն

Օտ.բ.IV.21. Աշակերտը ճանաչում է նպատակային երկրի/երկրների մշակութային իրողությունները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Անվանում է նպատակային երկրի/երկրների հետ կապված աշխարհագրական, ժողովրդագրական տվյալները, կարևոր պատմական իրադարձությունները (*օր., նպատակային երկրների մայրաքաղաքները, Գերմանիայի միավորման օրը, Հարյուրամյա պատերազմը ն այլն*):
- Ճանաչում է մշակութային ու ճարտարապետական նմուշները (*օր., Բրանդենբուրգի դարպասը, Վերսալի պալատը, Բիգ Բենը, Օստանկինոյի աշտարակը ն այլն*):
- Ճանաչում է պատմական անձանց և ականավոր մարդկանց (*օր., Վոլֆգանգ Գյոթեին, Լուի XIV –ին, Նապոլեոնին, Եղիսաբեթ Երկրորդ թագուհուն, Ալեքսանդր Պուշկինին*), անվանում է նրանց գործունեության ոլորտը, դարաշրջանը, վաստակը:
- Անվանում է տոներն ու տոնակատարությունները:

Օտ.բ.IV.22. Աշակերտը ճանաչում է նպատակային երկրի/երկրների սոցիալ-մշակութային իրողությունները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ճանաչում է կենցաղային իրավիճակներում վարվելու կանոնները (*օր., ողջունել, հրաժեշտ տալ, հրավիրել, հյուրընկալվել, խնջույքի ծիսակատարությունները ն այլն*):
- Ճանաչում է հասարակության մեջ վարվելու կանոնները:
- Ճանաչում է նպատակային երկրների ավանդույթները, ծեսերը, սովորույթները:

Օտ.բ.IV.23. Աշակերտը հետաքրքրություն և հանդուրժողական վերաբերմունք է ցուցաբերում մշակույթների յուրահատկությունների նկատմամբ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Զուգահեռներ է անցկացնում օտար և հայրենի մշակույթների միջև, գտնում է նմանությունները, տարբերությունները:
- Մշակութային յուրահատկությունները քննարկելիս՝ ճշգրտորեն է արտահայտում սեփական միտքը, հայեցակետը, վերաբերմունքը:

Ուղղություն. Օտար լեզվի գործնական կիրառություն (մեդիացիա)

Օտ.բ.IV.24. Աշակերտը կարող է տարբեր տեսակի նախագծեր իրականացնել օտար լեզվով (օր., խնջույք կազմակերպել, հանդիպումներ նույն քաղաքի/տարածաշրջանի օտարալեզու գործիչների հետ, կազմել թանգարանի կատալոգի օտարալեզու տարբերակը՝ դպրոցի կայք-էջում տեղադրելու համար և այլն):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ուսուցչի հետ ձևակերպում է նախագիծը հաջողությամբ իրականացնելու չափանիշները:
- Խմբի անդամների հետ սահմանում և պլանավորում է իրականացվելիք փուլերը: Այնուհետև, խմբերը ծանոթանում են կազմված պլաններին, համեմատում են, կատարելագործում:
- Ուսուցչի հետ սահմանում է կատարման ժամկետները:
- Համախմբում է գիտելիքներն ու կարողությունները, սահմանում է, թե ինչ գիտելիքներ ու կարողություններ պետք է ձեռք բերի, տրված խնդիրները լուծելու համար:
- Խմբի անդամների հետ սահմանում և բաշխում է գործառույթները:
- Խմբի անդամների հետ փնտրում է, ընտրում և մշակում է տեղեկատվությունը:
- Ընտրում է նախագիծը ներկայացնելու ձևը:
- Իրականացնում է նախագիծը:
- Խմբի անդամների հետ փորձեր է անում, ուրիշ խմբի առջև կեղծակերպում է ներկայացումը: Նկատի առնելով մեկնաբանությունները, նկատողությունները, կատարելագործում է նախագիծը, ուղղումներ է ներմուծում:
- Խմբի անդամների հետ մշակում է նախագծի վերջնական տարբերակը և ներկայացնում է լսարանին:

Ուղղություն. Ուսանման ուսանում

Օտ.բ.IV.25. Աշակերտը կարող է ինքնուրույն սահմանել առաջադրանքի պահանջները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Մասնակցում է առաջադրանքի հաջողությամբ կատարման չափանիշները ձևակերպելու գործում:
- Ընդգծում է առաջադրանքի կատարման փուլերը:
- Սահմանում է այն գիտելիքներն ու կարողությունները, որոնց տիրապետում է, և գործածում է դրանք առաջադրանքը կատարելու համար:
- Սահմանում է, թե ինչ գիտելիքներ ու կարողություններ պետք է ձեռք բերի նոր առաջադրանքը կատարելու համար:
- Սահմանում է, թե ինչը հեշտ կլինի իր համար, ինչը՝ դժվար, երբ հարկավոր կլինի օգնություն, խորհրդակցություն:
- Առաջադրանքի յուրաքանչյուր փուլի համար սահմանում է անհրաժեշտ ռազմավարությունները:

Օտ.բ.IV.26. Աշակերտը կարող է գործածել ռազմավարական կարողություններ՝ հաջող ուսումնառությունն ապահովելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Աշխատանքն սկսելուց առաջ համախմբում է գիտելիքները:

- Մասնակցում է մտքերի փոխանակմանն այն մասին, թե ինչ մոտեցումներ կկիրառի այս կամ այն փուլում կոնկրետ խնդիրը լուծելու համար:
- Աշխատանքային գործընթացում ծառայած խնդիրները լուծելիս՝ փոփոխություններ է ներմուծում ռազմավարությունների մեջ:
- Անհրաժեշտության դեպքում օգնություն, խորհրդատվություն է խնդրում:
- Աշխատանքն ավարտելուց հետո, ներկայացնում է կիրառած ռազմավարությունները, դրանք համեմատում է ուրիշների կիրառած ռազմավարությունների հետ:
- Մասնակցում է կիրառված ռազմավարությունների արդյունավետության գնահատմանը:
- Համաձայն է փորձել ու կիրառել տարբեր ռազմավարություններ:
- Համեմատում է տարբեր լեզուների, այդ թվում նաև մայրենի լեզվի, ուսումնասիրման ժամանակ ստացած փորձառությունը: Սահմանում է, թե որքանով օգտակար կլինի այս կամ այն ռազմավարությունն այլ լեզու կամ այլ առարկա սովորելու գործընթացում:
- Վերլուծում է սխալների, թերությունների պատճառները:
- Մասնակցում է ինքնագնահատմանն ու համագնահատմանը *(աշակերտը և ուսուցիչը կամ աշակերտն ու աշակերտը միևնույն աշխատանքն ուղղում են միմյանցից անկախ):*
- Արդյունքների դիտարկման հետևանքով նշում է, թե որտեղ է առաջադիմել:
- Վերլուծում է թե՛ հաջողության, թե՛ անհաջողության պատճառները՝ հետագայում դրանք նկատի առնելու նպատակով:
- Անվանում է անհաջողության գործոնները, պատճառները *(օր., պատշաճ կերպով չի գործածել ռեսուրսը, չի կարողացել առանձնացնել գործունեության հիմնական խնդիրը, մեկ փուլ բաց է թողել, խնդիրն անհաղթահարելի է թվացել, անտրամադիր է եղել և այլն):*
- Նկատում և անվանում է սեփական թերությունները:
- Որոշում է, թե ինչ միջոցների պետք է դիմի թերությունները վերացնելու համար:
- Սեփական նախաձեռնությամբ դիմում է ուղղման միջոցներին:

Օտ.բ.IV.27. Աշակերտը կարող է ռեսուրսներ գործածել՝ ուսումնական գործունեությանը նպաստելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Արդյունավետ է օգտագործում դասագրքի ռեսուրսները *(օր., բառարանը, կառուցվածքային նմուշները, քերականական տեղեկատուն, պատկերազարդումները և այլն):*
- Տեղեկատվություն է գտնում ինչպես դպրոցում, այնպես էլ դպրոցից դուրս մատչելի ռեսուրսների մեջ *(օր., դասագրքի ակնբերությունները, բառարան, դպրոցի/գյուղի/քաղաքի գրադարան, ուսուցիչ, իրազեկ անձ, համացանց և այլն):*
- Տեղեկատվություն/ուսումնական նյութ է գտնում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների (S2S) միջոցով:
- Այս կամ այն նյութը/տեքստը կազմելու/մշակելու համար կիրառում է S2S-ը:
- Նախագծեր իրականացնելու համար կիրառում է S2S-ը:

Օտ.բ.IV.28. Աշակերտը կարող է մշակել տեղեկատվությունը՝ այն մտապահելու և արդյունավետ օգտագործելու նպատակով:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ընկալմանն ու մտապահելուն նպաստելու համար՝ դիմում է տեղեկատվության կազմակերպման տարբեր եղանակների *(իմաստաբանական քարտեզ, սխեմատիկ*

գրառումներ, աղյուսակ, գրաֆիկ, տվյալների բազա և այլն), տեղեկատվության տարբեր մասերի միջև տրամաբանական կապեր է հայտնաբերում:

- Ձեռք բերած տեղեկատվությունը տեսակավորում է/խմբավորում է ըստ տարբեր պարամետրերի:

Օտ.բ.IV.29. Աշակերտը կարող է համագործակցել համադասարանցիների, ուսուցչի, գույզի հետ՝ արդյունքները կատարելագործելու նպատակով:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Խրախուսում է գույզին, խմբակիցներին:
- Օգնություն է խնդրում /առաջարկում:
- Գործում է խմբի անդամների հետ համաձայնեցված: Դատողություններ է անում խմբակիցների հետ (*խնդիրը լուծելու, գործառույթները բաշխելու համար*):
- Լսում է ուրիշների տեսակետները, արտահայտում է սեփական տեսակետը:
- Անհամաձայնության դեպքում փորձում է հասնել համաձայնության:
- Փորձում է սեփական լուրջ ներդրել ընդհանուր գործում:
- Հարկ եղած դեպքում մասնակցում է գույզի/խմբի անդամների համագնահատմանը:
- Քննադատում է գաղափարները, ոչ թե գաղափարների հեղինակներին, գնահատելիս քաղաքավարություն է դրսևորում:
- Քաղաքավարի կերպով է մատնանշում ուրիշների թույլ տրված սխալները:
- Արդյունքների կատարելագործմանը նպաստելու համար՝ մասնակցում է համագնահատմանը:

Բազային և միջնակարգ աստիճան՝ V մակարդակ (բ.V)

Օտար լեզու

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների.

Լսել	Կարդալ	Գրել
Օտ.բ.V.1. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ օտարալեզու զրուցակիցների միջև տարբեր թեմաների շուրջ տեղի ունեցող ինտերակցիան (<i>երկխոսություն, հարցազրույց</i>):	Օտ.բ.V.4. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ տարբեր տեսակի ոլորտային ճանաչողական տեքստեր (<i>պատմության, մշակույթի, հնագիտության, աշխարհագրության, բնապահպանության և այլ ոլորտներից</i>):	Օտ.բ.V.11. Աշակերտը կարող է գրել ակնարկ/նամակ, որի մեջ հաղորդում է սեփական տպավորությունները, տեսակետները (<i>օր., ճանապարհորդության տպավորությունները, արձագանք տեսած բեմադրությանը/անցկացված միջոցառմանը</i>):
Օտ.բ.V.2. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ ծանոթ	Օտ.բ.V.5. Աշակերտը կարող է կենսագրություն կարդալ ու հասկանալ այն:	Օտ.բ.V.12. Աշակերտը կարող է գովազդային բնույթի

<p>թեմատիկային վերաբերող տարբեր տեսակի ձայնագրություններ (<i>լրատվական հաղորդում, հարցազրույց</i>):</p> <p>Օտ.բ.V.3. Աշակերտը կարող է դիմել տարբեր ռազմավարությունների՝ ունկնդրման խնդիրների արդյունավետ լուծմանը նպաստելու և լսելու կարողությունը կատարելագործելու համար:</p>	<p>Օտ.բ.V.6. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ հարմարեցված պատմվածքը/նորավեպը:</p> <p>Օտ.բ.V.7. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ ծաղրաշարը:</p> <p>Օտ.բ.V.8. Աշակերտը կարող է հայտնաբերել տեքստի կառուցվածքային բնութագրիչները, սովորած լեզվական ձևերը և դրանց գործառույթը բովանդակալից համատեքստում:</p> <p>Օտ.բ.V.9. Աշակերտը կարող է բարձրաձայն կարդալ տեքստը/հատվածը:</p> <p>Օտ.բ.V.10. Աշակերտը կարող է դիմել տարբեր ռազմավարությունների՝ ընթերցանության խնդիրների արդյունավետ լուծմանը նպաստելու և ընթերցման կարողությունը կատարելագործելու համար:</p>	<p>տեղեկատվական տեքստ գրել (<i>զբոսաշրջական ուղեցույց, տեղեկատվական գրքույկ</i>):</p> <p>Օտ.բ.V.13. Գրելիս աշակերտը կարող է կազմել տեքստի կառուցվածքը, տիրապետում է բազային լեզվական կարողությունների ու հմտությունների և կիրառում է դրանք գործնականորեն:</p> <p>Օտ.բ.V.14. Աշակերտը տիրապետում է գրելու արդյունավետ ռազմավարությունների և կիրառում է դրանք գրելու գործընթացի բոլոր փուլերում (<i>նախապատրաստական, տեքստի կազմում, տեքստի կատարելագործում</i>):</p>
---	--	---

Խոսել	Մշակույթների երկխոսություն	Օտար լեզվի գործնական կիրառություն (մեդիացիա)	Ուսանման ուսանում
<p><i>Երկխոսություն</i></p> <p>Օտ.բ.V.15. Աշակերտը կարող է մասնակցել ծանոթ թեմաներին, հարցերին վերաբերող ինտերակցիային:</p>	<p>Օտ.բ.V.21. Աշակերտը հետաքրքրություն և հանդուրժողական վերաբերմունք է ցուցաբերում մշակույթների յուրահատկությունների նկատմամբ:</p>	<p>Օտ.բ.V.22. Աշակերտը կարող է օտար լեզուն գործածել կրթական նպատակով:</p>	<p>Օտ.բ.V.23. Աշակերտը կարող է ինքնուրույն սահմանել առաջադրանքի պահանջները:</p> <p>Օտ.բ.V.24. Աշակերտը կարող է գործածել ռազմավարական</p>

<p>Օտ.բ.V.16. Աշակերտը գլուխ է հանում կենցաղային հաղորդակցական իրավիճակից:</p> <p><i>Մենախոսություն</i></p> <p>Օտ.բ.V.17. Աշակերտը կարող է խոսել ծանոթ թեմաներով:</p> <p>Օտ.բ.V.18. Աշակերտը կարող է բանավոր զեկուցում ներկայացնել (<i>շնորհանդես</i>) իրեն հետաքրքրող թեմայով:</p> <p>Օտ.բ.V.19. Աշակերտը տիրապետում է բազային լեզվական կարողություններին ու հմտություններին և գործածում է դրանք:</p> <p>Օտ.բ.V.20. Աշակերտը կարող է դիմել տարբեր ռազմավարությունների՝ խոսողական խնդիրներն արդյունավետ լուծելու և բանավոր խոսքի կարողությունը կատարելագործելու համար:</p>			<p>կարողությունները՝ հաջող ուսումնառությունն ապահովելու համար:</p> <p>Օտ.բ.V.25. Աշակերտը կարող է ռեսուրսներ գործածել՝ ուսումնական գործունեությանը նպաստելու համար:</p> <p>Օտ.բ.V.26. Աշակերտը կարող է մշակել տեղեկատվությունը, այն մտապահելու և արդյունավետ օգտագործելու նպատակով:</p> <p>Օտ.բ.V.27. Աշակերտը կարող է համագործակցել համադասարանցիների, ուսուցչի, գույզի հետ՝ արդյունքները կատարելագործելու նպատակով:</p>
---	--	--	--

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ու դրանց ստուգիչները.

Ուղղություն. լսել

(Լսելու կարողությունը զարգացնելու համար գործածվում են դիդակտիկացված ձայնագրություններ/տեսագրություններ:)

Օտ.բ.V.1. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ օտարալեզու զրուցակիցների միջև տարբեր թեմաների շուրջ տեղի ունեցող ինտերակցիան (*երկխոսություն, հարցազրույց*):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է, թե որտեղ է տեղի ունենում խոսակցությունը:
- Ճանաչում է գրուցակիցներին:
- Հասկանում է խոսակցության հիմնական թեման/հարցերը:
- Ժողովում է կոնկրետ տեղեկատվությունը (*ով, ինչ, որտեղ, երբ, որը, ինչպիսի, որքան, ինչու և այլն*):
- Հասկանում է գրուցակիցների վերաբերմունքը, գնահատականը այս կամ այն հարցի կապակցությամբ:
- Խոսակցության բովանդակությունից ելնելով՝ եզրակացություն է անում գրուցակիցների բնավորության, գործունեության, հետաքրքրությունների, սոցիալական վիճակի և նրանց հարաբերությունների (*օր., ընկերական, կոնֆլիկտային, գործնական, վաղեմի ծանոթներ, նոր ծանոթներ և այլն*) մասին:
- Հնչերանգով տարբերում է ասելիքի եղանակը (*օր., հարց, խնդրանք, պահանջ, դիտողություն, ակնարկ, բողոքարկում*):
- Տարբերում է մտերմական և բարեկիրթ դիմելաձևերը:

Օտ.բ.V.2. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ ծանոթ թեմատիկային վերաբերող տարբեր տեսակի ձայնագրություններ/տեսագրություններ (լրատվական հաղորդում, զբոսաշրջական ռեպորտաժ, հարցազրույց):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է հաղորդման խորագիրը (*օր., նորություններ արտասահմանից, սպորտի/մշակույթի նորություններ, մամուլի ակնարկ, ռեպորտաժ և այլն*):
- Հասկանում է հիմնական թեման/հարցերը:
- Ժողովում է կոնկրետ տեղեկատվությունը (*ով, երբ, որտեղ, ինչպիսի, որքան և այլն*):
- Իրարից սահմանազատում է հարցազրուցավարի և հարցվողի վերաբերմունքը, գնահատականները:
- Փաստերը տարբերում է վերաբերմունքից, գնահատումից:
- Կոնկրետ մանրամասները կապում է հիմնական տեղեկատվության հետ:
- Հանգում է կոնկրետ եզրակացությունների:

Լսելու ռազմավարությունները

Օտ.բ.V.3. Աշակերտը կարող է դիմել տարբեր ռազմավարությունների՝ ունկնդրման խնդիրների արդյունավետ լուծմանը նպաստելու և լսելու կարողությունը կատարելագործելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կենդանի խոսքը/ձայնագրությունը հասկանալու համար, օգտագործում է ոչ բառային տարրեր (*ձայնային տեմբր, հնչերանգ, դիմախաղ, ձեռածություն, տարբեր տեսակի աղմուկ, տրամաբանական շեշտեր, պատկերազարդում, սխեմա*):
- Ծանոթ տարրերի (*հաղորդակցական իրավիճակ, համատեքստ*) հիման վրա հասկանում է անծանոթ բառերի, արտահայտությունների նշանակությունը:
- Նշում է անծանոթ բառերը՝ դրանց նշանակությունը պարզելու համար:
- Կոնկրետ տեղեկատվությունը հասկանալու համար՝ կիրառում է ընտրողական ունկնդրման ռազմավարությունը:

- Նկարագրում է, թե ինչ եղանակով/ինչպես կարողացավ լուծել ունկնդրման խնդիրը:
- Համեմատում է ուրիշների կիրառած եղանակները և եզրակացնում, թե որ մոտեցումն էր ավելի արդյունավետ:
- Նպատակին համապատասխան՝ փոխում է ունկնդրման ռազմավարությունը. ընդհանուր բովանդակությունը հասկանալու համար, հենվում է ծանոթ բառերի, ոչ բառային տարրերի վրա և ճանաչում հաղորդակցական իրավիճակը, համատեքստը, զրույցի թեման:
- Կոնկրետ տեղեկատվությունը հասկանալու համար՝ ընտրում է կոնկրետ հենարաններ, ուշադրությունը կենտրոնացնում է դրանց վրա՝ անհրաժեշտ տեղեկատվությունը ժողովելու համար:
- Դիտում և լսում է իրեն հետաքրքրող օտարալեզու հեռուստա-ռադիոհաղորդումները, ֆիլմերը:
- Ունկնդրման խնդիրները լուծելիս՝ կիրառում է այլ լեզվից ձեռք բերած փորձառությունը:
- Մտաբերում է, թե այլ առարկաներից ինչ տեսակի ռազմավարություններ է գործածել տեղեկատվություն լսելիս, համեմատում է հին և նոր փորձառությունը, եզրակացություններ է անում:
- Քննարկում է, թե որ ուսումնական կամ կենսական իրավիճակում կարող են օգտակար լինել կիրառված/քննարկված ռազմավարությունները:

Ուղղություն. կարդալ

Օտ.բ.V.4. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ տարբեր տեսակի ոլորտային ճանաչողական տեքստեր (*պատմության, մշակույթի, հնագիտության, աշխարհագրության, բնապահպանության և այլ ոլորտներից*):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է գլխավոր թեման/հարցերը:
- Հասկանում է տեքստի մակերեսային (*ճշգրիտ կերպով*) փաստացի տեղեկատվությունը:
- Տեքստը բաժանում է իմաստային մասերի:
- Փաստը տարբերում է ենթադրությունից:
- Տեղեկատվությունը խմբավորում է տարբեր նշաններով:
- Հայտնաբերում է տեքստի տարբեր հատվածներում տրված փաստերի ու երևույթների միջև առկա կապը (*պատճառա-հետևանքային, հարաբերական, պայմանական, մակաձական և այլն*) և անում համապատասխան եզրակացություն:
- Հայտնաբերում է տեքստի տարբեր մասերում տրված տեղեկատվությունների միջև առկա տրամաբանական կապերը:
- Տեքստում տրված տեղեկատվությունը կապում է սեփական փորձի հետ և, դրա հիման վրա, անում եզրակացություն:

Օտ.բ.V.5. Աշակերտը կարող է կենսագրություն կարդալ ու հասկանալ այն:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ճանաչում է պատմողին:

- Սահմանում է իրադարձությունների ժամանակն ու վայրը (*դարաշրջանը, ծննդյան ամսաթիվն ու վայրը և այլն*):
- Անվանում է անհատի գործունեության ոլորտը, որտեղ նա ձեռք է բերել հոշակ:
- Հասկանում է կարիերայի փուլերը:
- Տեքստում տրված տեղեկատվության (*գործունեություն, հարաբերություններ, վարմունք*) հիման վրա, բնութագրում է անհատին:

Օտ.բ.V.6. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ հարմարեցված պատմվածքը/տրավեպը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Վերնագիրը հասկանալով կապում է տեքստի հետ:
- Հասկանում է գործողությունների հաջորդականությունը:
- Ճանաչում է պատմողին, գործող անձանց:
- Հասկանում է կոնկրետ տեղեկատվությունը (*ով, որտեղ, ինչու, ինչ նպատակով և այլն*):
- Ճանաչում է գլխավոր և երկրորդական կերպարներին:
- Մեկնաբանում է գործող անձանց վարմունքի դրդապատճառն ու գնահատում է նրանց վարքը:
- Հասկանում է գործող անձանց միջև առկա հարաբերությունները:
- Գործող անձանց բնութագրում է ինչպես ճշգրիտ կերպով տրված տեղեկատվության հիման վրա, այնպես էլ բովանդակության վերլուծման հիման վրա:
- Առանձնացնում է ստեղծագործության սյուժեի զարգացման աստիճանները (*սկիզբը, դեպքի ընթացքը, ավարտը*):
- Ճանաչում է հեղինակի կողմից իրադարձությունների ու գործող անձանց գնահատումը:

Օտ.բ.V.7. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ ծաղրաշարը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է ծաղրաշարի կառուցվածքը:
- Իրարից տարբերում է երկխոսության և պատմողական տեքստի ձևավորումը:
- Տեքստն ու նկարը կապում է իրար:
- Հասկանում է պատկերավոր ու տպագիր եղանակներով արտահայտված հույզերը, տրամադրվածությունը (*օր., խոշոր տառատեսակ՝ ճիչ, զայրույթ արտահայտելու համար և այլն*):
- Պատկերագրումների հիման վրա հասկանում է դրվագների բովանդակությունը:
- Ճանաչում է թե՛ նկարներում, թե՛ տեքստում ակնարկված մշակութային բնագավառի անուղղակի տեղեկատվությունը (*դարաշրջանը, երկիրը, պատմական իրադարձությունը, այս կամ այն սոցիալական շրջանի տիպիկ ներկայացուցիչն և այլն*):

Օտ.բ.V.8. Աշակերտը կարող է հայտնաբերել տեքստի կառուցվածքային բնութագրիչները, սովորած լեզվական ձևերը և դրանց գործառույթը բովանդակային համատեքստում:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Փորձում է առանձնացնել առաջատար, լրացուցիչ և ամփոփիչ պարբերությունները, սահմանում է լրացուցիչ պարբերության գործառույթը (*օր., նախորդ պարբերության մեջ հաղորդված մտքի ընդարձակում/ճշտում, պատճառների մեկնաբանում, օրինակ բերել*):
- Սահմանում է, թե ինչ ձևով է տրված ուրիշի խոսքը (*ուղիղ/անուղղակի*):

- Հայտնաբերում և խմբավորում է այս կամ այն հարցի նկատմամբ տարբեր տեսակի վերաբերմունք արտահայտող լեզվական ձևակերպումները (օր., «*Լավն է, կողմ եմ/դեմ եմ: Թեպետ...: Ճիշտ է, սակայն...: Չեմ կարծում...: Համամիտ չեմ...: Իմ կարծիքով*» և այլն):
- Հայտնաբերում է այն արտահայտություններն ու բառերը, որոնք օժանդակում են ընթերցողին փաստը տարբերել գնահատականից/վերաբերմունքից/տեսակետից (օր., *միջանկյալ բառեր և արտահայտություններ, տարբեր եղանակներ արտահայտող բայեր*):
- Հասկանում է ժամանակ ու տարածություն ցույց տվող բառերը, կառույցները:
- Միննույն տեքստի սահմաններում առանձնացնում է տեքստի գործառնության տեսակները (*պատմություն, նկարագրություն, դատողություն*) և մատնանշում է համապատասխան հատկանիշները:
- Համապատասխան նշանների հիման վրա մատնանշում է, թե որտեղ են սկսվում և որտեղ են ավարտվում սյուժեի զարգացման աստիճանները (*հանգույց, գործողության զարգացում, գազաթնակետ և հանգուցալուծում*):
- Հայտնաբերում և մեկնաբանում է ժամանակային հարաբերակցության տեսակները (օր., *գործողությունների համաժամանակությունը, հաջորդականությունը*) և այդ հարաբերակցություններն արտահայտող միջոցները (*համապատասխան շաղկապները, բայաձևերը, գլխավոր և երկրորդական նախադասությունների շարադասությունը, հարաբերյալները գլխավորի մեջ և այլն*):
- Հայտնաբերում է տրամաբանական կապեր (*պատճառ, հետևանք, նպատակ, հակադրություն, պայմանականություն*) արտահայտող պարզ և բարդ լեզվական կառույցները:
- Ճանաչում է իմաստային կապակցման լեզվական ու քերականական միջոցները (օր., *փոխադարձ և անդրադարձ դերանունները, մակբայները, հոդերը, բառի բառապաշարային և իմաստաբանական կրկնությունները, հոմանիշ և հականիշ հերթագայությունները, բայ-ստորոգյալի ժամանակա-եղանակային ձևերը և այլն*):
- Տեքստը կամ դրա հատվածը բնութագրում է ըստ խոսքային գործընթացին մասնակցող անձանց քանակի (*մենախոսություն, երկխոսություն, բազմախոսություն*):
- Կոնկրետ լեզվական հատկանիշների հիման վրա մատնանշում է, թե տեքստում հանդիպում է արդյոք հեղինակային խոսք և իրադարձությունների հեղինակային գնահատում:

Օտ.բ.V.9. Աշակերտը կարող է բարձրաձայն կարդալ տեքստը/հատվածը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ընտրում է տեքստ/հատված, որը ցանկանում է ընթերցել լսարանի առջև:
- Մինչև ընթերցելը վերլուծում է տեքստի բովանդակությունը:
- Բովանդակությանը համապատասխան փոխում է խոսողության տեմպը, ձայնային տեմբրը և բարձրությունը:
- Տեքստում արտացոլված հույզերն արտահայտում է հնչերանգով:
- Հնչերանգը գործածում է կետադրական նշանների գործառնությով:
- Ըստ բովանդակության կիրառում է դիմախաղ, ձեռածություն:
- Կարդալու ընթացքում փորձում է տեսողական կապ հաստատել լսարանի հետ:
- Խոսում է հասկանալի ու հստակ:

Կարդալու ռազմավարությունները

Օտ.բ.V.10. Աշակերտը կարող է դիմել տարբեր ռազմավարությունների՝ ընթերցանության խնդիրների արդյունավետ լուծմանը նպաստելու և ընթերցման կարողությունը կատարելագործելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կիրառում է ճանաչողական ընթերցանության եղանակները. դիտարկում է տեքստի կառուցվածքը, վերնագիրը, պարբերությունները, պատկերազարդումները, մակագրությունները, առանձնացված բառերը և այլն: Կանգ չի առնում անծանոթ բառերի վրա:
- Կիրառում է ուսումնական ընթերցանության եղանակները. առաջին անգամ կարդալիս ամբողջությամբ ծանոթանում է տեքստի հետ: Բարդությունները հաղթահարելու համար, վերընթերցում է անհասկանալի, բարդ կամ կարևոր մասերը: Համատեքստի, փորձառության կամ բառարանի միջոցով ճշտում է անծանոթ բառերի նշանակությունը:
- Կիրառում է որոնողական ընթերցանության եղանակները. կոնկրետ տեղեկատվությունը գտնելու նպատակով, արագ վերընթերցում է տեքստը, փնտրում է հենարաններ. հանգուցային բառերը, պարբերությունների առաջին նախադասությունները, խորագրերը, մեկնաբանությունները, սխեմաները, աղյուսակները և այլն:
- Ծանոթ տարրերի (*պատկերազարդումներ, ծանոթ հիմք, համատեքստ, մայրենի լեզվում հաստատված օտար բառեր և այլն*) հիման վրա, ինքնուրույն հասկանում է անծանոթ բառերի, արտահայտությունների նշանակությունը:
- Տարբեր տարրեր (*օր., վերնագիր, պարբերությունների սկիզբ, հանգուցային բառեր, պարբերություններից մեկը, առանձնացված բառեր*) գործածելով, կարծիք է հայտնում տեքստի բովանդակության մասին:
- Նկարագրում է, թե ինչ եղանակով/ինչպես կարողացավ լուծել ընթերցանության խնդիրը:
- Համեմատում է ուրիշների ընտրած եղանակի հետ և եզրակացնում, թե որ մոտեցումն էր ավելի արդյունավետ:
- Ընթերցանության խնդիրները լուծելու համար՝ օգտագործում է ինչպես մայրենի, այնպես էլ այլ լեզվից ձեռք բերած փորձը:

Ուղղություն. գրել

Օտ.բ.V.11. Աշակերտը կարող է գրել ակնարկ/նամակ, որի մեջ հաղորդում է սեփական տպավորությունները, տեսակետները (օր., ճանապարհորդության տպավորությունները, արձագանք տեսած բեմադրությանը/անցկացված միջոցառմանը):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ներկայացնում է սեփական անձը:
- Ներածական մասում ընթերցողին հաղորդում է նամակի թեման:
- Հանգամանորեն նկարագրում է իրադրությունները, տպավորությունները, հաղորդում է կոնկրետ փաստեր, դեպքեր (*օր., որտեղ էր, ինչ տեսավ, ինչպիսին էր և այլն*):
- Փոխանցում է հույզերը, ապրումները, տրամադրվածությունը, որոնք առաջացել են տեսածից:
- Գնահատականներ է տալիս, արտահայտում է սեփական վերաբերմունքը կոնկրետ հարցի նկատմամբ:

- Վերնագրում է ակնարկը, նամակը:
- Միտքը ձևակերպում է հաջորդականությամբ, հստակ ու հասկանալի կերպով:

Օտ.բ.V.12. Աշակերտը կարող է գովազդային բնույթի տեղեկատվական տեքստ գրել (գրոսաշրջական ուղեցույց, տեղեկատվական գրքույկ):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Սահմանում է հասցեատիրոջը (օր., տարածաշրջանում ապրող օտարերկրացի հասակակիցներ, ընկերացած դպրոցի աշակերտներ):
- Սահմանում է տեքստի ձևաչափը:
- Սահմանում է նպատակը (օր., գրոսաշրջիկի տեղեկացնելը տարածաշրջանում գոյություն ունեցող տեսարժան վայրերի մասին, օտարերկրացի հասակակիցների հրավիրում տարածաշրջան և այլն):
- Նպատակից ելնելով՝ որոշում է խորագրերը (օր., տեսարժան վայրեր, ժամանց, հայտնի մարդիկ, տեղական կերակրատեսակներ և այլն):
- Յուրաքանչյուր խորագրի համար գրում է համառոտ տեղեկատվական տեքստեր, որոնց մեջ նկարագրում է մանրամասնությունները և գնահատականներ է տալիս:
- Ցուցումներ է տալիս:
- Համապատասխան խորհուրդներ է տալիս:
- Համապատասխանաբար է ձևավորում տեքստը (լուսանկար, նկար, քարտեզ, պլան և այլն):
- Միտքը ձևակերպում է հստակ ու հասկանալի կերպով:

Օտ.բ.V.13. Գրելիս աշակերտը կարող է կազմել տեքստի կառուցվածքը, տիրապետում է բազային լեզվական կարողություններին ու հմտություններին և կիրառում է դրանք գործնականորեն:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Նպատակից ելնելով՝ ընտրում է տեքստի պատշաճ կառուցվածքը, ճիշտ է գործածում պարբերությունը և այլ կառուցվածքային կազմակերպիչները (վերնագիրը, ենթավերնագիրը, խորագիրը և այլն):
- Գործածում է կամք ու ցանկություն, խորհուրդ արտահայտող լեզվական կառույցները, ձևակերպումները:
- Բայաձևերը գործածում է ներկա, ապառնի և անցյալ ժամանակներն արտահայտելու համար:
- Տրամաբանական կապերն (պատճառ, հետևանք, նպատակ, հակադրություն, պայմանականություն) արտահայտելու համար՝ գործածում է պարզ լեզվական կառույցներ:
- Հաղորդակցական իրավիճակին/նպատակին համապատասխան՝ գործածում է սովորած լեզվական կառույցները, կլիշեները, ձևակերպումները:
- Կիրառում է հույզեր, վերաբերմունք, տպավորություն արտահայտող հաճախակի գործածության լեզվական միջոցները (բառապաշարային միավորները, կայուն բառակապակցությունները, կլիշեները, լեզվական կառույցները):
- Գործողությունների համաժամանակությունն ու հաջորդականությունը (նախորդող/հաջորդող գործողություններ) արտահայտելու համար, գործածում է պարզ կառույցներ:

- Անձին, առարկան, երևույթը բնութագրելիս՝ ընտրում է պատշաճ լեզվական միջոցները *(օր., որոշիչներ, համեմատություններ, ածական դերբայներ)*:
- Տեքստ կազմելիս պահպանում է իմաստային շաղկապման համապատասխան լեզվական ու քերականական միջոցները *(օր., փոխադարձ դերանուններ, մակբայներ, հոդեր, բառի բառապաշարային ու իմաստաբանական կրկնություններ, հոմանիշ ու հականիշ հերթագայություններ, բայ-ստորոգյալի եղանակա- ժամանակաձևերը և այլն)*:
- Ճշգրտորեն է կապում հարաբերյալները և հարաբերական բառերը *(օր., «Այն..., որը: Նրանք ..., ովքեր»)*:
- Գործածում է ուղղակի և անուղղակի խոսք արտահայտող լեզվական միջոցները:
- Նկարագրելիս ու բնութագրելիս գործածում է տարբեր տեսակի համեմատություններ:
- Պահպանում է կետադրական *(բարդ նախադասություններում, երկխոսությունը փոխանցելիս)* և ուղագրական նորմերը:
- Պայման, հավանականություն, ենթադրություն արտահայտող նախադասությունների մեջ գործածում է պատշաճ շարահյուսական կառույցները:
- Մեկ իմաստային մասից/հարցից մյուսին անցնելու համար, գործածում է պատշաճ բառերն ու լեզվական ձևակերպումները *(օր., նախ և առաջ, այնուհետև, վերջում, ասում են, իմ կարծիքով, այնպես որ, այսպիսով և այլն)*:
- Գործածում է սուբյեկտիվ վերաբերմունք արտահայտող լեզվական ու քերականական միջոցները:

Գրելու ռազմավարությունները

Օտ.բ.V.14. Աշակերտը տիրապետում է գրելու արդյունավետ ռազմավարություններին և կիրառում է դրանք գրելու գործընթացի բոլոր փուլերում *(նախապատրաստական, տեքստի կազմում, տեքստի կատարելագործում)*:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Նկատի առնելով տրված հաղորդակցական խնդիրը՝ հիշողության մեջ փնտրում է անհրաժեշտ տեղեկատվությունը, այսինքն՝ ակտիվացնում է անհրաժեշտ գիտելիքները *(ինչպես լեզվական, այնպես էլ ճարտասանական, կամ հենց այուժեի հետ կապված)*:
- Անհրաժեշտության դեպքում, ռեսուրսների մեջ լրացուցիչ տեղեկատվություն է փնտրում:
- Դիմում է «մտավոր գրոհի» և գրի է առնում մտքին եկած բոլոր գաղափարները, որոնք առնչվում են գրավոր թեմատիկայի հետ:
- Տեղեկատվություններ ու գաղափարներ է ընտրում: Մտածում է, թե ինչպես կկապի դրանք իրար, այսինքն՝ պլան կմշակի:
- Պլանի հիման վրա տեքստ է գրում:
- Տեքստ գրելու ընթացքում անընդհատ դիտարկում է գրավորը: Քննարկում է, թե որքանով է կարողանում հասկանալի ու հաջորդաբար հաղորդել ասելիքը: Անհրաժեշտության դեպքում, փոփոխություն է ներմուծում՝ յուրօրինակ կերպով վերակազմակերպում է պլանը, տեղեկատվություն է հավելում կամ հանում և այլն:
- Ուղղում է լեզվական և իմաստային թերությունները, որոնք կարող են խնդիրներ առաջացնել ընթերցողի համար և, որոշ չափով, խափանել հաղորդակցությունը *(օր., «Ավելացնում կամ հանում է բառը, նախադասությունը, տեքստի մի հատվածը, ուղղում է քերականական կամ ուղղագրական սխալները: Կարդալ է տալիս համադասարանցուն, նկատի առնելով նրա դիտողությունները՝ կատարելագործում է գրավորը: Մրբագրում է գրավորը»)*:

- Մտաբերում է, թե այլ առարկաներից ինչ տեսակի ռազմավարություններ է գործածել տեքստ կազմելիս, համեմատում է հին և նոր փորձառությունը, եզրակացություններ է անում:
- Քննարկում է, թե որ ուսումնական կամ կենսական իրավիճակում կարող են օգտակար լինել կիրառված ռազմավարությունները:

Ուղղություն. խոսել

Երկխոսություն

Օտ.բ.V.15. Աշակերտը կարող է մասնակցել ծանոթ թեմաներին, հարցերին վերաբերող ինտերակցիային:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Առանց նախապատրաստվելու, կարող է փոխանակել իրեն լավ ծանոթ թեմատիկային վերաբերող տեղեկատվությունը:
- Այս կամ այն վիճահարույց հարցի վերաբերյալ, առանց պատրաստվելու, արտահայտում է սեփական վերաբերմունքը, դիրքորոշումը և մեկնաբանում է այն *(ինչն է դուր գալիս/ինչը դուր չի գալիս, ինչու)*:
- Տարբեր տեսակի ընտրություններ է անում և մեկնաբանում է իր ընտրությունները *(օր., որ գործող անձն է իրեն դուր գալիս ավելի շատ և ինչու, որ տեսակետի հետ է համամիտ և ինչու և այլն)*:
- Ինքնաբերաբար արձագանքում է զրուցակցի ռեպլիկաներին՝ ճշտում է տեղեկատվությունը, մեկնաբանություն է անում:
- Արտահայտում է սեփական հույզերը, տրամադրվածությունը:
- Կարող է, սեփական դիրքորոշումից ելնելով, գնահատել երևույթները, փաստերը, վարքագծերը:
- Արդիական հարցի վերաբերյալ հարցազրույց է անցկացնում/տալիս:

Օտ.բ.V.16. Աշակերտը զլուխ է հանում կենցաղային հաղորդակցական իրավիճակից:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Առանց պատրաստվելու, մասնակցում է դերային խաղերին, կեղծակերպած իրավիճակներին, որոնց մեջ արտացոլում է սովորական կենցաղային իրավիճակը *(օր., «Ընկերները արձակուրդներն անցկացնելու երեք տարբեր հնարավորություն ունեն: Նրանցից յուրաքանչյուրն ընտրություն է անում և ցուցաբերում իր ընտրության դրական կողմերը»)*:
- Նախօրոք պատրաստվելու հիման վրա մասնակցում է այնպիսի կեղծակերպած իրավիճակների, որոնք անսպասելի, անսովոր իրադրություն են արտացոլում *(օր., «Մի մարդ ուրախությամբ դիմավորում է մյուսին: Վերջինս չի ձանաչում նրան», «Մի մարդ կոնկրետ խնդիր ունի, պատմում է ընկերոջը: Վերջինս խորհուրդներ է տալիս նրան»)*:

Մենախոսություն

Օտ.բ.V.17. Աշակերտը կարող է խոսել ծանոթ թեմաներով:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Փոխանցում է լսած/կարդացած տեքստի բովանդակությունը:
- Հաղորդում է ֆիլմի, գրքի սյուժետային ընթացքը, շեշտում է կարևոր մանրամասները:
- Ամփոփում է, հաղորդում գլխավոր թեման, քննարկված հարցերը, տեքստում արտացոլված տարբեր տեսակետները, արտահայտում է սեփական վերաբերմունքը:
- Խոսելիս պահպանում է իմաստային հաջորդականությունը:
- Միտքն արտահայտում է հստակ և հասկանալի:

Օտ.բ.V.18. Աշակերտը կարող է բանավոր զեկուցում ներկայացնել (*շնորհանդես*) իրեն հետաքրքրող թեմայով:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Անվանում է թեման:
- Ներածական մասում ներկայացնում է քննարկման ենթակա հարցերը:
- Փաստեր, օրինակներ է բերում:
- Խոսելիս գործածում է տեսողական նյութ:
- Միտքը ձևակերպում է հաջորդականությամբ, հստակ ու հասկանալի կերպով:
- Սեփական վերաբերմունքն է արտահայտում կոնկրետ տեղեկատվության/քննարկվելիք հարցի նկատմամբ:
- Եզրակացություն է անում:

Օտ.բ.V.19. Աշակերտը տիրապետում է բազային լեզվական կարողություններին ու հմտություններին և գործածում է դրանք:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հաղորդակցական իրավիճակին համապատասխան՝ գործածում է սովորած լեզվական կառույցները, կլիշեները, արտահայտությունները, ձևակերպումները, մտերմական և բարեկիրթ ձևերը:
- Պատմելիս ճշգրտորեն է գործածում սովորած բայաձևերը՝ անցյալ, ներկա և ապառնի ժամանակներն արտահայտելու համար:
- Դեպք հաղորդելիս ճշգրտորեն է գործածում երևույթների հաջորդականությունն արտահայտող բառերը (*նախ, այնուհետև, վերջում*):
- Գործածում է խոսակցության թեմային համապատասխան սովորած բառապաշարը:
- Սովորած լեզվական կառույցների մեջ պահպանում է շարահյուսական հարաբերակցությունները:
- Գործածում է հույզեր, տպավորություն արտահայտող լեզվական միջոցները (*բառապաշարային միավորներ, կայուն բառակապակցություններ, կլիշեներ, լեզվական կառույցներ*):
- Գործողությունների համաժամանակությունն ու հաջորդականությունը (*նախորդող/հաջորդող գործողություններ*) արտահայտելու համար՝ պարզ կառույցներ է գործածում:
- Գործածում է սուբյեկտիվ վերաբերմունք արտահայտող լեզվական ու քերականական միջոցները (*ներառված, հավելյալ, միջանկյալ բառեր ու արտահայտություններ և այլն*):

- Մեկ իմաստային մասից մյուսին անցնելու համար՝ գործածում է պատշաճ բառեր ու լեզվական ձևակերպումներ (*համապատասխանաբար, օրինակ, բացի այդ, այնպես որ և այլն*):
- Երևույթներն ու վարմունքները գնահատելիս՝ ճշգրտորեն է գործածում գնահատում արտահայտող բառերն ու լեզվական ձևակերպումները:
- Հարց, խնդրանք, հրաման և զգացմունքներ արտահայտելիս՝ պահպանում է շարահարապատկանությունը և այս եղանակներին բնորոշ հնչերանգը:
- Անձին, առարկան, երևույթը բնութագրելիս՝ ընտրում է պատշաճ լեզվական միջոցները (*որոշիչներ, համեմատություններ, ածական դերբայներ*):

Խոսելու ռազմավարությունները

Օտ.բ.V.20. Աշակերտը կարող է դիմել տարբեր ռազմավարությունների՝ խոսքային խնդիրներն արդյունավետ լուծելու և բանավոր խոսքի կարողությունը կատարելագործելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Նախօրոք պատրաստում է անհրաժեշտ ռեսուրսները, ի մի է բերում մոդելները, արտահայտությունները, կլիշեները, հանգուցային բառերը:
- Մինչև լսարանի առջև ելույթ ունենալը, փորձ է անում:
- Չհասկանալու դեպքում խնդրում է մեկնաբանել, դանդաղ ու հասկանալի արտաբերել, կրկնել:
- Բառը մոռանալու/չիմանալու դեպքում գործածում է փոխհատուցման միջոցները (*օր., դիմախաղ, ձեռածություն, ձևակերպում/ նկարագրում է ենթադրված առարկան կամ մատնանշում է, թե ինչի համար է այն օգտագործվում/ և այլն*):
- Խոսքային խնդիրները լուծելու համար, գործածում է այլ լեզուներից ձեռք բերած փորձը:
- Վերլուծում է այն գործոնները, որոնք նպաստել են հաջողությանը կամ անհաջողություն են բերել բանավոր ելույթի ժամանակ, և ուսուցչի հետ կազմում է ուղղելու պլանը:

Ուղղություն. Աշակույթների երկխոսություն

Օտ.բ.V.21. Աշակերտը հետաքրքրություն և հանդուրժողական վերաբերմունք է ցուցաբերում մշակույթների յուրահասակությունների նկատմամբ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ճանաչում է տեքստում արտացոլված սոցիալ-մշակութային միջավայրը և գուգահեռ է անցկացնում հայրենի սոցիալ-մշակութային միջավայրի հետ (*կրոնական հայացքներ, ապրելակերպ, տոներ, սովորույթներ, երկրի վարչական կառուցվածքը, պատմական դարաշրջանի յուրահասակությունները և այլն*):
- Ճանաչում է պատկերագրողումներում/տեքստերում արտացոլված մշակութային, կենցաղային իրողությունները:
- Ձուգահեռներ է անցկացնում օտար և հայրենի մշակույթների միջև, գտնում է նմանությունները, տարբերությունները:
- Մշակութային յուրահասակությունները քննարկելիս՝ ճշգրտորեն է արտահայտում սեփական միտքը, հայեցակետը, վերաբերմունքը:

- Հետաքրքրություն է ցուցաբերում մարդկանց ապրումների, վերաբերմունքի նկատմամբ:
- Ձուգահեռներ է անցկացնում սեփական և ուրիշների հոգևոր ներաշխարհների միջև, գտնում է ու նշում համանմանությունները, տարբերությունները *(ապրումներ, տրամադրվածություն, վերաբերմունք)*:
- Հասկանում է ասացվածքների, դարձվածքների նշանակությունը և դրանց համապատասխանը գտնում է մայրենի լեզվում:

Ուղղություն. Օտար լեզուների գործնական կիրառություն (մեդիացիա)

Օտ.բ.V.22. Աշակերտը կարող է օտար լեզուն գործածել կրթական նպատակով:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տարբեր տեսակի նախագծեր է իրականացնում օտար լեզվով *(օր., «Ուսումնական ճանապարհորդություն այն վայրերում, որոնք կապված են այս կամ այն գրողի, գործչի հետ: Էքսկուրսիա-գրոսավարություն անցկացնել օտարալեզուների համար» և այլն)*:
- Ուսումնասիրում է օտարալեզու աղբյուրները և ուսուցվող լեզվով ծանոթագրություն է գրում դրանցից յուրաքանչյուրի համար *(մատնանշում է հեղինակին, վերնագիրը, հրատարակման տարեթիվը, թեման/գլխավոր հարցերը)*:
- Փոքրածավալ ոչ գեղարվեստական *(տեղեկատվական, ճանաչողական և այլն)* տեքստեր է թարգմանում:

Ուղղություն. Ուսանման ուսանում

Օտ.բ.V.23. Աշակերտը կարող է ինքնուրույն սահմանել առաջադրանքի պահանջները:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Մասնակցում է առաջադրանքի հաջողությամբ կատարման չափանիշները ձևակերպելու գործին:
- Ընդգծում է առաջադրանքի կատարման փուլերը:
- Սահմանում է այն գիտելիքներն ու կարողությունները, որոնց տիրապետում է, և գործածում է դրանք առաջադրանքը կատարելու համար:
- Սահմանում է, թե ինչ գիտելիքներ ու կարողություններ պետք է ձեռք բերի նոր առաջադրանքը կատարելու համար:
- Սահմանում է, թե ինչը հեշտ կլինի իր համար, ինչը՝ դժվար, երբ հարկավոր կլինի օգնություն, խորհրդակցություն:
- Առաջադրանքի յուրաքանչյուր փուլի համար սահմանում է անհրաժեշտ ռազմավարությունները:

Օտ.բ.V.24. Աշակերտը կարող է գործածել ռազմավարական կարողությունները՝ հաջող ուսումնառությունն ապահովելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Մինչև աշխատանքն սկսելը, համախմբում է գիտելիքները:

- Մասնակցում է մտքերի փոխանակմանն այն մասին, թե ինչ մտտեցումներ կկիրառի այս կամ այն փուլում՝ կոնկրետ խնդիրը լուծելու համար:
- Աշխատանքի ընթացում ծառայած խնդիրները լուծելիս՝ փոփոխություններ է ներմուծում ռազմավարությունների մեջ:
- Անհրաժեշտության դեպքում օգնություն, խորհրդատվություն է խնդրում:
- Աշխատանքն ավարտելուց հետո, ներկայացնում է կիրառած ռազմավարությունները, դրանք համեմատում է ուրիշների կիրառած ռազմավարությունների հետ:
- Մասնակցում է կիրառված ռազմավարությունների արդյունավետության գնահատմանը:
- Համաձայնվում է փորձել ու կիրառել տարբեր ռազմավարություններ:
- Համեմատում է տարբեր լեզուների, այդ թվում նաև մայրենի լեզվի ուսումնասիրման ժամանակ ստացած փորձը: Մահմանում է, թե որքանով օգտակար կլինի այս կամ այն ռազմավարությունն այլ լեզու կամ այլ առարկա սովորելու գործընթացում:
- Վերլուծում է սխալների, թերությունների պատճառները:
- Մասնակցում է ինքնագնահատմանն ու համագնահատմանը *(աշակերտը և ուսուցիչը կամ աշակերտն ու աշակերտը միևնույն աշխատանքն ուղղում են միմյանցից անկախ):*
- Արդյունքների դիտարկման հետևանքով նշում է, թե որտեղ է առաջադիմել:
- Վերլուծում է թե՛ հաջողության, թե՛ անհաջողության պատճառները, հետագայում դրանք նկատի առնելու նպատակով:
- Անվանում է անհաջողության գործոնները, պատճառները *(օր., պատշաճ կերպով չի գործածել ռեսուրսը, չի կարողացել առանձնացնել գործունեության հիմնական խնդիրը, մեկ փուլ բաց է թողել, խնդիրն անհաղթահարելի է թվացել, անտրամադիր է եղել և այլն):*
- Որոշում է, թե ինչ միջոցների պետք է դիմի թերությունները վերացնելու համար:
- Սեփական նախաձեռնությամբ դիմում է ուղղման միջոցներին:

Օտ.բ.V.25. Աշակերտը կարող է ռեսուրսներ գործածել՝ ուսումնական գործունեությանը նպաստելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Արդյունավետ է օգտագործում դասագրքի ռեսուրսները *(օր., բառարանը, կառուցվածքային նմուշները, քերականական տեղեկատուն, պատկերազարդումները և այլն):*
- Տեղեկատվություն է գտնում ինչպես դպրոցում, այնպես էլ դպրոցից դուրս մատչելի ռեսուրսների մեջ *(օր., դասագրքի ակներևությունները, բառարան, դպրոցի/գյուղի/քաղաքի գրադարան, ուսուցիչ, իրազեկ անձ, համացանց և այլն):*
- Տեղեկատվություն/ուսումնական նյութ է գտնում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների (S2S) միջոցով:
- Այս կամ այն նյութը/տեքստը կազմելու/մշակելու համար կիրառում է S2S-ը:
- Նախագծեր իրականացնելու համար կիրառում է S2S-ը:

Օտ.բ.V.26. Աշակերտը կարող է մշակել տեղեկատվությունը, այն մտապահելու և արդյունավետ օգտագործելու նպատակով:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ընկալմանն ու մտապահելուն նպաստելու և տեղեկատվությունը կազմակերպելու համար՝ տարբեր ռեսուրսներ է ստեղծում/օգտվում է տարբեր ռեսուրսներից *(օր., իմաստաբանական քարտեզ, սխեմատիկ գրառումներ, աղյուսակ, գրաֆիկ, տվյալների*

բազա և այլն), տեղեկատվության տարբեր մասերի միջև տրամաբանական կապեր է հայտնաբերում:

- Ձեռք բերած տեղեկատվությունը տեսակավորում է/խմբավորում է՝ ըստ տարբեր պարամետրերի:

Օտ.բ.V.27. Աշակերտը կարող է համագործակցել համադասարանցիների, ուսուցչի, գույզի հետ, արդյունքները կատարելագործելու նպատակով:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Խրախուսում է գույզին, խմբակիցներին:
- Օգնություն է խնդրում /առաջարկում:
- Գործում է խմբի անդամների հետ համաձայնեցված: Խմբակիցների հետ դատողություններ է անում՝ հիմնախնդիրը լուծելու, գործառույթները բաշխելու համար:
- Լսում է ուրիշների տեսակետները, արտահայտում է սեփական տեսակետը:
- Անհամաձայնության դեպքում փորձում է հասնել համաձայնության:
- Փորձում է սեփական լուրջ ներդրումներ րնդհանուր գործում:
- Հարկ եղած դեպքում մասնակցում է գույզի/խմբի անդամների համագնահատմանը:
- Քննադատում է գաղափարները, ոչ թե գաղափարների հեղինակներին, գնահատելիս բարեկրթություն է դրսևորում:
- Բարեգույս կերպով է մատնանշում ուրիշների թույլ տրված սխալները:
- Արդյունքների կատարելագործմանը նպաստելու համար, մասնակցում է համագնահատմանը:

Բազային և միջնակարգ աստիճան՝ VI մակարդակ (բ.VI)

Օտար լեզու

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների.

Լսել	Կարդալ	Գրել
<p>Օտ.բ.VI.1. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ ծանոթ կամ իրեն հետաքրքրող թեմատիկային (<i>ռեպորտաժ, հարցազրույց</i>) վերաբերող ռադիո- և հեռուստահաղորդումները, տեսագրությունները և բանավոր ելույթը:</p>	<p>Օտ.բ.VI.3. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ տարբեր տեսակի ոլորտային ճանաչողական տեքստեր (<i>պատմության, մշակույթի, հնագիտության, աշխարհագրության, բնապահպանության և այլ ոլորտներից</i>):</p>	<p>Օտ.բ.VI.9. Աշակերտը կարող է տարբեր տեսակի գործնական նամակներ գրել: ա)Մոտիվացիոն նամակ է գրում: բ) Կազմում է ռեզյումե (CV):</p> <p>Օտ.բ.VI.10. Աշակերտը կարող է արդիական թեմաներին/հարցերին վերաբերող տարբեր տեսակի ակնարկներ գրել:</p>
<p>Օտ.բ.VI.2. Աշակերտը կարող է դիմել տարբեր</p>	<p>Օտ.բ.VI.4. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ</p>	

<p>ռազմավարությունների՝ ունկնդրման խնդիրների արդյունավետ լուծմանը նպաստելու և լսելու կարողությունը կատարելագործելու համար:</p>	<p>իրեն հետաքրքրող արդիական թեմաներին առնչված թերթի հրապարակումները (օր., համացանցի/բջջայինի/ <i>mp3-ի դրական և բացասական կողմերը, անվտանգ դպրոց, ռոք-երաժշտություն, առողջ սնունդ, գիրք, համակարգիչ և այլն</i>):</p> <p>Օտ.բ.VI.5. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ կենսագրական բնույթի տեքստերը (<i>կենսագրություն, ինքնակենսագրություն, հուշագրություն, օրագիր՝ որպես ինքնակենսագրական տեքստ</i>):</p> <p>Օտ.բ.VI.6. Աշակերտը կարող է տարբեր տեսակի պատմողական տեքստեր (<i>պատմվածք, նորավեպ, լեգենդ, առակներ</i>) կարդալ ու հասկանալ:</p> <p>Օտ.բ.VI.7. Աշակերտը կարող է վերլուծել տեքստն ըստ կառուցվածքային և լեզվական բնութագրիչների:</p> <p>Օտ.բ.VI.8. Աշակերտը տիրապետում է ռազմավարությունների և գործածում է դրանք՝ տեքստը հիմնավորապես ուսումնասիրելու նպատակով:</p>	<p>(<i>օր., աշակերտն ու բջջային հեռախոսը, աշակերտների վերաբերմունքը դպրոցի նկատմամբ, օտար լեզուների ուսանում և այլն</i>):</p> <p>Օտ.բ.VI.11. Գրելիս աշակերտը կարող է կազմել տեքստի կառուցվածքը, տիրապետում է բազային լեզվական կարողությունների ու հմտությունների և կիրառում է դրանք:</p> <p>Օտ.բ.VI.12. Աշակերտը տիրապետում է գրելու արդյունավետ ռազմավարությունների (<i>նախապատրաստական, տեքստի կազմում, տեքստի կատարելագործում</i>) և կիրառում է դրանք գրելու գործընթացի բոլոր փուլերում:</p>
--	--	---

Խոսել	Մշակույթների երկխոսություն	Օտար լեզվի գործնական կիրառություն (<i>մեդիացիա</i>)	Ուսանման ուսանում
-------	----------------------------	---	-------------------

<p>Երկխոսություն</p> <p>Օտ.բ.VI.13. Աշակերտը կարող է մասնակցել ծանոթ թեմատիկային վերաբերող ինտերակցիային:</p> <p>Օտ.բ.VI.14. Աշակերտը գլուխ է հանում կենցաղային հաղորդակցական իրավիճակից:</p> <p>Մենախոսություն</p> <p>Օտ.բ.VI.15. Աշակերտը կարող է խոսել իրեն հետաքրքրող /իր համար ցանկալի թեմայի մասին (<i>սիրելի հաղորդման, ֆիլմի, հերոսի, ճանապարհորդության և այլնի մասին</i>):</p> <p>Օտ.բ.VI.16. Աշակերտը կարող է բանավոր զեկուցում ներկայացնել (<i>շնորհանդես</i>) արդիական հարցի, հիմնախնդրի վերաբերյալ:</p> <p>Օտ.բ.VI.17. Աշակերտը տիրապետում է բազային լեզվական կարողությունների ու հմտությունների և գործածում է դրանք խոսելիս:</p> <p>Օտ.բ.VI.18. Աշակերտը տիրապետում է տարբեր ռազմավարությունների՝ խոսողական խնդիրների</p>	<p>Օտ.բ.VI.19. Աշակերտը հետաքրքրություն և հանդուրժողական վերաբերմունք է ցուցաբերում մշակույթների յուրահատկությունների նկատմամբ:</p>	<p>Օտ.բ.VI.20. Աշակերտը կարող է օտար լեզվի իմացությունն օգտագործել կրթական նպատակով:</p>	<p>Օտ.բ.VI.21. Աշակերտը տիրապետում է հաջող ուսումնառությանը նպաստելու և լեզուների յուրացումը հեշտացնելու ռազմավարական կարողություններին:</p>
---	--	---	---

արդյունավետ լուծմանը նպաստելու և բանավոր խոսքի կարողությունը կատարելագործելու համար:			
--	--	--	--

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ու դրանց ստուգիչները.

Ուղղություն. լսել

(Լսելու կարողությունը զարգացնելու համար գործածվում են դիդակտիկացված ձայնագրություններ:)

Օտ.բ.VI.1. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ ծանոթ կամ իրեն հետաքրքրող թեմատիկային (ռեպորտաժ, հարցազրույց) վերաբերող ռադիո- և հեռուստահաղորդումները, տեսագրությունները և բանավոր ելույթը:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Առանձնացնում է հիմնական հարցերը:
- Փաստերի, երևույթների միջև հայտնաբերում է տրամաբանական կապերը:
- Ժողովում է փաստացի տեղեկատվությունը *(ով, ինչ, երբ, ինչպիսի, որքան և այլն):*
- Ենթադրությունը տարբերում է փաստից, փաստերը՝ վերաբերմունքից, գնահատումից:
- Կոնկրետ մանրամասները կապում է հիմնական տեղեկատվության հետ:
- Տեղեկատվությունը խմբավորում է ըստ կոնկրետ բնութագրիչների:

Օտ.բ.VI.2. Աշակերտը կարող է դիմել տարբեր ռազմավարությունների՝ ունկնդրման խնդիրների արդյունավետ լուծմանը նպաստելու և լսելու կարողությունը կատարելագործելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կենդանի խոսքը/ձայնագրությունը հասկանալու համար, օգտագործում է ոչ բառային տարրեր *(ձայնային տեմբր, հնչերանգ, դիմախաղ, ձեռածություն, տարբեր տեսակի աղմուկ, տրամաբանական շեշտեր, պատկերազարդում, սխեմա):*
- Ծանոթ տարրերի *(հաղորդակցական իրավիճակ, համատեքստ)* հիման վրա հասկանում է անծանոթ բառերի, արտահայտությունների նշանակությունը:
- Նշում է անծանոթ բառերը՝ դրանց նշանակությունը պարզելու համար:
- Նկարագրում է, թե ինչ եղանակով/ինչպես կարողացավ լուծել լսողական խնդիրը:
- Համեմատում է ուրիշների կիրառած եղանակին և եզրակացնում, թե որ մոտեցումն էր ավելի արդյունավետ:
- Կոնկրետ տեղեկատվությունը հասկանալու համար՝ կիրառում է ընտրողական ունկնդրական ռազմավարությունը:
- Տեղեկատվությունը տեսակավորելու համար՝ գործածում է սխեմատիկ գրանցման եղանակը:

- Դիտում և լսում է իրեն հետաքրքրող օտարալեզու հեռուստա-ռադիոհաղորդումներ, ֆիլմեր:
- Ունկնդրման խնդիրները լուծելիս՝ կիրառում է այլ լեզվից ձեռք բերած փորձառությունը:
- Մտաբերում է, թե այլ առարկաներից ինչ տեսակի ռազմավարություններ է գործածել տեղեկատվություն լսելիս, համեմատում է հին և նոր փորձառությունը, եզրակացություններ է անում:
- Քննարկում է, թե որ ուսումնական կամ կենսական իրավիճակում կարող են օգտակար լինել կիրառված/քննարկված ռազմավարությունները:

Ուղղություն. կարդալ

Օտ.բ.VI.3. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ տարբեր տեսակի ոլորտային ճանաչողական տեքստեր (պատմության, մշակույթի, հնագիտության, աշխարհագրության, բնապահպանության և այլ ոլորտներից):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է գլխավոր թեման/հարցերը:
- Հասկանում է տեքստի մակերեսային (ճշգրիտ) փաստացի տեղեկատվությունը:
- Տեքստը բաժանում է իմաստային մասերի:
- Հայտնաբերում է կոնկրետ հարցին վերաբերող կարծիքներ:
- Փաստն առանձնացնում է ենթադրությունից:
- Հայտնաբերում է տեքստի տարբեր մասերի միջև առկա կապը (պատճառ-հետևանքային, հարաբերական, պայմանական, մակաձական և այլն) և անում է համապատասխան եզրակացություն:
- Տեքստում տրված տեղեկատվությունը կապում է սեփական փորձի հետ և, դրա հիման վրա, հանգում է եզրակացության:

Օտ.բ.VI.4. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ իրեն հետաքրքրող արդիական թեմաներին առնչված թերթի հրապարակումները (օր., համացանցի/բջջայինի/ mp3-ի դրական և բացասական կողմերը, անվտանգ դպրոց, ռոք-երաժշտություն, առողջ սնունդ, գիրք, համակարգիչ և այլն):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է հրապարակման նպատակը (օր., քննադատել, հիմնախնդիր առաջադրել, հաղորդել տպավորությունը և այլն):
- Ճանաչում է հրապարակման հասցեատիրոջը (ու՞մ համար է հատկացված):
- Հասկանում է հիմնախնդիրը:
- Հայտնաբերում է տարբեր հայեցակետերը, որոնցով քննարկվում է հիմնախնդիրը:
- Հայտնաբերում է տարբեր տեսակետները, ապացույցները:
- Վկայակոչված փաստերը, օրինակները հարմարեցնում է տեսակետներին:
- Տեղեկատվությունը կապում է սեփական փորձի հետ և, դրա հիման վրա, ընդգծում ու արտահայտում է սեփական դիրքորոշումը քննարկված հարցի վերաբերյալ:

Օտ.բ.VI.5. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ կենսագրական բնույթի տեքստերը (կենսագրություն, ինքնակենսագրություն, հուշագրություն, օրագիր՝ որպես ինքնակենսագրական տեքստ):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ճանաչում է պատմողին:
- Հեղինակին, պատմողին, պատմությանը մասնակցող անձին տարբերում է իրարից:
- Սահմանում է իրադարձությունների ժամանակն ու վայրը (*դարաշրջանը, ծննդյան ամսաթիվն ու վայրը և այլն*):
- Անվանում է անհատի գործունեության ոլորտը, որտեղ նա ճանաչում է ձեռք բերել:
- Հասկանում է կարիերայի փուլերը:
- Հասկանում է, թե ինչի վրա է հիմնվում հեղինակը (*սեփական հիշողության, գրավոր աղբյուրի, ուրիշի պատմածի և այլն*):
- Տեքստում տրված տեղեկատվությունը (*գործունեություն, հարաբերություն, վարմունք*) վերլուծելու հիման վրա, բնութագրում է անհատին:

Օտ.բ.VI.6. Աշակերտը կարող է տարբեր տեսակի պատմողական տեքստեր (պատմվածք, նորավեպ, լեգենդ, առակներ) կարդալ ու հասկանալ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Վերնագիրը հասկանալով կապում է տեքստի հետ:
- Հասկանում է գործողությունների հաջորդականությունը:
- Ճանաչում է պատմողին, գործող անձանց:
- Հասկանում է կոնկրետ տեղեկատվությունը (*ով, որտեղ, ինչու, ինչ նպատակով և այլն*):
- Ճանաչում է գլխավոր և երկրորդական կերպարներին:
- Մեկնաբանում է գործող անձանց վարմունքի դրդապատճառն ու գնահատում է նրանց վարքը:
- Հասկանում է գործող անձանց միջև առկա հարաբերությունները:
- Գործող անձանց բնութագրում է ինչպես ճշգրիտ կերպով տրված տեղեկատվության հիման վրա, այնպես էլ բովանդակության վերլուծման հիման վրա:
- Առանձնացնում է ստեղծագործության սյուժեի զարգացման աստիճանները (*սկիզբը, հանգույցը, զարգացումը, գագաթնակետը, հանգուցալուծումը, ավարտը*):
- Ճանաչում է հեղինակի կողմից իրադարձությունների ու գործող անձանց գնահատումը:

Օտ.բ.VI.7. Աշակերտը կարող է վերլուծել տեքստն ըստ կառուցվածքային և լեզվական բնութագրիչների:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Առանձնացնում է առաջատար, լրացուցիչ և ամփոփիչ պարբերությունները, սահմանում է լրացուցիչ պարբերության գործառույթը (*օր., նախորդ պարբերության մեջ հաղորդված մտքի ընդարձակում/ճշտում, պատճառների մեկնաբանում, օրինակ բերել*):
- Սահմանում է, թե ինչ ձևով է տրված ուրիշի խոսքը (*ուղիղ/անուղղակի*):
- Հայտնաբերում և խմբավորում է այս կամ այն հարցի նկատմամբ տարբեր տեսակի վերաբերմունք արտահայտող լեզվական ձևակերպումները (*օր., «Լավն է, կողմ եմ/դեմ եմ: Թեպետ...: Ճիշտ է, սակայն...: Չեմ կարծում...: Համամիտ չեմ...: Իմ կարծիքով» և այլն*):

- Հայտնաբերում է այն արտահայտություններն ու բառերը, որոնք օգնում են ընթերցողին փաստը տարբերել գնահատականից/վերաբերմունքից/տեսակետից (օր., *միջանկյալ բառեր և արտահայտություններ, տարբեր եղանակներ արտահայտող բայեր*):
- Հասկանում է ժամանակ ու տարածություն ցույց տվող բառերը, կառույցները:
- Միևնույն տեքստի սահմաններում առանձնացնում է տեքստի գործառնային տեսակները (*պատմություն, նկարագրություն, քննարկում*) և մատնանշում է պատշաճ հատկանիշները (օր., *նկարագրելիս՝ ածականների ու ածական դերբայների առատություն, բայերի պակաս քանակ, պատմելիս՝ բայերի առատություն, գործողությունների հաջորդականությունն ու դրա նշանները և այլն*):
- Համապատասխան նշանների հիման վրա մատնանշում է, թե որտեղ են սկսվում և որտեղ են ավարտվում սյուժեի զարգացման աստիճանները (*հանգույցը, գործողության զարգացումը, զագաթնակետը և հանգուցալուծումը*):
- Հայտնաբերում է և պատշաճ կերպով մեկնաբանում ժամանակային հարաբերակցության տեսակները (օր., *գործողությունների համաժամանակությունը, հաջորդականությունը*) և այդ հարաբերակցություններն արտահայտող միջոցները (*համապատասխան շաղկապները, բայաձևերը, գլխավոր և երկրորդական նախադասությունների շարադասությունը, ցուցական բառերը գլխավորի մեջ և այլն*):
- Հայտնաբերում է տրամաբանական կապեր (*պատճառ, հետևանք, նպատակ, հակադրություն, պայմանականություն*) արտահայտող պարզ և բարդ լեզվական կառույցները:
- Ճանաչում է իմաստային շաղկապման լեզվական ու քերականական միջոցները (օր., *փոխադարձ դերանունները, մակբայները, հոդերը, բառի բառապաշարային և իմաստաբանական կրկնությունները, հոմանիշ և հականիշ հերթագայությունները, բայ-ստորոգյալի ժամանակա-եղանակաձևերը և այլն*):
- Տեքստը կամ դրա հատվածը բնութագրում է ըստ խոսքային գործընթացին մասնակցող անձանց քանակի (*մենախոսություն, երկխոսություն, բազմախոսություն*):
- Կոնկրետ լեզվական հատկանիշների հիման վրա մատնանշում է՝ տեքստում հանդիպո՞ւմ է արդյոք հեղինակային խոսք և իրադարձությունների հեղինակային գնահատում:

Օտ.բ.VI.8. Աշակերտը տիրապետում է ռազմավարությունների և գործածում է դրանք՝ տեքստը հիմնավորապես ուսումնասիրելու նպատակով:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Դիտարկում է վերնագրերը, ենթավերնագրերը, խորագրերը, տպագրական տարատեսակությունը, պատկերազարդումները և այլն:
- Մտաբերում է, թե ինչ գիտի տեքստում տրված թեմատիկայի վերաբերյալ:
- Այնպիսի հարցեր է տալիս, որոնց պատասխանն ակնկալում է տեքստից:
- Տեղեկատվություններ գտնելու նպատակով, ընդհանուր առմամբ ծանոթանում է տեքստին, այս փուլում կանգ չի առնում անծանոթ բառերի վրա, զանազան խորհրդանիշներով նշում է տեքստի էական հարցերը, որոնց պետք է անդրադառնա՝ դրանք խորացնելու նպատակով, նշում է հանգուցային բառերը և այլն:
- Անդրադառնում է անհասկանալի տեղերին, փորձում է ըստ համատեքստի հասկանալ բառի նշանակությունները:
- Բառարանում փնտրում է այն բառերի նշանակությունները, որոնք անհասկանալի են:

- Առանձնացնում է գլխավոր ու երկրորդական գաղափարները: Գլխավոր գաղափարները ձևակերպում է վերնագրերի տեսքով, երկրորդական գաղափարները՝ ենթավերնագրերի տեսքով:
- Սահմանում է երկրորդական գաղափարների գործառույթը՝ գլխավոր գաղափարի ընդարձակում, նկարագարում, պատճառների մեկնաբանում և այլն:

Ուղղություն. գրել

Օտ.բ.VI.9. Աշակերտը կարող է տարբեր տեսակի գործնական նամակներ գրել:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

ա)Մոտիվացիոն նամակ է գրում:

- Պահպանում է պաշտոնական կողմը (*համապատասխան տեղում մատնանշում է հեղինակի, հասցեատիրոջ կոորդինատները, անձնական տվյալները, ամսաթիվը, դիմելու, հրաժեշտ տալու ձևակերպումները, ստորագրությունը*):
- Հայտնում է նամակի շարժառիթը (*որտեղից է տեղեկացվել մրցույթի մասին և որ աշխատատեղի համար է ներկայացնում իր թեկնածությունը*):
- Ներկայացնում է սեփական ուսումնական և աշխատանքային փորձառությունը, կարողությունները, գիտելիքները, հատկությունները:
- Խոսում է մոտիվացիայի մասին, ընդգծում է ուժեղ կողմերը:
- Հարցազրույցին հրավիրվելու հույս է հայտնում:
- Պահպանում է տեքստի կազմակերպման օրենքները:
- Միտքը ձևակերպում է հստակ ու հասկանալի կերպով:

բ) Կազմում է ռեզյումե (CV):

- Սահմանում է անհրաժեշտ և լրացուցիչ խորագրերը:
- Խորագրերի ներքո տեղադրում է համապատասխան տեղեկատվությունները:
- Կիրառում է հաղորդման հակիրճ ձևեր (*օր., անվանակարգում*):

Օտ.բ.VI.10. Աշակերտը կարող է արդիական թեմաներին/հարցերին վերաբերող տարբեր տեսակի ակնարկներ գրել (*օր., աշակերտն ու բջջային հեռախոսը, աշակերտների վերաբերմունքը դպրոցի նկատմամբ, օտար լեզուների ուսանում և այլն*):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ներկայացնում է սեփական անձը:
- Հանգամանորեն նկարագրում է սեփական փորձը կոնկրետ հարցի վերաբերյալ:
- Շեշտում է դրական և բացասական տեսանկյունները/կողմերը և պարզաբանում է դրանք, բերում է պատշաճ օրինակներ:
- Հարցի նկատմամբ արտահայտում է սեփական վերաբերմունքը:
- Անձնական փորձից կոնկրետ օրինակ պատմելով՝ պարզաբանում է սեփական վերաբերմունքը:
- Եզրակացություն է անում:
- Վերնագրում է տեքստը:
- Գրելիս պահպանում է իմաստային հաջորդականությունը:
- Միտքը ձևակերպում է հստակ և հասկանալի կերպով:

Օտ.բ.VI.11. Գրելիս աշակերտը կարող է կազմել տեքստի կառուցվածքը, տիրապետում է բազային լեզվական կարողությունների ու հմտությունների և կիրառում է դրանք:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Նպատակից ելնելով՝ ընտրում է տեքստի պատշաճ կառուցվածքը, ճիշտ է գործածում պարբերությունը և այլ կառուցվածքային կազմակերպիչները (*վերնագիրը, ենթավերնագիրը, խորագիրը և այլն*):
- Գործածում է կամք ու ցանկություն, խորհուրդ արտահայտող լեզվական կառույցներ, ձևակերպումներ:
- Ներկա, ապառնի և անցյալ ժամանակներն արտահայտելու համար՝ ազատ գործածում է բայաձևերը:
- Տրամաբանական կապերն (*պատճառ, հետևանք, նպատակ, հակադրություն, պայմանականություն*) արտահայտելու համար՝ ազատ գործածում է պարզ լեզվական կառույցները:
- Հաղորդակցական իրավիճակին/նպատակին համապատասխան՝ գործածում է սովորած լեզվական կառույցները, կլիշեները, ձևակերպումները:
- Կիրառում է հույզեր, վերաբերմունք, տպավորություն արտահայտող լեզվական միջոցներ (*բառապաշարային միավորներ, կայուն բառակապակցություններ, կլիշեներ, լեզվական կառույցներ*):
- Գործողությունների համաժամանակությունն ու հաջորդականությունը (*նախորդող/հաջորդող գործողությունների*) արտահայտելու համար՝ ազատ գործածում է պարզ լեզվական կառույցները:
- Անձին, առարկան, երևույթը բնութագրելիս՝ ընտրում է համապատասխան լեզվական միջոցներ (*օր., որոշիչներ, համեմատություններ, ածական դերբայներ*):
- Տեքստ կազմելիս պահպանում է իմաստային շաղկապման համապատասխան լեզվական ու քերականական միջոցները (*օր., փոխադարձ և անդրադարձ դերանուններ, մակբայներ, հոդեր, բառի բառապաշարային ու իմաստաբանական կրկնություններ, հոմանիշ ու հականիշ հերթագայություններ, բայ-ստորոգյալի ժամանակաձևերն ու եղանակների ձևերը և այլն*):
- Մեկ իմաստային մասից մյուսին անցնելու համար գործածում է պատշաճ բառեր ու լեզվական ձևակերպումներ (*համապատասխանաբար, օրինակ, բացի այդ, այնպես որ և այլն*):
- Ճշգրտորեն է կապում հարաբերյալներն ու հարաբերական բառերը (*օր., «Այն..., որը: Նրանք ..., ովքեր»*):
- Գործածում է ուղղակի և անուղղակի խոսք արտահայտող լեզվական միջոցներ:
- Նկարագրելիս ու բնութագրելիս գործածում է տարբեր տեսակի համեմատություններ:
- Պահպանում է կետադրական (*բարդ նախադասություններում, երկխոսությունը փոխանցելիս*) և ուղագրական նորմերը:
- Պայման, հավանականություն, ենթադրություն արտահայտելիս՝ գործածում է պատշաճ շարահյուսական կառույցները:
- Գործածում է սուբյեկտիվ վերաբերմունք արտահայտող լեզվական ու քերականական միջոցներ (*ներառված, հավելյալ, միջանկյալ բառեր ու արտահայտություններ և այլն*):

Գրելու ռազմավարությունները

Օտ.բ.VI.12. Աշակերտը տիրապետում է գրելու արդյունավետ ռազմավարություններին (նախապատրաստական, տեքստի կազմում, տեքստի կատարելագործում) և կիրառում է դրանք գրելու գործընթացի բոլոր փուլերում:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Նկատի առնելով տրված հաղորդակցական խնդիրը՝ հիշողության մեջ փնտրում է անհրաժեշտ տեղեկատվությունը, այսինքն՝ ակտիվացնում է անհրաժեշտ գիտելիքները (*ինչպես լեզվական, այնպես էլ հոետորական, կամ հենց սյուժեի հետ կապված*):
- Անհրաժեշտության դեպքում, ռեսուրսների մեջ լրացուցիչ տեղեկատվություն է փնտրում:
- Դիմում է «մտավոր գրոհին» և գրի է առնում մտքին եկած բոլոր գաղափարները, որոնք առնչվում են գրավոր թեմատիկայի հետ:
- Տեղեկատվություններ ու գաղափարներ է ընտրում: Մտածում է, թե ինչպես կապի դրանք իրար, այսինքն՝ պլան մշակի:
- Պլանի հիման վրա տեքստ է գրում:
- Տեքստ գրելու ընթացքում անընդհատ դիտարկում է գրավորը: Քննարկում է, թե որքանով է կարողանում հասկանալի ու հաջորդաբար հաղորդել ասելիքը: Անհրաժեշտության դեպքում, փոփոխություն է ներմուծում՝ յուրօրինակ կերպով վերակազմակերպում է պլանը, տեղեկատվություն է հավելում կամ հանում և այլն:
- Ուղղում է այն լեզվական և իմաստային թերությունները, որոնք կարող են խնդիրներ առաջացնել ընթերցողի համար և, որոշ չափով, խափանել հաղորդակցությունը: Համապատասխանաբար, հավելում կամ հանում է բառ, նախադասություն, տեքստի մի հատվածը, ուղղում է քերականական կամ ուղղագրական սխալները:
- Փորձում է աշխատությունը հարստացնել նոր տեղեկատվությամբ, այլ կերպ խմբավորել որոշ գաղափարներ, մասնակի կամ ամբողջովին փոխել պլանը, հիմնավորապես փոխել տեքստը և այլն:
- Կարող է տալիս համադասարանցուն: Նկատի առնելով նրա դիտողությունները՝ կատարելագործում է այն:
- Սրբագրում է գրավորը:
- Մտաբերում է, թե այլ առարկաներից ինչ տեսակի ռազմավարություններ է գործածել տեքստ կազմելիս, համեմատում է հին և նոր փորձառությունը, եզրակացություններ է անում:
- Քննարկում է, թե որ ուսումնական կամ կենսական իրավիճակում կարող են օգտակար լինել կիրառված ռազմավարությունները:

Ուղղություն. խոսել

Երկխոսություն

Օտ.բ.VI.13. Աշակերտը կարող է մասնակցել ծանոթ թեմատիկային վերաբերող ինտերակցիային:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Առանց նախապատրաստվելու, կարող է փոխանակել իրեն լավ ծանոթ թեմատիկային վերաբերող տեղեկատվությունը:

- Այս կամ այն վիճահարույց հարցի վերաբերյալ, առանց պատրաստվելու, արտահայտում է սեփական վերաբերմունքը, դիրքորոշումը և մեկնաբանում է այն *(ինչն է դուր գալիս/ինչը դուր չի գալիս, ինչու):*
- Տարբեր տեսակի ընտրություններ է անում և մեկնաբանում է դրանք *(օր., որ գործող անձն է իրեն դուր գալիս ավելի շատ և ինչու, որ տեսակետի հետ է համամիտ և ինչու և այլն):*
- Ինքնաբերաբար արձագանքում է զրուցակցի ռեպլիկաներին՝ ճշտում է տեղեկատվությունը, մեկնաբանություն է անում:
- Արտահայտում է սեփական հույզերը, տրամադրվածությունը:
- Սեփական դիրքորոշումից ելնելով՝ գնահատում է երևույթները, փաստերը, վարքագծերը:
- Արդիական հարցի վերաբերյալ հարցազրույց է անցկացնում/տալիս:

Օտ.բ.VI.14. Աշակերտը գլուխ է հանում կենցաղային հաղորդակցական իրավիճակից:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Առանց պատրաստվելու, մասնակցում է դերախաղերի, կեղծակերպած իրավիճակների, որոնք սովորական կենցաղային իրավիճակ են արտացոլում:
- Նախօրոք պատրաստվելու հիման վրա, մասնակցում է այնպիսի կեղծակերպած իրավիճակների, որոնք անսպասելի, անսովոր իրադրություն են արտացոլում, որոնց դեպքում անհրաժեշտ է լինում արդարանալ, առարկել *(օր., «Գրադարանում ընթերցողից գիրք են պահանջում, իսկ նա արդեն հանձնել է այդ գիրքը: Ուղևորը հայտնաբերում է, որ իր տեղում ուրիշն է նստած: Գնորդը վերադարձնում է ձեռք բերած իրը, որովհետև պարզվել է, որ այն փչացած էր» և այլն):*

Մենախոսություն

Օտ.բ.VI.15. Աշակերտը կարող է խոսել իրեն հետաքրքրող /իր համար ցանկալի թեմայի մասին *(սիրելի հաղորդման, ֆիլմի, հերոսի, ճանապարհորդության և այլնի մասին):*

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կոնկրետացնում է խոսակցության թեման:
- Ամփոփում է կարդացածը, տեսածը, լսածը:
- Փոխանցում է սեփական վերաբերմունքը, տրամադրությունը, տեսակետը:
- Միտքը, վերաբերմունքը փոխանցելիս՝ ընդգծում է իր համար կարևոր մանրամասները:
- Խոսում է հետագա ծրագրերի, ցանկությունների, երազանքների մասին:

Օտ.բ.VI.16. Աշակերտը կարող է բանավոր գեկուցում ներկայացնել *(շնորհանդես)* արդիական հարցի, հիմնախնդրի վերաբերյալ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Անվանում է թեման:
- Ներածական մասում ներկայացնում է, ընդգծում է հիմնախնդիրը:
- Ընդգծում է հիմնախնդիրն առաջացնող պատճառները:
- Բերում է փաստեր, օրինակներ:
- Խոսելիս գործածում է տեսողական նյութ:
- Խոսում է ակնկալիք կապերի մասին:

- Մեփական վերաբերմունքն է արտահայտում կոնկրետ տեղեկատվության/քննարկմանը ենթակա հարցի նկատմամբ:
- Ներկայացնում է հիմնախնդիրը լուծելու ճանապարհները:
- Եզրակացություն է անում:
- Խոսելիս պահպանում է իմաստային հաջորդականությունը:
- Միտքը ձևակերպում է հստակ ու հասկանալի կերպով:

Օտ.բ.VI.17. Աշակերտը տիրապետում է բազային լեզվական կարողություններին ու հմտություններին և գործածում է դրանք խոսելիս:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հաղորդակցական իրավիճակին համապատասխան՝ գործածում է սովորած լեզվական կառույցներ, կլիշեներ, արտահայտություններ, ձևակերպումներ:
- Ինտերակցիայի ժամանակ պատշաճ կերպով է գործածում մտերմական և բարեկիրթ ձևակերպումները:
- Գործածում է սովորած բառապաշարը:
- Ազատ գործածում է պարզ (*համառոտ, ընդարձակ*) և համադասական նախադասությունների կառուցվածքը:
- Կարող է գործածել ստորադասական նախադասությունները (*օր., որոշիչ ստորադաս նախադասություն*):
- Նախադասության մասերը կապակցելու համար, գործածում է պատշաճ շաղկապներ:
- Սովորած լեզվական կառույցների մեջ պահպանում է շարահյուսական հարաբերակցությունները:
- Ճիշտ է գործածում սովորած բայերի կառույցները:
- Պատմելիս փորձում է ճշգրտորեն գործածել սովորած բայաձևերը՝ անցյալ, ներկա և ապառնի ժամանակներն արտահայտելու համար:
- Ճշգրտորեն է գործածում դիրքորոշում/վերաբերմունք արտահայտող բառերն ու լեզվական ձևակերպումները:
- Պատմություն հաղորդելիս ճշգրտորեն է գործածում երևույթների հաջորդականությունն արտահայտող բառերը (*նախ, այնուհետև, վերջում*):

Խոսելու ռազմավարությունները

Օտ.բ.VI.18. Աշակերտը տիրապետում է տարբեր ռազմավարությունների՝ խոսողական խնդիրների արդյունավետ լուծմանը նպաստելու և բանավոր խոսքի կարողությունը կատարելագործելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Նախօրոք պատրաստում է անհրաժեշտ ռեսուրսը, ի մի է բերում մոդելները, արտահայտությունները, կլիշեները, հանգուցակետային բառերը:
- Մինչև լսարանի առջև ելույթ ունենալը, փորձ է անում:
- Չհասկանալու դեպքում խնդրում է մեկնաբանել, դանդաղ ու հասկանալի արտաբերել, կրկնել:

- Բառը մոռանալու/չիմանալու դեպքում գործածում է փոխհատուցման միջոցները (*օր., դիմախաղ, ձեռածություն, ձևակերպում/ նկարագրում է ենթադրված առարկան կամ մատնանշում է, թե ինչի համար է այն օգտագործվում/ ն այլն*):
- Խոսքային խնդիրները լուծելու համար՝ գործածում է այլ լեզուներից ձեռք բերած փորձը:
- Վերլուծում է այն գործոնները, որոնք նպաստել են հաջողությանը կամ անհաջողություն են բերել բանավոր ելույթի ժամանակ, և ուսուցչի հետ կազմում է ուղղելու պլանը:

Ուղղություն. Մշակույթների երկխոսություն

Օտ.բ.VI.19. Աշակերտը հետաքրքրություն և հանդուրժողական վերաբերմունք է ցուցաբերում մշակույթների յուրահասկությունների նկատմամբ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տեքստից ընտրում է, ճանաչում է կարծրատիպային գնահատումները և, օրինակների գործածությամբ, փաստարկում է դրանց անհիմն լինելը:
- Հետաքրքրվում է համադասարանցիների, դպրոցակիցների լեզվա-մշակութային նույնականությամբ:
- Հարցաքննում է տարբեր մշակութային նույնականություն ունեցող հասակակիցներին: Նրանց հետ համագործակցելով՝ ներկայացում է պատրաստում տարբեր ընտանեկան ավանդույթների, տոների, սովորույթների, կրոնական հայացքների վերաբերյալ և այլն:
- Ճանաչում է տեքստերում արտացոլված սոցիալ-մշակութային միջավայրը և գուգահեռ է անցկացնում հայրենի սոցիալ-մշակութային միջավայրի հետ:
- Ջուգահեռ է անցկացնում օտար և հայրենի մշակույթների միջև, գտնում և վերլուծում է նմանությունները, տարբերությունները:
- Հետաքրքրություն է ցուցաբերում մարդկանց ապրումների, վերաբերմունքի նկատմամբ: Ջուգահեռներ է անցկացնում սեփական և ուրիշների հոգևոր ներաշխարհների միջև, գտնում է ու նշում նմանությունները, տարբերությունները (*ասպրումներ, տրամադրվածություն, վերաբերմունք*):
- Հասկանում է ասացվածքների, դարձվածքների նշանակությունը և դրանց համապատասխանը գտնում է մայրենի լեզվում:

Ուղղություն. Օտար լեզվի գործնական կիրառություն (*մեդիացիա*)

Օտ.բ.VI.20. Աշակերտը կարող է օտար լեզվի իմացությունն օգտագործել կրթական նպատակով:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տարբեր տեսակի նախագծեր է իրականացնում օտար լեզվով (*օր., օտար լեզվով օրաթերթ կազմել ու տարածել, հանդիպում կազմակերպել արվեստագետի հետ, կայք-էջ ստեղծել և այլն*):
- Մշակում է դպրոցական նախագծերի կամ այլ կրթական նպատակների իրականացման համար անհրաժեշտ օտարալեզու աղբյուրներ/տեքստեր:

- Օտարալեզու տեքստից գրառումներ է անում և դրանց հիման վրա ուսուցվող լեզվով բանավոր հաղորդում է տեքստի համառոտ բովանդակությունը, կամ ամփոփագիր է գրում հետաքրքրվող անձանց համար (օր., խմբակիցների համար):
- Ուսումնասիրում է օտարալեզու աղբյուրները և ուսուցվող լեզվով ծանոթագրություն է գրում դրանցից յուրաքանչյուրի համար (*մատնանշում է հեղինակին, վերնագիրը, հրատարակման տարեթիվը, թեման/գլխավոր հարցերը*):
- Փոքրածավալ ոչ գեղարվեստական (*տեղեկատվական, ճանաչողական և այլն*) տեքստեր է թարգմանում:

Ուղղություն. Ուսանման ուսանում

Օտ.բ.VI.21. Աշակերտը տիրապետում է հաջող ուսումնառությանը նպաստելու և լեզուների յուրացումը հեշտացնելու ռազմավարական կարողություններին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հաղորդակցական և լեզվական կարողությունների ու հմտությունների զարգացմանը և ամրապնդմանը նպաստելու համար՝ գործածում է բազմապիսի (*խմացական, հուզական և մետա-խմացական*) ռազմավարություններ:
- Ուսումնական գործընթացում առաջացած հիմնախնդիրները լուծելու համար՝ բազմապիսի ռազմավարություններ է գործածում:
- Ուսումնական գործունեությանը նպաստելու նպատակով, արդյունավետ է գործածում ռեսուրսները:
- Արդյունքները կատարելագործելու համար՝ աշակերտը համագործակցում է համադասարանցիների, ուսուցչի, զույգի հետ:

Բազային և միջնակարգ աստիճան՝ VII մակարդակ (բ.VII)

Օտար լեզու

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների.

Լսել	Կարդալ	Գրել
Օտ.բ.VII.1. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ արդիական կամ իրեն հետաքրքրող թեմատիկային (<i>օր., ճանաչողական բնույթի հաղորդում, վավերագրական ֆիլմ, հեռուստատեսային ամսագիր, քննարկում</i>) վերաբերող տարբեր տեսակի	Օտ.բ.VII.3. Աշակերտը կարող է կարդալ, հասկանալ ու վերլուծել կրթական հետաքրքրությունների հետ կապված օտարալեզու տեքստերը (<i>օր., գիտահանրամատչելի հոդված, ակնարկ, թերթի հրապարակում, գրքույկ,</i>	Օտ.բ.VII.8. Աշակերտը կարող է տարբեր տեսակի գործնական նամակներ գրել: Օտ.բ.VII.9. Աշակերտը կարող է արդիական թեմաներին/հարցերին (<i>օր., բռնություն դպրոցում, բնապահպանություն և այլն</i>)

<p>ձայնագրություններ:</p> <p>Օտ.բ.VII.2. Աշակերտը կարող է դիմել տարբեր ռազմավարությունների, լսած տեքստի բովանդակությունը վերլուծելու համար:</p>	<p><i>ռեպրտաժ և այլն):</i></p> <p>Օտ.բ.VII.4. Աշակերտը կարող է կարդալ, հասկանալ ու վերլուծել գեղարվեստական տեքստերը (<i>պատմվածք, նորավեպ, մանրանկար, հատվածներ պոեզիայից, ժամանակակից արձակից):</i></p> <p>Օտ.բ.VII.5. Աշակերտը կարող է վերլուծել տեքստն ըստ կառուցվածքային ու լեզվական բնութագրիչների:</p> <p>Օտ.բ.VI.6. Աշակերտը տիրապետում է սխեմատիկ գրառումների տարբեր տեխնիկաների:</p> <p>Օտ.բ.VII.7. Աշակերտը տիրապետում է ռազմավարությունների և գործածում է դրանք՝ տեքստը հիմնավորապես ուսումնասիրելու նպատակով:</p>	<p>վերաբերող տարբեր տեսակի տեքստեր գրել (<i>օր., ակնարկ, նամակ դպրոցական կամ երիտասարդական ամսագրի համար):</i></p> <p>Օտ.բ.VII.10. Գրելիս աշակերտը կարող է կազմել տեքստի կառուցվածքը, տիրապետում է բազային լեզվական կարողությունների ու հմտությունների և կիրառում է դրանք:</p> <p>Օտ.բ.VII.11. Աշակերտը տիրապետում է գրելու արդյունավետ ռազմավարությունների և կիրառում է դրանք գրելու գործընթացի բոլոր (<i>նախապատրաստական, տեքստի կազմման, տեքստի կատարելագործման</i>) փուլերում:</p>
--	---	--

Խոսել	Մշակույթների երկխոսություն	Օտար լեզվի գործնական կիրառություն (<i>մեդիացիա</i>)
<p><i>Երկխոսություն</i></p> <p>Օտ.բ.VII.12. Աշակերտը կարող է մասնակցել ծանոթ թեմատիկային վերաբերող ինտերակցիային:</p> <p><i>Մենախոսություն</i></p> <p>Օտ.բ.VII.13. Աշակերտը կարող է խոսել այնպիսի</p>	<p>Օտ.բ.VII.17. Աշակերտը հետաքրքրություն և հանդուրժողական վերաբերմունք է ցուցաբերում մշակույթների յուրահատկությունների նկատմամբ:</p>	<p>Օտ.բ.VII.18. Աշակերտը կարող է օտար լեզուն գործածել կրթական նպատակով:</p>

<p>արդիական թեմաներով, որոնց հետ ծանոթացել է ընթերցանության տեքստերում:</p> <p>Օտ.բ.VII.14. Աշակերտը կարող է բանավոր զեկուցում ներկայացնել (<i>շնորհանդես</i>) արդիական հարցի, հիմնախնդրի վերաբերյալ:</p> <p>Օտ.բ.VII.15. Աշակերտը տիրապետում է լեզվական ու քերականական կարողությունների ու հմտությունների և խոսելիս գործառաբար է կիրառում դրանք:</p> <p>Օտ.բ.VII.16. Աշակերտը տիրապետում է տարբեր ռազմավարությունների՝ խոսքային խնդիրների արդյունավետ լուծմանը նպաստելու և բանավոր խոսքի կարողությունը կատարելագործելու համար:</p>		
--	--	--

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ու դրանց ստուգիչները.

Ուղղություն. լսել

(Լսելու կարողությունը զարգացնելու համար գործածվում են դիդակտիկացված ձայնագրություններ:)

Օտ.բ.VII.1. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ արդիական կամ իրեն հետաքրքրող թեմատիկային (*օր., ճանաչողական բնույթի հաղորդում, վավերագրական ֆիլմ, հեռուստատեսային ամսագիր, քննարկում*) վերաբերող տարբեր տեսակի ձայնագրություններ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է հաղորդակցական իրավիճակը (*որտեղ է տեղի ունենում, ում է վերաբերում և այլն*):
- Հասկանում է, թե ինչ տեսակի հարաբերություններ են մասնակից անձանց միջև:
- Ընդգծում է հիմնական հարցերը, ապացույցները:
- Տարբերում է տեսակետները:
- Տարբեր տեղեկատվությունների միջև տրամաբանական կապեր է հայտնաբերում:
- Ժողովում է փաստացի տեղեկատվությունը (*ով, ինչ, երբ, ինչպիսի, որքան և այլն*):
- Ենթադրությունը տարբերում է փաստից, փաստերը՝ վերաբերմունքից, գնահատումից:
- Կոնկրետ մանրամասները կապում է հիմնական տեղեկատվության հետ:
- Տեղեկատվությունները խմբավորում է՝ ըստ կոնկրետ բնութագրիչների:
- Տարբեր տեսակի տեղեկատվությունը կապում է իրար և, դրա հիման վրա, անում պատշաճ եզրակացություն:

Օտ.բ.VII.2. Աշակերտը կարող է դիմել տարբեր ռազմավարությունների՝ լսած տեքստի բովանդակությունը վերլուծելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կենդանի խոսքը/ձայնագրությունը հասկանալու համար՝ օգտագործում է ոչ բառային տարրեր (*ձայնային տեմբր, հնչերանգ, դիմախաղ, ձեռածություն, տարբեր տեսակի աղմուկ, տրամաբանական շեշտ, պատկերազարդում, սխեմա*):
- Ծանոթ տարրերի (*հաղորդակցական իրավիճակի, համատեքստի*) հիման վրա հասկանում է անծանոթ բառերի, արտահայտությունների նշանակությունը:
- Նշում է անծանոթ բառերը՝ դրանց նշանակությունը պարզելու համար:
- Համեմատում է ուրիշների կիրառած եղանակին և եզրակացնում, թե որ մոտեցումն էր ավելի արդյունավետ:
- Նպատակին համապատասխան՝ փոխում է լսելու ռազմավարությունը. ընդհանուր բովանդակությունը հասկանալու համար, հենվում է ծանոթ բառերի, ոչ բառային տարրերի վրա և ընկալում հաղորդակցական իրավիճակը, համատեքստը, խոսակցության թեման:
- Կոնկրետ տեղեկատվությունը հասկանալու համար՝ ընտրում է կոնկրետ հենարաններ, ուշադրությունը կենտրոնացնում է դրանց վրա, անհրաժեշտ տեղեկատվությունը վերլուծելու համար:
- Տեղեկատվությունը բնութագրելու համար՝ գործածում է սխեմատիկ գրանցման եղանակը:
- Նկարագրում է, թե ինչ եղանակով/ինչպես կարողացավ լուծել ունկնդրման խնդիրը:
- Դիտում և լսում է իրեն հետաքրքրող օտարալեզու հեռուստա-/ռադիոհաղորդումները, ֆիլմերը:
- Ունկնդրման խնդիրները լուծելիս՝ կիրառում է այլ լեզվից ձեռք բերած փորձառությունը:
- Մտաբերում է, թե այլ առարկաներից ինչ տեսակի ռազմավարություններ է գործածել տեղեկատվություն լսելիս, համեմատում է հին և նոր փորձառությունը, եզրակացություններ է անում:

Օտ.բ.VII.3. Աշակերտը կարող է կարդալ, հասկանալ ու վերլուծել կրթական հետաքրքրությունների հետ կապված օտարալեզու տեքստերը (օր., գիտահանրամատչելի հոդված, ակնարկ, թերթի հրապարակում, գրքույկ, ռեպորտաժ և այլն):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տեքստը բաժանում է իմաստային մասերի (*ենթաթեմաների*):
- Հասկանում է տեքստի մակերեսային (*ճշգրիտ կերպով*) տեղեկատվությունը (*փաստը, իրադարձությունը, միտքը, գործողության ժամանակն ու տեղը և այլն*):
- Առանձնացնում է այս կամ այն հարցին վերաբերող տեսակետները, հայեցակետերը և առանձնացնում է դրանցից յուրաքանչյուրի հետ կապված փաստարկները:
- Գլխավոր հարցը տարբերում է ոչ գլխավորից, առանձնացնում է գլխավոր հարցի հետ կապված կոնկրետ մանրամասնությունները:
- Փաստը, ենթադրությունը, կանխատեսումը, գնահատումը տարբերում է իրարից:
- Հայտնաբերում է տեքստի տարբեր մասերի միջև առկա տրամաբանական կապը (*պատճառա-հետևանքային, պայմանական, հարաբերական, ժամանակագրական, մակաձայն և այլն*) և, տեքստի հիման վրա, եզրակացություն է անում:
- Տեքստում տրված տեղեկատվությունը կապում է սեփական փորձի հետ և, դրա հիման վրա, եզրակացություն է անում:
- Ամբողջ տեքստը վերլուծելու հիման վրա, եզրակացություն է անում:

Օտ.բ.VII.4. Աշակերտը կարող է կարդալ, հասկանալ ու վերլուծել գեղարվեստական տեքստերը (*պատմվածք, նորավեպ, մանրանկար, պոեզիա, ժամանակակից պոեզիայի հատվածներ*):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ճանաչում է պատմողին, գլխավոր և երկրորդական կերպարներին:
- Հասկանում է տեքստի մակերեսային (*ճշգրիտ կերպով*) տեղեկատվությունը (*որտեղ և երբ է տեղի ունենում գործողությունը, առանձնացնում է ժամանակ ու տարածություն ցույց տվող մանրամասները և այլն*):
- Մեկնաբանում է գործող անձանց վարմունքի շարժառիթը և գնահատում է նրանց վարքը:
- Հասկանում է գործող անձանց միջև առկա հարաբերությունները:
- Գործող անձանց բնութագրում է ինչպես ճշգրիտ կերպով տրված տեղեկատվության հիման վրա, այնպես էլ բովանդակության վերլուծման հիման վրա:
- Առանձնացնում է ստեղծագործության սյուժեի զարգացման աստիճանները (*սկիզբը, հանգույցը, զարգացումը, գագաթնակետը, հանգուցալուծումը, ավարտը*):
- Ճանաչում է հեղինակի կողմից իրադարձությունների ու գործող անձանց գնահատումը:
- Ճանաչում է բանաստեղծության լիրիկական հերոսին/մոտիվը:
- Տարբեր պարամետրերով գուգահեռներ է անցկացնում մայրենի լեզվով ուսումնասիրած գեղարվեստական տեքստերի հետ (*օր., կերպարի տիպը, հաղորդված տրամադրվածությունը, ժանրը, հիմնախնդիրը և այլն*):

Օտ.բ.VII.5. Աշակերտը տիրապետում է սխեմատիկ գրառումների տարբեր տեխնիկաների:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ամբողջությամբ կարդում է տեքստը, տարբեր խորհրդանիշներով նշում է գլխավոր հարցերը, երկրորդական գաղափարները, հանգուցային բառերը:
- Սահմանում է երկրորդական գաղափարների նշանակումը *(գլխավոր գաղափարի նկարագրողում, պատճառների պարզաբանում, ճշտում և այլն):*
- Տեղեկատվությունը տեսակավորելու համար՝ գործածում է սխեմատիկ գրառումների տարբեր եղանակներ *(օր., ստորակարգային կառուցվածքով սխեմատիկ պլան, հանգուցային բառերի աղյուսակ և այլն):*
- Կազմած սխեման ցույց է տալիս համադասարանցիներին, ծանոթանում է ուրիշների կազմածի հետ:
- Ուրիշների հետ գնահատում է սխեմատիկ գրառումները *(օր., որն է ավելի լավը և ինչու, ով ինչը պետք է կատարելագործի և այլն):*
- Դիտողություններ, խորհուրդներ է տալիս/նկատի է առնում դիտողությունները, խորհուրդները:
- Գրառումը կատարելագործելու համար՝ համագործակցում է դասարանցիների, ուսուցչի հետ:

Օտ.բ.VII.6. Աշակերտը կարող է վերլուծել տեքստն ըստ կառուցվածքային ու լեզվական բնութագրիչների:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Առանձնացնում է առաջատար, լրացուցիչ և ամփոփիչ պարբերությունները, սահմանում է լրացուցիչ պարբերության գործառույթը *(օր., նախորդ պարբերության մեջ հաղորդված մտքի ընդարձակում/ճշտում, պատճառների մեկնաբանում, օրինակ բերել):*
- Սահմանում է, թե ինչ ձևով է տրված ուրիշի խոսքը *(ուղիղ/անուղղակի):*
- Հայտնաբերում է այն արտահայտություններն ու բառերը, որոնք օժանդակում են ընթերցողին փաստը տարբերել գնահատականից/վերաբերմունքից/տեսակետից *(օր., միջանկյալ բառեր և արտահայտություններ, տարբեր եղանակներ արտահայտող բայեր):*
- Հասկանում է ժամանակ ու տարածություն ցույց տվող բառերը, կառույցները:
- Միննույն տեքստի սահմաններում առանձնացնում է տեքստի գործառույթային տեսակները *(պատմություն, նկարագրություն, քննարկում)* և մատնանշում է համապատասխան հատկանիշները *(օր., նկարագրելիս՝ ածականների ու ածական դերբայների առատություն, բայերի պակաս քանակ, պատմելիս՝ բայերի առատություն, գործողությունների հաջորդականությունն ու դրա նշանները և այլն):*
- Համապատասխան նշանների հիման վրա մատնանշում է, թե որտեղ են սկսվում և որտեղ են ավարտվում պլուսի գարգացման աստիճանները *(հանգույցը, գործողության զարգացումը, զագաթնակետը և հանգուցալուծումը):*
- Ճանաչում է և պատշաճ կերպով մեկնաբանում է ժամանակային հարաբերակցության տեսակները *(օր., համաժամանակ, նախորդող, հաջորդող գործողություններ)* և այդ հարաբերակցություններն արտահայտող միջոցները *(համապատասխան շաղկապները, բայաձևերը, գլխավոր և երկրորդական նախադասությունների շարադասությունը, ցուցական բառերը գլխավորի մեջ և այլն):*
- Ճանաչում է տրամաբանական կապեր *(պատճառ, հետևանք, նպատակ, հակադրություն, պայմանականություն)* արտահայտող պարզ և բարդ լեզվական կառույցները:
- Ճանաչում է իմաստային շաղկապման լեզվական ու քերականական միջոցները *(օր., փոխադարձ դերանուններն ու մակբայները, հոդերը, բառի բառապաշարային և*

իմաստաբանական կրկնությունները, հոմանիշ և հականիշ հերթագայությունները, բայ-ստորոգյալի ժամանակա-եղանակաձևերը և այլն):

- Տեքստը կամ դրա հատվածը բնութագրում է ըստ խոսքային գործընթացին մասնակցող անձանց քանակի (*մենախոսություն, երկխոսություն, բազմախոսություն*):
- Կոնկրետ լեզվական հատկանիշների հիման վրա մատնանշում է՝ տեքստում հանդիպո՞ւմ է արդյոք հեղինակային խոսք և իրադարձությունների հեղինակային գնահատում:
- Մայրենի լեզվից ձեռք բերած փորձառության հիման վրա նշում է, թե ինչ գեղարվեստական ու պատկերավոր եղանակներ են (մակդիր, համեմատություն, փոխաբերություն, այլաբանություն, անձնավորում, զուգադրություն և այլն) կիրառված տեքստում:

Օտ.բ.VII.7. Աշակերտը տիրապետում է ռազմավարությունների և գործածում է դրանք՝ տեքստը հիմնավորապես ուսումնասիրելու նպատակով:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տեքստի կառուցվածքը և բովանդակությունը վերլուծելու համար՝ կիրառում է մայրենի կամ այլ լեզվից ձեռք բերած փորձառությունը:
- Դիտարկում է վերնագրերը, ենթավերնագրերը, խորագրերը, տպագրական տարատեսակությունը, պատկերազարդումները և այլն:
- Մտաբերում է, թե ինչ գիտի տեքստում տրված թեմատիկայի վերաբերյալ:
- Այնպիսի հարցեր է տալիս, որոնց պատասխանն ակնկալում է տեքստից:
- Անդրադառնում է անհասկանալի տեղերին, փորձում է ըստ համատեքստի հասկանալ բառի նշանակությունները:
- Բառարանում փնտրում է այն բառերի նշանակությունները, որոնք անհասկանալի են:
- Առանձնացնում է գլխավոր ու երկրորդական գաղափարների գործառույթը՝ գլխավոր գաղափարի ընդարձակում, նկարագրում, պատճառների մեկնաբանում և այլն:
- Տեղեկատվությունը տեսակավորելու համար՝ գործածում է սխեմատիկ գրառումների եղանակը (*ստորակարգային կառուցվածքով սխեմատիկ պլան, ճյուղավորված սխեմա, հանգուցային բառերի աղյուսակ և այլն*):
- Գլխավոր գաղափարները ձևակերպում է վերնագրերի տեսքով, երկրորդականները՝ ենթավերնագրերի տեսքով:
- Սխեմատիկ գրառումների հիման վրա, սեփական բառերով վերականգնում է տեքստի բովանդակությունը:
- Քննարկում է, թե որ ուսումնական կամ կյանքի որ իրավիճակում կարող են օգտակար լինել սխեմատիկ գրառումների ռազմավարությունները:

Ուղղություն. գրել

Օտ.բ.VII.8. Աշակերտը կարող է տարբեր տեսակի գործնական նամակներ գրել:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տեղեկատվություն ձեռք բերելու նպատակով՝ գործնական նամակ է գրում *(օր., մրցույթի, փոխանակման ծրագրի, ուսումնական ծրագրի պայմանները ճշտելու համար և այլն)*:
- Պահպանում է պաշտոնական կողմը *(համապատասխան տեղում մատնանշում է հեղինակի ու հասցեատիրոջ անձնական տվյալները, կոորդինատները, ամսաթիվը, դիմելու և հրաժեշտ տալու ձևակերպումները)*:
- Ներկայանում է և ճշտում, թե որտեղից է ձեռք բերել հասցեատիրոջ կոորդինատները:
- Նամակագրության նպատակից ելնելով՝ նկարագրում է իրավիճակը *(օր., ինչին է ուշադրություն դարձրել, ինչ է իմացել, ինչու է հետաքրքրվել, ինչ է պատրաստվում անել)*:
- Իրեն հետաքրքրող տեղեկատվությունը ձեռք բերելու համար՝ հարցեր է ձևակերպում:
- Նամակի վերջում ակնկալիք է արտահայտում, նախօրոք շնորհակալություն է հայտնում:
- Միտքը ձևակերպում է հստակ ու հասկանալի կերպով:

Օտ.բ.VII.9. Աշակերտը կարող է արդիական թեմաներին/հարցերին *(օր., բնություն դպրոցում, բնապահպանություն և այլն)* վերաբերող տարբեր տեսակի տեքստեր գրել *(օր., ակնարկ, նամակ դպրոցական կամ երիտասարդական ամսագրի համար)*:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ներածություն է անում, ընդգծում է քննարկվող հարցը/հարցերը:
- Նշանակալից տեղեկություն է հաղորդում քննարկվող հարցերի կապակցությամբ:
- Հաղորդում է քննարկված հարցի վերաբերյալ գոյություն ունեցող տարբեր տեսակետները և պարզաբանում է դրանք:
- Հարցի վերաբերյալ արտահայտում է սեփական վերաբերմունքը, տեսակետը:
- Անձնական փորձից կոնկրետ օրինակ վկայակոչելով՝ պարզաբանում է սեփական վերաբերմունքը:
- Եզրակացություն է անում:
- Վերնագրում է նամակը/հոդվածը:
- Գրելիս պահպանում է իմաստային հաջորդականությունը:
- Միտքը ձևակերպում է հստակ ու հասկանալի կերպով:

Օտ.բ.VII.10. Գրելիս աշակերտը կարող է կազմել տեքստի կառուցվածքը, տիրապետում է բազային լեզվական կարողությունների ու հմտությունների և կիրառում է դրանք:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Նպատակից ելնելով՝ ընտրում է տեքստի համապատասխան կառուցվածքը, ճիշտ է գործածում պարբերությունը և այլ կառուցվածքային կազմակերպիչները *(վերնագիրը, ենթավերնագիրը, խորագիրը և այլն)*:
- Կիրառում է կամք ու ցանկություն, խորհուրդ արտահայտող լեզվական կառույցներ, ձևակերպումներ:
- Ներկա, ապառնի և անցյալ ժամանակներն արտահայտելու համար ազատ գործածում է բայաձևերը:
- Տրամաբանական կապերն *(պատճառ, հետևանք, նպատակ, հակադրություն, պայմանականություն)* արտահայտելու համար՝ ազատ գործածում է պարզ լեզվական կառույցները:
- Պահպանում է փաստարկված քննարկման կառուցվածքը՝ *դրույթ, փաստարկ, եզրակացություն*:

- Հաղորդակցական իրավիճակին/նպատակին համապատասխան՝ գործածում է սովորած լեզվական կառույցները, կլիշեները, ձևակերպումները:
- Կիրառում է հույզեր, վերաբերմունք, տպավորություն արտահայտող լեզվական միջոցներ (*բառապաշարային միավորներ, կայուն բառակապակցություններ, կլիշեներ, լեզվական կառույցներ*):
- Գործողությունների համաժամանակությունն ու հաջորդականությունը (*նախորդող/հաջորդող գործողություններ*) արտահայտելու համար, ազատ գործածում է պարզ լեզվական կառույցներ:
- Անձին, առարկան, երևույթը բնութագրելիս ընտրում է համապատասխան լեզվական միջոցները (*օր., որոշիչներ, համեմատություններ, ածական դերբայներ*):
- Տեքստ կազմելիս պահպանում է իմաստային շաղկապման համապատասխան լեզվական ու քերականական միջոցները (*օր., փոխադարձ դերանուններ ու մակբայներ, հոդեր, բառի բառապաշարային ու իմաստաբանական կրկնություններ, հոմանիշ ու հականիշ հերթագայություններ, բայ-ստորոգյալի ժամանակա-եղանակային ձևերը և այլն*):
- Մեկ իմաստային մասից մյուսին անցնելու համար գործածում է պատշաճ բառեր ու լեզվական ձևակերպումներ (*համապատասխանաբար, օրինակ, բացի այդ, այնպես որ և այլն*):
- Ճշգրտորեն է կապում հարաբերյալներն ու հարաբերական բառերը (*օր., «Այն..., որը: Նրանք ..., ովքեր»*):
- Գործածում է ուղղակի և անուղղակի խոսք արտահայտող լեզվական միջոցները:
- Նկարագրելիս ու բնութագրելիս գործածում է տարբեր տեսակի համեմատություններ:
- Պահպանում է կետադրական (*բարդ նախադասություններում, երկխոսությունը փոխանցելիս*) և ուղագրական նորմերը:
- Պայման, հավանականություն, ենթադրություն արտահայտող նախադասությունների մեջ գործածում է համապատասխան շարահյուսական կառույցներ:
- Գործածում է սուբյեկտիվ վերաբերմունք արտահայտող լեզվական ու քերականական միջոցները (*օր., հավելված, միջանկյալ բառեր ու արտահայտություններ և այլն*):

Գրելու ռազմավարությունները

Օտ.բ.VII.11. Աշակերտը տիրապետում է գրելու արդյունավետ ռազմավարությունների և կիրառում է դրանք գրելու գործընթացի բոլոր (*նախապատրաստական, տեքստի կազմման, տեքստի կատարելագործման*) փուլերում:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Նկատի առնելով տրված հաղորդակցական խնդիրը՝ հիշողության մեջ փնտրում է անհրաժեշտ տեղեկատվությունը, այսինքն, ակտիվացնում է անհրաժեշտ գիտելիքները (*ինչպես լեզվական, այնպես էլ թե՛ ճարտասանական, թե՛ սյուժեի հետ կապված*):
- Անհրաժեշտության դեպքում, ռեսուրսների մեջ լրացուցիչ տեղեկատվություն է փնտրում:
- Դիմում է «մտավոր գրոհի» և դուրս է գրում մտքին եկած բոլոր գաղափարները, որոնք առնչվում են գրավոր թեմատիկայի հետ:
- Տեղեկատվություններ ու գաղափարներ է ընտրում: Մտածում է, թե ինչպես կկապի դրանք իրար, այսինքն՝ պլան կմշակի:
- Պլանի հիման վրա տեքստ է գրում:

- Տեքստ գրելու ընթացքում անընդհատ դիտարկում է գրավորը: Քննարկում է, թե որքանով է կարողանում հասկանալի ու հաջորդաբար հաղորդել ասելիքը: Անհրաժեշտության դեպքում, փոփոխություն է ներմուծում՝ յուրօրինակ կերպով վերակազմակերպում է պլանը, տեղեկատվություն է հավելում կամ հանում և այլն:
- Գրավորն ստուգելիս անընդհատ պահպանում է հաղորդակցությունն իր ընթերցողի հետ, փորձում է հասցեատիրոջ, այսինքն՝ պոտենցիալ ընթերցողի տեսանկյունից գնահատել, թե որքանով արդյունավետ է հաղորդակցության նպատակն արտացոլվել գրավորի մեջ:
- Ուղղում է այն լեզվական և իմաստային թերությունները, որոնք կարող են խնդիրներ առաջացնել ընթերցողի համար և, որոշ չափով, խափանել հաղորդակցությունը: Համապատասխանաբար, հավելում կամ հանում է բառ, նախադասություն, տեքստի որևէ հատված, ուղղում է քերականական կամ ուղղագրական սխալները:
- Փորձում է աշխատությունը հարստացնել նոր տեղեկատվությամբ, այլ կերպ խմբավորել որոշ գաղափարներ, մասնակի կամ ամբողջովին փոխել պլանը, հիմնավորապես փոխել տեքստը և այլն:
- Որակյալ արտադրանք ստեղծելու համար, միշտ նկատի է առնում հասցեատիրոջ, հաղորդակցության նպատակի ու տեքստի համապատասխանությունը:
- Կարող է տալիս համադասարանցուն: Նկատի առնելով նրա դիտողությունները, կատարելագործում է գրավորը:
- Սրբագրում է գրավորը:
- Մտաբերում է, թե այլ առարկաներից ինչ տեսակի ռազմավարություններ է գործածել տեքստ կազմելիս, համեմատում է հին և նոր փորձառությունը, եզրակացություններ է անում:
- Քննարկում է, թե որ ուսումնական կամ կենսական իրավիճակում կարող են օգտակար լինել կիրառված ռազմավարությունները:

Ուղղություն. խոսել

Երկխոսություն

Օտ.բ.VII.12. Աշակերտը կարող է մասնակցել ծանոթ թեմատիկային վերաբերող ինտերակցիային:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Առանց նախապատրաստվելու, կարող է փոխանակել իրեն լավ ծանոթ թեմատիկային վերաբերող տեղեկատվությունը:
- Այս կամ այն վիճահարույց հարցի վերաբերյալ, առանց պատրաստվելու, արտահայտում է սեփական վերաբերմունքը, դիրքորոշումը և մեկնաբանում է այն (*ինչն է դուր գալիս/ինչը դուր չի գալիս, ինչու*):
- Տարբեր տեսակի ընտրություններ է անում և մեկնաբանում է դրանք (*օր., որ գործող անձն է իրեն դուր գալիս ավելի շատ և ինչու, որ տեսակետի հետ է համամիտ և ինչու և այլն*):
- Ինքնաբերաբար արձագանքում է զրուցակցի ռեպլիկաներին՝ ճշտում է տեղեկատվությունը, մեկնաբանություն է անում:
- Արտահայտում է սեփական հույզերը, տրամադրվածությունը:
- Սեփական դիրքորոշումից ելնելով՝ գնահատում է երևույթները, փաստերը, վարքագծերը:

- Արդիական հարցի վերաբերյալ հարցազրույց է անցկացնում/տալիս:

Մենախոսություն

Օտ.բ.VII.13. Աշակերտը կարող է խոսել այնպիսի արդիական թեմաներով, որոնց հետ ծանոթացել է ընթերցանության տեքստերում:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ընդգծում է հարցը, հիմնախնդիրը:
- Քննարկում է այն տարբեր առումներով:
- Ընդգծում է դրական ու բացասական կողմերը:
- Արտահայտում է սեփական վերաբերմունքը և, սեփական փորձի հիման վրա, պարզաբանում է այն:
- Միտքը ձևակերպում է հաջորդաբար, հստակ ու հասկանալի կերպով:

Օտ.բ.VII.14. Աշակերտը կարող է բանավոր զեկուցում ներկայացնել (*շնորհանդես*) արդիական հարցի, հիմնախնդրի վերաբերյալ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Անվանում է թեման:
- Ներածական մասում ներկայացնում է, ընդգծում է հիմնախնդիրը:
- Ընդգծում է հիմնախնդիրն առաջացնող պատճառները:
- Բերում է փաստեր, օրինակներ:
- Խոսելիս գործածում է տեսողական նյութ:
- Խոսում է պատճառա-հետևանքային կապերի մասին:
- Սեփական վերաբերմունքն է արտահայտում կոնկրետ տեղեկատվության, երևույթի նկատմամբ:
- Ներկայացնում է հիմնախնդիրը լուծելու ուղիները:
- Եզրակացություն է անում:
- Խոսելիս պահպանում է իմաստային հաջորդականությունը:
- Միտքը ձևակերպում է հստակ ու հասկանալի կերպով:

Օտ.բ.VII.15. Աշակերտը տիրապետում է լեզվական ու քերականական կարողությունների ու հմտությունների և խոսելիս գործառաբար է կիրառում դրանք:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հաղորդակցական իրավիճակին համապատասխան՝ գործածում է սովորած լեզվական կառույցները, կլիշեները, արտահայտությունները, ձևակերպումները:
- Ինտերակցիայի ժամանակ պատշաճ կերպով է գործածում մտերմական և բարեկիրթ ձևակերպումները:
- Գործածում է սովորած բառապաշարը:
- Ազատ գործածում է պարզ (*համառոտ, ընդարձակ*) և համադասական նախադասությունների կառուցվածքը:
- Կարող է գործածել ստորադասական նախադասությունները (*օր., որոշիչ ստորադաս նախադասություն*):

- Նախադասության մասերը կապակցելու համար, գործածում է համապատասխան շաղկապներ:
- Սովորած լեզվական կառույցների մեջ պահպանում է շարահյուսական հարաբերակցությունները:
- Ճիշտ է գործածում սովորած բայերի կառույցը:
- Պատմելիս փորձում է ճշգրտորեն գործածել սովորած բայաձևերը՝ անցյալ, ներկա և ապառնի ժամանակներն արտահայտելու համար:
- Ճշգրտորեն է գործածում դիրքորոշում/վերաբերմունք արտահայտող բառերն ու լեզվական ձևակերպումները:
- Պատմություն ներկայացնելիս ճիշտ է գործածում երկույթների հաջորդականությունն արտահայտող բառերը (*նախ, այնուհետև, վերջում*):
- Պատշաճ կերպով է գործածում անուղղակի խոսք արտահայտող ձևերը:
- Հարց, խնդրանք, հրաման, զգացմունքներ արտահայտելիս՝ պահպանում է շարահյուսությունը և այս եղանակներին բնորոշ հնչերանգը:

Խոսելու ռազմավարությունները

Օտ.բ.VII.16. Աշակերտը տիրապետում է տարբեր ռազմավարությունների՝ խոսքային խնդիրների արդյունավետ լուծմանը նպաստելու և բանավոր խոսքի կարողությունը կատարելագործելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Նախօրոք պատրաստում է անհրաժեշտ ռեսուրսը, ի մի է բերում մոդելները, արտահայտությունները, կլիշեները, հանգուցային բառերը:
- Մինչև լսարանի առջև ելույթ ունենալը, փորձ է անում:
- Չհասկանալու դեպքում խնդրում է մեկնաբանել, դանդաղ ու հասկանալի արտաբերել, կրկնել:
- Բառը մոռանալու/չիմանալու դեպքում գործածում է փոխհաստուցման միջոցները (*օր., դիմախառ, ձեռածություն, ձևակերպում/ նկարագրում է ենթադրված առարկան կամ մատնանշում է, թե ինչի համար է այն օգտագործվում/ և այլն*):
- Խոսողական խնդիրները լուծելու համար՝ գործածում է այլ լեզուներից ձեռք բերած փորձը:
- Վերլուծում է այն գործոնները, որոնք նպաստել են հաջողությանը կամ անհաջողություն են բերել բանավոր ելույթի ժամանակ, և ուսուցչի հետ կազմում է ուղղելու պլանը:

Ուղղություն. Մշակույթների երկխոսություն

Օտ.բ.VII.17. Աշակերտը հետաքրքրություն և հանդուրժողական վերաբերմունք է ցուցաբերում մշակույթների յուրահաստկությունների նկատմամբ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ուրիշ մշակույթի մասին տեղեկատվություններ ժողովելու և գիտելիքները հարստացնելու համար, կիրառում է լրատվամիջոցները (*հեռուստատեսություն, համացանց, բջջային և այլն*):
- Քննարկում է տեքստերում արտացոլված արժեքներն ու հայեցակետերը և, համապատասխան փաստարկներ բերելով (*օր., փաստեր գրականությունից,*

պատմությունից, անձնական փորձից և այլն), արտահայտում է սեփական վերաբերմունքը:

- Տեքստում տրված տեղեկատվությունը քննարկում է այն մշակույթի համատեքստում, որում ստեղծվել է տեքստը:
- Պարզաբանում է գործող անձանց վարմունքի շարժառիթը տվյալ միջավայրում և կանխատեսում է, թե ինչպես կվարվեին նրանք այլ սոցիալ-մշակութային ու մշակութային միջավայրում:
- Հայտնաբերում է կարծրատիպային հայեցակետերը, վերլուծում է և ներկայացնում դրանք առաջացնող պատճառները, օրինակների միջոցով փաստարկում է դրանց անհիմն լինելը:
- Վերլուծում է այն իրադրությունները, որոնցում թյուրիմացություն է առաջանում կամ կոնֆլիկտային միջավայր է ստեղծվում, սոցիալ-մշակութային յուրահատկությունները նկատի չառնելու պատճառով. հայտնաբերում և անվանում է պատճառները, սահմանում է իրավիճակի լիցքաթափման ուղիները:
- Վերլուծում է մշակութային յուրահատկությունները նկատի չառնելու պատճառով առաջացած կոնֆլիկտային իրավիճակը, հայտնաբերում և անվանում է պատճառները, սահմանում է կոնֆլիկտը կարգավորելու ուղիները:
- Հետազոտում է շրջապատի անձանց լեզվա-մշակութային նույնականությունը, հետաքրքիր նյութեր է ժողովում նրանց ծագման, ընտանեկան պատմության, սովորույթների մասին:

Ուղղություն. Օտար լեզվի գործնական կիրառություն (մեղիացիա)

Օտ.բ.VII.18. Աշակերտը կարող է օտար լեզուն գործածել կրթական նպատակով:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տարբեր տեսակի նախագծեր է (*օր., թատերական պիես բեմադրել, մուլտիպլիկացիոն ֆիլմ ստեղծել, ռեպորտաժ պատրաստել ու տարածել տեսանյութի միջոցով և այլն*) իրականացնում օտար լեզվով:
- Մշակում է դպրոցական նախագծերի կամ այլ կրթական նպատակների իրականացման համար անհրաժեշտ օտարալեզու աղբյուրներ/տեքստեր:
- Օտարալեզու տեքստից գրառումներ է անում և դրանց հիման վրա ուսուցվող լեզվով բանավոր հաղորդում է տեքստի համառոտ բովանդակությունը կամ ամփոփագիր է գրում հետաքրքրվող անձանց համար (*օր., խմբակիցների համար*):
- Համառոտագիր է կազմում (*առանձնացնում է կարևոր տեղեկատվությունը, սխեմատիկ գրառում է պատրաստում և, դրա հիման վրա, սեփական բառերով հաղորդում է տեղեկատվությունը*):
- Դրանցից յուրաքանչյուրի վերաբերյալ ծանոթագրություն է գրում (*մատնանշում է հեղինակին, վերնագիրը, հրատարակման տարեթիվը, թեման/գլխավոր հարցերը*):
- Գրավոր/բանավոր թարգմանում է փոքրածավալ ոչ գեղարվեստական (*ամփոփագիր, ակնարկ, հրահանգներ և այլն*) տեքստերը:
- Գեղարվեստական գրականության թե՛ արձակի, թե՛ բանաստեղծության նմուշները թարգմանում է մայրենի լեզվով:

Օտար լեզու

Չափորոշիչ

Տարեվերջին նվաճվելիք արդյունքներն ըստ ուղղությունների.

Լսել	Կարդալ	Գրել
<p>Օտ.բ.VIII.1. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ արդիական կամ իրեն հետաքրքրող թեմատիկային <i>(օր., ճանաչողական բնույթի հաղորդում, բանավեճ, բանավոր ելույթ, ռեպորտաժ, հեռուստահանդես, դասախոսություն և այլն)</i> վերաբերող տարբեր տեսակի համալիր բովանդակությամբ ձայնագրություններ/տեսագրություններ:</p> <p>Օտ.բ.VIII.2. Աշակերտը դիմում է տարբեր ռազմավարությունների, լսած բովանդակությունն ավելի լավ վերլուծելու համար:</p>	<p>Օտ.բ.VIII.3. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ թերթի հրապարակումները, որոնք ներառում են կոնկրետ հիմնախնդրին վերաբերող որոշակի տեսակետ, քննարկում <i>(օր., գովազդի դերը ժամանակակից հասարակության էվոլյուցիայի մեջ, շրջակա միջավայրի աղտոտում, սպառողական ընկերություն, բռնություն դպրոցում և այլն):</i></p> <p>Օտ.բ.VIII.4. Աշակերտը կարող է կարդալ, հասկանալ ու վերլուծել կրթական հետաքրքրությունների հետ կապված օտարալեզու տեքստերը <i>(օր., գիտահանրամատչելի հոդված, ակնարկ, թերթի հրապարակում, գրքույկ, ռեպորտաժ և այլն):</i></p> <p>Օտ.բ.VIII.5. Աշակերտը կարող է կարդալ, հասկանալ ու վերլուծել գեղարվեստական տեքստերը <i>(պատմվածք, նորավեպ, մանրանկար, հատվածներ պոեզիայից, ժամանակակից</i></p>	<p>Օտ.բ.VIII.8. Աշակերտը կարող է արդիական թեմաներին/հարցերին <i>(օր., համակարգչային խաղերի, սերունդների միջև տարբերությունների մասին և այլն)</i> վերաբերող տարբեր տեսակի տեքստեր գրել <i>(օր., ակնարկ, նամակ դպրոցական կամ երիտասարդական ամսագրի համար):</i></p> <p>Օտ.բ.VIII.9. Աշակերտը կարող է գործնական նամակ գրել՝ դժգոհություն արտահայտելու նպատակով <i>(օր., «Նամակ է գրում երիտասարդական ամսագրի խմբագրությանը, որը սխալ տեղեկատվություն է հրապարակել: Գրում է զրոսաշրջային բյուրոյին, որի խոստումները չէին համապատասխանում գովազդին» և այլն):</i></p> <p>Օտ.բ.VIII.10. Գրելիս աշակերտը կարող է կազմել տեքստի կառուցվածքը, տիրապետում է բազային լեզվական կարողությունների ու հմտությունների և</p>

	<p><i>արձակագրությունից):</i></p> <p>Օտ.բ.VIII.6. Աշակերտը կարող է վերլուծել տեքստն ըստ կառուցվածքային ու լեզվական բնութագրիչների:</p> <p>Օտ.բ.VIII.7. Աշակերտը տիրապետում է ռազմավարություններին և գործածում է դրանք՝ տեքստը հիմնավորապես ուսումնասիրելու նպատակով:</p>	<p>կիրառում է դրանք:</p> <p>Օտ.բ.VIII.11. Աշակերտը տիրապետում է գրելու արդյունավետ ռազմավարությունների և կիրառում է դրանք գրելու գործընթացի բոլոր <i>(նախապատրաստական, տեքստի կազմման, տեքստի կատարելագործման)</i> փուլերում:</p>
--	--	--

Խոսել	Մշակույթների երկխոսություն	Օտար լեզվի գործնական կիրառություն <i>(մեղիացիա)</i>
<p><i>Երկխոսություն</i></p> <p>Օտ.բ.VIII.12. Աշակերտը կարող է բանավոր զեկուցում <i>(շնորհանդես)</i> ներկայացնել արդիական հարցի, հիմնախնդրի վերաբերյալ:</p> <p>Օտ.բ.VIII.13. Աշակերտը գլուխ է հանում կենցաղային հաղորդակցական իրավիճակից:</p> <p><i>Մենախոսություն</i></p> <p>Օտ.բ.VIII.14. Աշակերտը կարող է խոսել իրեն հետաքրքրող/ցանկալի հարցով <i>(սիրելի հաղորդման, ֆիլմի, հեռուստի, ճանապարհորդության մասին և այլն):</i></p> <p>Օտ.բ.VIII.15. Աշակերտը տիրապետում է լեզվաքերականական կարողություններին ու հմտություններին և գործածում</p>	<p>Օտ.բ.VIII.17. Աշակերտը հետաքրքրություն և հանդուրժողական վերաբերմունք է ցուցաբերում մշակույթների յուրահաստկությունների նկատմամբ:</p>	<p>Օտ.բ.VII.18. Աշակերտը կարող է թարգմանել օտարալեզու աղբյուրներ/տեքստեր կամ մշակել դրանք ուրիշ հետաքրքրվող անձանց <i>(օր., խմբակիցների համար)</i> կամ հետագա կիրառության համար:</p>

<p>է դրանք:</p> <p>Օտ.բ.VIII.16. Աշակերտը տիրապետում է խոսողական խնդիրների արդյունավետ լուծմանը նպաստելու և բանավոր խոսքի կարողությունը կատարելագործելու ռազմավարություններին:</p>		
---	--	--

Տարվերջին նվաճվելիք արդյունքներն ու դրանց ստուգիչները.

Ուղղություն. լսել

(Լսելու կարողությունը զարգացնելու համար, գործածվում են ուսումնական նպատակով ստեղծված ձայնագրություններ:)

Օտ.բ.VIII.1. Աշակերտը կարող է լսել ու հասկանալ արդիական կամ իրեն հետաքրքրող թեմատիկային *(օր., ճանաչողական բնույթի հաղորդում, բանավեճ, բանավոր էլույթ, ռեպորտաժ, հեռուստահանդես, դասսփոսություն և այլն)* վերաբերող տարբեր տեսակի համալիր բովանդակությամբ ձայնագրություններ /տեսագրություններ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հասկանում է հաղորդակցական իրավիճակը *(գրուցակիցներին, թեման, հարցերը):*
- Հասկանում է հաղորդման նպատակը *(ինչին է ծառայում. ունկնդիրների իրազեկություն, ժամանց, քննադատում, հետադարձ կապ և այլն)* և ճանաչում է հասցեատիրոջը *(ուժ համար է հատկացված):*
- Ընդգծում է հաղորդման գլխավոր հարցերը:
- Հասկանում է այս կամ այն հարցի վերաբերյալ հաղորդավարի/մասնակիցների կողմից արտահայտած դիրքորոշումները, տեսակետները, հայեցակետերը:
- Գլխավոր հարցը տարբերում է ոչ գլխավորից:
- Փաստարկները կապում է համապատասխան տեսակետների հետ:
- Հասկանում է մասնակիցների տրամադրվածությունը, հույզերը:
- Հայտնաբերում է գոյություն ունեցող տարբեր տեղեկատվությունների տրամաբանական կապերը *(պատճառահետևանքային, պայմանական, զիջական և այլն):*
- Հեղինակի տեսակետն առանձնացնում է պատասխանողի/մասնակցի տեսակետից:
- Տարբեր տեսակի տեղեկատվությունները կապում է սեփական փորձի հետ և, դրա հիման վրա, եզրակացություններ է անում:

Օտ.բ.VIII.2. Աշակերտը դիմում է տարբեր ռազմավարությունների՝ լսած բովանդակությունն ավելի լավ վերլուծելու համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կենդանի խոսքը/ձայնագրությունը հասկանալու համար՝ օգտագործում է ոչ բառային տարրեր *(ձայնային տեմբր, հնչերանգ, դիմախաղ, ձեռածություն, տարբեր տեսակի աղմուկ, տրամաբանական շեշտեր, պատկերազարդում, սխեմա)*:
- Ծանոթ տարրերի *(հաղորդակցական իրավիճակ, համատեքստ)* հիման վրա հասկանում է անծանոթ բառերի, արտահայտությունների նշանակությունը:
- Նշում է անծանոթ բառերը՝ դրանց նշանակությունը պարզելու համար:
- Համեմատում է ուրիշների կիրառած եղանակին և եզրակացնում, թե որ մոտեցումն էր ավելի արդյունավետ:
- Նպատակին համապատասխան՝ փոխում է լսելու ռազմավարությունը. ընդհանուր բովանդակությունը հասկանալու համար, հենվում է ծանոթ բառերի, ոչ բառային տարրերի վրա և ընկալում հաղորդակցական իրավիճակը, համատեքստը, խոսակցության թեման:
- Կոնկրետ տեղեկատվությունը հասկանալու համար՝ ընտրում է կոնկրետ հենարաններ, ուշադրությունը կենտրոնացնում է դրանց վրա՝ անհրաժեշտ տեղեկատվությունը վերլուծելու համար:
- Տեղեկատվությունը տեսակավորելու համար, գործածում է սխեմատիկ գրանցման եղանակը:
- Նկարագրում է, թե ինչ եղանակով/ինչպես կարողացավ լուծել ունկնդրման խնդիրը:
- Դիտում և լսում է իրեն հետաքրքրող օտարալեզու հեռուստա-/ռադիոհաղորդումները, ֆիլմերը:
- Ունկնդրման խնդիրները լուծելիս՝ կիրառում է այլ լեզվից ձեռք բերած փորձառությունը:
- Մտաբերում է, թե այլ առարկաներից ինչ տեսակի ռազմավարություններ է գործածել տեղեկատվություն լսելիս, համեմատում է հին և նոր փորձառությունը, եզրակացություններ է անում:
- Քննարկում է, թե որ ուսումնական կամ կենսական իրավիճակում կարող են օգտակար լինել կիրառված/քննարկված ռազմավարությունները:

Ուղղություն. կարդալ

Օտ.բ.VIII.3. Աշակերտը կարող է կարդալ ու հասկանալ թերթի հրապարակումները, որոնք ներառում են կոնկրետ հիմնախնդրին վերաբերող որոշակի տեսակետ, քննարկում (օր., գովազդի դերը ժամանակակից հասարակության էվոյուցիայի մեջ, շրջակա միջավայրի աղտոտում, սպառողական ընկերություն, բռնություն դպրոցում և այլն):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ճանաչում է հրապարակման հասցեատիրոջը *(ու՛մ համար է հատկացված)*:
- Հասկանում է հիմնախնդիրը:
- Հայտնաբերում է տարբեր հայեցակետերը, որոնցով քննարկվում են հիմնախնդիրները:
- Հայտնաբերում է հիմնախնդիրն առաջացնող պատճառները, ակնկալվող հետևանքները:
- Հայտնաբերում է տարբեր տեսակետները, ապացույցները:
- Ճանաչում է փաստերը, իրադարձությունները և կապում է պատշաճ տեսակետների, ապացույցների հետ:
- Փաստը, ենթադրությունը, կանխատեսումը, գնահատումը տարբերում է իրարից:

- Արտահայտում է սեփական դիրքորոշումը քննարկված թեմայի վերաբերյալ:

Օտ.բ.VIII.4. Աշակերտը կարող է կարդալ, հասկանալ ու վերլուծել կրթական հետաքրքրությունների հետ կապված օտարալեզու տեքստերը (օր., գիտահանրամատչելի հոդված, ակնարկ, թերթի հրապարակում, գրքույկ, ռեպորտաժ և այլն):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տեքստը բաժանում է իմաստային մասերի *(ենթաթեմաների):*
- Հասկանում է տեքստի մակերեսային *(ճշգրիտ կերպով)* տեղեկատվությունը *(փաստը, իրադարձությունը, միտքը, գործողության ժամանակն ու տեղը և այլն):*
- Առանձնացնում է այս կամ այն հարցին վերաբերող տեսակետները, հայեցակետերը և առանձնացնում է դրանցից յուրաքանչյուրի հետ կապված փաստարկները:
- Գլխավոր հարցը տարբերում է ոչ գլխավորից, առանձնացնում է գլխավոր հարցի հետ կապված կոնկրետ մանրամասնությունները:
- Փաստը, ենթադրությունը, կանխատեսումը, գնահատումը տարբերում է իրարից:
- Հայտնաբերում է տեքստի տարբեր մասերի միջև առկա տրամաբանական կապը *(պատճառ-հետևանքային, պայմանական, հարաբերական, ժամանակագրական, մակաձայն և այլն)* և, տեքստի հիման վրա, եզրակացություն է անում:
- Տեքստում տրված տեղեկատվությունը կապում է սեփական փորձի հետ և, դրա հիման վրա, եզրակացություն է անում:
- Ամբողջ տեքստը վերլուծելու հիման վրա, եզրակացություն է անում:
- Ժողովում է հայեցակարգային տեղեկատվությունը *(յուրաքանչյուր պարբերությունը տարանջատում է մանրամասներից, օրինակներից, հեղինակի գնահատումներից և այդ ճանապարհով տեքստի պարբերություններից դրույթ է ձևակերպում):*

Օտ.բ.VIII.5. Աշակերտը կարող է կարդալ, հասկանալ ու վերլուծել գեղարվեստական տեքստերը *(պատմվածք, նորավեպ, մանրանկար, հատվածներ պոեզիայից, ժամանակակից արձակից):*

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ճանաչում է պատմողին, գլխավոր և երկրորդական կերպարներին:
- Հասկանում է տեքստի մակերեսային *(ճշգրիտ)* տեղեկատվությունը *(որտեղ և երբ է տեղի ունենում գործողությունը, առանձնացնում է ժամանակ ու տարածություն ցույց տվող մանրամասները և այլն):*
- Մեկնաբանում է գործող անձանց վարմունքի շարժառիթը և գնահատում է նրանց վարքը:
- Հասկանում է գործող անձանց միջև առկա հարաբերությունները:
- Գործող անձանց բնութագրում է ինչպես ճշգրիտ կերպով տրված տեղեկատվության հիման վրա, այնպես էլ բովանդակության վերլուծման հիման վրա:
- Առանձնացնում է ստեղծագործության պլոտեի զարգացման աստիճանները *(սկիզբը, հանգույցը, զարգացումը, գագաթնակետը, հանգուցալուծումը, ավարտը):*
- Ճանաչում է հեղինակի կողմից իրադարձությունների ու գործող անձանց գնահատումը:
- Ճանաչում է բանաստեղծության լիրիկական հերոսին/մոտիվը:
- Տարբեր պարամետրերով զուգահեռներ է անցկացնում մայրենի լեզվով ուսումնասիրած գեղարվեստական տեքստերի հետ *(օր., կերպարի տիպը, հաղորդված տրամադրվածությունը, ժանրը, հիմնախնդիրը և այլն):*

Օտ.բ.VIII.6. Աշակերտը կարող է վերլուծել տեքստն ըստ կառուցվածքային ու լեզվական բնութագրիչների:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Առանձնացնում է առաջատար, լրացուցիչ և ամփոփիչ պարբերությունները, սահմանում է լրացուցիչ պարբերության գործառույթը (օր., *նախորդ պարբերության մեջ հաղորդված մտքի ընդարձակումը/ճշտումը, պատճառների մեկնաբանումը, օրինակ բերելը*):
- Սահմանում է, թե ինչ ձևով է տրված ուրիշի խոսքը (ուղիղ/անուղղակի):
- Հայտնաբերում և խմբավորում է այս կամ այն հարցի նկատմամբ տարբեր տեսակի վերաբերմունք արտահայտող լեզվական ձևակերպումները (օր., «*Լավն է, կողմ եմ/դեմ եմ: Թեպետ...: Ճիշտ է, սակայն...: Չեմ կարծում...: Համամիտ չեմ...: Իմ կարծիքով*» և այլն):
- Հայտնաբերում է այն արտահայտություններն ու բառերը, որոնք օգնում են ընթերցողին փաստը տարբերել գնահատականից/վերաբերմունքից/տեսակետից (օր., *միջանկյալ բառեր և արտահայտություններ, տարբեր եղանակներ արտահայտող բայեր*):
- Հասկանում է ժամանակ ու տարածություն ցույց տվող բառերը, կառույցները:
- Մինևնայն տեքստի սահմաններում առանձնացնում է տեքստի գործառական տեսակները (*պատմություն, նկարագրություն, քննարկում*) և մատնանշում է համապատասխան հատկանիշները (օր., *նկարագրելիս՝ ածականների ու ածական դերբայների առատություն, բայերի պակաս քանակ, պատմելիս՝ բայերի առատություն, գործողությունների հաջորդականությունն ու դրա նշանները և այլն*):
- Համապատասխան նշանների հիման վրա մատնանշում է, թե որտեղ են սկսվում և որտեղ են ավարտվում սյուժեի զարգացման աստիճանները (*հանգույցը, գործողության զարգացումը, զագաթնակետը և հանգուցալուծումը*):
- Հայտնաբերում է և պատշաճ կերպով մեկնաբանում ժամանակային հարաբերակցության տեսակները (օր., *գործողությունների համաժամանակությունը, հաջորդականությունը*) և այդ հարաբերակցություններն արտահայտող միջոցները (*համապատասխան շաղկապները, բայաձևերը, գլխավոր և երկրորդական նախադասությունների շարադասությունը, ցուցական բառերը գլխավորի մեջ և այլն*):
- Հայտնաբերում է տրամաբանական կապեր (*պատճառ, հետևանք, նպատակ, հակադրություն, պայմանականություն*) արտահայտող պարզ և բարդ լեզվական կառույցները:
- Ճանաչում է իմաստային կապակցության լեզվական ու քերականական միջոցները (օր., *փոխադարձ դերանուններն ու մակբայները, բառի բառապաշարային և իմաստաբանական կրկնությունները, հոմանիշ և հականիշ հերթագայությունները, բայ-ստորոգյալի ժամանակա-եղանակային ձևերը և այլն*):
- Տեքստը կամ դրա հատվածը բնութագրում է ըստ խոսքային գործընթացին մասնակցող անձանց քանակի (*մենախոսություն, երկխոսություն, բազմախոսություն*):
- Կոնկրետ լեզվական հատկանիշների հիման վրա մատնանշում է՝ տեքստում հանդիպո՞ւմ է արդյոք հեղինակային խոսք և իրադարձությունների հեղինակային գնահատում:
- Մայրենի լեզվից ձեռք բերած փորձառության հիման վրա նշում է, թե ինչ գեղարվեստական ու պատկերավոր եղանակներ են (*մակդիր, համեմատություն, փոխաբերություն, այլաբանություն, անձնավորում, զուգադրություն և այլն*) կիրառված տեքստում:

Օտ.բ.VIII.7. Աշակերտը տիրապետում է ռազմավարությունների և գործածում է դրանք՝ տեքստը հիմնավորապես ուսումնասիրելու նպատակով:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Տեքստի կառուցվածքը և բովանդակությունը վերլուծելու համար՝ կիրառում է մայրենի կամ այլ լեզվից ձեռք բերած փորձառություններ:
- Առաջին հերթին, վերանայում է տեքստը՝ դիտարկում է վերնագրերը, ենթավերնագրերը, խորագրերը, տպագրական տարատեսակությունները, պատկերազարդումները և այլն:
- Ստաբերում է, թե ինչ գիտի տեքստում տրված թեմատիկայի վերաբերյալ:
- Այնպիսի հարցեր է տալիս, որոնց պատասխանն ակնկալում է տեքստից:
- Տեղեկատվություններ գտնելու նպատակով, ընդհանուր առմամբ ծանոթանում է տեքստին, այս փուլում կանգ չի առնում անծանոթ բառերի վրա, զանազան խորհրդանիշներով նշում է տեքստի էական հարցերը, որոնց պետք է անդրադառնա՝ դրանք խորացնելու նպատակով, նշում է հանգուցային բառերը և այլն:
- Անդրադառնում է անհասկանալի տեղերին, փորձում է ըստ համատեքստի հասկանալ բառերի նշանակությունները:
- Բառարանում փնտրում է այն բառերի նշանակությունները, որոնք անհասկանալի են:
- Առանձնացնում է գլխավոր ու երկրորդական գաղափարները: Գլխավոր գաղափարները ձևակերպում է վերնագրերի տեսքով, երկրորդական գաղափարները՝ ենթավերնագրերի տեսքով:
- Առանձնացնում է երկրորդական գաղափարների գործառույթը՝ գլխավոր գաղափարի ընդարձակում, նկարագրում, պատճառների մեկնաբանում և այլն:
- Տեղեկատվությունը տեսակավորելու համար՝ գործածում է սխեմատիկ գրառումների եղանակը (*ստորակարգային կառուցվածքով սխեմատիկ պլան, ճյուղավորված սխեմա, հանգուցային բառերի աղյուսակ և այլն*):
- Սխեմատիկ գրառումների հիման վրա, իր բառերով վերականգնում է տեքստի բովանդակությունը:
- Քննարկում է, թե որ ուսումնական կամ կյանքի որ իրավիճակում կարող են օգտակար լինել սխեմատիկ գրառումների ռազմավարությունները:

Ուղղություն. գրել

Օտ.բ.VIII.8.Աշակերտը կարող է արդիական թեմաներին/հարցերին (*օր., համակարգչային խաղերի, սերունդների միջև տարբերությունների մասին և այլն*) վերաբերող տարբեր տեսակի տեքստեր գրել (*օր., ակնարկ, նամակ դպրոցական կամ երիտասարդական ամսագրի համար*):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ներածություն է անում, ընդգծում է քննարկվող հարցը/հարցերը:
- Նշանակալից տեղեկություն է հաղորդում քննարկվող հարցերի կապակցությամբ:
- Հաղորդում է քննարկված հարցի վերաբերյալ գոյություն ունեցող տարբեր տեսակետները և պարզաբանում է դրանք:
- Հարցի վերաբերյալ արտահայտում է սեփական վերաբերմունքը, տեսակետը:
- Անձնական փորձից կոնկրետ օրինակ վկայակոչելով՝ պարզաբանում է սեփական վերաբերմունքը:
- Եզրակացություն է անում:

- Վերնագրում է ակնարկը/հոդվածը:
- Գրելիս պահպանում է իմաստային հաջորդականությունը:
- Միտքը ձևակերպում է հստակ ու հասկանալի կերպով:

Օտ.բ.VIII.9. Աշակերտը կարող է գործնական նամակ գրել, դժգոհությունն արտահայտելու նպատակով (օր., «Նամակ է գրում երիտասարդական ամսագրի խմբագրությանը, որը սխալ տեղեկատվություն է հրատարակել: Գրում է զբոսաշրջային բյուրոյին, որի խոստումները չէին համապատասխանում գովազդին» և այլն):

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Պահպանում է պաշտոնական կողմը (*համապատասխան տեղում մատնանշում է հեղինակի, հասցեատիրոջ անձնական տվյալները, կոորդինատները, ամսաթիվը, դիմելու, հրաժեշտ տալու ձևակերպումները*):
- Հանգամանորեն նկարագրում է իրավիճակը:
- Արտահայտում է դժգոհություն, զայրույթ:
- Իրավիճակն ուղղելու համար՝ կոնկրետ առաջարկներ է անում:
- Միտքը ձևակերպում է հստակ ու հասկանալի կերպով:

Օտ.բ.VIII.10. Գրելիս աշակերտը կարող է կազմել տեքստի կառուցվածքը, տիրապետում է բազային լեզվական կարողությունների ու հմտությունների և կիրառում է դրանք:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Նպատակից ելնելով՝ ընտրում է տեքստի համապատասխան կառուցվածքը, ճիշտ է գործածում պարբերությունը և այլ կառուցվածքային կազմակերպիչները (*վերնագիրը, ենթավերնագիրը, խորագիրը և այլն*):
- Գործածում է կամք ու ցանկություն, խորհուրդ արտահայտող լեզվական կառույցներ, ձևակերպումներ:
- Ներկա, ապառնի և անցյալ ժամանակներն արտահայտելու համար՝ ազատ գործածում է բայաձևերը:
- Տրամաբանական կապերն (*պատճառ, հետևանք, նպատակ, հակադրություն, պայմանականություն*) արտահայտելու համար՝ ազատ գործածում է պարզ լեզվական կառույցները:
- Պահպանում է փաստարկված քննարկման կառուցվածքը՝ *դրույթ, փաստարկ, եզրակացություն*:
- Հաղորդակցական իրավիճակին/նպատակին համապատասխան՝ գործածում է սովորած լեզվական կառույցները, կլիշեները, ձևակերպումները:
- Կիրառում է հույզեր, վերաբերմունք, տպավորություն արտահայտող լեզվական միջոցներ (*բառապաշարային միավորներ, կայուն բառակապակցություններ, կլիշեներ, լեզվական կառույցներ*):
- Գործողությունների համաժամանակությունն ու հաջորդականությունը (*նախորդող/հաջորդող գործողությունների*) արտահայտելու համար՝ ազատ գործածում է պարզ լեզվական կառույցները:
- Անձին, առարկան, երևույթը բնութագրելիս՝ ընտրում է պատշաճ լեզվական միջոցները (*օր., որոշիչներ, համեմատություններ, ածական դերբայներ*):
- Տեքստ կազմելիս պահպանում է իմաստային կապակցության համապատասխան լեզվական ու քերականական միջոցներ (*օր., փոխադարձ դերանուններ ու մակբայներ*,

բառի բառապաշարային ու իմաստաբանական կրկնություններ, հոմանիշ ու հականիշ հերթագայություններ, բայ-ստորոցայի ժամանակա-եղանակային ձևեր և այլն):

- Մեկ իմաստային մասից մյուսին անցնելու համար՝ գործածում է պատշաճ բառեր ու լեզվական ձևակերպումներ (*համապատասխանաբար, օրինակ, բացի այդ, այսպիսով և այլն):*
- Ճշգրտորեն է կապում հարաբերյալները և հարաբերական բառերը (*օր., «Այն..., որը: Նրանք ..., ովքեր»):*
- Գործածում է ուղղակի և անուղղակի խոսք արտահայտող լեզվական միջոցները:
- Նկարագրելիս ու բնութագրելիս գործածում է տարբեր տեսակի համեմատություններ:
- Պահպանում է կետադրական (*բարդ նախադասություններում, երկխոսությունը փոխանցելիս*) և ուղագրական նորմերը:
- Պայման, հավանականություն, ենթադրություն արտահայտող նախադասությունների մեջ գործածում է համապատասխան շարահյուսական կառույցներ:
- Գործածում է սուբյեկտիվ վերաբերմունք արտահայտող լեզվական ու քերականական միջոցներ (*օր., ներառված, հավելյալ, միջանկյալ բառեր ու արտահայտություններ և այլն):*

Գրելու ռազմավարությունները

Օտ.բ.VIII.11. Աշակերտը տիրապետում է գրելու արդյունավետ ռազմավարությունների և կիրառում է դրանք գրելու գործընթացի բոլոր (*նախապատրաստական, տեքստի կազմման, տեքստի կատարելագործման*) փուլերում:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Նկատի առնելով տրված հաղորդակցական խնդիրը՝ հիշողության մեջ փնտրում է անհրաժեշտ տեղեկատվությունը, այսինքն՝ ակտիվացնում է անհրաժեշտ գիտելիքները (*ինչպես լեզվական, այնպես էլ թե՛ հռետորական, թե՛ սյուժեի հետ կապված*):
- Անհրաժեշտության դեպքում, ռեսուրսների մեջ լրացուցիչ տեղեկատվություն է փնտրում:
- Դիմում է «մտավոր գրոհի» և գրի է առնում մտքին եկած բոլոր գաղափարները, որոնք առնչվում են գրավոր թեմատիկայի հետ:
- Տեղեկատվություններ ու գաղափարներ է ընտրում: Մտածում է, թե ինչպես կապի դրանք իրար, այսինքն՝ պլան մշակի:
- Պլանի հիման վրա տեքստ է գրում:
- Տեքստ գրելու ընթացքում անընդհատ դիտարկում է գրավորը: Քննարկում է, թե որքանով է կարողանում հասկանալի ու հաջորդաբար հաղորդել ասելիքը: Անհրաժեշտության դեպքում, փոփոխություն է ներմուծում՝ յուրօրինակ կերպով վերակազմակերպում է պլանը, տեղեկատվություն է հավելում կամ հանում և այլն:
- Գրավորն ստուգելիս՝ անընդհատ պահպանում է հաղորդակցությունն իր ընթերցողի հետ, փորձում է հասցեատիրոջ, այսինքն՝ պոտենցիալ ընթերցողի տեսանկյունից գնահատել, թե որքանով արդյունավետ է հաղորդակցության նպատակն արտացոլվել գրավորի մեջ:
- Ուղղում է այն լեզվական և իմաստային թերությունները, որոնք կարող են խնդիրներ առաջացնել ընթերցողի համար և, որոշ չափով, խափանել հաղորդակցությունը:

Համապատասխանաբար, հավելում կամ հանում է բառ, նախադասություն, տեքստի որևէ հատված, ուղղում է քերականական կամ ուղղագրական սխալները:

- Փորձում է աշխատությունը հարստացնել նոր տեղեկատվությամբ, այլ կերպ խմբավորել որոշ գաղափարներ, մասնակի կամ ամբողջովին փոխել պլանը, հիմնավորապես փոխել տեքստը և այլն:
- Որակյալ արտադրանք ստեղծելու համար՝ միշտ նկատի է առնում հասցեատիրոջ, հաղորդակցության նպատակի ու տեքստի համապատասխանությունը:
- Կարդալ է տալիս համադասարանցուն: Նկատի առնելով նրա դիտողությունները՝ կատարելագործում է գրավորը:
- Սրբագրում է գրավորը:
- Մտաբերում է, թե այլ առարկաներից ինչ տեսակի ռազմավարություններ է գործածել տեքստ կազմելիս, համեմատում է հին և նոր փորձառությունը, եզրակացություններ է անում:
- Քննարկում է, թե որ ուսումնական կամ կյանքի որ իրավիճակում կարող են օգտակար լինել կիրառված ռազմավարությունները:

Ուղղություն. խոսել

Երկխոսություն

Օտ.բ.VIII.12. Աշակերտը կարող է բանավոր զեկուցում (*շնորհանդես*) ներկայացնել արդիական հարցի, հիմնախնդրի վերաբերյալ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Անվանում է թեման:
- Ներածական մասում ներկայացնում, ընդգծում է հիմնախնդիրը:
- Ընդգծում է հիմնախնդիրն առաջացնող պատճառները:
- Բերում է փաստեր, օրինակներ:
- Խոսելիս գործածում է տեսողական նյութ:
- Խոսում է պատճառա-հետևանքային կապերի մասին:
- Սեփական վերաբերմունքն է արտահայտում կոնկրետ տեղեկատվության, երևույթի նկատմամբ:
- Ներկայացնում է հիմնախնդիրը լուծելու ճանապարհները:
- Եզրակացություն է անում:
- Խոսելիս պահպանում է իմաստային հաջորդականությունը:
- Միտքը ձևակերպում է հստակ ու հասկանալի կերպով:

Օտ.բ.VIII.13. Աշակերտը գլուխ է հանում կենցաղային հաղորդակցական իրավիճակից:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Առանց պատրաստվելու, մասնակցում է դերախաղերի, կեղծակերպած իրավիճակների, որոնք սովորական կենցաղային իրավիճակ են արտացոլում:
- Նախօրոք պատրաստվելու հիման վրա, մասնակցում է այնպիսի կեղծակերպած իրավիճակների, որոնք անսպասելի, անսովոր իրադրություն են արտացոլում, որոնց դեպքում անհրաժեշտ է դառնում արդարանալ, առարկել:

Մենախոսություն

Օտ.բ.VIII.14. Աշակերտը կարող է խոսել իրեն հետաքրքրող/ցանկալի հարցով *(սիրելի հաղորդման, ֆիլմի, հերոսի, ճանապարհորդության մասին և այլն):*

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Կոնկրետացնում է խոսակցության թեման:
- Փոքր ամփոփում է անում կարդացածի, տեսածի, լսածի շուրջ:
- Փոխանցում է սեփական վերաբերմունքը, տրամադրությունը, տեսակետը:
- Միտքը, վերաբերմունքը փոխանցելիս՝ ընդգծում է իր համար կարևոր մանրամասները:
- Խոսում է հետագա ծրագրերի, ցանկությունների, երազանքների մասին:

Օտ.բ.VIII.15. Աշակերտը տիրապետում է լեզվա-քերականական կարողությունների ու հմտությունների և գործածում է դրանք:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Հաղորդակցական իրավիճակին համապատասխան, գործածում է սովորած լեզվական կառույցները, կլիշեները, արտահայտությունները, ձևակերպումները:
- Ինտերակցիայի ժամանակ պատշաճ կերպով է գործածում մտերմական և բարեկիրթ ձևակերպումները:
- Գործածում է սովորած բառապաշարը:
- Ազատ գործածում է պարզ *(համառոտ, ընդարձակ)* և համադասական նախադասությունների կառուցվածքը:
- Կարող է գործածել ստորադասական նախադասությունները *(օր., որոշիչ ստորադաս նախադասություն):*
- Գործածում է համապատասխան ստորադասական շաղկապները:
- Սովորած լեզվական կառույցների մեջ պահպանում է շարահյուսական հարաբերակցությունները:
- Ճիշտ է գործածում սովորած բայերի կառույցը:
- Պատմելիս փորձում է ճշգրտորեն գործածել սովորած բայաձևերը՝ անցյալ, ներկա և ապառնի ժամանակներն արտահայտելու համար:
- Ճշգրտորեն է գործածում դիրքորոշում/վերաբերմունք արտահայտող բառերն ու լեզվական ձևակերպումները:
- Պատմություն ներկայացնելիս՝ ճշգրտորեն է գործածում երևույթների հաջորդականությունն արտահայտող բառերը *(օր., նախ, այնուհետև, վերջում):*
- Պատշաճ կերպով է գործածում անուղղակի խոսք արտահայտող ձևերը:
- Հարց, խնդրանք, հրաման, զգացմունքներ արտահայտելիս՝ պահպանում է շարահյուսությունը և այս եղանակներին բնութագրող հնչերանգը:

Խոսելու ռազմավարությունները

Օտ.բ.VIII.16. Աշակերտը տիրապետում է խոսքային խնդիրների արդյունավետ լուծմանը նպաստելու և բանավոր խոսքի կարողությունը կատարելագործելու ռազմավարություններին:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Նախօրոք պատրաստում է անհրաժեշտ ռեսուրսը, ի մի է բերում մոդելները, արտահայտությունները, կլիշեները, հանգուցային բառերը:
- Մինչև լսարանի առջև ելույթ ունենալը, փորձ է անում:
- Չհասկանալու դեպքում խնդրում է մեկնաբանել, դանդաղ ու հասկանալի արտաբերել, կրկնել:
- Բառը մոռանալու/չիմանալու դեպքում գործածում է փոխհատուցման միջոցները (*օր., դիմախաղ, ձեռածություն, ձևակերպում/ նկարագրում է ենթադրված առարկան կամ մատնանշում է, թե ինչի համար է այն օգտագործվում/ ն այլն*):
- Խոսողական խնդիրները լուծելու համար՝ գործածում է այլ լեզուներից ձեռք բերած փորձը:
- Վերլուծում է այն գործոնները, որոնք նպաստել են հաջողությանը կամ անհաջողություն են բերել բանավոր ելույթի ժամանակ, և ուսուցչի հետ կազմում է ուղղելու պլանը:

Ուղղություն. Մշակույթների երկխոսություն

Օտ.բ.VIII.17. Աշակերտը հետաքրքրություն և հանդուրժողական վերաբերմունք է ցուցաբերում մշակույթների յուրահատկությունների նկատմամբ:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Ուրիշ մշակույթի մասին տեղեկատվություններ ժողովելու և գիտելիքները հարստացնելու համար՝ կիրառում է լրատվամիջոցները (*հեռուստատեսություն, համացանց, բջջային և այլն*):
- Քննարկում է տեքստերում արտացոլված արժեքներն ու հայեցակետերը և, համապատասխան փաստարկներ բերելով (*օր., փաստեր գրականությունից, պատմությունից, անձնական փորձից և այլն*)՝ արտահայտում է սեփական վերաբերմունքը:
- Տեքստում տրված տեղեկատվությունը քննարկում է այն մշակույթի համատեքստում, որում ստեղծվել է տեքստը:
- Պարզաբանում է գործող անձանց վարմունքի շարժառիթը տրված միջավայրում և կանխատեսում է, թե ինչպես կվարվեին նրանք այլ սոցիալ-մշակութային ու մշակութային միջավայրում:
- Հայտնաբերում է կարծրատիպային հայեցակետերը, վերլուծում է և ներկայացնում դրանք առաջացնող պատճառները, օրինակների միջոցով փաստարկում է դրանց անհիմն լինելը:
- Վերլուծում է այն իրադրությունները, որոնցում թյուրիմացություն է առաջանում կամ կոնֆլիկտային միջավայր է ստեղծվում, սոցիալ-մշակութային յուրահատկությունները նկատի չառնելու պատճառով. հայտնաբերում և անվանում է պատճառները, սահմանում է իրավիճակի լիցքաթափման ուղիները:

- Վերլուծում է մշակութային յուրահատկությունները նկատի չառնելու պատճառով առաջացած կոնֆլիկտային իրավիճակը, հայտնաբերում և անվանում է պատճառները, սահմանում է կոնֆլիկտը կարգավորելու ուղիները:
- Հետազոտում է շրջապատի անձանց լեզվա-մշակութային նույնականությունը, հետաքրքիր նյութեր է ժողովում նրանց ծագման, ընտանեկան պատմության, սովորույթների մասին:

Ուղղություն. Օտար լեզվի գործնական կիրառություն (մեղիացիա)

Օտ.բ. VIII.18. Աշակերտը կարող է թարգմանել օտարալեզու աղբյուրներ/տեքստեր կամ մշակել դրանք ուրիշ հետաքրքրվող անձանց (օր., խմբակիցների համար) կամ հետագա կիրառության համար:

Արդյունքն ակնառու է, եթե աշակերտը.

- Օտարալեզու տեքստից սխեմատիկ գրառումներ է անում և դրանց հիման վրա ուսուցվող լեզվով բանավոր հաղորդում է տեքստի համառոտ բովանդակությունը:
- Ուսուցվող լեզվով գրում է տեքստի ամփոփագիր (*տեքստը բաժանում է իմաստային հատվածների, իմաստային հատվածները մոտեցնում է հիմնական իմաստին և պարզ արտահայտում է այն*):
- Համառոտագիր է կազմում (*առանձնացնում է կարևոր տեղեկատվությունը, սխեմատիկ գրառում է պատրաստում և, դրա հիման վրա, սեփական բառերով հաղորդում է տեղեկատվությունը*):
- Գրավոր/բանավոր թարգմանում է փոքրածավալ ոչ գեղարվեստական տեքստեր (*ամփոփագիր, հոդված, ակնարկ, հրահանգներ և այլն*):
- Գեղարվեստական գրականության թե՛ արձակի, թե՛ բանաստեղծության նմուշները թարգմանում է մայրենի լեզվով: